

ՄԵԼԱԴԱ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ




ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԼԱԴԱ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

Երևան
Աստղիկ
2017



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р.АЧАРЯНА

МЕЛАДА АГАБЕКЯН

ВОПРОСЫ
СРАВНИТЕЛЬНОГО ИССЛЕДОВАНИЯ
АРМЯНСКОГО ЯЗЫКА

(Сборник статей)

Ереван
Асогик
2017

ՄԵԼԱԴԱ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

(Հոդվածների ժողովածու)

Երևան
Աստղիկ
2017

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Ա 432

Լույս է տեսնում ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Պատասխանատու խմբագիր ր. գ. դ. Վ.Գ. Համբարձումյան
Գրախոս՝ ր. գ. թ. Ս. Ս. Դալայան

Աղաբեկյան Մ.

Ա 432 Հայերենի համեմատական ուսումնասիրության
հարցեր (հոդվածների ժողովածու)/ Մ. Աղաբեկյան.- Եր.:
Աստղիկ, 2017.- 200 էջ:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

Գրքում ներկայացվում են հեղինակի տարբեր տարիների, տարբեր պարբերականներում լույս տեսած համեմատական-տիպաբանական և տարձաքային-բարբառային բնագավառի կարևորագույն հարցերին նվիրված գիտական հոդվածները, որոնք ժամանակին ուրույն դեր են խաղացել հայոց լեզվի համեմատական ուսումնասիրության զարգացման մեջ:

ISBN 978-9939-50-388-2

© ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2017

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ ՅՈՒ Ն

I

Ծագումնային-վերականգնողական համեմատաբանություն

1. Հնդեվրոպական **ǵ* բաղաձայնը հայերենում.....12
2. Հնդեվրոպական **l*-ի արտացոլումը հայերենում.....35
3. Հնդեվրոպական ձայնավոր և ձայնորդ **ǵ*-ն
հայերենում.....44
4. Հնդեվրոպական բուսանունները հայերենում.....58

II

Տարածական- ժամանակային համեմատաբանություն

5. Տարածքային բառագուգաբանությունների սահմանման
սկզբունքները.....75
6. Շեշտը և նրա հետ կապված հնչյունական փոփոխություն-
ները նախապատմական շրջանի հայերենում.....93
7. Հայերենում **bh*, **b*, **p*>*l*(վ, ու) հնչյունափոխությունը և
նրա ժամանակագրությունը.....105
8. Դիտարկումներ հայերենի հնագույն փոխառությունների
վերաբերյալ.....114

III

Ստուգաբանություններ

9. Ստուգաբանական դիտողություններ, *ցայել*, *մորմո(ն)ջ*,
մորմորի(ն)ջ, *մորլմուր*, *մորմ*.....123
10. Ստուգաբանական դիտողություններ, *տանու*, *լակ/լախ*,
լանկ/լանգ, *լկնի*.....140
11. Ստուգաբանական դիտողություններ «Աղուանք» տեղանվան
վերաբերյալ155
12. Աղուանք, Ալբանիա, Առան.....174
13. Հայ-ուրարտական ստուգաբանական դիտարկումներ.....185

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

(Հայերենի համեմատական ուսումնասիրության նոր սերնդի վաստակած ներկայացուցչի գիտական ներդրումը)

1970-ական թթ. կեսերին հայագիտության ասպարեզ ոտք դրեց լեզվաբանների մի նոր սերունդ, որի մի որոշակի խմբի գիտական հետաքրքրությունների շրջանակը հայերենի համեմատական քերականությունն էր: Այդ խումբը անդամագրվել էր մեր ժամանակների մեծագույն լեզվաբաններ Գ. Բ. Ջահուկյանի և Է. Բ. Աղայանի աշակերտությանը: Նրանք ասպիրանտական ամենօրյա անշեղ ուսումնառությանը զուգընթաց անխափան գիտական ուսումնասիրության թեմա էին ընտրել անվանի լեզվաբանների դեկլարության պայմաններում:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական մթնոլորտում անսահման ստեղծագործական և մեղվաջան էին այն տարիները, երբ այդ սերունդը գրեց իր ատենախոսությունը և նվաճեց հայերենագիտության առաջին բարձունքը:

Նրանց գրչի տակ հայերենը ուշադրության առարկա էր ամենից առաջ իբրև հնդեվրոպական լեզուների բառային զուգաբանությունների կարևոր եզր՝ հայերենի և իտալյան լեզուների, հայերենի և հին հնդկերենի, հայերենի և հունարենի, հայերենի և սլավոնական լեզուների կտրվածքով, այնուհետև հայերենի հնագույն բարբառային հետքերի, հայերենի արմատի կազմում աճականի, մարմնի անվանումների բնիկ շերտի համեմատաբանական քննությամբ:

Այդ սերնդի վաստակած ներկայացուցիչներից է Մ. Աղաբեկյանը:

Նրա հետաքրքրությունները հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում բավականին լայն են և միանգամայն արդյունավետ: Նա գրեց գիտական այնպիսի աշխատություններ, որոնք աչքի են ընկնում նորությամբ, անշրջանցելի են հետագա ուսումնասիրողների համար, եթե նրանք առնչվելիս լինեն այն խնդիրներին, որոնք յուրովի իրենց լուծումը կամ պարզաբանումն են ստացել այդ տաղանդավոր լեզվաբանի կողմից:

Նա ժամանակին ստացել էր բուհական լավագույն կրթություն՝ ավարտելով Երևանի պետական համալսարանի ռոմանագմանական ֆակուլտետի ֆրանսիական բաժինը, եղել լեզվի ինստիտուտի ասպիրանտ՝ մանագիտանալով հնդեվրոպական լեզուների տարածքային (արեալային) ուսումնասիրության մեջ, գրել «Հայ-իտալյան բառային զուգաբանություններ» ատենախոսությունը («Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 1, Ե., 1979, էջ 23-127):

Մ. Աղաբեկյանի գիտական գործունեությունն ընթացել է Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում, նախ՝ ընդհանուր և համեմատական լեզվաբանության, այնուհետև՝ կիրառական հնչյունաբանության բաժիններում, որտեղ էլ նա մշակել և հրապարակել է իր ուշագրավ աշխատանքները՝ ծավալուն հոդվածներ ինստիտուտի ժողովածուներում, ինչպես նաև հասարակական գիտությունների հանդեսներում, զեկուցման դրույթներ Հայաստանում և արտերկրում տեղի ունեցած գիտաժողովների և կոնֆերանսների նյութերում, ակտիվ

մասնակցություն է ունեցել հայ բարբառների հնչագրությանը վերաբերող գրատեսակների մշակման գործում և այլն:

Իր գործին հետամուտ լեզվաբանը ինստիտուտի հարգված աշխատակիցներից էր, գիտական խորհրդի հեղինակավոր անդամ, որ նպաստավոր մասնակցություն էր ունենում հայերենի տարբեր բնույթի, հատկապես համեմատական լեզվաբանության վերաբերյալ հարցերի քննարկմանը գիտագործնական ամենամայա սեմինարներին և հավաքներին. ինստիտուտի համար շատ բեղմնավոր էին այդ սեմինարները և հավաքները:

Ներկա հատորը, բացառությամբ տարբեր ժողովածուներում լույս տեսած մենագրության ծավալի աշխատանքներից («Հայ-իտալյան բառային զուգաբանությունները» // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Ե., 1979, էջ 23-127, «Հայերենի համեմատական հնչյունաբանության հարցեր» // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», 2, Ե., 1998, էջ 49-144), ընդգրկում է հեղինակի՝ գիտական հանդեսներում տպագրված հոդվածները, որոնք, որոշակի պայմանականությամբ, կարելի է բաժանել երեք խմբի, եթե հաշվի առնենք նրանց միջև նկատելի ընդհանուր թեմատիկան՝ ծագումնային-վերականգնողական ու տարածական-ժամանակային համեմատաբանություն և ստուգաբանություններ:

Առաջին խմբի հոդվածները, բացի վերջինից («Հնդեվրոպական բուսանունները հայերենում»), վերաբերում են հնդեվրոպական տարաբժեք *y և *l ձայնորդների՝ հայերեն արտացոլման հարցերին, որոնք այստեղ քննվում են լեզվաբանության համեմատաբար նոր տվյալների ընդգրկմամբ, դրանց վերաբերյալ քննադատական և վերանայման մեթոդիկա ենթադրող մոտեցմամբ՝ տալով այդ հարցերին մեծ մասամբ նոր

լուծումներ, որոնք, անշուշտ, ձեռքբերումներ են հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների ձայնորդային հնչյունների ուսումնասիրության մեջ: Այսպես, հե. * $y >$ հայ. $q // \varphi$ արտացոլման համար սահմանվում է հնչյունական օրենք՝ հիմնված արմատի կազմում նրանց դիրքային տարբերակվածության, անցման մոտավոր ժամանակագրության վրա և այլն: Հե. * l ձայնորդը, որը հայերենում ունի երկակի $l // \eta$ արտացոլում, գիտության մեջ տարբեր կարծիքների տեղիք է տալիս հատկապես ձայնավորների միջև և բառավերջում ձայնավորից հետո դիրքերում: Այս և հարակից վիճահարույց հարցերին է անդրադառնում հեղինակն իր հատուկ հոդվածում և գտնում նոր, ավելի հավաստի և արգասավոր լուծումներ՝ ելնելով, անշուշտ, նորագույն տվյալներից, կատարելով ուշադրության արժանի նոր վերլուծություն:

Հայերենին անցած բնիկ բուսանունները քննվում են տարածքային (արեալային) լեզվաբանության զուգաբանությունների մեթոդիկայով՝ իբրև «երեք խմբի՝ երկպլան ուժեղ, երկպլան թույլ և միապլան տարածքների մեջ մտնող» միավորներ. հայերենում երկպլան ուժեղ արտացոլում ունեն՝ 1. *բող* (*բողիկ*) «խեժատու բույս», նաև *բողբոջ*, *բողկ*, 2. *սաղարթ*, 3. *գինի*, 4. *դոն* «մի տեսակ հաց», 5. *դալար* «խոտ, բանջար», նաև *դադձն*, *դեղձ* և այլն, 6. *սիսեռն*, 7. *մոր* (*մորի*, *մորենի*), 8. *թալ* (*թելուկ*), 9. *սունկն*, 10. *թեղի*, 11. *ոստ*, 12. *գերան* միավորները, և այսպես նաև երկպլան թույլ և միապլան արտացոլում ունեցողները, որպիսով իմաստային (թեմատիկ) առանձին խումբ կազմող այդ միավորների իմաստային-զուգաբանական քննությունը միանգամայն նոր պատկերացում է առաջ բերում դրանց բնույթի վերաբերյալ:

Երկրորդ խմբի հոդվածները, կարելի է ասել, փոքր-ինչ տարաբնույթ են, մի դեպքում հեղինակն անդրադառնում է ժամանակին բուռն քննարկման թեմա եղած տարածքային գուգաբանությունների խնդրին՝ ներկայացնելով դրանց սահմանման սկզբունքները, մյուս դեպքում՝ կատարում փաստերի վրա հիմնված դիտարկումներ հայերենի հնագույն՝ նախապատմական (նախագրային) ժամանակաշրջանի փոխառությունների վերաբերյալ: Այդ խմբում բավականին ուշագրավ աշխատանքներ են մյուս երկուսը, որոնք վերաբերում են հայերենի «շեշտին և նրա հետ կապված հնչյունական փոփոխություններին նախապատմական շրջանում», ինչպես նաև համեմատական-տիպաբանական լեզվաբանության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող, սկզբից նեթ հայտնի հե. *bh, *b, *p > հայ. լ (լ, ml) հնչյունափոխությանը, վերջինիս ժամանակագրությանը հայերենում: Հատկապես երկրորդ խնդրի դեպքում Մ. Աղաբեկյանը հասել է շոշափելի հաջողության, որն ինքնին կարևոր է հայերենի պայթական բաղաձայնների, այսպես կոչված, տեղաշարժի հետ կապված ավելի մասնավոր հարցերի քննարկման և վերջնական վճռման համար, մի բան, որ առաջարկվել է վերջին տասնամյակներին՝ առհասարակ հնդեվրոպական լեզուների բաղաձայնական համակարգի վերանայման առնչությամբ:

Երրորդ խումբը ներկայացնում են հեղինակի ստուգաբանությունները, որոնք մեծ մասմբ վերաբերում են հայերեն տեղանուններին: Հեղինակի դիտողություններն այս բաժնում տեղ գտած բառերի հնչյունական անցումների հաստատման և նախնական իմաստների վերհանման առումով որքան հետաքրքրական, նույնքան էլ, կարծում ենք, մնում են հավանականի սահմաններում, մանավանդ տեղանունների

ստուգաբանությունը, որն առավել դժվարին է՝ պայմանավորված անվանման առարկայական վերաբերության պայմանականությամբ: Այդուհանդերձ, այս խմբում առաջարկված նոր ստուգաբանությունները ուշագրավ են իրենց հարցադրումներով և յուրօրինակ բացատրություններով:

Մ. Աղաբեկյանի աշխատություններն ընդհանուր առմամբ, և մասնավորապես հիշյալ հոդվածները գրված են տվյալ բնագավառի լեզվագիտական տվյալների լիովին գերազանց իմացությամբ, դրանց առնչվող հարցերի բավականին հանգամանալից և համոզիչ վերլուծությամբ:

Հեղինակն իր մասնագիտության մեջ հասել է որոշակի ձեռքբերումների, և այդ ձեռքբերումներն, անշուշտ, գնահատելի են, ուստի միանգամայն նպաստավոր հետագա համեմատաբանական ուսումնասիրությունների համար:

Պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ *Կ ԲԱՂԱՁԱՑՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հնդեվրոպական նախալեզվում բառասկզբում ձայնավորից առաջ, ձայնավորների միջև և բառավերջում ձայնավորից հետո *յ-ն ոչ վանկարար բաղաձայն էր¹:

Բառասկզբում ձայնավորից առաջ հնդեվրոպական *յ-ի դիմաց հայերենում ունենք գ-ով բազմաթիվ ձևեր, ինչպես՝ *գարուն*<*yesr-, *զինի*<*yoinjom, *զեղմն*<*yelm, *զեղձ*<*yelǵh/dh-, *զործ*<*yerg-, *զետ*<*yeid-, *զետ*<*yedō- և այլն: Սակայն կան մի շարք բառեր, որտեղ այդ նույն դիրքում հնդեվրոպական այլ լեզուների շրթնատամնային յ-ին (որոշ լեզուներում՝ b, gu) հայերենում նույնպես համապատասխանում է վ, այսպես՝ *վառեն*, լիտվ. *virti*, հին սլավ. *variti* «եփել», իսեթ. *yar-* «այրել, վառել» *վեց*, հուն. (բարբառ.) *φεξ* «վեց», *վիր*, հին հնդկ. *vīti-* «ձի», *վեր* «վերք», հին հնդկ. *vraṇá* «վերք, քերծվածք», ռուս. *рана* և այլն: Կան նաև մի քանի բառեր, որտեղ նշված դիրքում հնդեվրոպական *յ-ի դիմաց հայերենն ունի զրո կամ *բ*, *կ* բաղաձայններ, բայց դրանք ակնհայտորեն ուշ շրջանում հայերենի վրա այլ լեզուների ազդեցության արդյունք են, ուստի դրանց քննության այստեղ չենք անդրադառնում²:

Այն փաստը, որ այլ լեզուների բառասկզբում հնդեվրոպական ոչ վանկարար *յ ունեցող բառերին հայերենում համապա-

¹ Ինչպես մյուս ձայնորդները, *յ-ն նույնպես հնդեվրոպական նախալեզվում ուներ դիրքային բաշխվածություն, այսինքն՝ կարող էր լինել ձայնավոր, ձայնորդ, բաղաձայն: Այստեղ քննում ենք բաղաձայնային դիրքում *յ-ի արտացոլումը հայերենում:

² Տե՛ս *Г.Б. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка*, Е., 1967, էջ. 268, 297:

տասխանում են ն՝ գ-ով ն՝ վ-ով սկսվող ձևեր, տարբեր մեկնությունների առիթ է տալիս: Ա. Մեյեն, օրինակ, հայերեն երկու բաղաձայններն էլ անմիջապես բխեցնում է հնդեվրոպական ոչ վանկարար ***ǵ**-ից: Նա գրում է. «Բառասկզբում հնդեվրոպական w-ն վերածվում է պայթականի և դառնում gw, ինչպես բրետոներենում, որտեղից էլ՝ **g**, կամ դառնում է **v**»³:

Լեզվում միևնույն դիրքում իրարից տարբեր երկու հնչյունական օրենքներ միաժամանակ չեն գործում: Այսինքն՝ չէր կարող բառասկզբում հնդեվրոպական ***ǵ**-ն հայերենում միաժամանակ դառնալ ն՝ գ, ն՝ վ: Թվացող հակասությունը առաջ է գալիս այն բանի հետևանքով, որ նոր սկսված օրենքը ինչ-ինչ պատճառներով (հնչյունական մեկ այլ օրենքի հակադրությամբ) կես ճանապարհին կանգ է առնում՝ ամբողջական ընդգրկում չստանալով: Հնարավոր է նաև, որ այդ հնչյունները տարբեր ժամանակներում գործած օրենքների արդյունք են, բայց հետագայում, հաճախ չկարողանալով այդ օրենքների ժամանակագրական հաջորդականությունը վերականգնել, դրանք տեղադրում ենք ժամանակային միևնույն հատվածում:

Բառասկզբում ***ǵ**>**g** հնչյունափոխությամբ բառերը մեծ թիվ են կազմում, և որ կարևոր է, հավաստի ստուգաբանություններ ունեն: Մինչդեռ վ-ով բառերը հաճախ դժվար է լինում մյուս լեզուների համապատասխան բառերի հետ միևնույն նախաձևերին հանգեցնելը: Ուստի լեզվաբանների մեծ մասը հայերենի համար կանոնական է համարում բառասկզբում հնդեվրոպական ***ǵ**-ին հետևալեզվային **g** համապատասխանությունը: Հետևաբար վ-ով ձևերը կամ հնդեվրոպական նախալեզվի վերապրուկներ են

³ **A.Meillet**, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*, Vienne, 1936, էջ 49:

հայերենում, եթե, իհարկե, բավարար չափով համոզիչ են դրանց ստուգաբանությունները, կամ էլ արդյունք են այլ լեզուների ազդեցությունների, որոնց համար «մասնավորապես պետք է նշել իրանական, գուցե հին անատոլիական աղբյուրներ»⁴:

Այս հարցում մի փոքր այլ դիրք է գրավում Ս. Մանը: Նա նույնպես հնդեվրոպական բաղաձայն *u-ի համար հայերենում հիմնական օրենք է համարում *u>q հնչյունափոխությունը: Սակայն, ըստ նրա, բացառություն կազմող **վառեն, վանեն, վար, վտակ, վայր** բառերում վ-ն *apo-, իսկ **վեր** բառում *upo- հնդեվրոպական նախդիրներին հանգող տարր է, որ կարելի է բացատրել որոշ դիրքերում (տվյալ դեպքում միջձայնավորային) հայերենին հատուկ *p>վ (ւ) հնչյունափոխությամբ⁵:

Բացի այն, որ նշված բառերի ստուգաբանությունները որոշ չափով կամայական բնույթ են կրում, պարզ չէ նաև *apo-, *upo->վ անցման հաջորդական ընթացքը: Եթե ձայնավրների միջև *p->վ հնչյունափոխությունը տեղի է ունեցել Ս.Մանի կանխադրած *apo-ondh, *apo-an, *apo-ar, *apo-tak նախաձևերում, ապա զոնե բառասկզբի ձայնավորը պետք է պահպանվեր, ինչպես նման այլ դեպքերում (հմմտ. աւն<*opno-, եւ<*epi, աւել<*obhei-): Իսկ եթե ընդունենք, որ այդ նախդիրները, նախապես կորցնելով բառասկզբի ձայնավորները, դարձել են *p, ապա, ենթարկվելով նախապատմական օրենքին, վերը նշված բառերում վ-ի փոխարեն պետք է ունենայինք **h** կամ **զոռ**: Դրանք նաև հնդեվրոպական այլ լեզուներից հայերենին անցած նշված նախդիրներով (ձայնավորները նախապես կորցրած) բառեր չեն, որովհետև ավելի ուշ

⁴ Г.Б.Джаукян, նշվ. աշխ., էջ 297:

⁵ S. E. Mann, *Armenian and Indo-European (Historical Phonology)*, London, 1963, էջ 68:

շրջանում բառասկզբում ձայնավորից առաջ դիրքում *p-ն որևէ հնչյունափոխության չի ենթարկվում: Ուստի Ս. Մանի վերը նշված բացատրությունը համոզիչ չէ:

Բաղաձայնից հետո ձայնավորից առաջ դիրքում հնդեվրոպական *u-ի համար որոշ լեզվաբաններ ենթադրում են երկար վանկից հետո *u-ն փոխակերպում⁶: Սակայն հայերենում նշված դիրքում *u-ի այդպիսի (կրկնակ) արտասանության հետքեր այս կամ այն չափով չեն պահպանվել: Այն արտացոլված է միայն որպես բաղաձայն, ընդ որում, այստեղ նույնպես տեղի է ունեցել *u > q հնչյունափոխություն⁷: Բայց հետագայում q-ն կրել է հարակից բաղաձայնի ազդեցությունը, այսպես՝ *su > p, որի համար ենթադրվում է *su > *hu > *hu > p հաջորդական անցում, օրինակ՝ *suesor > քոյր, *suopnos > քուն, *du > *dg > *rk > երկ. *duō(u) > երկու, *dya-ro > երկար, *mel-du-i > *մեղրկ > մեղկ. *ku-ն սովորաբար տալիս է շ, օրինակ՝ *ekuo > էշ, *kyon > շուն, «բայց բառում մեկ այլ *k-ի կամ *t-ի առկայության դեպքում *ku կապակցությունը տալիս է սկ, այսինքն՝ q(<*u)-ն u-ից հետո խլանում է՝ առանց նրա հետ միանալու»⁸, հմմտ. *kyon-to > սկունդ, *kyekura > սկեսուր և այլն:

Հնդեվրոպական ընդհանրության շրջանում հավանաբար ածականին սաստկական երանգ հաղորդելու համար տվյալ բառի այս կամ այն բաղաձայնը արտասանվում էր կրկնակ ձևով, որն ընդհանրապես ժողովրդախոսակցական լեզուներում տարածված

⁶ Sté u **О.Семереньи**, *Введение в сравнительное языкознание*, М., 1980, էջ 121. **А. Мейе**, *Введение в сравнительное изучение индоевропейских языков*, М.-Л., 1938, էջ 141: **F. Edgerton**, *The semivowel phonemes of Indo European*, “Language”, 1962, vol. 38, № 4, էջ 352-359:

⁷ Ավելի մանրամասն տե՛ս **Մ. Աղաբեկյան**, *Հնդեվրոպական ձայնավոր և ձայնորդ *u-ն հայերենում*, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 8, էջ 59:

⁸ **Դ.Բ.Джаукян**, նշվ. աշխ., էջ 228:

երևույթ է: Ա. Մեյեն գտնում է, որ այդ նույն պատճառով կրկնակ արտասանություն էին ստանում նաև ձայնորդները: *eu, *ou, *au երկբարբառների ձայնորդ *u տարրի կրկնակ արտասանության հետևանքով որոշ դեպքերում այդ երկբարբառները հաջորդված են *u բաղաձայնով, որ հայերենում տվել է գ, ինչպես՝ *steuā->ստոյգ, *au->աւգն, «օգնություն», աւգուտ⁹:

Բառամիջում միջձայնավորային դիրքում հնդեվրոպական ոչ վանկարար *u-ի դիմաց հայերենում առկա են ն՛ գ, ն՛ լ(վ) հնչյունները, որ դարձյալ լեզվաբանների շրջանում տարբեր մեկնությունների տեղիք է տալիս:

Հ. Պեդերսենը գտնում է, որ «երկու ձայնավորների միջև գտնվող հնդեվրոպական v տառը՝ հայերենի մեջ վ, լ ձայնը կպահե, եթե բառին վերջը իյնա. Ապա թե ոչ՝ գ-ի կփոխվի. հմմտ. **կո-վ** և **կո-գի**, **արե-լ**, **արե-գակն** և այլն»¹⁰:

Հետագայում այդ եզրակացության են գալիս նաև այլ լեզվաբաններ: Վ. Պիզանին, օրինակ, նույնպես այդ կերպ է բացատրում լ(վ)-ով և գ-ով ստուգաբանական զուգաձևերը: Միջձայնավորային դիրքում հնդեվրոպական *-u->լ(վ) օրենքը գործել է նախագրաբարյան հայերենում բառի վերջին վանկի (կամ ձայնավորի) անկումից հետո, որով և բացատրվում է հնդեվրոպական վերականգնված ձևերում միջձայնավորային *-u-ի դիմաց հայերենում լ(վ)-ի առկայության փաստը (հմմտ. կով<*g^uo-^u, հաւ<*auos- և այլն)¹¹:

⁹ **A.Meillet**, *Etudes de linguistique et de philologie arméniennes*, t. II. Louvain, 1977, էջ 177-179:

¹⁰ **Հ.Պեդերսեն**, *Նպաստ մը հայերէն լեզվու պատմութեան*, Վիեննա, 1904, էջ 4:

¹¹ **V.Pisani**, *Studi sulla fonetica dell'armeno*, I, "Ricerche Lingustiche", Roma, 1950, I, էջ 182-185:

Ձ. Բոլոնիեզին հայերենում իրանական առաջին փոխառությունների հարաբերական ժամանակագրությունը որոշելիս, այլ փաստերի հետ միասին, ելնում է նաև այս վարկածից: Ըստ նրա՝ թեպետ հնարավոր չէ պարզել բառակազմի **u*->*q* և բառամիջի **u*->*q* անցումները հաջորդել են միմյանց, թե՞ միաժամանակ են տեղի ունեցել, բայց ակնհայտ է հետևյալ հաջորդականությունը. 1) նախապատմական շրջանի հայերենում բառի վերջին վանկի անկում, 2) բառամիջում **u*-> հայ. **գ**, 3) իրանական փոխառությունների թափանցում հայերեն¹²:

Եթե ընդունենք, որ **u*-ի շրթնային-առաջնալեզվային արտասանությունը հայերենում պահպանվել է բառավերջում՝ հետնալեզվային **գ**-ի փոխարկվելով մյուս դիրքերում, ապա ինչպե՞ս բացատրել **u*->*q* հնչյունափոխությունը **յազգ**, **սազգ**, **ծունգ**, **արեզ**¹³ և նման տիպի բառերում, երբ ընդունված ստուգաբանությունների համաձայն այդ բառերը նույնպես կորցրել են հնդեվրոպական վերջին վանկերը կամ ձայնավորները:

Հ. Պեդերսենի հիշյալ վարկածը Ա. Մեյեն համարում է ո՛չ հերքելի, ո՛չ ապացուցելի, քանի որ բերվող օրինակները կարելի է ստուգաբանել և՛ այնպես, որ հնդեվրոպական **u*-ն ունենա միջձայնավորային դիրք, և՛ այնպես, որ այն գտնվի ձայնորդով հաջորդված դիրքում, ինչպես կոզի<**gʷ*o^hyo և **gʷ*o^hyo-, արեզ<**rey*- (հմմտ. հին հնդ. *ravih*) և **rey*^e/o^s, տայգր, տայգեր<**dai*yer- և **dai*yr: Այդ վարկածն ընդունելու դեպքում, ըստ Ա. Մեյեի, պետք է

¹² **G. Bolognesi**, *Ricerche sulla fonetica armena*, “Ricerche Linguistiche”, 1954, III, էջ 129-131:

¹³ Թեպետ բառավերջում **u*->*q* վարկածի կողմնակիցները գտնում են, որ **արեզ** ձևը ինքնուրույն գործածություն չի ունեցել, այլ **արեւ** բառի **ւ**-ն **արեւակն** բարդությունում օրինաչափորեն տվել է **գ**, բայց պակաս համոզիչ չեն և այն պնդումները, որ **արեզ**-ը **արեւ**-ի հին սեռական ինքնուրույն ձևն է (**արեւու**-ն ուշ ձև է): Տե՛ս **H. Eichner**, *Die urindogermanische Wurzel *H₂reu «hell machen»*, “Die Sprache”, 1978, 24, 2, էջ 147-149:

հրաժարվել հովիւ<*oyi-pa- և գովեմ¹⁴, հին սլավ. gověti հրապուրիչ ստուգաբանություններից¹⁵: Ավելի ուշ նրա տեսակետն այս հարցում բավական հստակ է. «Չայնավորների միջև կանոնավորապես ւ (վ) է՝ **տիւ**, հմմտ. սանսկր. divé-dive «օրեցօր», **կով**, սեռ. **կովու**, հմմտ. սանսկր. սեռ. gávāh, հուն. βο[F]ός, լատին. bouis և այլն: Իսկ գ-ն նույն ձևով ի հայտ է գալիս ձայնորդներից առաջ՝ **կոզի** (կովի արտադրածը), հմմտ. սանսկր. gávayah, «կովի», **տայգր**, հմմտ. սանսկր. devár-, հուն. δαήρ, լիտվ. dėveris, **լոգանամ**, հմմտ. հուն. λογώ, լատին. lauō, այստեղ **գ** դարձած *w-ն գտնվում է y-ից, r-ից, n-ից առաջ, բայց պայմանների մանրամասն ի հայտ չի գալիս»¹⁶:

Սակայն, ինչպես վերը նշվեց, այդ նույն *օրինակներով* (**կոզի**, **տայգր**) Ա. Մեյենն առարկում էր Հ. Պեդերսենին: Ինչ վերաբերում է **լոգանամ** ու նրա նման **ազածիմ**, **ազանիմ** և այլ բայերի **-ան-** ածանցին, ապա այն կարող է ոչ թե անմիջապես բխել հնդեվրոպական *-n- բայական միջաձանցից, այլ արմատին ավելացած լինել հայերենի հոդի վրա, որովհետև հետագայում այդ ածանցը համաբանությամբ ընդունել են նաև ոչ հնդեվրոպական ծագում ունեցող բայարմատները: Բացի այդ, արդյոք մեզ հայտնի^o է, որ *y>g հնչյունափոխությունը տեղի է ունեցել նախքան հնդեվրոպական վանկարար *h-ի՝ հայերենում **ա** ձայնավոր ստանալը: Թույլ *ə ձայնավորով նախորդված *n՝ *loyən-, Ա. Մեյեն, իհարկե, տվյալ դեպքում չի ենթադրում, այլապես իր իսկ օրենքով

¹⁴ Ավելի համոզիչ է Հ. Աճառյանի ստուգաբանությունը, որով **գով** արմատը համարվում է իրանական փոխառություն: Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. I, Ե., 1971, էջ 582:

¹⁵ A.Meillet, *Les dialectes indo-européens*, Paris, 1908, էջ 72-73:

¹⁶ A.Meillet, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*, էջ 50:

պետք է ունենայինք ***լովանամ**: Ուրեմն **լոգանամ** բայի հնդեվրոպական նախալեզվին հանգեցվող հնարավոր նախաձևն է *լօցո-: Սակայն նախ պետք է ապացուցել, որ *լօցո- նախաձևից հայերենում եղել է *logո-, ապա՝ **լոգան-ամ**, այլապես *լօցո->*լօցան- ձևից հենց Ա. Մեյերի վարկածով պետք է լիներ ***լովանամ** (միջձայնավորային դիրքում, ըստ Ա. Մեյերի, *վ>վ): Բսկ վանկարար *լ, *լ, *ղ, *ղ ձայնորդների ձայնավոր հնչյուն ստանալու երևույթը նույնպես վերագրվում է նախապատմական շատ վաղ անցյալին, որով հին տարածքները որոշելու փորձեր են արվում՝ նայած ձայնավորի որակին (in, un, on, an և այլն)¹⁷:

Պետք է նշել նաև, որ հայերենի և հնդեվրոպական այլ լեզուների որոշ բառերի համեմատությունից պարզվում է, որ այդ բառերում *վ-ին հանգող գ-ն նախապես եղել է միջձայնավորային դիրքում, ինչպես՝ **սագ(հ-ա)**, գալլ. cavannus, ռուս. сова, հին վերին գերմ. huwō «բու» համապատասխանությունները ենթադրել են տալիս հնդեվրոպական *kaya- նախաձև, **դեգեր, դեգերել**, հին ֆրիզերեն dwilich «թափառել, մոլորվել», լիտվ. dūlinėti «աննպատակ այս ու այն կողմ շրջել՝ ման գալ» համեմատությունից հայերեն բառերի համար ենթադրելի է *dheyer- նախաձև (**դէ** արմատի կողքին, հմմտ. **դեդեիս**):

Այս հարցում Ա. Մեյերի կարծիքին է հետևում նաև Հ. Աճառյանը¹⁸:

Ս. Մանը գտնում է, որ միջձայնավորային դիրքում հնդեվրոպական *վ-ն հայերենում նույն դիրքում և վերջում մնում է **ւ(վ)**: Բայց բերված հայերեն օրինակներում **ւ(վ)** բաղաձայնը միայն

¹⁷ См' u **В. Порциг**, Членение индоевропейской языковой области, М., 1964, էջ 102-104:

¹⁸ **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Ե., 1971, էջ 492:

բառավերջում է, ինչպես՝ **արև, կով, ձև** և այլն¹⁹: Այստեղից նա առանձնացնում է *eγos հնչյունակապակցությունը, որը, ըստ նրա, հայերենում դառնում է **որ**, անկախ այն բանից՝ այդ հնչյունակապակցությանը նախապես հաջորդել է *-r աճական կամ *-ro ածանց²⁰:

Հատկապես հնդեվրոպական *oγo և *eγo հնչյունակապակցություններում *y-ն որոշ բարբառներում ընկել է, և տեղի է ունեցել երկու ձայնավորների միացում, ինչպես՝ *k̑oγo- > հայ. **սոր** «անցք, խոռոչ», հին հնդկ. śoṭha- «ուռեցումը, փքվելը», բայց՝ լատին. cavus «դատարկ», caverna «փոս, քարայր», հուն. χύαρος «ճեղք, անցք», լատվ. šāva «ծառի ճեղք կամ խոռոչ», *neγo-/*noγo- > հայ. **նոր**, բայց՝ լատին. nover-ca «խորթ մայր», հին հնդկ. náva-, հին սլավ. novъ «նոր» և այլն: Որոշ լեզվաբաններ այս երևույթի սկիզբը հանգեցնում են հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանին²¹: Ինչ վերաբերում է հայերեն այդ տիպի որոշ բառերի r-ի առկայությանը, ապա Ս. Մանը հավանաբար ենթադրում է հնդեվրոպական *s-ի (տվյալ դեպքում նա կանխադրում է *oγos, *eγos հնչյունակապակցություններ) հայերենում r հնչյունափոխություն: Մակայն հայերենում հնդեվրոպական և այլ ծագում ունեցող s-ի ռոտացիվի երևույթը քիչ թե շատ հավաստի փաստերով հաստատված չէ: Մինչդեռ հենց վերը նշված այլ լեզուների օրինակներում համապատասխանաբար առկա է *-ro ածանց, որը թույլ է տալիս հայերեն այդ բառերին կանխադրել *-ro ածանցով (կամ *-r

¹⁹ S.E.Mann, նշվ. աշխ., էջ 55:

²⁰ Նույն տեղում, էջ 52:

²¹ Ըստ Ա.Ս.Մելնիչուկի վանկահնչյոթի տեսության՝ այդ երևույթն իր արմատներն ունի հնդեվրոպական ընդհանրության վաղ շրջանում: Տե՛ս **А.С. Мельничук, О генезисе индоевропейского вокализма**, “Вопросы языкознания”, 1979, № 5-6:

աճականով) նախաձևեր: Ս. Մանը, փաստորեն, այս վերջին դեպքն ընդհանրացրել է և նույն օրենքի տակ է առել այնպիսի բառեր (**ծոր** «կոծոխուր», **ծոր** «հյուր», **ձոր**, **զլորեն**, **մոլոր**, **մոլար**, **փոր**), որոնց համար կանխադրվող նախաձևերում միշտ չէ, որ կարելի է հենց իր իսկ բերած այլ լեզուների բառերով *ewos հնչյունակապակցություն վերականգնել: Բացի այդ, նշված օրինակներում *s-ն հնչյունափոխության պետք է ենթարկված լիներ ոչ թե *u-ի, որ շատ վաղ սղվել է, այլ հարակից *o-ի ազդեցությամբ: Այնինչ *o-ի մոտ *s>r հնչյունափոխության այլ դեպք Ս. Մանը չի դիտում, որն ինքնին կասկածի տակ է առնում այդ վարկածը²²:

Ջ. Գրեպինը սահմանում է հայերենում հնդեվրոպական *u-ի արտացոլման հետևյալ օրինաչափությունները: «1. *-ewo- և *-ewa- հաջորդականության համար նկատվում է *-w--ի և հետագայում մի ձայնավորի անկում: 2. Ձայնավորից առաջ (վերջին վանկի անկումից հետո) և ձայնեղից հետո *w-ն (*-Rw) հայերենում տալիս է **q**: 3. Մյուս դեպքերում հնդեվրոպական *w-ն հայերենում տալիս է **ւ**, բացառությամբ **n**-ից հետո դիրքի, որտեղ առկա է **վ**»²³: Սրանց հակասող օրինակներ կարող են թվալ **թովեն**, **չունեն**, **տենեն**, **վառեն**, **հովի** բառերը: Սակայն դրանց քննությունից Ջ. Գրեպինը գալիս է այն եզրակացության, որ **թովեն**-ում **վ**-ն ձայնավորների միջև է, հետևաբար, քանի որ նախապես բայի ներկան ունեցել է ձայնավորագուրկ հիմք՝ t'cowmi, **չունեն** (տառադարձում է čvem)²⁴

²² S.E. Mann, նշվ. աշխ., էջ 52:

²³ J. Greppin, *The Armenian Reflexes of IE *w and *y*, "Revue des études arméniennes", Paris, 1972, t. IX, էջ 74:

²⁴ Այս բառում **չու** արմատի բաղադրման հետևանքով **n**-ի շրթնատամային վ արտասանությունը ուշ շրջանի է և հնդեվրոպական u-ից չի բխում:

բառի ստուգաբանությունը կասկածելի է, որովհետև վերջինիս ցեղակից համարվող սանսկրիտի *cyávate* «շարժվել, գնալ» ձևը հնչյունապես նրա հետ անհամատեղելի է. **տեւեւ**-ը նախահայերենի **tew*- անվանական արմատից երկրորդաբար ստեղծված բայաձև է. **վառեւ**-ը ամենայն հավանականությամբ իրանական փոխառություն է: Միայն **հուլի** բառի վ-ն է մնում առեղծվածային, իսկ բառավերջի *ւ*-ն Ջ. Գրեպինը համարում է *-*tor* ածանցի մնացորդ (**powi-tor*)՝ **t>ւ* հնչյունափոխությամբ²⁵:

Վերև արդեն խոսվել է ձայնավորների միջև **u*-ի անկման երևույթի մասին: Ինչ վերաբերում է **u>q* և **u>ւ* (վ) օրինաչափությանը, ապա հեղինակը փաստորեն կրկին առաջ է քաշում Հ. Պեդերսոնի և մյուս լեզվաբանների վերը նշված վարկածը՝ միայն **u>q* անցման համար ավելացնելով *-*Rw* դիրքը, որով, գուցե, կցանկանար բացատրել, ասենք, **ծունգ**>*ḡonʷi-* ձևը: Ջ. Գրեպինը հասուկ նշում է նաև վ-ի գործառության ոլորտը՝ **ռ**-ից հետո դիրքը: Մենք այստեղ հարկ չենք համարում անդրադառնալ գրաբարյան *ւ* և *վ* նշանների արտասանության վիճելի հարցերին. դրանք միևնույն հնչյունի գրային տարբերակնե՞րն են եղել, թե՞ տարբեր հնչյունների գրային նշանները: Մեզ հետաքրքրում է հնդեվրոպական **u*-ի, որը, ինչպես ենթադրվում է, ունեցել է շրթնային՝ *ւ* (վ) և ոչ շրթնային՝ *զ* արտացոլումը հայերենում:

Հայերենում հնդեվրոպական **u*-ի արտացոլման վերաբերյալ վերը նշված վարկածներից Հ. Այխների տեսակետը շեղվում է հիմնականում **u>ւ* (վ) օրինաչափության բացատրությունում: Նա, հենվելով այն փաստի վրա, որ *ւ* (վ)-ով վերջացող բառերի բավական մասը հոլովվում է **ու** հոլովմամբ, ենթադրում է, որ

²⁵ J. Greppin, նշվ. աշխ., էջ 71-74:

հայերենը հնդեվրոպական **u*-ի դիմաց **լ (վ)** բաղաձայնն ունի միայն այն դեպքում, երբ նախահայերենում այդ **u*-ին հաջորդել է **u* ձայնավորը²⁶: Ըստ այսմ պետք է եզրակացնել, որ հայերենում **լ (վ)**-ով վերջացող բառերի **ու** հոլովիչը գալիս է հնագույն շրջանի «նախահայերենից» (ինչպես հեղինակն է կոչում) և, իհարկե, այն եղել է նախքան **u*>*q* հնչյունական օրենքը, քանի որ խանգարել է այդ դիրքում **u*-ի **զ** դառնալուն:

Սակայն պետք է ենթադրել, որ **լ (վ)**-ով վերջացող բառերի **ու**-ով հոլովվելը ավելի ուշ հայկական հողի վրա առաջացած երևույթ է, քանի որ այս հարցում հնդեվրոպական որևէ լեզու հայերենի հետ ընդհանրություն չի ցուցաբերում: Դրան հակառակ, քիչ չեն այն բառերը (նաև **ու**-ով հոլովվող), որոնք հոլովվում են **ո** հոլովմամբ, որն իր արմատներն ունի հնդեվրոպական նախալեզվում: Հ. Այիսները նույնպես գտնում է, որ հոլովային հիմքերի փոխանցումները հայերենում հազվագյուտ երևույթ չեն: Բայց եթե ենթադրենք, որ **u*>*q* անցման ժամանակ այդ բառերի հոլովային հիմքերն արդեն **u*-ից հետո ունեն **ու**, որի հետևանքով շրթնատամնային **u*-ն **զ**-ի չի փոխվել, ապա ինչպե՞ս բացատրել այն դեպքերը, երբ **լ (վ)**-ով վերջացող բառերը ունեն միայն **ո**-ով հոլովային հիմքեր (*կիւ*, *հուվ*, *ձեւ*, *թիւ*, *ստեւ*, *ցիւ*): Ուրեմն **u*>**լ (վ)** օրինաչափությունում **ու** հոլովիչին հատուկ դեր հատկացնելը համոզիչ չէ:

Այլ լեզվաբաններ էլ գտնում են, որ այս դիրքում (միջձայնավորային) հնդեվրոպական **u*-ի դիմաց հայերենում **զ** և **լ (վ)** հնչյունների համար որևէ օրինաչափություն սահմանելը

²⁶ **H. Eichner**, նշվ. աշխ., էջ 150-155:

դժվար է՝ եղած նյութը բավարար չափով ուսումնասիրված չլինելու պատճառով, և արձանագրում են միայն առկա փաստը²⁷:

Եթե մի կողմ թողնենք հնդեվրոպական բաղաձայն **ǵ*-ի բառավերջի դիրքը, որը հատկապես հայերենի համար ճշտորեն վերականգնել գրեթե հնարավոր չէ՝ շեշտահաջորդ վանկերի անկման պատճառով, հարցի պատասխանը կարելի է գտնել **ǵ*-ին հանգող հայերենում **գ**-ով և **լ (վ)**-ով վերջացող բառերի հոլովային հիմքերի ուսումնասիրությամբ: Դժվար չէ նկատել, որ **լ (վ)**-ով բառերը հոլովվում են ո կամ ու հոլովմամբ՝ *ձել, -ոյ, հաւ, ու, -ոյ* «պապ», *հաւ, ու*, նաև *-ոյ, -այ* «թռչուն», *հով, -ոյ, կիւ, -ոյ, կով, -ու, ստեւ, -ոյ* «անասունի՝ ուղտի բուրդ», *արեւ, -ու* և այլն: Մինչդեռ **գ**-ով վերջացող բառերը պատկանում են ի կամ ի-ա հոլովման, օրինակ՝ *սագ, ի-ա, արեգ, -ի, ստոյգ, ի-ա, ծունգ, ի-ա* և այլն: Այս օրենքից շեղվում է երկու բառ. *հոգ, -ոյ* «հոգս» (որի համար Հ. Աճառյանի կողմից հնդեվրոպական **peu-* «փչել» արմատին հանգող **poǵo-* նախաձև կանխադրելը մեզ կասկածելի է թվում այլ լեզուներում իմաստային համապատասխանություններ չունենալու պատճառով)²⁸ և *յագ* (որը **ո** հոլովման է ենթարկվում հետևաբար)²⁹: *Տիւ* բառը ինչ-ինչ պատճառով ստացել է հոլովային մասնիկավոր հիմք՝ *տու(ը)նջեան*: Ճիշտ է, հայերենում բավական արմատներ պահպանվել են բաղադրյալ ձևերով կամ որպես բայարմատներ, ինչպես՝ *հովիւ, դեգեր, տեւեմ* և այլն, որի հետևանքով նրանց հոլովային հիմքերի մասին որևէ ստույգ բան

²⁷ Մենք քննել ենք առավել հիմնավորված տեսակետները, մյուսները տե՛ս **J. Greppin**, նշվ. աշխ. և **H. Eichner**, նշվ. աշխ.:

²⁸ Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. III, Ե., 1977, էջ 106:

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 376:

ասել չենք կարող: Սակայն եղած օրինակներն էլ բավարար են որոշ եզրակացության հանգելու համար:

Հայերենում **n** ձայնավորահանգ հոլովումը ծագում է հիմնականում հնդեվրոպական *o թեմատիկ (հիմքակազմ) ձայնավոր ունեցող կամ *-ro, *-lo, *-no, *-yo, *ko և նման տիպի այլ վերջածանցներով բաղադրված բառերի հոլովումից: Թեք հոլովներում շեշտը հաճախ ընկնում էր վերջավորությանը նախորդող ձայնավորի, տվյալ դեպքում՝ *o-ի վրա³⁰: Այս տիպի հոլովումը հնդեվրոպական նախալեզվում, որի զարգացման ավելի ուշ շրջանին են վերագրում այն, լայն ընդգրկում ուներ և հայերենում նույնպես բառերի մեծ խումբ է ներառում: Ուստի հարց է ծագում՝ ինչո՞ւ պետք է այդ հոլովման պատկանեն հ.-ե. բաղաձայն *y-ին հանգող **ւ(վ)**-ով, բայց ոչ **գ**-ով վերջացող բառերը, եթե դրանք ձևաբանական որևէ այլ հատկանիշով կամ իմաստային դաշտով առանձին խմբեր չեն կազմում: Բառավերջում հնդեվրոպական *y պարունակող հայերեն բառերը, ունենալով տարբեր հոլովային հիմքեր, բաժանվում են երկու խմբի, որոնց համար բառավերջի **ւ(վ)** և **գ** հնչյուններից բացի այլ տարբերակիչ հատկանիշներ չենք գտնում:

Հնդեվրոպական *y-ից ծագող **ւ(վ)**-ով վերջացող բառերի մի մասը, հնարավոր է, գալիս է *-o- թեմատիկ հիմքով (որին նախորդել է *y-ով վերջացող արմատ), մեկ այլ մասը՝ *yo ածանցով ձևերից, մյուսները՝ պարզապես *o-ով հաջորդված միջձայնավորային *y-ով որևէ նախաձևից, ինչպես՝ **կով**, հուն. ատտ. βούζ, սեռ. βούφος «կով, եգ», հին վերին գերմ. kuo, chuo «կով», **հուլ**, «պապ»

³⁰ Տե՛ս **A.Meillet**, *Esquisse d'une grammaire comparée de L'arménien classique*, էջ 70:

Գ.Զահուկյան, *Հին հայերենի հոլովման սխառներ և նրա ծագումը*, Ե., 1959, էջ 230:

բառի համար վերականգնում են ընդհանուր *ags- նախաձև՝ լատին. avus «պապ», գոթ. awō «տատ», **հաւ**, հուն. հով. ՎղՄԾ, ՎղՕՅ (<*vāFóς), հին վերին գերմ. nāwa և այլն:

Հայերենում **ւ(վ)**-ով վերջացող բառերից մի քանիսի **ու** հոլովմամբ հոլովվելը հնդեվրոպական ընդհանրության շրջանից չի գալիս: «Դրանք մեծ մասամբ սկզբնապես այլ հիմքեր են ունեցել»³¹: Հայտնի է, որ հնդեվրոպական *ū և ō (կարճ *ō-ն՝ որոշ դիրքերում) ձայնավորներն են հայերենում դառնում **ու**: Հնդեվրոպական լեզուների և հայերենի համապատասխան բառերի համեմատությունից տվյալ դեպքում *u-ին հաջորդող *ñ-ով կամ *ō-ով նախաձևեր չեն կանխադրվում: Բացի այդ, ինչպես վերը նշվեց, *eu, *ou, *au, այսինքն՝ ձայնավորից հետո երկու *u-ով կապակցություններում առաջին *u-ն երկբարբառի տարր է, իսկ երկրորդը՝ բաղաձայն, որ հայերենում արտացոլված է որպես **գ**: Կարծում ենք, որ այդ բառերը նույնպես թեք հոլովներում նախապես ունեցել են **ո** ձայնավորով հիմքեր, որ վկայում է նաև այդ բառերից մի քանիսի ն՝ ո, ն՝ ու հոլովումներին ենթարկվելու փաստը: Ընդհանրապես «ո և ու հոլովումներն իրար մերձ են և բավական հաճախ իրար փոխարինում են»³²: Հայերենում **ւ(վ)**-ով վերջացող բառերի ու-ով հոլովվելու հակումը կարելի է բացատրել հենց շրթնային **ւ(վ)**-ի բնույթով, որի առնմանությամբ **ո**-ն, երբեմն արտաբերելով նաև **ու**, փոխել է տվյալ բառի հոլովումը: Հնարավոր է, որ այն հետագայում ոչ հնդեվրոպական որևէ տարածքի ազդեցություն է:

³¹ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 253:

³² Նույնը, էջ 120:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ միջձայնավորային դիրքում հնդեվրոպական **u*-ի՝ հայերենում շրթնային արտասանության պահպանման համար որոշակի դեր է խաղացել նրան հաջորդող նախնական **o* ձայնավորը: Բայց հարց է առաջանում՝ ինչո՞ւ այստեղ **eo* և **uo* կապակցություններում **u*-ն չի ընկել:

Միջձայնավորային **u*-ի անկման երևույթը, հնարավոր է, սկիզբ է առնում հնդեվրոպական ընդհանրության շրջանից, սակայն լեզուներում այն կարող էր ունենալ մասնավոր զարգացում: Հայերենի համար, օրինակ, նկատվում է հետևյալ օրինաչափությունը: Երբ արմատի միջձայնավորային **u*-ով հնչյունախմբին հաջորդում է մեկ այլ ձևույթ (մեծ մասամբ **-ro* ածանց կամ **-r* աճական) **u*-ն չի պահպանվում. այսպես՝ արդեն նշված *սոր* և *նոր* օրինակներին կարելի է ավելացնել *նեարդ*, հմմտ. հուն. νεῦρον, լատին. nervus, ավ. snāvarə «նյարդ, ջիղ», *սաղիւր*, սեռ. *սաղբեր* < **սաղբեւեր*, հմմտ. հուն. φρέ(F)αρ «ջրհոր, ջրամբար», *սալիւր*, սեռ. *սալեր* < **սալեւեր*, հմմտ. հուն. ἄλσρον «ալյուր» և այլն³³: Ինչ վերաբերում է **u*-ին հանգող *ւ(վ)*-ով վերջացող բառերին, ապա այդ հնչյունախմբին հաջորդող ձևույթով (ածանցով կամ աճականով) նախաձևեր հայերենի համար չեն ենթադրվում:

Հայերենում բառավերջի *ո-ի*՝ հարևան հնչյունի որակի վրա ազդելու փաստ կարելի է դիտել նաև *ի*-ով վերջացող բառերի՝ *ո* հոլովման դեպքում *ի>ւ* հնչյունափոխությունը՝ *որդի-որդւոյ, հոգի-հոգւոյ*: Թեպետ հնարավոր է նաև, որ *ւ* հնչյունն առաջացել է *իո* ձայնավորների միջև հորանջը փակելու պահանջով, բայց այդ

³³ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 172: J. Greppin, նշվ. աշխ., էջ 70: H. Eichner, նշվ. աշխ., էջ 153-154:

հնչյունի շրթնային արտասանությանը, այս դեպքում, անպայման **ռ**-ն նպաստել է (այլապես կունենայինք յ)' ***-հւոյ**, ապա թույլ **ի**-ի անկմամբ՝ **-ւոյ**³⁴:

Հին հայերենում **ւ(վ)**-ով վերջացող ոչ բոլոր բառերի **ռ**-ով կամ **ռւ**-ով հոլովվելը կարելի է նախնական համարել: Հետագայում ***ք>ւ(վ)** օրենքից հետո հայերեն թափանցած **ւ(վ)**-ով վերջացող բառերը նույնպես համաբանությամբ կարող էին ենթարկվել **ռ/ռւ** հոլովման:

Այսպիսով, հնդեվրոպական ***ք-ի**՝ հայերենում արտացոլման համար կարելի է սահմանել հետևյալ ընդհանուր օրենքը:

Բոլոր դիրքերում հնդեվրոպական ոչ վանկարար ***ք**-ն հայերենում տվել է **գ**, բացառությամբ երկու դեպքի: 1) Միջձայնավորային ***ք**-ով հնչյունախմբին (**VքV**) եթե հաջորդել է ածանց կամ ածական (հիմնականում ***r** տարրով սկսվող), ապա ***ք**-ն ընկել է: Այդ երևույթը եղել է նախքան ***ք>գ** հնչյունափոխությունը, այլապես պետք է ենթադրել հետագայում միջձայնավորային **գ**-ի անկում, մի բան, որ հայերենին հատուկ չէ: 2) Երբ ձայնավորից հետո դիրքում ***ս**-ին հաջորդել է ***օ**, և այդ հնչյունախմբին (**Vքօ**) որևէ ածանց կամ ածական չի հետևել, ***ք**-ն հայերենում արտացոլված է շրթնային **ւ(վ)**-ով: Նախնական **Vքօ** հնչյունակապակցություն պետք է ենթադրել նաև այն մի քանի բաղադրյալ ձևերի համար, որոնց նախաձևերը դժվարանում ենք վերականգնել: Այսպիսի վարկածի դեպքում, հասկանալի է, շեշտահաջորդ վանկերի կամ ձայնավորների կորուստը պետք է հաջորդած լինի ***ք>գ**, ***ք>ւ** հնչյունափոխությանը:

³⁴ **Հ. Պեղեքյան**, նշվ. աշխ., էջ 9: **A. Meillet**, *Esquisse*, p. 681: **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 211:

Այս օրենքին քիչ թե շատ հակասող օրինակներ կարող են դիտվել **եղեւին** և **հովիւ** բառերը (մյուսների **ւ(վ)**-ն կամ անմիջապես հնդեվրոպական ***u**-ին չի հանգում, կամ էլ այդ բառերը այս կամ այն չափով համոզիչ ստուգաբանություններ չունեն), որտեղ միջձայնավորային դիրքում **ւ(վ)**-ն ոչ թե **n**-ից, այլ **h**-ից առաջ է:

եղեւին բառի ստուգաբանությունն ընդունված է շատ լեզվաբանների կողմից: Այն բխեցվում է ***el-/ol-** «կարմիր, դարչնագույն» արմատի ***el-eu-** նախաձևից, որ հայերենից բացի համապատասխանություններ ունի նաև սլավոնական լեզուներում, ինչպես՝ չեխ. *jalovec*, լեհ. *jalowiec*, ռուս. *яловец* «գիհի»³⁵: Սակայն սլավոնագետների մեծ մասը մերժում է սլավոնական նշված բառերի այդպիսի ստուգաբանությունը: Նրանք ***alovъsь/*jalovъsь** նախաձևերին հանգող այդ բառերը բխեցնում են սլավոնական **alov-** «ստերջ, չբեր, անպտուղ» արմատից, որ հնդեվրոպական ***el-/ol-**ից չի ծագում՝ հմմտ. հին սլավ. *alova*, բուլղ. *я́лов*, ռուս. *я́ловый* «ստերջ, ամուլ, անպտուղ», սլովեն. *jalovec* «անպտուղ, ամուլ անասուն», չեխ. *jalovec* «գիհի», իսկ բարբառում՝ «ստերջ, ոչխար»: Ըստ այդ սլավոնագետների՝ գիհի ծառը այդպիսի անվանում է ստացել սլավոնական լեզուներում (ինչպես նաև լատիներենում՝ հմմտ. *īunīx* «ստերջ, ամուլ» և *iūniperus* «գիհի»), որովհետև այն երկտուն ծաղիկներով բույս է, որի պատճառով հաճախ չի պտղավորվում³⁶: Այս պարագային, ինքնին հասկանալի է, որ հայերեն **եղեւին** բառի ստուգաբանությունը նույնպես

³⁵ Stü J. **Pokorny**, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, Bern und München, 1959, էջ 303: **Հ.Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. II, Երևան, 1973, էջ 18: **G.Solta**, *Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen*, Wien, 1960, էջ 413:

³⁶ **А.Фасмер**, *Этимологический словарь русского языка*, т. IV, М., 1973, էջ 554: *Этимологический словарь славянских языков*, вып. I, М., 1974, էջ 69:

կասկածելի է դառնում, որովհետև *-el-/*ol- արմատով *eu ածանցով մեկ այլ ձև հնդեվրոպական մյուս լեզուներում չենք գտնում:

Հովի (h-w) բառը ստուգաբանվում է որպես հնդեվրոպական *ou̯i- «ոչխար» և *pā- «արածեցնել, կերակրել» բաղադրիչներից կազմված բարդություն՝ *ou̯i-pā-, որտեղ միջ-ձայնավորային *p բաղաձայնը հնչյունափոխվել է ւ-ի³⁷: Հնդեվրոպական *pā-ն **haw-** ձևով հայերենում առկա է միայն **հաւրան** «հոտ, երամակ» (*pātro-) բառում և ինքնուրույն գործածություն չունի: Որպես բարդ բառի երկրորդ բաղադրիչ *pā- արմատը հայերենից բացի վկայված է նաև հին հնդկերենում, որտեղ այն ավելի գործուն է, հմմտ. gō-pāh «հովիվ, տավարած» (*g^uou- «տավար» + *pā «արած»), gōpāyati «արածեցնել», paśupā-h «հովիվ ոչխարի»³⁸: Ուստի հնարավոր է, որ հայերեն բառը արիական տարածքի ազդեցություն է, որը հաջորդել է *u > q օրենքին:

Հայտնի է, որ հնդեվրոպական նախալեզվի համար վերականգնում են շրթնայնացած հետնալեզվային բաղաձայնների *g^u, *g^ua, *k^u, *k^u(h) շարք, որոնք, անկախ ծագումից, իրենց արտասանական յուրահատկության շնորհիվ գործառական կապի մեջ կարող էին լինել *u հնչյունի հետ: Դա երևում է վերականգնվող զուգաձևերից՝ *g^uel- ---*u̯el- «ցանկանալ», *g^uhen-(ə)- – *u̯en- (< *u̯ā-)

³⁷ St' u **A. Ernout** et **A. Meillet**, *Dictionnaire étymologique de la langue latine*, Paris, 1932, p. 684. **J. Pokorny**, նշվ. աշխ., էջ 787: **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. III, էջ 117:

³⁸ **J. Pokorny**, նշվ. աշխ., էջ 483: **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. III, էջ 117: Ինչպես տեսանք, Ջ. Գրեպինը այս բառի համար առաջարկում է *ou̯i-tor նախաձև:

«ծեծել, խփել», *g^hher- «տաք, ջերմ, շոգ» – *yer- «այրել, վառել» և այլն³⁹: Այդ երևույթը բարբառներում ունեցել է տարբեր զարգացում: «Մատեն» խմբի լեզուներում, եթե իսկապես եղել են շրթնայնացած հետնալեզվային բաղաձայններ, բավական վաղ շրջանում է վերացել այդ բաղաձայնների շրթնային արտասանությունը, որով նրանց կապը *y հնչյունի հետ խզվել է: «Կենտում» լեզուներում այդ արտասանությունը պահպանվել է երկար ժամանակ, որն այս կամ այն կերպ իր հետքն է թողել տվյալ լեզվի հնչյունական համակարգում: Լեզուների մի մասում դրանք արտացոլված են որպես ս ձայնավորով հաջորդած բաղաձայններ, մյուսում դարձել են շրթնային բաղաձայններ: Սակայն այս դեպքում նույնպես այդ բաղաձայնների հեռացումը *y-ից ակնհայտ է:

Պետք է ենթադրել, որ միայն հայերենում և կելտական (բրետոներեն, կիմրերեն, կոռներեն) լեզուներում է, որ այդ կապը այլ տիպի փոփոխություններ է առաջացրել: Կետական լեզուներում *y-ն արտասանությամբ աստիճանաբար մոտեցել է» *g^h(h)-ին և, վերջապես, *g^h(h) > b հնչյունափոխությունից հետո գրավել նրա տեղը: Եթե հայերենի շատ վաղ շրջանի հնչյունական համակարգին խորթ չի եղել *g^h(h) հնչյունը, ապա այն, գործառական կապի մեջ մտնելով *y-ի հետ, կարող էր, ի վերջո, նույնանալ նրա հետ: Այս երևույթը լեզուներում տեղի է ունեցել միմյանցից անկախ⁴⁰:

Կելտական լեզուներում *y-ից եկող *g^h-ն, որ պահպանել է շրթնային արտասանությունը, չի նույնանում հնդեվրոպական *g^h-ից ստացված b-ի հետ, հետևաբար *y > g^h օրենքը այս

³⁹ Տե՛ս Գ.Բ.Джаукян, նշվ. աշխ., էջ 244:

⁴⁰ Նոր պարսկերենում նույնպես v-ն բառակզբում երբեմն տալիս է g, որը շատ ուշ առաջացած երևույթ է:

լեզուներում ավելի ուշ շրջանի երևույթ է: Իսկ հայերենում հնդեվրոպական երկու հնչյունները նույնացել են ($*g^h > q$ և $*\mu > q$), որը խանգարում է այդ հնչյունափոխությունների հարաբերական ժամանակագրությունը որոշելուն:

Ուրեմն, հնդեվրոպական ոչ վանկարար $*\mu$ -ն հայերենում նախապատմական ինչ-որ շրջանում բոլոր դիրքերում ուներ հետնալեզվային արտասանություն: Այդ հնչյունի համար բացառված էր ձայնավորից հետո $*o$ -ից առաջ դիրքը, ուր հանդես էր գալիս նրա առաջնալեզվային տարբերակը, որի հետևանքով այժմ ունենք ստուգաբանական գուգաձևեր՝ **արեգ-արեւ, կոզի-կով, ոզի-հով, դեզր-դեղնիմ** և այլն⁴¹: Այդ շրջանում q և μ հնչյունները արտասանությամբ միմյանցից շատ չէին տարբերվում: Ենթադրելի է, որ q -ն սկզբնապես ունեցել է շրթնայնացման որոշ երանգ⁴²: Նրանք միմյանցից հեռացել են աստիճանաբար, երբ սկսել են կատարել իմաստագոյն դեր և դարձել են տարբեր հնչույթներ:

Հայերենում $*\mu > q$ անցման մոտավոր ժամանակը որոշելում ինչ-որ չափով, գուցե, օգնում է Ուրարտուի Սարդուր II թագավորի՝ մ.թ.ա. VIII դարի կեսերի արձանագրություններում հիշատակվող Սեանա լճի ավազանի երկրներից մեկի անվան Սելիկուի (Սելիկունի) ստուգաբանությունը: Այդ անունը հանդիպում է նաև Սարդուր II-ի որդի Ռուսա I-ի՝ մ.թ.ա. VIII դարի վերջի մի

⁴¹ Գուցե այս դիրքում ևս $*\mu > q$ օրենքը գործել է, իսկ այժմ այդտեղ **ւ(վ)** է, հետևաբար՝ **ռ**-ի մոտ **-գռ>-վռ** հակառակ հնչյունափոխության հետևանքով. հմմտ. օրինակ, ժամանակակից ռուսերենում բառավերջի o -ով հաջորդված միջձայնավորային r -ի արտասանությունը, ինչպես՝ *горячего, красного, его, всего*:

⁴² Այս ենթադրության օգտին են խոսում նաև մի քանի հայերեն փոխառությունները վրացերենում, ինչպես՝ *gvino* (գինի), *gvirabi* (վիրապ): Տե՛ս **Г.Б.Джаукян**, նշվ. աշխ., էջ 224:

արձանագրությունում⁴³: Գ. Ղափանցյանը գտնում է, որ այդ տեղանունը (Velikuni) հայերենում զարգացել է որպես **Գեղաքունի**⁴⁴: Հնարավոր է, որ մ.թ.ա. VIII դարում այդ բառը հայերենում ևս սկսվել է շրթնային ս-ով, բայց և այնպես «հնդեվրոպական *ս-ի հայ. **գ** հնչյունափոխությունն ավարտվում է վաղ հնագույն շրջանի վերջում»⁴⁵, այսինքն՝ ոչ ուշ, քան մ.թ.ա. IV-III դդ., մինչև պահլավական փոխառությունները⁴⁶: Ինչ վերաբերում է հայերենի հնչյունական համակարգում *ս > գ անցման հարաբերական ժամանակագրությանը, ապա ենթադրվում է հետևյալ հաջորդականությունը. «1) *s > h, 2) *k > q»⁴⁷:

Հնդեվրոպական բաղաձայն և ձայնորդ *ս-ն հայերենի հնչյունական համակարգում ստացել է յուրօրինակ արտացոլում, որով և, գուցե, պայմանավորված են այդ համակարգի այլ փոփոխություններ: Քանի որ հայերենը ինչ-որ շրջանում որոշ դիրքերում չուներ բաղաձայն *ս (բառասկիզբ, բաղաձայնից հետո ձայնավորից առաջ, միջձայնավորային դիրքեր) և ձայնորդ *ս (ձայնավորից հետո բաղաձայնից առաջ դիրք, որտեղ *eu, *ou > հայ. **ոյ**), ձգտելով լրացնել հնչյունական համակարգի բաց վանդակները, այդ դիրքերում նա սկսում է **ւ(վ)** արտաբերել *m, *p, *b(h), *t հնչյունները (հմմտ. *amōr- > աւուր, *sip-to- > հիւթ, *səbh- > աւազ,

⁴³ Տե՛ս **Ս. Գ. Բարխուդարյան**, *Վելիկունի երկիրը*, «Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ», հ. 1, Ե., 1935, էջ 153-204: **Դ.Ա.Меликишвили**, *Урартские клинообразные надписи*, М., 1960, էջ 286-287:

⁴⁴ **А.Капанцян**, *Историко-лингвистические работы*, т. II, Ереван, 1975, էջ 80-83:

⁴⁵ **Г.Б.Джаукян**, *О стратификации и хронологизации картвельско-армянских совпадений*, «Арнольд Степановичу Чикобава» (сборник, посвященный 80-летию со дня рождения), Тбилиси, 1979, էջ 92:

⁴⁶ **Г.Б. Джаукян**, *Очерки*, էջ 331:

⁴⁷ Նույն տեղում, էջ 318:

*arā-trom- > արար և այլն): Հենց այս հնչյունափոխությունն էլ, պետք է ենթադրել, նպաստել է *ս > գ օրենքի դադարելուն:

«Պատմա-քանասիրական հանդես»,
1981, N4(95):

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ *Լ-Ի ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերենում հ.-ե. *լ ձայնորդը արտացոլված է երկակի, որ գրաբարում **լ** և **ղ** գրային նշաններով է արտահայտված: Դրանց դիրքային բաշխվածությունը բառում ոչ միշտ է հնարավոր լինում բացահայտել, որը տեղիք է տալիս տարակարծությունների: Այդ հնչյունների՝ **լ**-ի և **ղ**-ի դիրքային տարբերակվածությունը կասկած չի հարուցում երեք դեպքում. ա) բառասկզբում հ.-ե. *l>հայ. **լ՝ լքանեմ** < *link-k^h-, հմմտ. լատ. linguō, հուն. λείπω, λιμπάγω «զբել, թողնել», բ) բաղաձայնների (նաև **ռ, մ, ն** ձայնորդների) մոտ հ.-ե. *l-ին հայերենում համապատասխանում է **ղ՝ տիղմ** < *stēl-, բայց **տիղ** (բրբ.), հմմտ. հուն. τέλμα, -ατος «ճահիճ, ցեխ, կավ», գ) **լ**-ից հետո, եթե նկատի ունենանք միայն գրությունը (բացառությամբ **ու**-ի), միշտ **ղ** է հանդես գալիս՝ **աւղ** < *au-lo-, հմմտ. հուն. ἄνλός «անցք, խողովակ», հին պրուս. aulis «ոտքի ոլոք», **հիւղ, շափիւղ** (փոխ.): Այս կետերից շեղվող բացառությունները ուշ շրջանի փոխառություններ են:

Ամենից ավելի վեճերի տեղիք են տալիս միջձայնավորային և բառավերջում ձայնավորից հետո դիրքերը:

Ի մի բերելով հայերենի **լ**-ով և **ղ**-ով հնդեվրոպական ծագման բոլոր բառերը, կարելի է որոշ կապ տեսնել *l-ին նախորդող ձայնավորի որակի և բառի մեջ **լ/ղ** բաշխվածության միջև:

Իրոք, ինչպես հայտնի է, գրաբարի հնչույթային համակարգում **լ** ձայնավորից հետո **լ-ղ** հնչույթային հակադրություն չունենք, հատկապես բնիկ հայերեն բառերում (1, էջ 174): Հենց **ջիլ/ջիղ, շիլ/շիղ, գիլ/գիղ** և նման զուգբաձևերը ցույց են տալիս, որ **լ**-ից հետո **լ>ղ** անցումը տեղի է ունեցել շատ ավելի ուշ, երբ այդ

հնչյունների դիրքային բաշխվածության հատկությունն արդեն խախտված էր:

Այն, որ լ-ն և ղ-ն ազատ տարբերակներ են ի-ից հետո և ոչ՝ ի-ից առաջ դիրքում (միակ բացառությունը *աղի-անալի* ձևերն են, որոնք կարող են ունենալ զարգացման տարբեր ընթացք), վկայում է հայերենում 1-ի արտասանական յուրահատկությունների կախվածությունը նրան նախորդող ձայնավորից: Այս վարկածի օգտին է խոսում և այն, որ բառասկզբում ձայնավորից առաջ դիրքում 1>ղ անցում տեղի չի ունեցել, այսինքն՝ *1-ին հաջորդող ձայնավորի որակը նրա վրա չի ազդել:

Այս առումով ուշադրության է արժանի նաև մեկ այլ փաստ: Բնչպես Ա. Մեյեն է նկատում, ի-ից հետո ղ հանդես գալու դեպքում դիտվում է ի>ե հնչյունափոխության միտում, «դրանով են բացատրվում այլ կերպ անբացատրելի այնպիսի ձայնդարձեր, ինչպիսիք են՝ *ասեղն-ասղան, ուղեղ-ուղղոյ, թիթեղն-թիթղուն* և այլն (տե՛ս 2, էջ 152): Բսկ *շիղ*-ի կողքին առկա է նաև *շիւղ* ձև, որի սեռականը նույնպես *շղի* է (նույն տեղում):

Այսպիսի օրինակներ կարելի է բերել նաև փոխառություններից: Հայերենի երկու լ-ից հարևան լեզուների միակ 1-ն, պետք է ենթադրել, արտասանությամբ ավելի մոտ է եղել ղ-ին, որով էլ տառադարձվել է տվյալ փոխառություններում: Սակայն իղ կապակցությունը, խորթ լինելով հայերենին, հաճախ փոխվում է եղ կամ իւղ-ի, հմմտ. *պղպեղ* < պրթ. *pilpil, *աբեղայ* < ասոր. abīlā, *փիղ* < պրթ. pīl, վկայված է նաև *փիլ, փեղ, փիւղ* ձևերով, *զամբիւղ, զամբեղ, զամբիղ, զամբիլ* < պրս. zanbīl (բրբ. ՆԲ. *զամբեղ*, Ղրբ. *զանբոյլ*), *շաւիղ, շաւեղ, շաւեղ* < ասոր. *šewīlā (տե՛ս 3): Հետագայում հայերենի տարբերակներում հաղթել է այս գուգա-ձևերից մեկը՝ և ոչ քիչ դեպքերում նաև իղ կապակցությամբ ձևը:

Բայց հենց այն փաստը, որ **դ**-ով հաջորդված **ի**-ն գրաբարում, թեկուզ, ասենք, գրիչների նախաձեռնությամբ, փոխարինվում է **ե** կամ **ի**-ով, խոսում է **իդ** հնչյունակապակցության՝ տվյալ ժամանակաշրջանում հայոց լեզվի արտասանական նորմերից ինչ-որ չափով շեղում համարվելու մասին:

Ի դեպ, նման միտում է նկատվում նաև հայերեն բարբառներում, որտեղ այն, հավանաբար, գրաբարի համեմատությամբ ավելի երկար ժամանակ է տևել: Այսպես, օրինակ՝ Մեղրու բարբառում «շեշտված ու շեշտահաջորդ վանկերում **լ**-ից առաջ **ե**-ն դառնում է **ի**. *ազբաթել > ըզբա՛թիլ, ցել > ցիլ, հայելի > հէ՛լլի > հի՛լլէ, աւել > ւի՛վիլ, ցախաւել > ցըխա՛վիլ, (առ)աւել > ի՛վիլ, ածելի > ծի՛լէ, քամելի > քիմի՛լէ, ելանել > ելլել > ի՛լլիլ, ազազայել > ազա՛զիլ* «խիստ քաջ» (4, էջ 33): Իսկ **լ**-ից առաջ շեշտյալ **ի**-ն բարբառին բնորոշ **ի>է** հնչյունափոխության չի ենթարկվում՝ *ծիլ > ծիլ, ցիլ > ցիլ, շիլ > շիլ* (նույնը, էջ 39): Նույնը կարելի է ասել Ղարաբաղի բարբառի վերաբերյալ, որտեղ շեշտի տակ սկզբնական ոչ ձայնեղներից հետո կա **ի > է** անցում, բայց **լ**-ից առաջ դիրքում նման անցում չի դիտվում՝ *ջիլ/դ > ճիլ, ծիլ > ծիլ, շիլ > շիլ(դի)*:

Այդ կապը, բնականաբար, կարող էր դառնալ փոխադարձ, հետևաբար ոչ միայն **լ**-ն պետք է ազդեր նախորդ ձայնավորի արտասանության վրա, այլ նաև ձայնավորը՝ **լ**-ի վրա: Ուրեմն, եթե *իդ > եդ, իւդ, ապա՝ ել > եդ, իւլ > իւդ*, այսինքն՝ **իդ**-ը և **եդ**-ը ինչ-որ ժամանակահատվածում դարձել են համակարգի միմյանց բացառող հնչյունակապակցություններ:

Հնդեվրոպական ծագման բառերում ճնշող մեծամասնությամբ (4:1 հարաբերությամբ) *el>հայ. **եդ՝պեդեմ** < *bhel-, **դեդին** <

*dhel-, **թելի** < *ptel-, **ցել** < ցel- և այլն: Բացառություն են **ել** < *el-, **ցել-ում** < *skel- (նաև **ցել**), **գելում** < *yelu-, **թել** < *tek-lo-, **արգել** < *arkel-, **աւել** < *obhel-, **առասպել** < *spel- ձևերը:

Այս ձևով **դ**-ի գործառության ոլորտն ընդլայնվել է. այն սկսել է հանդես գալ ոչ միայն բաղաձայնի մոտ, այլ նաև միջձայնավորային և բառավերջում ձայնավորից հետո դիրքերում, եթե նրան նախորդել է **ե**: Այնուհետև, երբ արդեն խախտված էր ընդհանուր կանոնը, հիշյալ դիրքերում, այսպես ասած, իրենց իրավունքների մեջ կարող էին մտնել նաև հետին շարքի ձայնավորները, որոնց մոտ սովորաբար **լ**-ն ավելի կոշտ է հնչում:

Հնդեվրոպական *a-ին հանգող **ա**-ից հետո նույնպես առկա է **լ** > **դ** անցում: Քանի որ հնդեվրոպական նախալեզվում *a ձայնավորի հանդես գալու հաճախականությունը բառում փոքր էր, հայերենում նույնպես համապատասխան օրինակները քիչ են: Բայց և այդ քիչ մեջ էլ կարելի է նկատել, որ **աղ** կապակցությունով ձևերն ակնհայտորեն շատ են (մոտ 3:1 հարաբերությամբ)՝ **աղանդ**, **աղաւաղ** (< *al-), **աղանձ** (< *al-), **աղամ**, **աղաւրի** (< *al-), **աղաւակ** (< *al-), **աղ** (< *sal-) և այլն: Բացառություններ են՝ **ան–ալի** (< *sal-l-, նաև **աղի**), **ալիւր/ելր** (< *alā-, նաև **աղամ**), **աղաւրի**, **ալարեմ** (< *al-, նաև **աղաւաղ**), **թալ** (< *tāl-): **Դալար** և **դալուկն** ձևերը կարող են գալ ոչ թե *dhl-, այլ *dhel (հմմտ. **դեղ**) արմատի թույլ ձայնավորումով ձևից:

Ձայնավորային դիրքում (բառասկզբում բաղաձայնից առաջ և բաղաձայնների միջև) հնդեվրոպական *l-ն բնականաբար հայերենում պետք է տար **աղ**: Բայց քանի որ թույլ ձայնավորումը (շվա պրիմում և շվա սեկունդում) հայերենում նույնպես արտացոլված է **ա**-ով, հաջորդ վանկերի անկման պատճառով դժվարանում է այդ դիրքերի տարբերակումը: Ոչ քիչ թվով դեպքերում **աղ**-ով հայերեն

ձևի համար վերականգնելի է թույլ ձայնավորմամբ արմատով նախաձև՝ **կաղին** < *g^u-ել-(*g^u-el-), **սաղ-արթ** < *kel- (*kēl-), **կաղաւեւ** < *gēl-(*gel-) և այլն: Այն, որ այս դիրքում հանդիպում են ն՝ **աղ**-ով, ն՝ **ալ**-ով ձևեր (վերջինս ավելի քիչ), գուցե արդյունք է այն բանի, որ հայերենում ինչպես ձայնորդների ձայնավոր հենարան (**ա**) ստանալը, այնպես էլ թույլ ձայնավորների (շվա պրիմում և շվա սեկունդում) լիաձայնության վերածվելը (դարձյալ **ա**) հաջորդել է **ա**-ի մոտ *l>ղ անցմանը:

Դժվարանում ենք որոշել **ռ**-ից (< *o) հետո դիրքում **լ** > ղ բաշխվածության հիմնական միտումը, թեպետ **ռղ** կապակցությունով ձևերը որոշ չափով գերակշռում են:

Ինչ վերաբերում է **ռ**-ից հետո (հնդեվրոպական *u-ից և երկար *ō-ից եկող) դիրքին, այն մտնում է լ-ի գործառության ոլորտը՝ **ռլռլալ** (< *ul-), **սլ-աք** (< *kul-lo), **զլռլխ** (< *qululḫ < *gholukho- < *ghel-), **կռլ** (կլանեմ < *g^u(b)l-), **-դռլ** (անդռլ < *dhu-li < *dheu-), **ռլ**-ն (< *olen, բայց՝ **ռղն**), **ռլ** (< *pu-lo- < *pou-) և այլն: Բացառությունները դարձյալ քիչ են՝ **ռղի** (< *uli-), **ռղռլ** (< *ōlōg-), **մռղ**, **մղեմ**, բրբ. **մռլ**, **մլեմ** < *mōl-), **խռլ** (< *khulo < *(s)keu-), **պտտռլ**, **պռտտռլ** < *bhud-lo-), **քռլ** < *kōl-(*kele-):

Ինչպես վերը նշվեց, **ի**-ից հետո (հնդեվրոպական *i-ին կամ երկար *ē-ին հանգող) հիմնականում հանդես է գալիս **լ**՝ **բիլ** < *bhēl-, **իլ-իկ** < *elo-, **սիլ** < *del-, **ջիլ** < *g^uhislo-(*s-ն ավելի շուտ է սղվել), **շիլ** < *skhēl-, **ռ(ր)ջիլ** < *orghilo-, **ծիլ** < *g^utilo- և այլն: Ոչ կանոնական պետք է համարել **ծիղ** > **ծեղ**, **ծիւղ(ըն-ձիւղ)**, **ջիղ/ջեղ**, **զիղ** ձևերը, որոնք հանդես են գալիս նաև **իլ** հնչյունակապակցությունով:

Համեմատաբար ավելի հին շրջանում ընդօրինակած ձեռագրերում հանդիպում ենք երկբարբառի բաղադրիչ **յ-ից** հետո **դ** գրությանը՝ **այդ, գայդ, թոյդ**:

Եթե ընդունենք, որ հնում **յ-ով** երկբարբառներից հետո նույնպես **դ** է հնչվել, ապա այդ **դ-ն** չէր կարող լինել կոշտ, այլ կունենար պարզապես միջնալեզվային արտասանություն, նույնիսկ որոշ փափկության երանգով: Ըստ Արիստակես գրիչի՝ այդ **դ-ն** ավելի փափուկ է հնչվում, քան **լ-ն** (տե՛ս 5, էջ 240): Ուրեմն **յ-ով** երկբարբառներից հետո **լ-ն** կարող էր ձեռք բերել դիրքով պայմանավորված միջնալեզվային արտասանություն, որով կմոտենար **դ-ին**, ինչպես նաև փափկություն՝ մերձենալով **լ-ին**: Այսպիսի «փափուկ» **դ** կարող էր պահպանվել նաև երկու **լ-երի** միմյանցից հեռանալուց հետո: Հենց այսպիսի երկու **լ-երի** միջև միջին դիրք գրավող **դ-ով** է հնչվել, հավանաբար, մեկ **լ** ունեցող հարևան լեզուներից հետագայում կատարած փոխառությունների համապատասխան հնչյունը, որը տառադարձել են **դ-ով**: Հետագայում, երբ **դ-ի** արտասանական տեղը ավելի ու ավելի հետ է գնացել, **յ** կապակցության **դ-ն** փաստորեն ավելի մոտ է մնացել **լ-ին**: Այդ ձևով **դ-ի** և **լ-ի** հնչյունային հեռավորության աստիճանական մեծացման, հետևաբար նաև հնչույթային տարբերակվածության մեծացման շնորհիվ **լ-ի** արտասանությունը այլևս չէր ձգտի հնարավոր հակադրության: Դրանով կփոքրանար նաև **յյունի** և **դյունի** (այդպես են կոչել երկրորդ **դ-ն**) հնչյունային հեռավորությունը, որն էլ կհանգեցներ դրանց նույնացման, իհարկե, եթե նկատի ունենանք դիրքով պայմանավորված որոշ յուրահատկություններ: Ինչ վերաբերում է փոխառություններին, ապա հնագույն շրջանից եկող բառերում **դ-ն** վերածվել է հետնալեզվային ձայնեղ շփական բաղաձայնի՝ **մողես, կեղև,**

շաւիղ, փիղ, այսինքն՝ ենթարկվել է տվյալ ժամանակաշրջանին բնորոշ հնչյունական զարգացման: Իսկ ավելի ուշ՝ 5-րդ դարից գուցե ավելի վաղ սկսած օտար բառերի 1-ն հնչվում էր «փափուկ» **ղ-ի** (ղյունի) նման, որը թեպետ հաճախ տառադարձվում էր **ղ-ով** (գրվում էր նաև փշիկով **ի**), բայց արտասանությամբ մոտ լինելով 1-ին՝ նույնացավ նրա հետ՝ **Հերակղ /Հերակլ, Բարայեղ/Բարայել, ղաղ/լալ** «թանկարժեք քար»: Իսկ երբեմն էլ **ղ** էին գրում՝ պարզապես հետևելով ավանդությանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ կարելի է անել որոշ եզրակացություններ: Հայերենի նախապատմական շրջանում բաղաձայնների մոտ 1-ն աստիճանաբար ձեռք է բերել միջնալեզվային արտասանություն: Հիմա արդեն դժվար է ստույգ ասել, թե սկզբնապես լեզուն բերանի խոռոչում ինչպիսի դիրք է գրավել: Մի բան, սակայն, պարզ է, հետագայում այդ 1-ի արտասանության տեղը հետզհետե շարժվել է դեպի հետ, որն էլ հանգեցրել է հետնալեզվային ձայնեղ շփական **ղ-ի** առաջացմանը: Այս գործընթացն ունեցել է, հավանաբար, և իր հետընթաց շարժումը, մյուս դիրքերում 1-ն ձգտել է առաջնալեզվային, փափուկ արտասանության: Այսպիսի հակադրությունն էլ հանգեցրել է 1-ի արտասանական տարբերակների հնչույթացմանը, որը գրերի ստեղծման ժամանակ արդեն ակնհայտ էր:

Երկու 1-երի հնչույթային հակադրության կարող էր մղել դրանց դիրքային բաշխվածության օրենքի խախտմամբ առաջացած որոշ շփոթք: Այսպես կոչված կոշտ 1-ն, որ հավանաբար միջնալեզվային արտասանություն ուներ, սկսում է հանդես գալ նաև 1-ից հետո դիրքում, անկախ այն բանից, հաջորդում է 1-ին բաղաձայն, թե ոչ: Այսպիսով ընդլայնվում է կոշտ

Լ-ի դիրքային բաշխվածության ոլորտը, քանի որ այն հանդիպում է նաև միջձայնավորային և բառավերջում ձայնավորից (e) հետո դիրքերում, որտեղ հանդես էր գալիս հիմնականում փափուկ Լ-ն: Հենց այս հանգամանքն էլ կարող էր առիթ հանդիսանալ երկու Լ-երի հնչյունային տարածության մեծացման: Կոշտ Լ-ի արտասանության տեղը շարժվել է դեպի հետ, որն էլ նպաստել է կոշտ Լ-ի հետնալեզվային դառնալուն: Իսկ հետնալեզվային Լ-ն կարող էր հանդես գալ նաև հետին շարքի ինչպես միջին բարձրացման օ-ից, այնպես էլ ստորին բարձրացման a-ից հետո:

Այսպիսով ստեղծվել է մի վիճակ, երբ նախապատմական շրջանի հայերենում Լ կարող էր լինել հիմնականում բառասկզբում ձայնավորից առաջ և վերին բարձրացման ի և ու ձայնավորներից հետո դիրքերում, իսկ մյուս դեպքերում սկսել է դիտվել դ-ի, այսինքն՝ Լ-ի կոշտ արտասանության ընդհանուր միտում, բացառությամբ յ-ով երկբարբառներից հետո դիրքի, որտեղ հանդես է եկել երկու Լ-երի միջև միջին դիրք գրավող տարբերակը:

Սակայն, պետք է ենթադրել, օտար փոխառություններով խախտվել է նաև այս կանոնը: Քանի որ այդ լեզուների Լ-ն արտասանությամբ մոտ է եղել հայերեն դ-ին, աստիճանաբար փոխառություններում սկսել են դ արտասանել և նրա համար բացառված դիրքերում: Այս հանգամանքն էլ, հավանաբար, խանգարել է վերը նշած օրենքի ընդհանրացմանը, և այն կանգ է առել, որի հետևանքով միջին և ստորին բարձրացման ձայնավորներից հետո որոշ թվով բառերում Լ>դ անցում տեղի չի ունեցել: Հնարավոր է, որ դրանցից մի մասը հնդեվրոպական լեզուներից հայերեն է թափանցել օրենքը դադարելուց հետո:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Էդ. Ադայան, *Գրաբարի քերականություն*, հ. 1, Ե., 1964:
2. A.Meillet, *Remarque sur l'arménien classique*, “Etudes de linguistique et de philologie arméniennes” II, Louvain, 1977:
3. Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Ե., հհ. 1-4, 1971-1979:
4. Էդ. Ադայան, *Մեղրու բարբառը*, Ե., 1954:
5. Լ.Գ. Խաչերյան, «Գրչության արվեստի» լեզվական քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Ե., 1962:

«II Հայերենագիտական միջազգային գիտաժողով»,
(21-23 սեպտեմբերի 1987):

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՁԱՅՆԱՎՈՐ ԵՎ ՁԱՅՆՈՐԴ

*ս-Ն ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հնդեվրոպական լեզուների հնչյունական համակարգերի համեմատական ուսումնասիրությունը լեզվաբաններին հանգեցրել է այն եզրակացության, որ հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանում *ս, *i, *r, *l, *m, *n հնչյունները, դիրքից կախված, կարող էին լինել ձայնավոր, ձայնորդ (երկրարբառի տարր) և բաղաձայն¹: Մակայն լեզուներում դրանք ստացել են տարբեր զարգացում, որի հետևանքով դիրքային այդ տարբերակները որոշ դեպքերում դարձել են միմյանցից անկախ հնչույթներ: Հայերենում, օրինակ, հնդեվրոպական *ս-ի դիմաց ունենք և՛ բաղաձայն, և՛ ձայնավոր, որոնք նախազբաբարյան շրջանից ի վեր անկախ հնչույթներ են:

Հնդեվրոպական *ս-ն վանկարաբ ձայնավոր էր հետևյալ դիրքերում՝ բաղաձայնից առաջ, բաղաձայնների միջև, բառավերջում բաղաձայնից հետո², որ հնդեվրոպական լեզուներում վկայված է որպես ձայնավոր (հմմտ. *սl-i- > հայ. *ուղի*, հին սլավ. *sluca*, *dhughætēr > հայ. *դուստր*, հին հնդկ. *dūhitár*, հուն. *δυήατηρ*,

¹ Կոկորդայինների տեսության կողմնակիցները հնդեվրոպական նախալեզվի վաղ շրջանի կոկորդային H հնչյունին նույնպես վերագրում են նշված գործառական կիրառությունը:

² Տվյալ դեպքում բառավերջի դիրք անվանումը որոշ չափով պայմանական է. հնդեվրոպական բառերի՝ լեզուներում կրած տարբեր փոփոխությունների հետևանքով նախաձևերի վերջին հնչյունների վերականգնումը միշտ չէ, որ հնարավոր է:

*domu-, *dōmu-/dāmu- > հայ. տանու, հին սլավ. domъ, լատին. domus, - ūs հին հնդկ. damu-nas)³:

Հնդեվրոպական նախալեզվում *u-ն որպես ձայնավորային համակարգի միավոր ունեցել է նաև երկար տարբերակ՝ *ū⁴: Հնդեվրոպական երկար *ū-ն, ի տարբերություն երկար *ē և *ō ձայնավորների (*ē>ի, *ō>ու), հայերենում նկատելի հետք չի թողել, այսինքն՝ այն նույնպես դարձել է ու⁵: Սակայն Ս. Մանը գտնում է, որ հնդեվրոպական *ū-ն հայերենում տվել է այ, և որպես օրինակ նշում *բոյլ*, *ձոյլ*, *լոյտ*, *մոյգ*, *խոյլ*, *բոյս* բառերը, որոնք, ի դեպ, տառադարձում է ժամանակակից աշխարհաբար արտասանությամբ՝ bujik', dzujl, lujt և այլն⁶:

Մի կողմ թողնելով Ս. Մանի բերած որոշ օրինակների ստուգաբանությունների համոզիչ լինելը, անդրադառնանք միայն դրանց ձայնավորման հարցին: Նրա նշած հնդեվրոպական լեզուների համապատասխան բառերում հայերեն ոյ-ի դիմաց իրոք առկա է երկար ū. ինչպես՝ հին հնդկ. bhūri «առատ» (հայ. *բոյլ*), հուն. χῦλός «հյութ» (հայ. *ձոյլ*), լիտվ. plūsti «հայհոյել» (հայ. *լոյտ*), հուն. σμῦχω «դանդաղ այրել» (հայ. *մոյգ*), սլավ. skъl «հարդի բարդոց» (հայ. *խոյլ*)⁷: Սակայն հենց տվյալ արմատներին հանգող

³ Հնդեվրոպական լեզուների ձևերը վերցված են ստուգաբանական բառարաններից և լեզվաբանների (Ս. Մեյե, Գ. Ջահուկյան, Է. Ադայան, Ս. Ման և ուրիշներ) աշխատություններից:

⁴ Հնդեվրոպական երկար ձայնավորները ունեն տարբեր մեկնաբանություններ, ինչպես՝ կոկորդայինների, վանկահնչյոթի վարկածներից բխող բացատրությունները: Բայց քանի որ հատկապես ī և ū ձայնավորների դեպքում լեզուների տվյալները միշտ չէ, որ իրար համապատասխանում են, լեզվաբանները եզրակացնում են, որ դրանք հաճախ լեզուներում ինքնուրույն զարգացման արդյունք են:

⁵ A. Meillet, *Esquisse d'une grammaire comparée de l'arménienne classique*, Vienne, 1936, էջ 42: Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. VI, Ե., 1971, էջ 489:

⁶ S. E. Mann, *Armenien and Indo-European (Historical Phonology)*, London, 1963, էջ 43:

⁷ Նույն տեղում:

այլ ձևերի համեմատությունը ենթադրել է տալիս, որ այդ արմատներն ունեցել են նաև *eu/*ou երկբարբառներ՝ հուն. *χεῶμα* «ձուլում, հալում», հին հնդկ. *hóman* «գոհ», գոթ. *giutan* «թափել, ձուլել» (**ǵheu-/*ǵhu-*), հուն. *χάλη* «ուռուցք», հին վերին գերմ. *hōla* «փոշտանկ» (**keu-/*kou-/*ku-*), հին հնդկ. *bhávati* «լինել», գոթ. *bauan* «կենալ, բնակվել» (**bheu-/*bhou-/*bhū-*): Հետևաբար, պետք է ճշտել, թե *eu/*ou/*ǵ ձայնդարձի ո՞ր աստիճանն է հանդես գալիս նշված հայերեն բառերի նախաձևերում:

Եթե Ս. Մանի համար չափանիշն այն է, որ որոշ լեզուների երկար *ū*-ի դիմաց հայերենում երբեմն առկա է **ոյ**, որը, սակայն, նախալեզվում ունի *eu/*ou/*ǵ հերթագայվող նախաստիպ, ապա բազմաթիվ են այն դեպքերը, երբ հայերենը համապատասխանաբար ի հայտ է բերում նաև **ու**-ով ձևեր: Հնդեվրոպական լեզուների տվյալների հիման վրա վերականգնվում են մի շարք արմատներ, որոնք ունեն ոչ թե երկբարբառով և *ǵ-ով հերթագայություն, այլ միայն երկար *ū: Այս դեպքում հայերեն համապատասխան ձևը, որպես կանոն, վկայված է **ու**-ով՝ սրունք < **krūs-ni*, սլաք < **utolap* < **kū-*, մուն < **mū-*, մուկն < **mūs-*, լու < **klū-*, ձուկն < **ǵhdū-*:

Հայերեն **ոյ** երկբարբառը հնդեվրոպական *ū-ին հանգեցնելու համար, հավանաբար, հիմք է ծառայել այն, որ հայերենում իրանական փոխառությունների **ոյ**-ի դիմաց հաճախ նոր պարսկերեն համապատասխան բառերում երկար *ū* է: «Ինչպես փոխառություններն են, այնպես էլ ժառանգված (հնդեվրոպական ծագում ունեցող-Մ.Ա.) բառերը»⁸, - եզրակացնում է Մանը: Սակայն հայերենում իրանական փոխառություններն ունեն տարբեր ժամանակագրություն: Նախագրաբարյան շրջանի հին պարսկերեն

⁸ Նույն տեղում, էջ 43:

au (Ավեստայում՝ ao) երկբարբառը, որ պահլավերենում երկար օ է, նոր պարսկերենում երբեմն՝ ū, գրաբարում շեշտի տակ արտահայտվում է **ոյ** երկբարբառով⁹, ինչպես՝ (**q**)**գոյշ**-հին պարսկ. gauša, ավ. gaoša, պահլ. gōš, նոր պարսկ. gōš (gūš), **անոյշ**- ավ. anaoša- «անմահ», պահլ. anōš «նեկտար, անմահության ըմպելիք», նոր պարսկ. nōš (nūš) «կենաց ջուր, քաղցրաճաշակ և անուշահամ իր», **կապոյտ**- հին պարսկ. kapauta, պահլ. kapōt, նոր պարսկ. kabūd «կապոյտ»: Տվյալ դեպքում **ու**-ն ի հայտ է գալիս հայերեն այն բառերում, որոնք փոխառված են պահլավական կամ ուշ պարսկական (ինչպես նաև արաբական, ասորական և այլն) երկար ū-ով ձևերից՝ **բազուկ**- պահլ. bāzūk, **կուժ**-պահլ. kūž, նոր. պարսկ. kūza, **անուշադր**-նոր պարսկ. nūšādir, **զամբուռ** «վայրի մեղու, իշամեղու, պիծակ»- նոր պարսկ. zanbūr «դեղին կրետ, իշամեղու»¹⁰:

Թեպետ Ս. Մանը նշում է, որ «հայերեն սյ-ի պատմական հիմքը հաճախ անորոշ է. հայերեն lujš, luso, lusov (պարսկ. rūz «օր») բառը ծագում է կա՛մ *leuk- նախաձևից, կա՛մ՝ *louk-»¹¹, այնուամենայնիվ նա գտնում է, որ **բոյս** (bujš, buso, busov) բառն, օրինակ, «պարունակում է հնդեվրոպական *ū (ո՛չ հնդեվրոպական *ou), քանի որ գուգաբանական ձևերն ի հայտ են բերում հնդեվրոպական *ū-ի արտացոլում, չնայած բառավերջի s տարրը (հնդեվրոպական *k) այս օրինակում անորոշ ծագում ունի»¹²: Ինչպես վերը նշվեց, այս արմատը հնդեվրոպական նախալեզվում

⁹ **A. Meillet**, նշվ. աշխ., էջ 44: **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս I, Ե., 1940, էջ 238: **Է. Բ. Ադայան**, *Գրաբարի քերականություն*, Ե., 1964, էջ 95:

¹⁰ **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հհ. I-IV, Ե., 1971-1979:

¹¹ **S. E. Mann**, նշվ. աշխ., էջ 43:

¹² Նույն տեղում, էջ 44:

ուներ *bheu-/bhou-/*bhū- հերթագայվող տարբերակներ: Ուստի Մանի պնդումներն անհիմն են:

Գրաբարյան **ոյ** երկբարբառն ունի տարբեր ծագում՝ որոշ բառերում հնդեվրոպական շրջանից է գալիս, իսկ իրանական փոխառություններում, ինչպես տեսանք, արտացոլում է հին պարսկական **au** երկբարբառը (պիլ. **ō**), բայց ոչ երբեք՝ երկար **ū**-ն: Այն փաստը, որ հայերեն մի շարք բառերում, որոնց հնդեվրոպական նախաձևերն ունեցել են միայն երկար *ū, այժմ առկա է **ու**, իսկ **ոյ** երկբարբառը հանդես է գալիս, երբ տվյալ բառերի հնդեվրոպական արմատի համար կանխադրվում է *eu/*ou/*ū (*eu/*ū, *ou/*ū) հերթագայություն, հիմք է տալիս եզրակացնելու, որ հնդեվրոպական երկար *ū-ին հայերենում համապատասխանում է **ու**, իսկ հնդեվրոպական շրջանից եկող **ոյ**-ը ունի երկբարբառային ծագում:

Բաղաձայնից հետո ձայնավորից առաջ դիրքում հնդեվրոպական լեզուներում հաճախ առկա է վանկարար **u**, որը երբեմն հաջորդված է բաղաձայն **v**-ով՝ լատին. **duo**, հուն. **duo**. **δύω** < **δύ(f)ω**, հին սլավ. **дѣва**, ըստ Ա. Մեյեի, վեդաներում գրվող **dvā** ձևը նույնպես ունի երկվանկ արտասանություն՝ **d(u)vā** «երկու», հին հնդկ. **bruvah** (սեռ.), հուն. **δωρυός** < ***οδωρύφος**, հին սլավ. **brъvъ**, լիտվ. **bruvís** «հոնքեր», իսկ երբեմն էլ ***u**-ն այդ դիրքում բաղաձայն (կամ ձայնորդ) է՝ հին հնդկ. **svápna-**, հին իսլ. **suefn** «քուն», հին սլավ. **svekry**, հին հնդկ. **śvāsura-** «սկեսուր» և այլն¹³:

Գրաբարում այդ դիրքում կան **ու**-ով բառեր, որոնք համապատասխանություններ ունեն հնդեվրոպական այլ լեզուներում:

¹³ **A. Meïe**, *Введение в сравнительное изучение индоевропейских языков*, М-Л., 1938, էջ 141:

ինչպես՝ **սուաղ** «կեր», ավ. x^var «ուտել» (*s^uel-), **սուայտ**, «տանջանք, տառապանք», ավ. Թwyant «վախեցող» (*s^uei-), **սսուար**, հին շվեդ. stur «մեծ», հին հնդկ. sthāva «հաստ, ամուր, խիտ» (*steuǝ-): Այսպիսի բառերը, սակայն, մեծ մասամբ հայերենի հնչյունական օրենքներից այս կամ այն տիպի շեղումներ են. հետևաբար, ուշ շրջանի այլ տարածքների արդյունք¹⁴: Նման դիրքում **ու**-ն հայտնվել է ավելի ուշ, երբ այն սերել է այլ հնչյուններից՝ **աղուէս** < *lōpek-, **արծուի** < *rǝipijio-, երբ *u-ից հետո հնդեվրոպական բաղաձայնն ընկել է՝ **նու**, սեռ. **նուոյ** < *snuso-, **լու**, սեռ. **լուոյ** < *plusos, **չու**, սեռ. **չուի** < *kiu-ti- և այլ պատճառներով:

Նշված դիրքում հայերենը հնդեվրոպական u-ի դիմաց ունի միայն ոչ վանկարար բաղաձայն, որը, սակայն, կրել է հարևան բաղաձայնի ազդեցությունը, այսինքն՝ **գ**-ի փոխարեն (*ǵ > g), օրինակ, առկա է **ք**, **կ**, **շ**, ինչպես՝ **քուն** < *s^uopnos, **քիրտն** < *sid-ro-, **երկու** < *duō(u), **շուն** < *k^uōn-:

Բաղաձայնից հետո ձայնավորից առաջ հնդեվրոպական *u-ի ձայնավոր (ձայնորդ) բաղաձայն հերթագայության երևույթին դեռ XIX դ. վերջերին ուշադրություն է դարձրել Է. Զիվերսը: Նա, հենվելով գերմանական լեզուների և վեդայերենի (հին հնդկական վեդաների լեզվի) փաստերի վրա, գտնում է, որ հնդեվրոպական նախալեզվում *y և *w ձայնորդները կարճ վանկից հետո հանդես էին գալիս որպես *i և *u, իսկ երկար վանկից հետո՝ *iy և *uw: Ընդ որում, այս օրենքը պայմանավորող *y-ին և *w-ին նախորդող երկար վանկը ոչ միշտ էր նույն բառի սահմաններում հանդես

¹⁴ Г.В. Джаукян, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Е., 1967.

գալիս: Այն կարող էր լինել նախորդ բառի վերջում կամ է՝ ստեղծվել երկու բառերի միջև առաջացող ընդմիջումով¹⁵:

Է. Զիվերսի օրենքը (ինչպես այն հետագայում կոչվեց) մանրամասն ուսումնասիրել է Ֆ. Էջերտոնը և եկել այն եզրակացության, որ այդ օրենքին ենթարկվել են բոլոր ձայնորդները: Բայց և այնպես Ֆ. Էջերտոնը ստիպված է խոստովանել, որ այդ օրենքը բավարար հետևողականությամբ չի գործում անգամ «Ռիզվեդայում»՝ հնդկերենի այդ հնագույն տեքստում, որը հատուկ քննել է¹⁶:

Ինչպես վերը *ս-ի օրինակով տեսանք, Ա. Մեյեն նույնպես հնդեվրոպական լեզուներում նկատել և արձանագրել է նշված դիրքում ձայնորդներին հատուկ հերթագայության այս փաստը, սակայն, առանց դրա պատճառները որոնելու և հնդեվրոպական նախալեզվի համար որևէ օրինաչափություն սահմանելու¹⁷:

Հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանում գուցեև գործել է Է. Զիվերսի հիշյալ օրենքը, բայց պետք է ենթադրել, որ այն, գոնե *ս-ի դեպքում, հայերենում շատ վաղ է դադարել: Հավանաբար դա պայմանավորված է եղել նրանով, որ հայերենը վաղ է կորցրել ձայնավորների, հետևաբար նաև վանկերի քանակային տարբերական հատկանիշը: Համեայնդեպս, հայերենը նշված դիրքում հնդեվրոպական *ս-ի ձայնավոր (ձայնորդ) բաղաձայն հերթագայության հետքեր չի պահպանել: Այստեղ հնդեվրոպական *ս-ն հայերենում արտացոլված է միայն որպես բաղաձայն:

¹⁵ **О. Семереньи**, *Введение в сравнительное языкознание*, М., 1980, с. 121.

¹⁶ **F. Edgerton**, *The semivowel phonemes of Indo-European*, *Language*, 1962, vol. 38, № 4, էջ 352-359:

¹⁷ **А. Мейе**, նշվ. աշխ., էջ 141 և հաջորդ.:

Չայնավորից հետո բաղաձայնից առաջ դիրքում հնդեվրոպական *ս-ն ձայնորդ էր և *au, *eu, *ou երկբարբառների տարր, որոնք լեզուներում արտացոլված են տարբեր ձևով: Հնարավոր է, որ հնդեվրոպական նախալեզվում եղել են նաև երկար երկբարբառներ, որոնց քանակային տարբերության վերացման ընթացքը, ինչպես ուսումնասիրություններն են ցույց տալիս, սկսվել էր դեռ հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանում: Այդ պատճառով լեզուներում առկա համապատասխան փաստերը քիչ են կամ բոլորովին բացակայում են:

Հնդեվրոպական *au երկբարբառը հայերենում արտասանվել է որպես **աւ** երկբարբառ (հետագայում՝ **օ**), որ առարկությունների տեղիք չի տալիս՝ “audh-o > **աւդ** հուն. ἄνθι «փչել», լիտվ. áudra «փոթորիկ», *au > **աւգն(ել)**, ավ. aoman «նպաստելով, օգնելով», հին հնդկ. ávah, ūhīh «օգնություն»:

«Հնդեվրոպական *eu և *ou երկբարբառներին հայերենում համապատասխանում է **ոյ** երկբարբառը»¹⁸: Սակայն որոշ լեզվաբաններ հնդեվրոպական *eu երկբարբառից են բխեցնում նաև հայերեն **ել (իւ)** երկբարբառը: Հ. Աճառյանը, օրինակ, գրում է. «Հնդեվրոպական նախալեզվի eu, մանավանդ բաց վանկում, տալիս է նաև հայերեն **և** կամ **ել**, որ ապա դարձել է **իւ**»¹⁹: Կարծում ենք, **ել** երկբարբառ ունեցող բառերից այս կամ այն չափով ընդունելի ստուգաբանություններ ունեն միայն մի քանիսը, ինչպես՝ **աղբեր** (*bheure-), **եւր** (*seuro-), **առեւծ** (*reuǵ-), **հեւծանեւ** (*seuǵ-):

¹⁸ **A. Meillet**, նշվ. աշխ., էջ 44:

¹⁹ **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. IV, էջ 513:

Նկատելի է, որ հայերեն **ոյ** երկբարբառը հիմնականում հանդիպում է այնպիսի արմատներում, որոնց համար հնդեվրոպական նախալեզվում կանխադրվում է *eu/*ou հերթագայություն. ինչպես՝ **լոյս** < *leuk-/ *louk-, **բոյս** < *bheu-/ *bhous-, **պոյտն** < *beud-/ *boud-, որը կարող էր հիմք տալ ենթադրելու, թե հայերեն տվյալ բառը գալիս է միջին ձայնդարձով, այսինքն՝ *ou երկբարբառով հնդեվրոպական նախաձևից: Մակայն քիչ չեն և այն դեպքերը, երբ հայերեն **ոյ**-ով ձևը հնդեվրոպական մյուս լեզուներում ունի միայն *eu երկբարբառով համապատասխանություններ. հետևաբար՝ նախալեզվի համար վերականգնվում է *eu-ով նախաձև՝ **լոյծ** < *leug-, **ձոյլ** < *ǵheu-lo-, **մոյթ** < *meut-, **ստոյգ** < *steug-:

Հնդեվրոպական *eu-ն հայերենում **ոյ** դառնալու օրենքը հաստատող կարևոր փաստարկ է նաև **ձև** և **ձոյլ** բառերի օրինակը, որոնք գալիս են միևնույն արմատից: Տվյալ դեպքում, երբ *eu կապակցությունը հաջորդված է *o ձայնավորով, որտեղ *u-ն ոչ թե երկբարբառի տարր է, այլ բաղաձայն, հայերենում ունենք **ձեւ**, **-ոյ** < *ǵheu-o- (հմմտ. հուն. χέ(φ)ω «հեղել»), իսկ երբ արմատը բաղադրված է *-lo ածանցով, այսինքն՝ *-eu-ը երկբարբառ է, հայերենը պահպանել է **ձոյլ** < *ǵheu-lo- բառը (հմմտ. գոթ. giutan «ձուլել», հուն. χεῦμα «ձուլյ»):

Ուշագրավ է նաև այն, որ հնդեվրոպական *ei և *oi երկբարբառները ևս հայերենում արտացոլված են միևնույն ձևով, այսինքն՝ է հնչյունով, որը պահպանել է այդ երկբարբառներին հատուկ հերթագայությունը *i-ի հետ (հմմտ. *dheigh-/ *dhoiǵh-/ *dhiǵh- > հայ. **դէգ**, **դիզանեմ**, հին. հնդկ. déhmi, digdhá- «ծեփել», լատին. figulus «բրուտ»): Հայտնի է, որ հայերենում ոյ/ու

հերթագայությունը նույնպես հիմքեր ունի հնդեվրոպական նախալեզվում՝ *eu/*ou/*u²⁰ (հմմտ. *kleu->հին հնդկ. śrōta- «ականջ», հին վերին գերմ. hilodar «ձայն», հին սլավ. sluchъ «լսողություն»): Եթե *ou երկբարբառը հայերենում տալիս է **ոյ**, իսկ *eu-ը՝ **եւ**, այդ դեպքում ինչո՞ւ **ոյ**-ը հերթագայվում է **ու**-ով, իսկ արմատական **եւ**-ն (չհաշված պատմականորեն ձևավորված մի քանի հոլովական հիմքեր՝ *աղբեր-աղբեր, ալեր-ալեր, եղջիր-եղջեր, գիւղ-գեղջ* և այլն²¹) որևէ ձայնավորի հետ կանոնավորապես չի հերթագայվում. ինչպես՝ *հեւղ-հեւղակ, առեւծ-առեւծու, դեր-դերաւ, հեւս-հեւսանիլ*:

Միննույն ձայնորդ ունեցող հնդեվրոպական տարբեր երկբարբառները միանման արտասանելու միտում նախապատմական շրջանում ունեցել են հատկապես արիական լեզուները, ինչպես՝ *ei/*oi > հին հնդկ. ē, ավ. ae, ōi, *eu/*ou > հին հնդկ. ō, ավ. au, օu: Բայց, ինչպես հայտնի է, հայերենի և արիական լեզուների տարածքային կապեր (այլ լեզուների համեմատությամբ) հաճախ են դիտվում: Ուրեմն, հնարավոր է, որ վերը նշված միտումը այդ լեզուներում սկիզբ է առել միննույն տարածքից: Քանի որ երկու տարբեր երկբարբառներ (*eu, *ou) հայերենում արտացոլված են միանման, ենթադրելի է, որ նախքան **ոյ** հնչյունափոխվելը դրանք նույնացել են: Այստեղ, հավանաբար, միջանկյալ օղակ է եղել *ō-ն, այսինքն՝ գրեթե այն, ինչ առկա է հին հնդկերենում: Նման եզրակացության հիմք են տալիս պահլավական փոխառությունները: Ինչպես տեսանք, պահլավական օ-ն հայերենում արտացոլված է **ոյ**-ով: Հետևաբար, այդ շրջանում **ոյ** երկբարբառը արտասանությամբ մոտ է եղել պահլավական օ-ին կամ էլ՝ նախագրա-

²⁰ Գ. Զահուկյան, *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը*, Ե., 1959, էջ 202:

²¹ Նույն տեղում, էջ 172, 184:

բարյան շրջանի հայերենի հնչյունական համակարգին խորթ չի եղել օ հնչյունը և, նախապես պահլավական փոխառություններում պահպանվելով, այն հետագայում ընդհանուր օրենքով հնչյունափոխվել է **ոյ**-ի: Այս դեպքում պետք է ենթադրել, որ հնդեվրոպական *օ > հայերեն **ու** հնչյունափոխությունն այդ ժամանակ արդեն ավարտված էր, այլապես այստեղ ևս կունենայինք **ու**:

Ինչ վերաբերում է հնդեվրոպական *eu-ի դիմաց հայերենում միևնույն դիրքում **ոյ** և **ու** երկբարբառների (վերջինս ավելի քիչ է վկայված) առկայությանը, ապա այն կարող է ունենալ տարբեր բացատրություններ: Հնարավոր է, որ դրանք հայերեն երկու ինչ-որ բարբառների նախագրաբարյան շրջանի փոխներթափանցման հետևանք են: Չի ժխտվում և այն, որ հնդեվրոպական այլ լեզուների eu երկբարբառին հայերենում **ու** (**ու**) համապատասխանող ձևերը կարող են ուշ շրջանում հայերենի այս կամ այն տարածքի մեջ մտնելու կամ ենթաշերտի արդյունք լինել: Հնարավոր է նաև, որ հակազդող լեզվական մեկ այլ կենտրոնի ճնշմամբ *eu>*օ>**ոյ** օրենքը ինչ-որ ժամանակ դադարել է առանց ընդհանրանալու, և լեզուն **ու**-ով վերապրուկային ձևերը պահպանել է հնդեվրոպական շրջանից: Հետագայում **ու/ու** երկբարբառը լեզվի համակարգում գործուն տեղ է գրավել այլ հնչյունափոխություններով այդ տիպի նոր երկբարբառներ առաջանալու հետևանքով (հմմտ. *-iōm > **-իւն**` \*azg-iōm- > **աճիւն**, g̃hiōm- > **ձիւն**, ձայնավորից հետո բաղաձայնից առաջ դիրքում \*p, \*m, \*b(h), \*t > **ւ**` *sipto- > **հիւթ**, *septm- > **էւթն**, մրջիմն>մրջիւն և այլն):

Գրաբարին նույնպես հատուկ է եղել **ու**-ի ձայնավոր, ձայնորդ, բաղաձայն դիրքային հարաբերությունը²²: Մակայն դա անմիջապես հնդեվրոպական շրջանից չի գալիս, որովհետև հնդեվրոպական ոչ վանկարար *u-ն հայերենում զարգացել է որպես ինքնուրույն բաղաձայն հնչույթ **գ** և այդ հարաբերությունից դուրս է եկել, իսկ *u-ով երկբարբառները (*eu, *ou) հաճախ դարձել են նոր որակի երկբարբառներ: Բայց հնարավոր է, որ հնդեվրոպական *u-ի դիրքային տարբերակման այդ միտումը հայերենում իսպառ չի վերացել, այլ կորցրած անդամների փոխարեն լեզուն ձեռք բերելով նորերը (*-iðm > **-իւն**, միջձայնավորային և ձայնավորից հետո բաղաձայնից առաջ դիրքերում *m, *p, *b (h), *t > **ւ**)՝ վերածնել ու զարգացրել է այն, ինչպես ժամանակակից բարբառներից, օրինակ, Գորիսի խոսվածքում է եղել:

Այս խոսվածքը մի շարք դեպքերում կորցրել է գրաբարյան **ու** + ձայնավոր կապակցությունները (հմմտ. **դժուար > տիժմար, աստուած > աստուծ, լուանալ > լիվանսլ**), բայց որոշ բառերում պահպանել է այն (հմմտ. **նուագ, գուգուիլ, շուէ < շուի**): Ուրեմն, այդ երևույթը մահացման ընթացքում էր: Մակայն վ-ով հաջորդված անշեշտ վանկերը, ենթարկվելով խոսվածքի ընդհանուր օրենքին, կորցնում են ձայնավորը, և վ հնչյունը բաղաձայնից հետո ձայնավորից առաջ դիրքում ստանում է խոսվածքին ոչ խորթ երկշրթնային արտասանություն՝ **ցավ-ցուրցնիլ, կով-կուերան, սովոր-սուօրիլ/սուերիլ**, որտեղ **ու**-ն ձայնորդ է, որովհետև այն առանձին վանկ չի կազմում: Այսպիսով, Գորիսի խոսվածքում

²² **A.Meillet**, նշվ. աշխ., էջ 49: **Հ.Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. VI, էջ 227-229: **Է.Բ.Ադայան**, նշվ. աշխ., էջ 188-189:

վերսկսել է գործել գրաբարյան մեխանիզմը, այսինքն՝ **ու** հնչյունը ձեռք է բերել գրաբարին հատուկ ձայնավոր (ձայնորդ) բաղաձայն դիրքային բաշխվածություն²³: Այդպիսի ձայնորդի արտասանությունը հաճախ կայուն չէ (տատանվում է **ու**-ի և **վ**-ի միջև), խոսվածքի ժամանակակից փուլում այն երբեմն արտաբերվում է որպես **ու** ձայնավոր: Մակայն ուշագրավ է, որ առաջացած հորանջը փակվում է **վ** շրթնային բաղաձայնով՝ **նուվագ, սուվօրիլ, զուզուվիլ, տուվարած, տուվալ ա**²⁴: Գուցե այդպիսի արտասանությունը խորթ չի եղել նաև գրաբարին, որ, օրինակ, **նու** բառի **նուանք** ձևի կողքին ունենք նաև **նուվանք**, հայց. **նուվանս** ձևերը: Ինչ վերաբերում է հնդեվրոպական լեզուներին, այդ դիրքում *ս-ից հետո շրթնատամնային v բաղաձայնը հաճախ է հանդիպում, որ կարող էր լեզուներում առաջանալ մեկը մյուսից անկախ՝ ս ձայնորդի ձայնավոր արտասանությամբ պայմանավորված: Այնպես որ, Է. Զիվերսի օրենքը, հնարավոր է, հատուկ է եղել ոչ թե հնդեվրոպական նախալեզվին, այլ գործել է նրա առանձին բարբառներում ավելի ուշ:

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել:

ա) Հայերենում հնդեվրոպական *ս-ի քանակային տարբերությունը վերացել է վաղ անցյալում, որի հետևանքով գրաբարին անմիջապես նախորդող շրջանում *ս-ի քանակային տարբերակներն ունեն միայն մեկ համապատասխանություն՝ **ու** ձայնավոր:

²³ Հ. Աճառյանը նման երևույթ նշում է նաև Գանձակի գյուղերից մեկի խոսվածքում, ուր **վ**-ն շրթնատամնային բաղաձայն արտասանություն չունի նույնիսկ ձայնավորների միջև (**Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի**, հ. IV, էջ 228):

²⁴ **Ժ. Միքայելյան, Գորիսի խոսվածքի հնչյունա-հնչյութաբանական մի քանի առանձնահատկություններ**, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, № 8, էջ 46-47):

բ) *eu և *ou երկբարբառները հայերենում, նախապես նույնանալով, դարձել են **ոյ**: Ենթադրելի է, որ *eu, *ou>**ոյ** հնչյունափոխության միջանկյալ օղակ է եղել **օ**-ն, որն առաջացել է հնդեվրոպական ***ō**>հայերեն **ու** օրենքից հետո: *u ձայնորդը որպես այդպիսին պահպանվել է միայն **աւ** երկբարբառում:

դ) Թեպետ **ել (իւ)** երկբարբառը մի քանի բառերում կարող է հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանի մնացուկ լինել, բայց այն հիմնականում հայերենին հատուկ համապատասխան դիրքերում որոշ հնչյունների **ւ** հնչյունափոխվելու հետևանքով ուշ առաջացած երկբարբառ է:

զ) Գրաբարում **ու** հնչույթի ձայնավոր (ձայնորդ) բաղաձայն դիրքային բաշխվածությունն անմիջապես հնդեվրոպական նախալեզվից չի ժառանգված: Այն առաջացել է ավելի ուշ՝ պայմանավորված հայերենի պատմական յուրօրինակ զարգացմամբ:

*«Լրաբեր հասարակական
գիտությունների»,
1981, № 8:*

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՍԱՆՈՒՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հ.-ե. լեզուներում ընդհանրության շրջանից եկող բուսանունները, չնայած բուսական աշխարհի բազմազանությանը, համեմատաբար քիչ են պահպանվել և լայն տարածում չունեն: Չկան հ.-ե. համընդհանրության ձգտող բուսանուններ: Դա բնական է, քանի որ հ.-ե. ցեղերի համար տերիտորիաների փոփոխությունը ինչ-որ չափով գուցեղավել է նաև դրանց բուսականության փոփոխությամբ: Բայց մյուս կողմից էլ ցեղերի նվաճումների, փոխադարձ շփումների հետևանքով տարածվել են նաև կուլտուրական բույսերը: Այս ամենը, ինչ խոսք, իր ազդեցությունն է թողել լեզուների բառապաշարների վրա, որ այժմ բացահայտելը չափազանց դժվար է:

Առհասարակ հ.-ե. լեզուների բառային բոլոր ընդհանրությունները չեն, որ հավասարապես վերագրելի են հ.-ե. միասնության շրջանին: Սովորաբար հ.-ե. անվանվում են այն բառերը, որոնք ենթարկվել են հ.-ե. լեզուներին հատուկ հնչյունական օրենքներին: Ամենատարբեր շփումների հետևանքով առանձին լեզուներ մուտք գործած բառերը, ենթարկվելով նախապատմական շրջանի տվյալ լեզուների՝ այդ հնչյունական օրենքներին՝ նույնպես կարող էին, այսպես կոչված, հ.-ե. տեսք ընդունել: Հնարավոր է, որ հնչյունական այդ օրենքները տարբեր լեզուներում գործել են տարբեր ժամանակներում, բայց այդ լեզուների նախապատմական շրջանի զարգացման աստիճանական ընթացքը, մեզ անհայտ լինելու պատճառով, դրանք դնում ենք ժամանակային նույն հարթության վրա: Հետևաբար, մեր գործնական վերլուծությունների ժամանակ, որոշ դեպքերում հ.-ե. ընդհանրության շրջանը ժամանակի առումով ավելի մեծ ընդգրկում է ստանում:

Հայերենի հ.-ե. բուսանունների տարածքային քննությունը կատարել ենք զուտ լեզվաբանական տեսանկյունով, այսինքն՝ հաշվի չենք առել տվյալ բույսերի աշխարհագրական տեղայնացումը: Բուսանունների տարածքային արժեքը որոշում ենք մեր առաջարկած չափանիշներով:

Միևնույն տարածքի մեջ տարբեր բարբառների (լեզուների) նույն արմատին հանգող բառերը միավորվում են հնչյունական ձևով, որևէ բաղադրիչով, իմաստով և այլն: Հենց դրանով էլ այդ բառերը հակադրվում են մյուս տարածքների նույն արմատից եկող բառերին, քանի որ այդ տարածքներում համապատասխան իմաստներով բառաձևեր չեն ստեղծվում կամ էլ այդպիսիք ստեղծվում են բառակազմական այլ միջոցներով:

Համաժամանակյա տվյալ հատվածում միևնույն ծագում ունեցող բառերի տարածքային սահմանափակում, հետևաբար և այլ բարբառների համապատասխան բառերի նկատմամբ հակադրություն ստեղծող տարրը *տարածքային հատկանիշ է*:

Բառային գուգաբանությունն ընդունելով որպես արտահայտության և բովանդակության պլաններում տվյալ բարբառներում միաժամանակ ի հայտ եկող տարածքային հատկանիշներով միավորվող ընդհանուր ծագման բառեր, տարբեր կերպ ենք գնահատում՝ 1. երկու պլաններում միևնույն, 2. յուրաքանչյուր պլանում տարբեր տարածքների մեջ մտնող և 3. միայն մեկ պլանում տարածքային հատկանիշ ի հայտ բերող բառային գուգաբանությունները:

Նշված տիպի գուգաբանությունները, տարածքային հատկանիշներն ու նրանցով սահմանափակվող տարածքները համապատասխանաբար նախապես անվանել էինք ուժեղ, թույլ,

սերտ¹: Սակայն այժմ ավելի հարմար ենք գտնում դրանք փոխարինել Գ.Բ. Ջահուկյանի առաջարկած (բանավոր) *երկպլան ուժեղ*, *երկպլան թույլ* և *միապլան* բառային զուգաբանություններ, համապատասխան տարածքներ և տարածքային հատկանիշներ տերմիններով:

Բովանդակության պլանում որպես տարածքային հատկանիշներ իրար կարող են հակադրվել ինչպես տարբեր, այնպես էլ միևնույն իմաստային դաշտերի մեջ մտնող բառիմաստները կամ նույնիսկ խոսքիմասային իմաստները, որոնք ունեն տարածքային սահմանավակումներ:

Արտահայտության պլանում բառային զուգաբանությունների համար տարածքային հատկանիշներ են այն տարբերը, որոնք այս կամ այն չափով իմաստազատիչ դեր են կատարում: Դրանք հիմնականում բառակազմական միջոցներ են: Վերջիններս, լինելով երկպլան միավորներ, փոքրացնում են լեզուներում պատահական նմանության հնարավորությունը: Մինչդեռ հնչյունական օրենքների համընդհանրության ձգտելու հետևանքով ձևով իրար կարող են մոտենալ անգամ տարբեր ծագում ունեցող բառեր:

Տվյալ բարբառների՝ միմյանց ավելի մոտ կապեր, իսկ մյուսների նկատմամբ ավելի խոր տարբերություններ արտահայտելու հավանականությունը մեծանում է այդ բարբառները միացնող երկպլան ուժեղ զուգաբանությունների դեպքում, որոնք մյուս տարածքների զուգաբանություններին հակադրվում են ոչ միայն ձևով, այլ նաև իմաստով: Միապլան զուգաբանությունները, տարածքային հատկանիշ ցուցաբերելով

¹ Տե՛ս **Մ.Աղաբեկյան**, *Տարածքային բառազուգաբանությունների սահմանման սկզբունքները*, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, 12:

միայն մեկ պլանում, իսկ մյուսում՝ հ.-ե. բոլոր կամ տվյալ արմատը պահպանած լեզուներում ընդհանրալով, փաստորեն մատնանշում են բարբառային ոչ խոր հակադրություններ: Երկպլան թույլ զուգաբանությունները կրում են տարբեր տարածքների ակնհայտ ազդեցությունը, այդպիսով ցույց տալով տվյալ բարբառի միջտարածքային՝ սահմանային դիրքը կամ կարճ ժամանակում մի տարածքից մյուսին անցնելու փաստը:

Նույն տարածքի մեջ մտնող բառային զուգաբանությունները ունեն ոչ միայն ընդհանուր հատկանիշ (որևէ կոնկրետ ածանց, աճական, ձայնդարձի աստիճան, իմաստային դաշտով կապված բառիմաստներ և այլն), որով միավորվում և միևնույն ժամանակ հակադրվում են մյուս տարածքների զուգաբանություններին: Տվյալ տարածքում զուգաբանություններից մի քանիսը կարող են մասնակի մեկ այլ հատկանիշով (օրինակ, ձայնավորի կամ բաղաձայնի որակով, նույնիմաստությամբ և այլն) ևս մերձենալ, որը ցույց է տալիս այդտեղ նրանց ավելի մոտ կամ երկարատև կապերը:

Հնչյունական, բառակազմական, իմաստային, կառուցվածքային տարրերի խումբը, որոնցով այս կամ այն տարածքում միավորվում են բառային զուգաբանությունները, անվանում ենք *տարածքային միավոր*: Նույն տարածքի զուգաբանությունները կարող են միմյանց մերձենալ տարբեր չափով: Ուրեմն, միևնույն տարածքի բառային զուգաբանությունների տարածքային միավորները կարող են ունենալ տարբեր մեծություն:

Հ.-ե. լեզուների բառային զուգաբանությունները որոշելիս նմանատիպ մոտեցմամբ ավելի կարևոր է համարվում ոչ թե այս կամ այն տարածքում ընդգրկված լեզուների քանակը, ինչպես արվում է բացառիկ (Էքսկլյուզիվ) զուգաբանությունների կամ մեծ,

փոքր և այլ տարածքների առանձնացման դեպքում, այլ բառի արտահայտության և բովանդակության պլաններում միաժամանակ հայտաբերվող տարածքների զուգակցումն ու արժեքավորումը: Տվյալ դեպքում լեզուների տարածքային փոփոխությունների մասին այդ տարածքում ընդգրկված լեզուների քանակով դատելն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ հ.-ե. լեզուների վերաբերյալ մեր տեղեկությունները հավասարաթեք չեն: Որոշ լեզուներից մեզ հասել է ընդամենը մի քանի բառ, և չի ժխտվում այն փաստը, որ շատ լեզուներ էլ գրի չառնվելով, անդառնալիորեն կորել են: Բացի այդ, հ.-ե. լեզուների ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ այդ լեզուները չեն ունեցել լեզվական փաստի միասնական կենտրոնից մշտապես ճառագայթում և հավասար ալիքաձև տարածում: Ընդհակառակն, նրանք անցել են ինչպես հ.-ե., այնպես էլ այլ լեզուների հետ փոխազդեցության, ձուլման, տրոհման շատ բարդ պրոցես:

Հետևաբար, հ.-ե. լեզուների նախապատմական շրջանի կապերի ձևերը բառային զուգաբանությունների օգնությամբ բացահայտելու ժամանակ, կարծում ենք, պետք է հենվել ոչ այնքան լեզվաբանական աշխարհագրությունից փոխառած մեծ և փոքր կամ կենտրոնական և եզրային տարածքներ առանձնացնելու սկզբունքի, որքան լեզուների փոխազդեցության և փոխկապվածության իրավիճակում բառի, որպես երկպլան միավորի, զարգացման օրինաչափությունների վրա:

Առաջնորդվելով վերը նշված սկզբունքներով՝ հայերենի բուսանունները բաժանում ենք երեք խմբի՝ երկպլան ուժեղ, երկպլան թույլ և միապլան տարածքների մեջ մտնող բուսանուններ:

Երկպլան ուժեղ զուգաբանությունների դեպքում հայերենի հ.-ե. բուսանունները համապատասխանություններ են ի հայտ բերում ոչ կայուն՝ միշտ նույն լեզուներով սահմանափակվող տարածքներում: Նույնիսկ միևնույն տարածքային հատկանիշով նրանք միանում են մե՛րթ այս, մե՛րթ այն լեզուներին: Այսինքն՝ չկան նաև բնորոշ տարածքային հատկանիշներ, բառակազմական այնպիսի միջոցներ, որոնցով բուսանուններ ստեղծվեն և բնորոշ լինեն միայն այն լեզուներին, որոնց միանում է հայերենը: Գրեթե ամեն առանձին դեպքում ի հայտ են գալիս տարածքային նոր հատկանիշ և նոր տարածք:

1. Հ.-ե. *bhel- (*bhlē-, *bhlō-, *bhlə-) «տերև, ծաղկաթերթ ծաղիկ, ծաղկել»² արմատը, բացառությամբ արիական և բալթիկ-սլավոնական լեզուների, պահպանել են մյուս գրեթե բոլոր լեզուները:

Հ. Աճառյանը նշված արմատի *bhol- ձևից է բխեցնում հայ *բող*, *բողիկ* «խեժատու բույս», *բողբոջ*, *բողկ* բառերը: Յ.Պոկոռնու բառարանում *բող*, *բողիկ* բառերը բացակայում են, իսկ մյուս երկուսը բխեցվում են *bhol- «ուռցնել, փչել, ուռցրած, ուռուցք» արմատից և ցեղակից են համարվում հայերեն *բոլոր*, *բուր* բառերին: Ճիշտ է, Յ.Պոկոռնու ստուգաբանությունը նույնպես հավանական է թվում, բայց գոնե *բող* (կամ *բողիկ*) բառը «ուռցնել, ուռուցք» իմաստների հետ չի կապվում: Հայերեն բառերը որևէ այլ լեզվի համապատասխան ձևերի հետ ընդհանրություններ չեն ցուցաբերում: Մինչդեռ հ.-ե. բարբառները բավականին

² Ստուգաբանական ձևերի համար օգտվել ենք Յ.Պոկոռնու, Հ.Աճառյանի, Էռնու-Մեյեի բառարաններից, ինչպես նաև Գ.Բ.Ջահուկյանի, Է.Բ.Աղայանի, Ա.Մեյեի, Գ.Ջոլտայի և այլ լեզվաբանների աշխատություններում եղած ստուգաբանություններից:

հասակորեն բաժանվում են երկպլան ուժեղ տարածքների, այսինքն՝ նրանց զուգաբանությունները և՛ ձևով, և՛ իմաստով միևնույն տարածքի մեջ են մտնում. *-jo ածանցով, «տերև, սաղարթ» իմաստներով՝ հունա-լատինա-իռլանդական, արմատի *bhlō- ձևով, *-t աճականով և «թերթիկ, ծաղկաթերթ» իմաստով՝ գերմանակելտական, արմատի նույն ձևով, *-s աճականով և «ծաղիկ» իմաստով՝ իտալա-գերմանական: Այս տարածքների նկատմամբ հայերենը նույնպես գտնվում է ուժեղ հակադրության մեջ՝ ցուցաբերելով զրո ածանց և նրանցից տարբեր իմաստ:

2. *kel- (*kel-) «բարակ ցողուն» արմատով և *-jo ածանցով առանձնանում է գերմանա-հնդկա-հունա-իռլանդա-պրուսական երկպլան ուժեղ տարածքը, որտեղ առկա են հիմնականում «նետ, սլաք, տեգ» նշանակությունները: Բայց դա ոչ թե լեզուների անկախ զարգացման, այլ ներտարածքային շփումների արդյունք է, քանի որ նշված լեզուների ձևերը և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններում ձգտում են տարածքային արժեքի առավելագույնին՝ նույնությանը: Հիշյալ արմատը որպես բուսանուն պահպանվել է թույլ ձայնավորով ձևերում՝ հայ. *սաղարթ*, հին հնդկ. śila «փուշ», լիտվ. šilas «հավամրգի» (հայ-հնդկալիտվական)³: Հայ. *սաղարթ* բառը –*արթ* բաղադրամասով այլ լեզուներում համապատասխանություն չունի: Գուցե հնդեվրոպականից եկող *-ro և *-to ածանցների ձուլման արդյունք է (*-rto):

3. Հայերեն *գինի* (*ueinjo->*qɛnɨ) բառը նույն նշանակությամբ և *-jo ածանցով համապատասխանություններ ունի

³ Ընդգծված լեզուների զուգաբանությունները տարածքային միավորով մոտենում են կամ հավասարվում:

եվրոպական լեզուներում՝ հայ-հունա-իտալա-կելտա-ալբանա-գերմանական: Սակայն *yei-/*yoi- արմատը նախապես նշանակել է «խաղողի որթ», որ վկայված է մի քանի բառերում, ինչպես՝ հուն. οἶνη (դոր.) οἶνός «որթ»: «Խաղողի որթից» «գինի» իմաստին անցնելը կատարվել է հ.-ե. շրջանում, որովհետև նոր հասկացությունը բարբառներում կազմվում է հնդեվրոպականին հասուկ և լեզուներում մեծ տարածում ունեցող *-jo ածանցով:

4. *dhon- նախաձևից հայերենում ունենք *դոն* «մի տեսակ հաց, պաքսիմատ» բառը, որը «հացաբույս, հացահատիկ» նշանակություններով համապատասխանություններ ունի հնդկերենում, թոխարերենում, դորիա-իլիրերենում, իսկ բալթիականում կրկին առկա է «հաց» իմաստը (հայ-հնդկա-թոխրա-դորիա-իլիրա-բալթիական): Սակայն հայերենում և բալթիականում իմաստային այդ անցումը տեղի է ունեցել հետագայում, անկախաբար: Մրանց հակադրվում են *dhē- «բերրի, բերք» ձևից եկող իտալա-կելտական զուգաբանությունները: Լեզվաբանները վերը նշված զուգաբանությունները բխեցնում են տարբեր արմատներից և ցեղակից են համարում տարբեր բառերի (տե՛ս Հ.Աճառյանի, Յ.Պոկոռնու նշված բառարանները), որոնք թե՛ ձևով և թե՛ իմաստով առաջիններից շատ են հեռանում: Ճիշտ ենք համարում այն կարծիքը, ըստ որի հիշյալ ձևերը գալիս են բույս նշանակող («հացաբույս, հացահատիկ» և այլն) *dhē- արմատից:

5. *-ro-ածանցով հայերենը՝ *դալար*, *-ոյ* «խոտ, բանջար», ուժեղ տարածք է կազմում հունարենի հետ՝ θάλαρος «ծաղկած, դալար, թարմ, մատղաշ, ուժեղ» (*հայ-հունական*): Արմատի վերին ձայնդարձով ձևեր են պահպանվել հայերենում՝ *դեղ* «խոտ» և կելտական լեզուներում՝ կոռն. déle «ճիպոտ, ճյուղ», բրետ. delez, միջին իռլ. deil «ճիպոտ»: *-gh (կամ *-dh) աճականով և ցուցաբերած

իմաստներով *դադան* «վայրի անանուխ» և *դեդա* ձևեր են պահպանվել գերմանական լեզուներում, որոնք նույնպես ձևով և իմաստով մեկուսանում են:

Հայերենում և հ.-ե. որոշ լեզուներում պահպանվել են մի քանի բուսանուններ, որոնց համար թեպետ տարածքային ընդհանուր հատկանիշ առանձնացնելը դժվար է հակադիր տարածքի բացակայության պատճառով, բայց դրանց թե՛ ձևային, թե՛ իմաստային համարժեքությունը և տարածքային միավորների առավելագույնին՝ նույնությանը ձգտելը ենթադրում են ծագման միևնույն աղբյուր, ուստի դրանք նույնպես համարում ենք երկպալան ուժեղ գուգաբանություններ:

6. Հայերեն *սիսեն*, լատ. *cicer*, հուն. *κριός* (**κριός*), *κικερροι* «սիսեն», հին պրուս. *keckers* «ոլոռ» (*հայ-լատինա-հունա-պրուսական*) գուգաբանությունների համար կարելի է ենթադրել **kiker-* (**kiker-*) նախաձև:

7. Հայերեն *մոր*(*մորի*, *մորենի*), լատին. *mōrum* «մոր, մոշ, թուր», հուն. *μόρον* (*μώρον*) «թուր» *μορέα* «թթենի», այլև՝ «մոր», կիմր. *merwydden*, միջին իռլ. *merenn*, «թուր» (*հայ-հունա-լատինա-կելտական*) բառերը Յ. Պոկոռնին բխեցնում է **moro-* նախաձևից: Հայ. *մոռ*, *մոշ* բառերը հավանաբար ունեն և *-s աճական (**mors-*):

8. Հայերեն *թալ*, *թելուկ* «մի տեսակ ուտելու բույս, մի տեսակ վայրի բանջար», լատին. *tālea* «ճիպոտ, ճյուղ, տունկ», *talla* (բրբ.) «սոխի կեղև», հուն. *τήλις*, -*εως* «ուղտախոտ», *τηλεθάω* «փթթել, կանաչել, ծաղկել, ընձյուղել», լիտվ. *a(t)tólas* «աշնան խոտ» (*հայ-հունա-լատինա-լիտվական*):

9. Հայերեն *սունկն* բուսանունը ակնհայտ նմանություն ունի լատին. *fungus* «սունկ», հուն. *σφόγγος*, *σφόγγος* (ատտիկ.) «սպունգ» բառերի հետ (*հայ-լատինա-հունական*): Հնարավոր է, որ *սունկն*

բառը հայերենին անցած լինի լատիներենից, հունարենից կամ բոլորը միասին փոխառած լինեն մեկ այլ լեզվից: Բայց դա կատարվել է դեռ հ.-ե. բարբառային սահմանափակության շրջանում, քանի որ հայերեն բառը ենթարկվել է նախապատմական հնչյունական օրենքներին (*ps- կամ *sp- > հայ. *u-*, *on>հայ. *ուն*, *g>հայ. *կ*): Հետևաբար, այն ևս ամենավաղ ժամանակների բարբառների ներտարածքային կապերի արդյունք է:

10. Հայերեն *թեղի* բառը, որ համապատասխանություններ ունի լատիներենում՝ *tilia*, միջին իռլանդերենում **teile* «թմբի, լորի», հունարենում՝ *πετέλα* «կնձնի» (*հայ-հունա-լատինա-իրլանդական*), Յ.Պոկոռնին համարում է ուշ շրջանի հունարենից կատարած փոխառություն: Հ.Աճառյանը նույնպես այս բառին հնդեվրոպական ծագում չի վերագրում: Սակայն մենք համամիտ ենք Գ.Ջահուկյանի հետ, որն այդ բառի վերաբերյալ Պոկոռնու վարկածը չի ընդունում և գտնում է, որ այն նույնպես գալիս է **ptel(e)ja* նախաձևից⁴:

11. Առանց տարածքային հակադրության բառային երկպալան ուժեղ զուգաբանություններ են նաև **ozdo-s* (**osdo-s*) նախաձևից եկող հայ. *ոստ*, *-ոյ*, հուն. ὄζος «ոստ», գոթ. *asts*, հին վերին գերմ. *ast* «ոստ, ճյուղ» բուսանունները (*հայ-հունա-գերմանական*):

12. *Գերան* բառը գալիս է **uer-(e)na* (կամ **uer̥na-*) նախաձևից, որը որպես բուսանուն («լաստենի, բարդի, կաղամախի») պահպանվել է ալբաներենում և կելտական լեզուներում, բայց վերջիններում կան նաև «կայմ նավակայմ» նշանակությունները (*հայ-կելտա-ալբանական*): Պարզ է, որ

⁴ Տե՛ս Գ.Բ.Ջաուկյան, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ереван, 1967, էջ 96.

հայերենում ևս այդ բառը սկզբում եղել է բուսանուն, իսկ իմաստային (թեմատիկ) մի խմբից (բուսանուն) մյուսին (շինարարական տերմին) անցնելը լեզվի ավելի ուշ շրջանի ներքին զարգացման հետևանք է:

Ի հակադրություն երկպլան ուժեղ զուգաբանությունների, երկպլան թույլ զուգաբանությունները ձևով և իմաստով միևնույն տարածքի մեջ չեն մտնում: Բառն իր իմաստով կարող է մտնել մի տարածքի մեջ, որտեղ տվյալ նշանակությունների համար օգտագործվում են բառակազմական այլ միջոցներ, իսկ ձևով՝ մեկ այլ: Այս դեպքում տվյալ բառը, կարծես, միջին դիրք է գրավում այդ երկու տարածքների միջև:

Հայերենը հ.-ե. բուսանուններից եկող երկպլան թույլ՝ երկու տարածքների միջև միջին դիրք գրավող, այդ տարածքների համար կապող օղակ հանդիսացող զուգաբանություններ ի հայտ չի բերում: Թերևս այդպիսին կարելի է համարել *եղեւին*, սեռ. *եղեւնի* (**eleu-*) բառը:

13. **el-/*ol-/*l̥-* արմատն ունեցել է «կարմիր, շագանակագույն» իմաստներ, սակայն նրանով կազմվել են ինչպես կենդանի, այնպես էլ բույս նշանակող բառեր: **-i-sā* ածանցով և «լաստենի» իմաստով գերմանա-գալլա-մակեդոնա-բալթիկ-սլավոնական տարածքը ուժեղ հակադրության մեջ է լատինա-գերմանա-կելտականի նկատմամբ, որի տարածքային հատկանիշը արտահայտության պլանում **-mo* ածանց է, իսկ բովանդակության՝ «ծփի» իմաստը: Վերը նշված հայերեն բառը արտահայտության պլանում, այսինքն՝ ձևով, ոչ մի լեզվի հետ տարածքային հատկանիշ չի ցուցաբերում, իսկ իմաստով միանում է հունարենին՝ *ἐλάτῃ* (**el-ḡ-tā*) «եղևնի»:

Ինչպես արդեն ասվել է, բառային միապլան զուգաբանությունները մյուս տարածքի զուգաբանություններին կարող են հակադրվել միայն մեկ պլանում՝ կա՛մ արտահայտության, կա՛մ բովանդակության: Այսինքն՝ նրանք ձևով կարող են հակադրվել ուրիշ տարածքի մեջ մտնող զուգաբանություններին, իսկ իմաստով ոչ թե հակադրվել, այլ միանալ նրանց: Միապլան զուգաբանությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ մի մասը տարածքային հատկանիշ է ցուցաբերում միայն արտահայտության պլանում, իսկ մյուս մասը՝ բովանդակության:

Արտահայտության պլանում տարածքային հատկանիշ են ցուցաբերում հետևյալ զուգաբանությունները:

14. *ǵel- (*g^uel-, *g^ula-) արմատը թույլ ձայնավորով և *-no ածանցով զուգաբանություններ է ի հայտ բերում հայերենում՝ *կաղին*, *-ոյ*, հունարենում՝ βάλανος, լատիներենում՝ *glands, glandis* «կաղին», լիտվերենում՝ *gilendra* «(կաղնու) հարուստ բերք», վերջիններիս աճականը հետագայի արդյունք է (*հայ-հունա-լատինա-լիտվական*): Արտահայտության պլանում սրանց լիաձայն արմատով և *-d աճականով հակադրվում է եկեղեցապլավոնները՝ *želuds* (*želods*) «կաղին»: Ինչպես տեսնում ենք, *g^uel- արմատը լեզուներում հանդես է գալիս կամ *-no, կամ *-d բաղադրիչներով, իսկ իմաստով ոչ մի լեզու մյուսին չի հակադրվում, այսինքն՝ բովանդակության պլանում տարածքներ չկան:

15. *ōs- «հացի» արմատից եկող ձևերով հ.-ե. լեզուները ցուցաբերում են միապլան տարածքային սահմանափակումներ: Հայ. *հացի*, *-(ւ)ոյ* բառը դժվար է ստուգաբանվում: Յ. Պոկոռնին այն բխեցնում է արմատի *ōs- ձևից և բառասկզբի *h*-ի մասին չի խոսում: Սովորաբար վերջինս համարվում է հայերենին հատուկ

հետագա հավելում: Այս դեպքում հայերենը կարող էր ծագել ոչ թե *ōs-, այլ նրա հետ հերթագայվող *əs- ձևից: Գ. Զահուկյանը *h-*ի առկայությունը բացատրում է կոկորդայինների հիպոթեզով: Նա գտնում է, որ այստեղ հնարավոր է նախալեզվում բառասկզբի դիրքում ձայնավորից առաջ *ə կոկորդայինի առկայություն (*ə, e>a), որը հայերենում (ինչպես նաև խեթերենում) դարձել է *h*⁵: *-k աճականով հացի բառը միանում է հուն. ὄξυη, ալբ. ah (*oskā) «փիճի» անգլասաքս. æsc, հին վ. գերմ. asc, հին իսլ. askr «հացի» ձևերին (հայ-հունա-ալբանա-գերմանական): *-en ածանցով վերջիններիս հակադրվող տարածք են կազմում լատիներեն, կելտական և սլավոնական լեզուների զուգաբանությունները:

16. Հ.-ե. *meu- (*meyə/*mū-) արմատը լեզուներում պահպանվել է «խոնավ, թաց, մզլած» իմաստներով: Բայց *-s աճականով այդ արմատը (*meus-, *musos/*mūs-) ունի նաև «մամուռ, բորբոս» նշանակությունները: Պարզ է, որ նախնական եղել են առաջին իմաստները, իսկ երկրորդը ստացվել են բառաբաղադրման միջոցով՝ որպես խոնավության, թացության հետ կապվող նոր հասկացություն: Արմատը պահպանած բոլոր լեզուները բովանդակության պլանում ընդհանրաձայն («մամուռ, բորբոս»), տարածքային հատկանիշ են ցուցաբերում միայն արտահայտության պլանում: *-s աճականով միավորվում են գերմանական և բալթիկ-սլավոնական տարածքները: Հայ. *մամուռ* բառը ակնհայտ ցեղակցություն ունի վերը նշված լեզուների ձևերի հետ: Յ.Պոկոռնին նրա համար հնարավոր է համարում *memus-ro նախաձև: Մակայն Գ. Զոլտան նկատում է, որ այստեղ մենք գործ ունենք զուտ հայկական բառակառուցվածքի հետ: Դա համարում է

⁵ Տե՛ս Գ.Բ.Զահուկյան, նշվ. աշխ., էջ 239:

արմատի ձայնավորի *ա/ու* հերթագայությամբ նույնպիսի կրկնավոր ձև, ինչպես *մարդ-մուրդ*, *ծակ-ծուկ* և այլն, որը հատուկ է միայն հայերենին⁶: Ինչպիսի նախաձև էլ ընդունենք *մամուռ* բառի համար, այն իր կառուցվածքով (արմատի կրկնություն +*-ro) մեկուսանում է մյուս լեզուների հետ ընդհանրություն ցուցաբերելով միայն բովանդակության պլանում:

17. *ozgho- (*osgho-) «բողբոջ, ճյուղ» նշանակությամբ արմատը վկայված է մի քանի լեզուներում առկա բառերով: Յ. Պոկոռնու բառարանում դրանք երկուսն են՝ պահլ. azg «ճյուղ» և հուն. ὄζχη, ὠζχη «ճյուղ, շյուղ»: Սակայն Հ. Աճառյանը իր բառարանում դրանց ցեղակից է համարում նաև հայ. *ոզոր* «ճյուղ» բառը, որը *-ր* աճականով հակադրվում է պահլավերեն և հունարեն ձևերին:

18. *Կողր* «ճյուղ, ոստ» և ռուս. голъя «ճյուղ, ոստ» բառերը համարվում են ցեղակից և հանգեցվում են *gol- «ճյուղ, ոստ» արմատին, որը մեկ այլ լեզվում վկայված չէ: Բայց այս դեպքում ևս հայերեն ձևը *ր* աճականով հակադրվում է ռուսերենին:

19. *Արգաստ* «խաղողի որթի կտրած ոստ՝ մատ» բառը Է. Աղայանը բխեցնում է հ.-ե. *grad- արմատի *grəd- ձևից⁷, այսինքն՝ հայերենում առկա է նախնական մաքուր արմատը, որով այն միանում է գերմանական լեզուներին, գոթ. waurts, հին վ. գերմ. wurz «արմատ», հին իսլ. urt (*ur(ə)d) «արմտիք, սաղարթ» և այլն (հայ-գերմանական): Մյուս լեզուները պահպանել են բաղադրյալ ձևեր. *(s)ko ածանցով՝ հունարենը, լատիներենը, կիմերերենը,

⁶ Տե՛ս **G.Solta**, *Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprache*, Wien, 1960, էջ 57.

⁷ Տե՛ս **Է.Բ.Աղայան**, *Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974, էջ 30:

թոխարերենը, *jo ածացով՝ հունարենը, ալբաներենը, կիմերերենը, լատիներենը, *no- ածացով՝ հունարենը, լատիներենը և կելտական լեզուները: Լեզուներում պահպանվել են «արմատ» և «ոստ» իմաստներ, բայց դժվար է ասել, թե որ ձևին է հատուկ եղել այս կամ այն իմաստը, որովհետև նրանցից յուրաքանչյուրը ցուցաբերում է թե՛ մեկ և թե՛ մյուս իմաստը: Ուրեմն, պետք է ենթադրել, որ սկզբնական շրջանում այդ ձևերը ունեցել են «արմատ-ոստ» չտարբերակված իմաստը:

Բովանդակության պլանում տարածքային հատկանիշ ցուցաբերող բուսանուն նշանակող միապլան զուգաբանությունները քիչ են:

20. *jeyo- (*ioyo-) արմատից եկող «բույսի ծիլ կամ ընձյուղ, դղմենու արձակած թելեր, խուրձ կապելու կեմ, խոտե չվան» իմաստներով հայ. *ջուլ* բառը միանում է հին հնդկ. *yava* «հացաբույս, հացահատիկ, գարի» ավ. *yava* «հացաբույս, հացահատիկ», հուն. (հոմ., ատտիկ.) *ζεαί* «ցորենի տեսակ», *ζεῖδορος* «պտղաբեր հացահատիկ» (**ζεFeδωρος*) լիտվ. *jāvas* «հացաբույս» *javaĩ* (հոգն.) «հացահատիկ» զուգաբանություններին:

21. *mel-/*mol- արմատը հայերենից բացի հ.-ե. մյուս լեզուներում ունի «ի հայտ գալ, երևալ, բարձրանալ» իմաստները, նշված արմատին հանգող հայ. *մոլ* բառը բուսանուն է՝ «ծառերի բնի մոտ բուսած երկրորդական ճյուղ», որ համապատասխանություն ունի միայն հունարենում՝ *μολεῖω* «ծառի մոլերը կտրել և ուրիշ տեղ տնկել», *βλαστός*, *βλάστη* «ծիլ, բողբոջ» (*հայ-հունական*):

Հայերենի հ.-ե. բուսանունների տարածքային վերլուծությունից պարզվում է հետևյալը:

ա) Ուսումնասիրված տարածքներում, այսպես կոչված, հատուկ բուսանվանակերտ ձևությ չի եղել, քանի որ ի հայտ եկող տարածքային հատկանիշները համահնդեվրոպական բառակազմական միջոցներ են, որոնցով կազմվում են նաև իմաստային (թեմատիկ) այլ խմբերի պատկանող բառեր:

բ) Այդ բուսանունները բնորոշ, ասենք, միայն տվյալ լեզուներում հանդիպող տարածքային հատկանիշներ չեն ի հայտ չեն բերում: Միապլան տարածքում, միայն, հայերենն ավելի հաճախ ցուցաբերում է *-ro ածանց (կամ *-r աճական), որով մեկուսանում է: Մեկ անգամ *-ro հատկանիշի հանդիպում ենք և երկպլան ուժեղ հայ-հունական տարածքում (տե՛ս *դալար*): Այս փաստը, սակայն, մեզ հիմք չի տալիս կարծելու, որ *-ro ածանցը հատուկ է միայն հայերենին կամ հայ-հունական տարածքին, քանի որ այն մյուս լեզուներում ևս լայն տարածում ունի:

գ) Հայերենը կայուն՝ միշտ միևնույն լեզուներով սահմանափակվող տարածքների մեջ չի մտնում, այլ զուգաբանություններ է հանդես բերում գրեթե բոլոր լեզուների հետ: Սակայն չի կարելի անտեսել այն փաստը, որ հայերեն բուսանունների կողքին հաճախ հանդիպում են հունարեն. ապա՝ իտալյան ձևեր: Ընդհանրապես և՛ երկպլան ուժեղ, և՛ միապլան տարածքներում հայերենն ավելի հակված է միանալու եվրոպական լեզուներին, քան՝ ասիական (աշխարհագրական ժամանակակից տեղայնացմամբ), մինչդեռ հայերենը և, ասենք, արիական լեզուները շատ այլ դեպքերում ակնհայտ կապեր են ցուցաբերում:

Նյութի սահմանափակության հետևանքով, հասկանալի է, լայն ընդհանրացումներ չենք կարող անել: Սակայն անժխտելի է, որ հայերենում հ.-ե. բուսանունների մեծ մասը կրում է հայ-հունա-իտալյան տարածքային կապերի կնիք: Ընդ որում, հայերենի և

հունարենի կապն այս դեպքում ավելի երկար է եղել, որովհետև ն՝ երկպալան ուժեղ, և՛ միապալան հայկական տարածքներում հունարենը ավելի կայուն տեղ է գրավում և տարածքային միավորով հայերենին ավելի հաճախ է մոտենում, քան մյուս լեզուները:

Հատկանշական է, որ հայերենը երկպալան թույլ՝ երկու տարածքների միջև միջին դիրք գրավող զուգաբանություններ գրեթե չունի: Այսինքն՝ այլ լեզուների համար հայերենի կապող օղակ լինելու փաստը, գոնե բուսանուններով, չի վկայվում:

Հայերենը մեկուսացած ձևեր է ցուցաբերում հիմնականում միապալան զուգաբանությունների դեպքում, որոնք, մեր կարծիքով, արտացոլում են բարբառային ավելի վաղ շփումներ, քան երկպալան ուժեղ զուգաբանությունները (տե՛ս վերը նշված մեր աշխատանքը): Ուրեմն դրանք հնակազմություններ (արխաիզմներ) են և, որպես մեկուսացած ձևեր, ենթադրել են տալիս հայերենի՝ մյուս բարբառների նկատմամբ ավելի վաղ շրջանում եզրային դիրք գրավելը: Սակայն երկպալան ուժեղ և միապալան զուգաբանությունները քիչ թե շատ նշանակալից ժամանակահատվածով չեն ընդմիջվում, որովհետև երկուսի համար էլ տարածքային հատկանիշներ են գրեթե միևնույն բառակազմական ձևայինները: Բացի այդ, ուժեղ տարածքներում կայուն տեղ գրավող հունարենը հաճախ հանդես է գալիս և միապալան տարածքներում: Այսուհանդերձ, հայերենի հ.-ե. բուսանունները հ.-ե. ընդհանրության շրջանից չեն հեռանում, քանի որ չունեն նախալեզվին անձանոթ որևէ բառակազմական միջոց:

*«Հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական և
համեմատալեզվաբանական հետազոտություններ»,
Ե., 1979:*

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՌԱԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հնդեվրոպական լեզվաբանության մեջ լեզուների տարածքային նկարագրի համար կարևոր են լեզվի բոլոր մակարդակների զուգաբանությունները: Սակայն վերջիններիս սահմանման հարցում լեզվաբանները ընդհանուր կարծիք չունեն: Տարակարծություններն ակնհայտ են դառնում հատկապես տարածքային բառագուգաբանությունների որոշման ժամանակ:

Ա. Մեյեն, հենվելով լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների վրա, իր «Les dialectes indo-européens» գրքում փորձել է նոր ձևով ներկայացնել հնդեվրոպական բարբառների միմյանց նկատմամբ գրաված դիրքը: Նա, լայնորեն կիրառելով լեզվաբանական աշխարհագրությունից վերցված *զուգաբանություն (իզոգլոս)* հասկացությունը, հնդեվրոպական տարածքային զուգաբանությունների համար նշում է հետևյալ էական հատկանիշները. տվյալ խմբի բոլոր լեզուների համար այդ զուգաբանությունների ընդհանուր լինելը, դրանք լեզուներում իրարից անկախ, զուգահեռաբար զարգացած ձևեր չեն, ընդհանուր զուգաբանությունները ներկայացված են աշխարհագրական շփում ունեցող լեզուներում⁸: Ա. Մեյեն կարևոր է համարում նաև նորաբանությունների և հնաբանությունների հակադրումը, որի վրա էլ հենց հիմնում է լեզուների տարածքային բնութագիրը:

Այս սկզբունքները, որ ընկած են հնդեվրոպական տարածական լեզվաբանության հիմքում, ընդհանուր բնույթ ունեն

⁸ A.Meillet, *Les dialectes indo-européens*, Paris, 1908, էջ 10-11,

և չեն բնորոշում այս կամ այն մակարդակի զուգաբանությունները՝ առանձին վերցված:

Է. Մակաևը, քննարկելով տարածական լեզվաբանության խնդիրներն ու սկզբունքները և ի մի բերելով լեզվաբանների կարծիքները, սահմանում է նաև տարածքային բառագուգաբանությունների առանձնացման սկզբունքները: Նա գտնում է, որ ընդհանուր բառապաշարից առաջին հերթին պետք է բացառել փոխառյալ բառերը. «Հարկ չկա ապացուցելու, որ երկու կամ ավելի լեզուների ցեղակցության աստիճանը որոշելու համար տվյալ լեզվում փոխառությունները չեն կարող հաշվի առնվել»⁹:

Այստեղ պետք է պարզել մի այլ հարց. ինչպես է ըմբռնվում *ցեղակցություն* հասկացությունը հնդեվրոպական տարածական լեզվաբանության մեջ:

Հնդեվրոպական տարածական լեզվաբանության հիմնական նվաճումը համարվում և ամենուր հայտարարվում է այն, որ նա փշրեց հնդեվրոպական լեզուների զարգացումը «ծննդաբանական ծառի» ձևով պատկերացնելու պարզունակ գաղափարը և աշխատեց ճիշտ հասկանալ ու ներկայացնել այդ լեզուների փոխհարաբերությունների շատ ավելի բարդ իրավիճակը: Դրան նպաստեց Յ. Շմիդտի ալիքների տեսությունը, լեզվաբանական աշխարհագրությունը, որոնց նեոլինգվիստները ավելացրին և Ն. Տրուբեցկոյի լեզվամիության գաղափարը, իսկ վերջինս հենվում է լեզուների ինչպես տարամիտող (դիվերգենտ), այնպես էլ զուգամիտվող (կոնվերգենտ) զարգացման սկզբունքի վրա:

⁹ Э.Макаев, *Проблемы индоевропейской ареальной лингвистики*, М., 1964 էջ 17:

Այս համընդհանուր ճանաչում գտած սկզբունքը, որ հնդեվրոպական լեզվաբանության հիմնապոններից մեկն է, ժամանակին մատնանշել է և Ա. Մեյլեն¹⁰:

Հաճախ մի լեզվի այս կամ այն փաստը կամ նույնիսկ ամբողջ լեզուն դժվար է հանգեցնել մեկ «ցեղակից» լեզվի: Հայտնի է, օրինակ, որ անգլերենում անգլասաքսոնական տարրերի կողքին մեծ կշիռ ունեն և ֆրանսիական տարրերը: Ուրեմն ինչպե՞ս որոշել նրա ցեղակցությունը: Վ. Պիգանին պատասխանում է. «Իսկ ինչո՞ւ չի կարելի ասել, որ նա ցեղակից է երկու լեզուներին էլ»¹¹: Լեզվական այդպիսի երևույթները և այդպիսի լեզուները Գ. Ծերեթելին անվանում է *տարածին* (ալոգենետիկ)¹²:

Ժամանակակից հնդեվրոպական համեմատական լեզվաբանության համար «ցեղակցություն» հասկացությունը այլևս չունի XIX դ. ըմբռնումը, երբ փաստորեն ընդունվում էր լեզուների միայն պարզ տարամիտվող զարգացումը, և անտեսվում էր անգամ սուբստրատը:

Այժմ էլ, սակայն, շատ լեզվաբաններ իրենց ուսումնասիրությունների մեթոդը կամ էական դրույթները հիմնում են այնպիսի պատկերացումների վրա, որոնք չեն հեռանում ծննդաբանական ծառի տեսությունից: Վերը նշված իր հոդվածում Վ. Պիգանին հանդես է գալիս հենց այդպիսի լեզվաբանների դեմ՝ ասելով. «Հանուն ինչի՞՝ Ռիկսը, իսկ նրա հետ և ժամանակակից շատ լեզվաբաններ կցանկանային արգելել մեզ խոսել անգլաֆրանսիական կամ ռումինասլավոնական ցեղակցության մասին:

¹⁰ **A. Meillet**, նշվ. աշխ., էջ 5-6:

¹¹ **В. Пизани**, *К индоевропейской проблеме*, «Вопросы языкознания», 1966, № 4, էջ 11:

¹² **Г. Церетели**, *О языковом родстве и языковых союзах*, «Вопросы языкознания», 1968, № 3.

Պատասխանը պարզ է. հանուն լեզուների ցեղակցության այնպիսի կոնցեպցիայի, որն առաջացել է (թեև նշված լեզվաբաններից շատերն իրենց հաշիվ չեն տալիս) լեզվի որպես բնական օրգանիզմի ըմբռնման հիմքի... և այդտեղից էլ բխող լեզուների ծննդաբանական ծառի տեսության վրա, այսինքն՝ այնպիսի գաղափարների, որոնք այսօր ոչ մեկը չէր համարձակվի գիտակցորեն պաշտպանել»¹³:

Ուրեմն ճիշտ կլինի արդյոք լեզվի տարածքային բնութագրման ժամանակ բառային զուգաբանություններից փոխառությունները բացառել, երբ իրականում, Ն. Տրուբեցկոյի բառերով՝ «լեզվաբանական տեսակետից ցեղակցություն և փոխառություն հասկացությունների միջև գոյություն ունի միայն ժամանակագրական տարբերություն»¹⁴:

Իրոք, այն բառերը, որոնք դեռ գրաբարում կարելի է առանձնացնել որպես իրանական, հունական և այլ փոխառություններ, ժամանակակից հայերենի համար բնիկ բառեր են:

Է. Մակևը Է. Բենվենիստի ստուգաբանություններից բերում է այսպիսի օրինակ. հայերեն **պահանգ, պարան, պատճառք, պատառ, պակաս** բառերում **պա**-ն իրանական նախածանց է, որովհետև հայտնի է, որ *p-ն հայերենում տալիս է կամ (h`) հ.-ե. penkʰe «հինգ», հայ. **հինգ**, կամ էլ զրո՝ հ.-ե. pod- «ոտք», հայ. **ոտն**¹⁵: Նման ստուգաբանությունների միջոցով բացահայտվում է լոկ այն փաստը, որ հնչյունական մի օրենքը (*p > h կամ զրո) մի այլ

¹³ В. Пизани, նշվ. աշխ., էջ 11:

¹⁴ Н. Трубецкой, *Мысли об индоевропейской проблеме*, «Вопросы языкознания», М., 1958, № 1, էջ 66. տե՛ս նաև В. Пизани, նշվ. հոդվածը:

¹⁵ А.Макаев, նշվ. աշխ., էջ 18:

ժամանակահատվածում չի գործել, և այդ հանգամանքը կարող է օգնել մեզ միայն որոշելու տվյալ լեզվում գործող օրենքների ժամանակագրությունը:

Եթե որևէ ժամանակահատվածի համար տանք հնդեվրոպական այս կամ այն լեզվի տարածքային նկարագիրը, առանց «ցեղակից» լեզուներից այդ համաժամանակյա կտրվածքում կատարած փոխառությունները հաշվի առնելու, ապա մենք դարձյալ կհանգենք լեզուների միայն տարամիտող զարգացման սկզբունքին:

Հնդեվրոպաբանները, ինչպիսի տեսակետ էլ ունենան այս հարցում, միևնույն է, պատմական ժամանակների հնդեվրոպական բարբառներում, որոնց վիճակն ու փոխհարաբերություններն են աշխատում բացահայտել, միմյանցից կատարած ոչ մի «փոխառություն» չեն առանձնացնում: Գ. Զոլտան տարածքային մեթոդներով գրած իր գրքի նախաբանում նշում է, որ «այլ հնդեվրոպական լեզուներից (մեծ մասամբ իրանական և հունական) ակնհայտ փոխառությունները ուշադրության չեն առնվում»¹⁶: Բայց և անմիջապես տողատակի ծանոթության մեջ ավելացնում է. «Ընդ որում, ես լիովին գիտակցում եմ, որ «սկզբնական ազգակցության» և «փոխառության» միջև ոչ մի սկզբունքային տարբերություն գոյություն չունի, փոխառյալ բառի մասին խոսում են միայն այնտեղ, որտեղ փոխառության ուղղությունը պարզ է: Երբ այդ չափանիշը (*kriterium*) բացակայում է, խոսում են սկզբնական ցեղակցության մասին»¹⁷: Իսկ այդ «ակնհայտ փոխառությունները», որ բոլոր լեզուներում էլ կարելի է առանձնացնել, ուշ շրջանի արդյունք են: Սակայն տվյալ լեզվի այդ

¹⁶ G. Solta, *Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen*, էջ 5:

¹⁷ Նույն տեղում:

ուշ շրջանի տարածքային նկարագրի ժամանակ դրանք դառնում են շատ կարևոր գուգաբանություններ, քանի որ այս կամ այն լեզվի որոշ ժամանակահատվածի տարածքային բնութագիրը տալ, նշանակում է տվյալ լեզվի բոլոր մակարդակների գուգաբանությունների հիման վրա որոշել, այսպես կոչված, ցեղակից և ոչ ցեղակից լեզուների հետ ունեցած փոխհարաբերությունները ու նրանց նկատմամբ գրաված դիրքը: Հնդեվրոպական տարածքային լեզվաբանությունը, իհարկե, անտեսում է ոչ ցեղակից (հնդեվրոպական տարրեր քիչ կամ ամեննին չպարունակող) լեզուները: Այստեղ խնդրի դժվարությունը այդ ժամանակահատվածի որոշելն է:

Տարածական լեզվաբանության համար ևս կարևոր է «համաժամանակություն» և «տարածամանակություն» հասկացությունների տարբերագատումը: Գրավոր հուշարձաններով հարուստ հայերենի համար, սակայն, հեշտ կլինի վերջին երկու հազարամյակում գրեթե ցանկացած ժամանակահատվածի համար որոշել նրա տարածքային բնութագիրը, մասնավորապես որ այդ տարածքների մեջ մտնող լեզուները նույնպես գրավոր վկայված են: Բայց ինչպե՞ս վարվենք հնդեվրոպական լեզուների պատմական ժամանակների տարածքները պարզելիս, երբ հնդեվրոպական «նախալեզուն», որն, ի դեպ, հնդեվրոպական լեզուների ընդհանրությունների հիման վրա սահմանված կադապարների հանրագումար է և ոչ՝ բացարձակ ռեալություն, տեղադրում են մ.թ.ա. IV-V հազարամյակում, իսկ մեզ հայտնի լեզուները գալիս են (հաճախ չափազանց վատ պահպանված) երկրորդ հազարամյակից: Եթե Վ. Պորցիգը, նորաբանությունների վրա հենվելով, տալիս է հնդեվրոպական լեզուների տարածքային նկարագիրը, չենք կարող ասել, թե հատկապես ո՞ր

ժամանակահատվածին է այն վերագրում¹⁸: Նույնը և Գ. Զուլտան, որի համար նորաբանությունների և հնաբանությունների տարբերումը սկզբունքային հարց չէ, դարձյալ կոնկրետ ո՞ր համաժամանակյա հատվածում է որոշում հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների շրջանում¹⁹: Այստեղ մենք կարող ենք առաջնորդվել ամենաշատը հարաբերական ժամանակագրության սկզբունքներով և խոսել, ասենք, հետսատեմյան կամ նախասատեմյան և այլ կապերի մասին:

Երկրորդ սկզբունքը հանգում է տարածքային բառագուգաբանություններից պաշտամունքային (сакралный) և բնաստեղծական բառերի բացառելուն: Ա. Մեյեն նույնպես, ինչպես Մակասեն է նկատում, վերը նշված իր գրքի՝ դեռ 1922 թ. հրատարակության նախաբանում կարևոր է համարել այս սկզբունքը՝ գտնելով, որ այդպիսի բառերը ցույց են տալիս լոկ այդ լեզուներով խոսողների հասարակական ընդհանուր կառուցվածքը, բայց ոչինչ չեն ասում այդ լեզուների ցեղակցության մասին²⁰:

Բանն այն է, որ ընդհանուր հասարակական կառուցվածք մատնանշող բառերը կարող են լինել կամ անկախ, զուգահեռաբար զարգացած ձևեր, կամ փոփոխություններ: Առաջին դեպքում իհարկե, պետք է դրանք տարածքային բառագուգաբանություններից բացառել, իսկ երկրորդը հանգում է մեր վերն ընդունած սկզբունքին:

Է. Մակասեն այդ բառերի բացառումը պատճառաբանում է փոքր-ինչ այլ կերպ. «Նման նյութի ոչ պիտանի լինելը թելադրված է այն հանգամանքով, որ հնդեվրոպական պաշտամունքային և

¹⁸ **В. Порциг**, *Членение индоевропейской языковой области*, М., 1964:

¹⁹ **G. Solta**, նշվ. աշխ.:

²⁰ **A. Meillet**, *Les dialectes indo-européens*, Paris, 1922,

բանաստեղծական բառապաշարի տարրերը... որպես կանոն ներկայացնում են բոլորովին արխաիկ կազմությունները, որոնք տարբեր պատճառներով պահպանվել են այս կամ այն հնդեվրոպական լեզվում: Հենց դրանով էլ նրանք ոչինչ չեն ասում երկու կամ ավելի լեզուների ցեղակցության աստիճանի մասին, չնայած և կարող են պահպանել այդ հնագույն վերապրուկները»²¹: Բայց պարզ չէ, թե ինչ սկզբունքներով են այդ բառերը համարվում առխաիկ, և կամ արդյո՞ք արխաիկ բառերը տարածքային զուգաբանություններ չի կարելի համարել, հենց այդ ավելի հին տարածքները որոշելու համար: Բացի այդ, «բանաստեղծական» և «պաշտամունքային» բառերը բոլոր լեզուներում չէ, որ իմաստի նույն երանգն ունեն, այսինքն՝ կարող են լինել հենց «պաշտամունքային» և «բանաստեղծական»: Դա է. Մակևեր մեկնաբանում է այսպես. Պաշտամունքային և բանաստեղծական բառերը «կարող են ենթարկվել «հասարակացման» (профанация), այսինքն՝ որոշակի մի լեզվում կորցնել իրենց հատուկ պաշտամունքային կամ բանաստեղծական բնույթը և անցնել բառապաշարի չեզոք շերտերին»: Որպես օրինակ նա նշում է, որ հին հնդկ. *hayāh* «նժույգ» (սովորական նշանակությամբ՝ *aśvāh*), իսկ դրան համապատասխանող հայ. *ձի* բառը կորցրել է «հատուկ, բանաստեղծական բնույթը և դարձել սովորական բառապաշարի տարր՝ ենթարկվել է հասարակացման, հին հնդկ. *ravīh* «արև» (սովորական՝ *suryah*-ի դիմաց) ծագումնաբանորեն կապվում է հայ. *արև* բառի հետ, հասարակացման է ենթարկվել» և այլն²²:

Ի միջի այլոց, Պորցիգը, այդ օրինակները բերելով, չի նշում, որ դրանք արխաիկ բառեր են, մի բան, որ նրա համար կարևոր

²¹ Ծ.Макаев, նշվ. աշխ., էջ 20:

²² Նույն տեղում, էջ 21:

նշանակություն ունի, այլ համարելով գրական ազդեցություններ՝ հայ-արիական տարածք չի առանձնացում²³:

Ոչ մի հիմնավոր ապացույց չկա պնդելու, որ, ասենք, հենց հայերենում են դրանք հասարակացել, իսկ հնդկերենում պահպանել են իրենց պաշտամունքային և բանաստեղծական բառերի արժեքը: Բայց կարող էր հակառակը տեղի ունեցած լինել. բառը սովորական գործածությունից ունեցել է հատուկ տեմինի արժեք, որ շատ տարածված երևույթ է լեզուներում. այդ դեպքում հայերենում պահպանված բառերը կհամարվեն հնաբանություններ, իսկ հնդկերենինը՝ նորաբանություններ: Ընդհանրապես այդ սկզբունքը (պաշտամունքային և բանաստեղծական բառերի բացառումը տարածքային բառագուգաբանություններից) բոլոր լեզվաբանները չէ, որ ընդունում են: Ինքը Մակասն էլ է նկատում, որ Զոլտան, օրինակ, հայ. **տաւն**, լատին *dops* «աստվածների նվիրաբերած գոհ», հին. *tafn* «գոհաբերություն» բառերը «բերում է որպես հայ-գերմանական տարածքային գուգաբանություններից մեկը»²⁴:

Ճիշտ է, այս կարգի բառերը կարող են որոշ լույս սփռել լեզուների պատմական շրջանի փոխհարաբերությունների բնույթի վրա, բայց տարածքային նկարագրի համար դրանք «ոչ պիտանի նյութ» համարել չենք կարող: Եթե, իհարկե, որոշ ժամանակահատվածում երկու կամ ավելի լեզուների կապերը սահմանափակվում են միայն այդ տիպի բառերով, ապա դա ստիպում է մտածել այդ լեզուների շփման ձևերի մասին. միջնօրդ լեզվի միջոցով են դրանք փոխանցվել (որովհետև տերիտորիալ շփման ժամանակ փոխազդեցությունները միայն այդ տիպով չեն

²³ В. Порциг, նշվ. աշխ., էջ 239-240:

²⁴ А.Макаев, նշվ. աշխ., էջ 22:

սահմանափակվի), թե՞ զուգահեռաբար անկախ զարգացած ձևեր են, կամ էլ, այսպես կոչված, գրական ազդեցություններ:

Է. Մականի առաջ քաշած հաջորդ երկու սկզբունքները տարածական լեզվաբանության համար կարևոր են և ճիշտ: Դրանք են՝ «միայն տիպաբանորեն ցեղակից կազմությունների բացառումը», ավելի ճիշտ՝ դրանց օգտագործումը որպես առկա նյութին լրացնող հանգամանք, և, վերջապես, «բառային նյութի առանձնահատկությունները» հաշվի առնելու անհրաժեշտությունը: Դա նշանակում է՝ «ա) որոշակի լեզվում բնիկ բառույթի առկայության հնարավորությունը, որը տվյալ լեզվի զարգացման ընթացքում կորել է կամ փոխարինվել այլ կազմություններով, որ բառապաշարի տվյալների հիման վրա երկու կամ ավելի լեզուների ցեղակցական հարաբերությունների բացահայտման (установление) ժամանակ, հաճախ կարող է հանգեցնել սխալ եզրակացությունների. բ) ստուգաբանության վիճելի կամ անհուսալի լինելը, որոնց հիման վրա են կառուցվում բառային տարածքային զուգաբանությունները»²⁵:

Մինչև հիմա մենք քննարկեցինք այն հարցը, թե տարածքային վերլուծության ժամանակ ինչ սկզբունքների վրա պետք է հենվել և ինչ մոտեցում պետք է ցուցաբերել ընդհանուր բառապաշարի նկատմամբ: Բայց ո՞ր տիպի ընդհանրությունները համարել էական՝ տարածքային բառազուգաբանությունները որոշելիս, ձևաբանական, հնչյունաբանական, իմաստաբանական, թե՞ կառուցվածքային: Այս հարցում ևս հնդեվրոպական տարածական լեզվաբանության մեջ ընդհանուր կարծիք չկա: 2. միևնույն հեղինակն անգամ որոշակի սկզբունք չունի:

²⁵ Նույն տեղում, էջ 22-23:

Է. Մականը ճիշտ է նկատում, որ Գ. Զոլտան, հայերենի այս կամ այն բառի տարածքը որոշելիս ելնում է մերթ իմաստաբանական (օրինակ՝ հայ. «ուսանիմ», սլավոն. «սովորել-վարժվել»), մերթ հնչյունաբանական հատկանիշից (օրինակ՝ *երեկ*, սեռ. *երիցու*, լատ. *priscus*) և այլն: Նույնը կարելի է ասել Վ. Պորցիգի և այլ լեզվաբանների մասին:

Իհարկե, նշված հատկանիշները տարածքային տեսանկյունով շատ կարևոր են, որը Մականը նույնպես չի ժխտում, բայց դրանք «իրենց տեսակարար կշռով հավասարաժեք չեն, նրանցից յուրաքանչյուրն ունի իր սեփական «տարածքը», իր հարաբերական ժամանակագրությունն ու իր տարածքային բնութագրերը (характеристики) և այդ չափանիշների հատումը յուրաքանչյուր լեզվում տեղի է ունենում յուրովի»²⁶:

Հնդեվրոպական տարածական լեզվաբանության մեջ այս տարակարծությունները, սկզբունքների ոչ հստակությունը, ինչ խոսք, խանգարում են ուսումնասիրությունների ճշգրտությանը, բայց դա գալիս է ուսումնասիրվող նյութի շատ անհայտներ պարունակելուց: «Հնարավոր է, որ հնդեվրոպական տարածական լեզվաբանության հենց մոտ ապագայի խնդիրը կլինի այնպիսի հաստատուն մեծությունների բացահայտումը և ընտրությունը, որոնք թույլ կտան հնդեվրոպական տարածական լեզվաբանության կառուցման ժամանակ գալ միանշանակ եզրակացությունների»²⁷:

²⁶ Զ.Макаев, *Армяно-индоевропейские лексические изоглоссы и ареальная лингвистика*, *Zeitschrift für Phonetik, Sprachwissenschaft und kommunikations forschung*, Berlin, 1967, Band 20, Heft 516, 1967, էջ 464:

²⁷ Նույն տեղում:

Բայց և այնպես մենք ուզում ենք փորձել որոշելու այն էականը, որ անհրաժեշտ է բառային զուգաբանությունը ճիշտ արժեքավորելու համար:

Վերը նշված չափանիշները, որ բովանդակության և արտահայտության պլաններում բառի տարածքային հատկանիշներ են, իրոք, հավասարարժեք լինել չեն կարող, միայն այս կամ այն հատկանիշով որոշվող բառի տարածքային արժեքը նույնպես ճիշտ չի լինի:

Բառային զուգաբանությունը բառի բովանդակության և արտահայտության պլաններում միաժամանակ ի հայտ եկող տարածքային հատկանիշների գումարն է:

Տարածքն ընկած է հնդեվրոպական բոլոր լեզուներում լեզվական փաստի տարածման առավելագույնի և նվազագույնի միջև: Տարածքի սահմաններում լեզվական երևույթի առավելագույն արժեքը կլինի նույնությունը:

Ուրեմն արտահայտության պլանում բառի տարածքային առավելագույն արժեքը նույնաձևությունն է, բայց համահնդեվրոպական նույնաձևությունը կամ որևէ լեզվում մեկուսացած ձևը տարածքային հատկանիշ չեն: Նույնաձևություն ասելով մենք այստեղ պետք է հասկանանք նաև այն հնարավոր նույնությունը, որ տվյալ լեզուների ձևերը կարող են թելադրել. օրինակ՝ հայ. **բերեմ**, հին հնդկ. bhārami, հուն. φέρω, լատ. ferō: Այս օրինակներում, հունարենի և լատիներենի ձևերի բացարձակ նույնությունից բացի, կարող ենք խոսել նաև նշված բոլոր բառերի արմատների նույնաձևության մասին, քանի որ հնդեվրոպական համեմատական քերականության հնչյունական հայտնի օրենքների համաձայն բոլորն էլ հանգում են նախնական *bher-

արմատին: Այսինքն՝ այդ ձևերը կողք-կողքի կարող ենք դնել համաժամանակյա նույն, բայց ավելի հին մի հատվածում:

Նույն սկզբունքով բովանդակության պլանում բառային զուգաբանության տարածքային առավելագույն արժեքը կլինի նույնիմաստությունը, բայց համահնդեվրոպական նույնիմաստությունը տարածքային արժեք չունի, իսկ նվազագույն արժեքը ոչ թե հականիշությունն է, որ հաճախ այս կամ այն հասկացության բնույթից է բխում (ծայր-վերջ կամ սկիզբ), այլ լեզուների մեջ բոլորովին մեկուսացած բառիմաստը: Նույնիմաստություն, սակայն, պետք է ընդունել և այն առումով, որ տարբեր լեզուներում կարող են համընկնել բառի մեկ կամ ավելի նշանակությունները (մեծ մասամբ գլխավոր), և պարտադիր չէ, որ տվյալ բառի իմաստային դաշտերը այս կամ այն լեզուներում իրար ծածկեն:

Լեզվաբաններն իրենց համեմատական ուսումնասիրությունների ժամանակ հենվում են հիմնականում բառերի հնչյունային համապատասխանությունների վրա, որովհետև դրանց միջոցով բացահայտվող հնչյունական օրենքները փոքրացնում են պատահական նմանության հնարավորությունը: Իսկ համեմատական իմաստաբանությունը հնդեվրոպական լեզվաբանության ամենաքիչ ուսումնասիրված բնագավառն է: Այստեղ չկան որոշակի սկզբունքներ և նպատակներ: Սակայն իմաստաբանական համեմատական ուսումնասիրությունը չենք կարող տանել այն ուղղությամբ, որպեսզի պարզենք, օրինակ, վերականգնված բառ-կաղապարի իմաստը այս կամ այն լեզվում (լեզուների խմբում) ինչ զարգացում է ապրել (իմաստի պահպանում, նեղացում, լայնացում և այլն), քանի որ այդ «բառերը», և՛ հնչյունային տեսքով, և՛ իմաստով լոկ գիտական բանաձևեր են: Այդ բառերի և դրանցով խոսող ժողովրդի գոյության

հնարավորությունը, այն էլ մեզանից 6-7 հազարամյակ առաջ, խիստ փոքրանում է հենց այն իմաստով, որ դրանք հնդեվրոպական լեզուների ստուգաբանական բառարաններում անգամ ունեն վերացական, ընդհանուր իմաստներ: Բացի այդ, ժամանակակից մարդը ինչքան էլ ուզենա «մտածել» իրենից հազարամյակներով հեռու, անհայտ հայացքներով ու ըմբռնումներով մարդու նման, միևնույն է, հասկացությունների նույնատիպ գուգորդություններ միշտ չէ, որ կարող է կատարել:

Յ. Պոկոռնու ստուգաբանական բառարանում, օրինակ, հնդեվրոպական *pel-* արմատը բացատրվում է հետևյալ կերպ. «Ոչ պարզ գույների համար արտահայտությունների մեջ, ինչպես. «մոխրագույն, գունատ», այլև «խած»²⁸: Այդ արմատը կապում ենք «գույն» հասկացության հետ, որովհետև հնդեվրոպական լեզուներում պահպանված բառիմաստները (հուն. *πολιό*, հայ. ալիք, հին հնդկ. *palitá* «ալեհեր», լատ. *palleō*, *ēre* «գունատվել», կիւր. *Liwyd* «մոխրագույն», հին պրուս. *poalis* «աղավնի» և այլն) ունեն, այսպես կոչված, մի ընդհանուր ենթատեքստ, այն է՝ «սպիտակ, բաց գույն», որից նշված իմաստների զարգացումը հնարավոր ենք համարում: Բայց դա բոլորովին էլ չի նշանակում, թե **pel-* արմատը սկզբից ի վեր «ոչ պարզ» գույն է նշանակել: Ընդհակառակը, հնարավոր է, որ սկզբում նա նշանակած լինի որևէ կոնկրետ առարկա, երևույթ, իսկ գույնի հետ գուգորդությունը լեզուներում կատարված լինի ավելի ուշ (ինչպես օր., **որդան**. ֆր. *rose*): Հնարավոր է նույնիսկ, որ նախնական իմաստը պահպանված լինի վերը նշված լեզուներից մեկում:

²⁸ J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, Bern, 1959, էջ 804:

Ռեալ գոյություն ունեն սոսկ հնդեվրոպական լեզուների ընդհանրությունները, որոնց վրա հենվելով պետք է բացահայտել տարբեր լեզուներում տվյալ բառի իմաստային հարաբերությունները և խոսել այդ լեզուներում նույնիմաստության, հոմանիշության, իմաստի մոտիկության, իմաստային դաշտերի հարաբերության, այս կամ այն լեզվում բառիմաստի հասկացությունների ավելի նեղ կամ լայն ընդգրկման և այլնի մասին: Մրանք բովանդակության պլանում բառի տարածքային հատկանիշներն են, քանի որ կարող են ունենալ տարածման իրենց տարբեր սահմանները, այսինքն՝ կազմել տարածքները:

Հաճախ իմաստաբանական համեմատական ուսումնասիրությունների ժամանակ կարևոր են համարում լեզուներում այս կամ այն հասկացությունների (կենցաղային իրեր, ազգակցություն, կենդանիներ և այլն) խմբին պատկանող հնդեվրոպական բառամթերքի առանձնացումն ու համեմատությունը: Այդ կարգի բառերը, իհարկե, օգնում են բացահայտելու տվյալ լեզուների պատմական կապերի բնույթը, բայց որպես այդպիսիք (հասկացությունների որոշակի խմբին պատկանող բառեր) տարածքային զուգաբանություններ չեն, որովհետև թեմատիկ այդպիսի խմբեր բոլոր լեզուներում էլ կան, ամեն դեպքում մեզ միշտ հետաքրքրում է տվյալ իմաստաբանական խմբին պատկանող բառի այս կամ այն նշանակությունը որ լեզուներում է առկա, այսինքն՝ որտեղ կա նույնիմաստություն, հոմանիշություն և այլն:

Ինչպես արդեն ասվեց, բառի տարածքային բնութագրման մեջ մտնում են բառիմաստի և հնչյունական ձևի տարածքային արժեքները: Բառի բովանդակության և արտահայտության պլաններում տարածքները կարող են իրար չծածկել: Այնտեղ,

որտեղ դրանք իրար կծածկեն, կլինի տվյալ բառի տարածքային առավելագույն արժեքը, և այդ տարածքը կառանձնացնենք որպես **ուժեղ** (կամ **բացարձակ**), իսկ միայն իմաստային կամ միայն հնչյունակառուցվածքային զուգաբանություններով որոշվող տարածքները՝ **թույլ** և համապատասխանաբար էլ՝ **ուժեղ (բացարձակ)** և **թույլ** զուգաբանություններ: Այսպես. հուն. ἄργυρος կոռն. argant, մեսապ. argorian, լատ. argentum, բոլորն էլ «արծաթ» նշանակությամբ, բացարձակ զուգաբանություն են, քանի որ տվյալ բառը և՛ բովանդակության, և՛ արտահայտության պլաններում (բոլորն էլ հանգում են *arg- արմատին) ունեն տարածքային առավելագույն արժեքներ: Իսկ, ասենք, հին. հնդկ. rajatá-, ավ. թռչառա-, օսկ. aragetud և այլ ձևերը վերը լեզուների տեսանկյունով ավելի թույլ զուգաբանություններ են, քանի որ տարածքային առավելագույն արժեք ունեն միայն բովանդակության պլանում:

Լեզուներում բառերի նույնիմաստությունը, հոմանիշությունը և այլն կարող են անկախ զարգացման արդյունք լինել: Բայց ինչքան մեծ լինի բառիմաստի տարածքը (լեզուներ ընդգրկելու առումով), այնքան կփոքրանա նրա անկախ զարգացման հնարավորությունը: Այս դեպքում, սակայն, հակասություն է ստացվում, քանի որ ամեն մի երևույթ, ձգտելով համահնդեվրոպական ընդհանրության, ձգտում է ցեղակցության ստույգության առավելագույնին, իսկ տարածքը՝ զրոյի: Այդ հանգամանքը բառի տարածքային արժեքավորման ժամանակ պետք է հաշվի առնել: Ճիշտ է, ասենք, համահնդեվրոպական նույնիմաստությունը տարածքային հատկանիշ չէ, բայց եթե տվյալ բառը տարածքային հատկանիշ է ցուցաբերում արտահայտության պլանում, չենք կարող հավասարեցնել այնպիսի զուգաբանության, որը նույնպես

տարածքային հատկանիշ ունի միայն արտահայտության պլանում, սակայն համահնդեվրոպական նույնիմաստություն չէ:

Բառային զուգաբանությունների տարածքային արժեքավորման այսպիսի մոտեցում ցուցաբերելով՝ մենք չենք կարծում, որ հասնում ենք մեծ ճշգրտության: Միշտ պետք է նկատի ունենալ լեզվի այն յուրահատկությունը, որ բառի զարգացման համար բառիմաստի և նրա հնչյունային արտահայտման ձևի կապը անհրաժեշտ պայման չէ, բառիմաստի փոփոխությունը միշտ չէ, որ ուղեկցվում է արտահայտման ձևի փոփոխությամբ, և կամ ընդհակառակը: Բառի իմաստը կարող է գտնել հնչյունային արտահայտման բոլորովին մի նոր ձև, իսկ հինը՝ նոր իմաստ, երկուսն էլ փաստորեն լեզվի համակարգից դուրս չեն մնա, այդ համակարգում կգրավեն նոր տեղ ու կունենան նոր հարաբերություններ, որի պատճառով էլ հետագայում կնպաստեն այդպիսի զարգացման կապերի ճիշտ բացահայտմանը: Բացի դրանից, խիստ կարևոր է համաժամանակյա կտրվածքի ճիշտ որոշելը: Տարբեր ժամանակագրություն ունեցող զուգաբանությունները նույն հարթության վրա դնելու դեպքում լեզուների տվյալ ժամանակահատվածի տարածքային հարաբերությունների պատկերը խիստ կաղավաղվի:

Վերը նշված մեթոդը, ինչ խոսք, ավելի արդյունավետ կլինի որոշակի ժամանակահատվածում լավ հայտնի լեզուների նկատմամբ կիրառելիս, քան պատմական ժամանակներում անհայտ հնդեվրոպական բարբառների փոխհարաբերությունները բացահայտելու դեպքում: Բայց և այնպես, արտահայտության և բովանդակության պլաններում զուգաբանության տարածքային հատկանիշների համակցելու սկզբունքը մեզ թվում է

ամենակարևորն է բառի տարածքային ընդհանուր արժեքը ճիշտ որոշելու համար:

*«Լրաբեր հասարակական
գիտությունների»,
1972, 12(348):*

**ՇԵՇՏԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ
ՇՐՋԱՆԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Հայերենի նախապատմական շրջանում բառային շեշտն ամենայն հավանականությամբ լեզվի մակարդակներում գործել է աներկբայորեն՝ ձևով առաջացնելով բառաձևերում միանման փոփոխություններ: Այս հանգամանքը թույլ է տալիս լեզվի հին շերտերը թափանցելու և գտնելու հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանին մոտ ժամանակահատվածի շեշտադրության, թեկուզև տարածքային այն կադապարը, որից հնարավոր համարվի հայերենի բառային շեշտի ծագումն ու զարգացումը: Իզուր չէ, որ հնդեվրոպական նախալեզվի այդ բնագավառի ուսումնասիրողները հայերենի նյութը անտեսում են՝ հիմնականում օգտագործելով հունարենի, հին հնդկերենի, քալթիական, գերմանական լեզուների տվյալները: Հնդեվրոպական նախալեզվի բառային շեշտի վերաբերյալ մեզ հայտնի ժամանակակից տեսություններից բխող հայերենի տվյալների բացատրությունները բավարար հիմնավորում չեն ստանում: Այդ պատճառով դժվար է վերականգնել հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների բառային շեշտի ընդհանուր կապը:

Հայերենի, որպես հնդեվրոպական լեզվի, դեռ առաջին ուսումնասիրողները նկատել են, որ հայերեն բառերը հնդեվրոպական մյուս լեզուների համեմատությամբ մեկ վանկով պակաս են: Դա հիմք է տվել եզրակացնելու, որ հնդեվրոպական ընդհանրությունից հետո հայերենում բառային շեշտը ինչ-ինչ պատճառներով կայունացել էր նախավերջին վանկում: Այդպիսի վերջընթեր շեշտը փոփոխություններ է առաջացրել շեշտահաջորդ

վանկում. Նրա ձայնավորը սղվել է, երբեմն ընկել է նաև ամբողջ վանկը:

Նախապատմական շրջանի հայերենի շեշտահաջորդ վանկի ձայնավորի անկման օրենքին ենթարկվել են ոչ միայն առանձին բառերը, այլ նաև ձևաբանական հարացույցները: Սակայն որոշ դեպքերում, հատկապես բառի թեք ձևերում, թվում է՝ հնդեվրոպական բառի վերջին վանկի ձայնավորը հայերենում պահպանվել է: Այսպես. հնդեվրոպական եզ. սեռ. **yedōs*(-jo), տր. **yedōi*, բաց. **yedōt* ձևերի դիմաց հայերենն ունի **զենոյ**, հնդեվրոպական ձայնավորագուրկ հիմքերի սեռական-բացառականի *-es վերջավորությանը հայերենում համապատասխանում է -է: Այսպիսի ստուգաբանությամբ կարծես հնդեվրոպական նշված հոլովային վերջավորությունները հայերենում պահպանվել են, հետևաբար՝ շեշտը նախապատմական շրջանի հայերենում, կարելի է ենթադրել, ուներ ձևաբանական գործառություն:

Մենք այստեղ հիմնականում կանոնադառնանք վիճելի կետերին: Նախ՝ քննենք որոշ ձայնորդահանգ հիմքերով բառերի ընդհանուր օրինաչափություններից շեղվող այն հոլովական ձևերը, որոնք ունեն ավելի հավաստի ստուգաբանություններ: Հնդեվրոպական **pəter*, **matēr*, **bhratēr* հայերենում օրինաչափորեն պետք է տային ***հայիր**, ***մայիր**, ***եղբայիր** և շեշտահաջորդ վանկի ի-ի անկումով՝ **հայր**, **մայր**, **եղբայր**: Սրանց եզ. սեռական-տրական **հաւր**, **մաւր**, **եղբաւր** ձևերը, ինչպես հայտնի է, բացատրելի են հնդեվրոպական այլ լեզուների (հուն., հին հնդկ., լատ.) համապատասխան ձևերի համեմատությամբ միայն՝ *πατρός*, *πατρί*, *pitrē*, *μήτρος*, *matris*, *matri* և այլն, որը թույլ է տալիս հայերենի սեռականի համար վերականգնել **pətros*, **matros*, **bhratros*, իսկ տրականի համար՝ **pətri*, **matri*, **bhratri* նախաձևեր, որոնց շեշտը

հայերենի կանոնի համաձայն եղել է նախավերջին վանկի վրա, իսկ վերջին վանկի ձայնավորն ընկել է (վերջին անշեշտ վանկը լիաձայն՝ *ei չի եղել): Սեռականում եղել են ***հաւր/հ, *մաւր/հ, *եղբաւր/հ** (եթե ընդունում ենք բառավերջի *-s > Խ/յ հնչյունափոխություն), և բաղաձայնից հետո **յ/հ**-ի սովորական անկումով՝ **հաւր, մաւր, եղբաւր** (կամ *-s-ն ընկել է նախքան *s > Խ/յ հնչյունափոխությունը), իսկ տրականի ձևերում *-i(-ei)-ն պարզապես ընկել է, ու նորից ստացվել են **հաւր, մաւր, եղբաւր**, այսինքն՝ սեռականը և տրականը ձևով նույնացել են:

Գործիականի *թօրբի, *matրբի, *bhratրբի ձևերը, պետք է ենթադրել, նախ եղել են *patarբի, *matarբի, *bhratarբի (շեշտի տակ *ւթ- վանկի լիաձայնության հետևանքով), որ տվել են ***հայարբի, *մայարբի, *եղբայարբի** և ապա՝ յ-ի անկումով և երկու ձայնավորների ձուլմամբ՝ **հարբ, մարբ, եղբարբ** (հմմտ. *trejes > երեք): Հակառակ դեպքում կլինեին ***հաւրբի, *մաւրբի, *եղբաւրբի**, քանի որ *ւ-ն *tr և ոչ *atar կապակցությունում է հայերենում դառնում ւ, ինչպես տվյալ դեպքում է ենթադրվում: Իսկ եթե նախ կանխադրենք, ասենք, *matրբի > maurբի ձև, ապա *r-ն այլևս վանկարար չէր լինի, հետևաբար հայերենում ձայնավոր հենարան (**ար**) չէր ստանա: Նույնիսկ եզակի թվի մյուս թեք հոլովների **հաւր-, մաւր-, եղբաւր-** հիմքերը հարացույցում ընդհանուր միասնականացման օրենքով չեն նպաստել գործիականի հնդեվրոպական հիշյալ նախաձևերը ***հաւրբ** և այլն դարձնելու:

Եզակի բացառականի **-է** վերջավորությունը ձայնորդահանգ հիմքերի ընդհանուր վերջավորությունն է, որը, ինչպես ենթադրվում է, ծագում է հնդեվրոպական մակբայակերտ *-tes/*-tos-ից կամ *-es-ից: Հայտնի է, որ հնդեվրոպական լեզուների

մեծ մասը բացառականի հատուկ ձև չունի: Եթե իսկապես **-tes/*-tos* ածանցները մակբայակերտ մասնիկներ կամ առանձին մակբայներ են եղել, ապա, ամենայն հավանականությամբ, դրանք անվանական հիմքերին կցվել են ավելի ուշ, երբ ձևաբանական և բառային մակարդակներում իշխում էին ձայնավորահանգ հիմքով կազմությունները: Ուստի հնարավոր է, որ ձայնորդահանգ հիմքով բացառականը, նախապես լինելով բառային մակարդակի միավոր, նույնպես ձայնավորահանգ հիմք ունենար՝ **-e-tes/tos*, որտեղ շեշտն ընկել է վերջընթեր վանկի, այսինքն՝ հիմքակազմ ձայնավորի վրա, իսկ նրան նախորդող **-tēr* ածանցը ստացել է զրո ձայնդարձ՝ **matr-é-tes* և այլն, ապա՝ **մաւրէյ > մաւրէ* և այլն (հմմտ. գործիականի ձևերի համար նշված հնչյունափոխությունները): Այս վարկածի օգտին կարող է խոսել նաև **ո** հիմքով բառերի **-ոյ** վերջավորությամբ բացառականի առկայությունը (եթե վերջինս սեռականի ձև չէ)՝ **yedo-tes > *yedóies > գէտոյ*:

Ինչպես տեսնում ենք, նշված բառերի եզակի թվի հոլովական հարացույցում նախապատմական հայերենի շեշտը ձևաբանական դեր չի կատարել: Այն մեխանիկորեն ընկել է նախավերջին վանկի վրա:

Նույն ձևով հայերենի ձայնորդահիմք մյուս բառերը, որոնք հնդեվրոպական ծագում ունեն, թեքվելիս ի հայտ չեն բերում այնպիսի ձևեր, որոնց մեկնաբանությունը հանգեցնէր նախապատմական հայերենի շեշտի նշված օրենքին հակասող մեկ այլ օրենքի ընդունման:

Հայերենի ձայնավորահանգ հոլովման համակարգը հիմնականում բացատրելի է հնդեվրոպականի համապատասխան համակարգով:

Եզակի սեռականի *-osjo վերջավորությունը (հմմտ. հին հնդկ. -asya, հուն. -οιο, ֆալիսկ. -scio) հայերենում վերջընթեր շեշտի գործառությամբ դարձել է **-ոյ**: Եզակի տրականն ուներ *-ōi<*-o+ei: Հայերենում այս վերջավորությունը պետք է ընկներ կամ դառնար **ի**: Այնինչ **ո** ձայնավորահանգ հիմքերը տրականում նույնպես ունեն **-ոյ**, որը հիմք է տվել այն բխեցնելու հնդեվրոպական *-ōi-ից: Հնարավոր է համարվում նաև հայերենում հնդեվրոպական *ōi-ի անկում, ապա սեռականի համաբանությամբ՝ **-ոյ** վերջավորության ավելացում: Ինչպես հայտնի է, հին հայերենը, հատկապես գոյականի և ածականի համար, սեռականը և տրականը ոչ մի թվում չէր տարբերագատում (մի քանի բառերի տրականի **-ում** վերջավորությունը դերանվանական հոլովի հետագա ազդեցություն է): Ձայնավորահանգ **ո** հիմքերի դեպքում՝ տրականի վերջավորության անկման հետևանքով տրականը ձևով նույնացել է ուղղականի հետ: Այսպիսով, այդ հիմքերով բառերի համար տրականը որպես թեք հոլովաձև վերացել է (հմմտ. *yedoī>***գետ**): Իսկ ձայնորդահանգ և մյուս ձայնավորահանգ հիմքերի դեպքում այն նույնացել է սեռականի հետ (հմմտ. *patri/oi > **հաւր**, *kerdi-s+ei > **սրտի**): Հետևաբար, **ո** հիմքով բառերի սեռականի ձևը գիտակցվել է նաև որպես տրականի հոլովաձև:

Օրենքից շեղում է թվում նաև բացառականի **-է** վերջավորությունը: Հնդեվրոպական նախալեզվում բացառականի հատուկ ձև է վերականգնվում միայն ձայնավորահանգ (*o, *e) հիմքերի համար՝ *-ōd<*-o+ed, որը հայերենում պետք է դառնար **-տ**: Վերն արդեն խոսվեց **ո** հիմքով բառերի **-ոյ** վերջավորության մասին, որը *-ōd-ից ծագել չէր կարող: Հայերենի **ի** և **ու** հիմքերի դեպքում բացառականի **-է** վերջավորությունը կարող է հետևանք

լինել ուշ շրջանում վերը նշված հիմքերով բառերի բացառականի -է վերջավորության տարածման:

Հնդեվրոպական լեզուներում հոգնակի թվի հիմնական ցուցիչը, թե՛ անվանական և թե՛ բայական համակարգում, *s-ն է, իսկ հայերենում՝ **ք**-ն: Այս իսկ պատճառով լեզվաբանների մեծ մասը հոգնակերտ **ք**-ն բխեցնում է հնդեվրոպական *s-ից: Մեզ հարցը հետաքրքրում է այլ տեսանկյունից. հայերենում **ք**-ն (անկախ ծագումից) հոգնակի հիմքերին ավելացել է անմիջաբա՛ր, թե որևէ ձայնավորի միջոցով, այսինքն՝ այդ հոգնակերտը նախապես վա՛նկ է եղել, թե միայն առանձին հնչույթ:

Հարցին պատասխանելու համար դիմենք հոգնակի ուղղականում մեկ վանկով ավելի հիմքերի քննությանը: Ակնհայտ է, որ այդ բառերի շեշտը հոգնակի թվում մեկ վանկով տեղափոխվել է դեպի աջ: Ինչպես հոլովական ձևերի քննությունը ցույց տվեց, դա տեղի էր ունենում, երբ բառը մեկ վանկով աճում էր, որովհետև հայերենի շեշտը ձգտում էր նախավերջին վանկին: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ հոգնակի թվում նույնպես բառն աճում էր մեկ վանկով, ինչպես՝ *amōr > *ա՛ւուր > աւր, *amōres > *աւուրք (տվյալ դեպքում *s-ն օգտագործում ենք որոշ պայմանավորվածությամբ), *stēl-/stēr-, *ástēl > աւստդ, *ástēl-es > աւստեդք, *dhúktēr > դուստր, *dhuktéres > դուստեդք, *gʰén-a > կին, *gʰenáj-es > կանայք (հմմտ. հուն. γυναικες) և այլն: Հոգնակի **հարք, մարք, եղբարք** ձևերը բացատրելի են, եթե նախահայերենում ենթադրում ենք ***հայարք, *մայարք, *եղբայարք** նախաձևեր, որոնք կարող էին ծագել *patāres, *matāres, *bhratāres, այսինքն՝ *-tēr ածանցի թույլ ձայնավորումով կազմված ձևերից (հայերենում եզակի գործիականի հիմքի՝ հոգնակի թվի հարացույցում տարածվելու մասին ենթադրությունը, որ սահմանափակվում է

այս դեպքով, համոզիչ չէ): Այս բառերում *-tēr ածանցի երկար ձայնավորը կարող էր թուլանալ (ապա սղվել), երբ այդ ածանցին հաջորդեր ոչ թե վանկարաբ հնչույթ, այլ՝ վանկ, որի վրա կտեղափոխվեր շեշտը (հմմտ. լատ. ուղղ. հգն. *matrēs): Թույլ *թ-ն այստեղ պահպանվել է՝ ի տարբերություն թեք հիմքերի:

Հոգնակի թվի սեռ.-տր.-բաց. **ց** վերջավորությունը, ինչպես հայտնի է, բխեցվում է *-sko ածանցից, որի անշեշտ *օ-ն ընկել է:

Հայերենում հոգնակի թվում հայցականի **—ս** վերջավորության առկայությունը նույնպես շեղում է թվում: Այն իր համապատասխանություններն ունի հնդեվրոպական լեզուների հոգնակի հայցականի *-ons, *-ոս, *-ins, *-uns վերջավորություններում (հիմքակազմ ձայնավորը դիտվում է վերջավորության հետ միասին): Այդ վերջավորությունների ձայնավորները, որպես վերջնականի անշեշտ ձայնավորներ, սղվել են, իսկ *s-ն պահպանվել է ձայնորդի ազդեցությամբ: Ավելի ուշ *ո-ն նույնպես ընկել է (հմմտ. *mens > **ամիս**):

Կոչական հոլովը, որ հնդեվրոպական լեզուները քիչ դեպքերում են ձևով տարբերում (հմմտ. հին հնդկ. rājan, agnē, հուն. ἄγων, πόλι, լատ. lupe) հայերենում ընդհանրապես հատուկ ձև չունի հավանաբար հենց այն պատճառով, որ չշեշտվող վերջավորությունը (*-ei) ընկել է: Նույնը կարելի է ասել նաև ներգոյական հոլովի մասին: Հնդեվրոպական լեզուներում կոչական հոլովը հաճախ տարբերում են շեշտի միջոցով, որն ընկնում է բառի առաջին վանկի վրա (հմմտ. հուն. ուղղ. πατήρ, կոչ. πάτερ, հին հնդկ. pitā, կոչ. pítah): Հայերենը կոչականի դեպքում օգտագործում է զանազան ձայնարկություններ (**ով, այ, ո**), իսկ գոյականը կորցնում է շեշտը՝ **ո՛վ Արշակ, ո՛ր իշխան**: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ հնագույն շրջանում հայերենը կոչականը

զանազանելու համար շեշտը տեղափոխում էր ձախ, դեպի առաջին վանկը: Հայերենի որոշ բարբառներում նույնպես կոչականն առանձնանում է շեշտի տեղափոխմամբ: Բայց դա կարող է բխել ոչ թե շեշտի ձևաբանական գործառնությունից, այլ մեկին դիմելու, կոչելու խոսքի առանձնահատկությունից, երբ առաջանում է խոսողի կողմից տվյալ անձի կամ անձանց ուշադրությունը գրավելու, ասելիքը օբյեկտին ուղղելու անհրաժեշտություն: Դիմելիս խոսակցի անունը սովորական արտասանությունից ինչ-որ ձևով տարբերելու, առանձնացնելու համար լեզուները բառի շեշտը տեղափոխելու միջոցին կարող են դիմել մյուսից անկախ:

Դերանվան համակարգը, որ հնդեվրոպական լեզուներում զանազան փոփոխությունների է ենթարկվել, քիչ դեպքերում է համապատասխանություններ ցուցաբերում: Բայց այդ սակավաթիվ գուգաբանություններում էլ նախապատմական հայերենի շեշտադրության օրենքը չի խախտվում, ինչպես՝ *k^ho-ro > **որ**, *eǵō > **ես**, **իմ**, հմմտ. հուն. ἐμέ, ἐμοῦ, **ինձ**, հմմտ. լատ. mihi և այլն:

Նույնը կարելի է ասել նաև բայական համակարգի մասին: Հայերենի բայական համակարգի հարցերին նվիրված ուսումնասիրություններում հեղինակները շեշտի ձևաբանական գործառնությանը էական դեր չեն հատկացնում:

Ինչպես արդեն նշվել է, շեշտահաջորդ վանկում ձայնավորն ընկել է, իսկ բաղաձայնը կամ ձայնորդը՝ պահպանվել, ինչպես՝ **ուրթ**, հմմտ. հուն. ὄχτω, լատ. octo, հին հնդկ. aṣṭā, **միս**, հմմտ. հին հնդկ. mam-sá-, թոխ. B misa, **տայգր**, հմմտ. հուն. δάηρ, լատ. levir, հին հնդկ. dēvar, **գառն**, հմմտ. հուն. (f)αρήν «մորթի», հին հնդկ. uraṇa նույնը: Այս կանոնից շեղումները քիչ են: Ամենից հաճախ չի պահպանվում *s բաղաձայնը: Ինչպես վերը տեսանք, այն առկա է

որպես հոգնակերտ մասնիկ (այսինքն՝ ունի ձևաբանական ծանրաբեռնվածություն) և որոշ հնչյունների հարևանությամբ (*m, *n, *r ձայնորդների մոտ): Բառավերջի *s-ի անկումը կարելի է բացատրել հետևյալ կերպ. *s-ն հայերենում տալիս է **y/h**, որը վերջին վանկի ձայնավորի սղումով հայտնվում է նախորդ վանկի բաղաձայնի կամ ձայնորդի մոտ և հայերենի կանոնների համաձայն ընկնում է:

Շեշտի գործառնությամբ պետք է բացատրել նաև որոշ դիրքերում **ւ** և **յ** ձայնորդների սղումը: Եթե շեշտն ընկել է այդ ձայնորդներին հաջորդող ձայնավորի վրա, որի հետևանքով պահպանվել են կողք-կողքի միևնույն ձայնավորով վանկերը, **ւ** և **յ**-ն սղվել են, ինչպես՝ *noyó-ro- > **նոր**, *koyó-ro- > **սոր**, *bhreyéros > **աղբեր** (սեռ.), *matṛbhi > *մայա՝րբի > **մարբ**: Կարծում ենք՝ հգն. **քորք** ձևը նույնպես պետք է ստուգաբանել *syósóres > *քոյորք > **քորք** (հմմտ. լատ. soror): Թեքման ժամանակ բառի միասնականացման օրենքով **ւ**-ն հարացույցում պահպանվել է՝ **հով**, սեռ. **հովոյ**, **կով**, սեռ. *կովոյ > **կովու**: Իսկ եթե շեշտն ընկել է **ւ** և **յ** ձայնորդներին նախորդող ձայնավորի վրա, նրանք պահպանվել են. *bhreyer > **աղբեր**, *matēr > *մայիբ > **մայր**, նույն ձևով *syósor > *քոյր (թեք ձևերում կարող էր հանդես գալ արմատի *e ձայնդարձով հիմքը՝ *syesr-): Այսինքն՝ վերջին վանկի ձայնավորի սղումով հիշյալ ձայնորդներն այլևս չեն գտնվել միջձայնավորային դիրքում:

Շեշտահաջորդ վանկի ձայնավորի սղումով և բաղաձայնի ու ձայնորդի պահպանումով հայերենի նախապատմական շրջանում ստեղծվել է այնպիսի վիճակ, երբ բառերն սկսել են վերջանալ բաղաձայնով կամ ձայնորդով: Իսկ բառավերջում՝ հակառակը, հատուկ էին ձայնավորով կամ ձայնորդով վերջացող

վանկերը: Ուրեմն, շեշտվող վանկը հիմնականում ձայնավորով չէր վերջանում: Այդ իսկ պատճառով լեզվում ստեղծվում է ընդհանուր միտում, ըստ որի շեշտի տակ կարող էր գտնվել երկու ամանակից¹ ոչ պակաս երկարություն ունեցող վանկը: Լեզուն, ինչ-որ ձևով խուսափելով շեշտի տակ ընկնող ձայնավորով վերջացող միամանակ վանկից, պետք է ստեղծեր երկար՝ երկամանակ վանկ:

Հայերենում ձայնավորները քանակային հարաբերությամբ չէին հակադրվում, հետևաբար վանկը կարող էր երկարել ի հաշիվ ձայնավոր և ձայնորդ կամ ձայնավոր և բաղաձայն կապակցությունների: Ձայնավորով վերջացող շեշտվող վանկը երկամանակ դարձնելու նպատակով նրան ավելացվում էր յ ձայնորդը: Բառավերջի յ-ի (և ոչ մեկ այլ հնչյունի) այսպիսի հավելման համար կարելի է անել հետևյալ ենթադրությունները.

ա) Այդ նպատակի համար հայերենն օգտագործել է ձայնորդ (և ոչ բաղաձայն), որովհետև նախապատմական շրջանում գերակշռել են ձայնավոր և ձայնորդ կապակցություններով վանկերը:

բ) Եթե նախահայերենի բառի համար ենթադրենք *s-ով վերջավորություն, ինչպես հնդեվրոպական շատ լեզուների է հատուկ, ապա նախքան շեշտահաջորդ վանկի ձայնավորի սղումը եղել է մի շրջան, երբ *s>j հնչյունափոխությամբ (այսինքն՝ *s>ոչ ատամնային, հավանաբար կոկորդային հնչյուն, հմմտ.բբբ. *տեհաթ < տեսաթ*) բառերը վերջացել են j-ով: Վերջին վանկի ձայնավորի սղումով j-ն, հայտնվելով բաղաձայնից կամ ձայնորդից հետո, ընկել է: Բայց նախքան այդ օրենքի ընդհանրանալը j-ն կարող էր պահպանվել՝ ձայնավորով վերջացող նոր բառերի

¹ Ամանակ (мора) տերմինն օգտագործում են որպես վանկի երկարության միավոր՝ առանց շեշտի գործառության հետ կապելու:

(հիմնականում փոխառությունների) շեշտվող վանկը երկամանակ դարձնելու համար՝ ընդհանուր միտումի անհրաժեշտությամբ:

գ) Եվ, վերջապես, բառավերջում յ-ն կարող էր առաջանալ շեշտվող ձայնավորի ուժգին և տևական, այսինքն՝ մեկ ամանակից ավելի, արտասանության հետևանքով՝ հավելցուկային օղի դուրս մղմամբ:

Գրաբարում, ինչպես հայտնի է, բառավերջի միայն **ի** և **ու** ձայնավորներից հետո չի գրվում **յ** (բառավերջի **է < եյ**): Ամենայն հավանականությամբ դրանք նույնպես ստացել են **յ**, բայց որպես **ի**-ին շատ մոտ հնչյուն՝ հետագայում այն կարող էր ընկնել կամ ձուլվել նրան: Որ **ու**-ից հետո եղել է **յ**, երևում է մի քանի ձևերից: Հնդեվրոպական **peruti* նախաձևից ունենք **հեքու**, որը նախապես պետք է լիներ ***հեքույ**: Քանի որ **ու** խոնարհման բայերի ներկայի եզակի երրորդ դեմքը նույնպես ունեցել է *-*ti* վերջավորություն, ուրեմն նախապես եղել է ***թողույ**, ապա՝ **թողու**: Հետագայում **ու**-ից հետո յ-ն ընկել է՝ հավանաբար այն պատճառով, որ այդ երկբարբառը շատ մոտ է եղել **ոյ** երկբարբառին (հմմտ. **կու** և **կոյ** ձևերը, **թողոյր**, **թողույր**-ի փոխարեն) և կամ **ու**-ն նախապես եղել է երկբարբառատիպ, այսինքն՝ երկար հնչյուն, որից հետո ավելացնելու անհրաժեշտություն չէր լինի:

Կարելի է ենթադրել, որ ոչ թե հայերենում են բառավերջի վանկի ձայնավորները սղվել, այլ հնդեվրոպական մյուս լեզուներն են բաղադրմամբ մեկ վանկով բառն ընդարձակել: Մակայն հայերենին հատուկ վերը նշված հնչյունական փոփոխությունները ընդգրկել են նաև հնագույն փոխառությունները, այսպես՝ **ազդ**, հին պարսկ. *azdā* «լուր», **անագ**, ասուր. *anāku*, **անգդ** «ամանի կանթ, ունկ», պրսկ. *angul*, **բուստ** «քարի նման ծովային մի բույս. մարջան», պարսկ. *bussad*, **քաղաք**, ակկադ. *kallaku*, **կուսր**, ակկադ.

kurpu և այլն: Ուրեմն, այդ երևույթն ավելի ուշ, հայերենում վերջընթեր շեշտի գործառության հետևանք է:

Բառի ձևաբանական փոփոխություններում տվյալ լեզվի հնչյունական օրենքներից այս կամ այն տիպի շեղումներ միշտ էլ կարող են լինել, որոնք պայմանավորված են ձևաբանական մակարդակում ձևերի միօրինակացման և այլ միտումներով: Հնչյունական մակարդակում այդ շեղումները կարող են առաջանալ փոխառյալ բառերի միջոցով փոխատու լեզվի հնչյունական յուրահատկությունների ներմուծմամբ և այլ գործոնների հետևանքով: Բայց, ինչպես ուսումնասիրություններն են ցույց տալիս, նախապատմական շրջանի բառային շեշտի գործառության հիմնական օրենքը եղել է այն, որ մեխանիկորեն շեշտն ընկել է բառի նախավերջին վանկի վրա՝ առաջացնելով վերջին վանկի ձայնավորի թուլացում, ապա՝ սղում:

«Միջազգային հայերենագիտական գիտաժողով»,

Ե., 1982:

**ՀԱՅԵՐԵՆՈՒՄ *b, *b, *p > ւ(վ, ու) ՀՆՉՑՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հնդեվրոպական *b, *b, *p հպական բաղաձայնների փոխարեն հայերենը բառամիջի որոշ դիրքերում ի հայտ է բերում **ւ (վ, ու)** շրթնային շփական հնչույթը (հմմտ. *septm- > **էւթն**, *aləbh -> **աղանի**): Բայց հնչյունական նման անցում տեղի է ունեցել, եթե վերոհիշյալ բաղաձայնները գտնվել են *r, *l, *m ձայնորդների մոտ: Այս փաստը լավագույնս ապացուցվում է հայերենում հնդեվրոպական նախալեզվի գործիական հոլովի -*bhis վերջավորության արտացոլմամբ: Եթե այն կցվել է ձայնավորահանգ հիմքի, այսինքն՝ *b-ն հայտնվել է միջձայնավորային դիրքում, ապա այդ հպական բաղաձայնը հնչյունափոխվել է շփական **ւ (վ)**-ի (հմմտ. **քանիւ, ամաւ, քնով**), իսկ ձայնորդահանգ հիմքերից հետո դրա հպականությունը պահպանվել է (հմմտ. **գառաւք, հարք, աստեղք**) (տե՛ս A.Meilet, 1936, էջ 18):

Ինչպես երևում է, հնչյունափոխություն տեղի չի ունեցել նաև *s շփականի մոտ (հմմտ. *spēr- > **սպառիլ**, *spṛami > **սպառնամ**, *spel- > **առասպել**) (Գ.Բ. Ջահուկյան, 1987, էջ 150):

Ինչ վերաբերում է հնդեվրոպական ոչ շնչեղ *b-ին, ապա հետազոտողները հայերենում այդպիսի բաղաձայնի շփականացում չեն արձանագրում (հմմտ. *steibe- > **ստիպեմ**, *steibo- > **ստեպ**) (A.Meilet, 1936, էջ 19, Г.Б.Джайкян, 1982, էջ 90-92): Սակայն պետք է նկատել, որ հնդեվրոպական նախալեզվի համար շնչեղ ձայնեղ և մաքուր ձայնեղ հպական բաղաձայններով հնչույթային համակարգ կանխադրելու դեպքում *b-ի գոյության փաստը կասկածի տակ է դրվում, քանի որ դրանով նախաձևեր գրեթե չեն վերականգնվում (տե՛ս Т.В.Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, էջ 7-12):

Այս դեպքում կարելի է ենթադրել, որ այդպիսի ձևերը հայերենում օրենքը դադարելուց հետո ներթափանցած փոխառություններ են:

Հայերենը, այնուամենայնիվ, հարևան լեզուներից կատարած հնագույն փոխառություններում, որոնց մասին կիսովի ստորև, փոխատու լեզվի *б*-ի դիմաց նույնպես բառամիջի նշված դիրքերում ի հայտ է բերում **ւ (վ, ու)** համապատասխանություն: Ուրեմն՝ օրենքը կարելի է ներկայացնել որպես բառամիջում **bh*, **b*, **p*>հայ. **ւ (վ, ու)** հնչյունափոխություն: Այն գործել է հետևողականորեն և բավականին երկար ժամանակ, քանի որ ընդգրկել է հնդեվրոպական նախալեզվին հանգող հայերեն բառերը և հնագույն փոխառությունները:

Ե՞րբ է գործառել նշված հնչյունական օրենքը: Ճշգրիտ ժամանակը, ինչպես նախագրային շրջանին վերաբերող յուրաքանչյուր լեզվական փաստի դեպքում, դժվար է որոշել: Հեշտ չէ անգամ դրա հարաբերական ժամանակագրության վերականգնելը:

Հայերենում բառի մեջ՝ հատկապես ձայնորդային դիրքում, շրթնային (կամ շրթնատամնային) շփական արտասանություն են ստացել նաև **m*, **n*, **t* հնչյունները (հմմտ **amōr*-> հայ. **աւր, աւուր**, **angʷi*-> **աւձ**, **arə-tro-m*-> **արաւր**) (տե՛ս A. Meillet, 1977, էջ 19, Г.Б. Джаукян, 1987, էջ 112-113):

Արդյոք քննված բոլոր հնչյունները միաժամանակ են շփականացել, թե՞ այդ գործընթացը տարբեր հնչյունների դեպքում տարբեր ժամանակագրություն ունի: Թվում է, թե շրթնային շփական արտասանություն առաջին հերթին պետք է ստանային շրթնային հպականները և շրթնային ձայնորդը: Սակայն **t*>հայ. **ւ** անցում, որ դիտվում է **r* ձայնորդից առաջ նախքան **tr*>հայ. **րտ** դրափոխությունը (հմմտ. սեռ. **pətros*-**հաւր**,

*matros > **մար**), հայերենի հնագույն համարվող փոխառություններում չի հանդիպում: Ուրեմն այն նախորդել է բառամիջում շրթնային հպականների շփականացմանը:

Բոլոր դեպքերում, կարելի է եզրակացնել, որ, հատկապես միջձայնավորային դիրքում, հայերենի շրթնային հպական բաղաձայնները շփականացել են ***u**>հայ. **q** հնչյունափոխությունից հետո միայն (հմմտ. *g^uou-I* > **կոզի**, **ka^ua-* > **սագ**), այլապես նշված դիրքում ***bh**, ***b**, ***p** հնչյունների դիմաց նույնպես կունենայինք **q** հետնալեզվային բաղաձայն: Ավելին, պետք է ենթադրել, որ հենց ***u** > հայ. **q** օրենքի գործառությամբ է պայմանավորված հատկապես շրթնային հպական բաղաձայնների շփականացումը հայերենում: Շրթնային շփական բաղաձայնը բառում հետնալեզվային հպականի է վերածվել (***u** > **q**) բոլոր դիրքերում, բացառությամբ այն դեպքի, երբ միջձայնավորային դիրքում նրան հաջորդել է շրթնային ձայնավոր (հմմտ. *g^uou-o* > **կով**, **-ոյ**, **-ու**, **re^u-o-* > **արեւ**, **ու**) (տե՛ս, Մ. Աղաբեկյան, էջ 104):

Հետևաբար, ինչ-որ ժամանակահատվածում հայերենը բառում, բացառությամբ վերը նշված դիրքի, շփական շրթնային ***u** բաղաձայն չի ունեցել: Ձայնորդային գործառությամբ, այսինքն՝ որպես երկբարբառի տարր, ***u**-ն պահպանվել էր միայն **աւ** և **եւ** երկբարբառներում (հմմտ. **aydh* > հայ. **աւղ**, **bhre^uer-* > հայ. **աղբեր**), քանի որ հնդեվրոպական ***ou** և ***eu** երկբարբառները վերածվել էին **ոյ**-ի (հմմտ. **leyko-* > **լոյս**, **mo^u-no* > **մոյն**): Այսպիսով՝ հայերենի հնչույթային համակարգում շրթնային շփականի գործառական բեռնվածությունը խիստ փոքրացել է: Լեզուն, բնականաբար, պետք է ձգտեր լրացնել համակարգի այդ բաց վանդակները, որի հետևանքով բառի համապատասխան

դիրքերում աստիճանաբար շփական արտասանություն են ստացել շրթնային հպականները:

Այնուամենայնիվ, հայերենը իր ներքին միջոցներով շրթնային բաղաձայնի գործառական լիարժեքություն չի ապահովել, քանի որ բառասկզբում *b^h, *b, *p> հայ. վ հնչյունափոխություն տեղի չի ունեցել: Այդ բացը հետագայում լրացվել է փոխառություններով: Իսկ մինչ այդ, երբ շրթնային շփական բաղաձայնն ուներ դիրքային սահմանափակություն, փոխառյալ բառերի այդ հնչյունը բառասկզբում, բնականաբար, պետք է փոխարինվեր համապատասխան շրթնային հպականով կամ սղվեր, որը վկայում է, օրինակ, իրանական *vaspur* բառի՝ հայերենում ասպուր ձևով փոխառությունը (հետագայում նաև՝ վասպուր): Հավանաբար հայերենում հենց այդ շրջանի խեթական փոխառություն պետք է համարել *բաղխեմ* (խեթ. *yalh-* «խփել, բախել»), *ափն* (խեթ. *yaṣṣu* «գետափ») տիպի բառերը, որոնց ստուգաբանությունները կասկածի տակ են դրվում փոխատու լեզվի ձևերի հետ բառասկզբում թվացող հնչյունական անհամապատասխանությունների հետևանքով (տե՛ս, Г.Б. Джаукян, 19874 էջ 317, 318):

Հայերենի հնագույն փոխառություններում *b*, *p> 1* (վ, ու) հնչյունական անցում ոչ միշտ է դիտվում: Սակայն կարելի է նկատել, որ հայ-սեմական համապատասխանություններում, օրինակ, հայերեն բառում փոխատու լեզվի *b*, *p*-ի դիմաց *1* (վ, ու) է, եթե հայերենին ամենից մոտ կանգնած սեմական ձևը ավելի հին է, ինչպես՝ հայ. *բաւ2* «արու այծ», հմմտ. ակկադերեն *kabsu*, իսկ ասորերեն *kebša* «մատաղ խոյ»: Հայերեն *հալաւ* բառի դիմաց ունենք միայն ակկադերեն *ḫalappu(m)* «ներս սողոսկել, հագնել» ձևը: Հայերեն *ձիւթ*-ը ավելի մոտ է արամեերեն *zīṭā*, քան

ասորերեն *zēpta* ձևին: Այս բառը արաբերեն և նոր պարսկերեն *zift*-ից բխեցնելը համոզիչ չէ՝ բառասկզբի շփականի փոխարեն հայերենում կիսաշփականի առկայության պատճառով (տե՛ս Գ.Բ. Զահուկյան, էջ 458-461):

Հայ-ուրարտական համապատասխանություններում թվում է, թե այս օրենքը և՛ գործել է, և՛ չի գործել, ինչպես՝ **աւելի**-*abili-**d(u)*- «միացնել, ավելացնել», **հովիտ**~*hubi*, բայց և **բաբա**~*baba* «բլուր»: Պետք է նշել, որ բառապաշարում ուր. *b*, *p*-ի դիմաց *ւ* (վ) շփականով հայերեն ձևերը կամ ունեն այլ ստուգաբանություն (**աւելի** < հ.-ե. **obhel*-), կամ էլ հնչյունական անհամապատասխանություններ (ուր. *h*~ հայ. **խ** փոխարեն) (տե՛ս, Գ.Բ. Զահուկյան, էջ 430-433), որը հարցականի տակ է դնում հայերենում դրանց ուրարտական ծագման վարկածը:

Հայ-ուրարտական տեղանունների ընդհանրությունները, կարծում ենք, ստուգաբանորեն ավելի վստահելի նյութ են մատուցում, քանի որ դրանք նույնանում են նաև համապատասխան վայրերով: Սակայն այստեղ նույնպես միմյաց հակասող օրինակներ կարող ենք բերել, ինչպես **Ջաւախ-ք**, հմմտ. ուր. *Zabaha*, **Հաւնունիք**, հմմտ. ուր. *Abiliani*, **Գաբեղեանք**, հմմտ. ուր. *Qabiluhī*, **Գաբեղեանք**, հմմտ. ուր. *Qabiluhī* (տե՛ս, Н.В. Арутюнян, 1985):

Առկա փաստերից կարելի է եզրակացնել, որ ուրարտերենում շրթնային բաղաձայնները բառամիջում ունեցել են որոշ շփականություն, որը հիմք է ծառայել հայերենում դրանց երկակի արտացոլմանը (*ւ*, *բ*) (տե՛ս Գ.Բ. Զահուկյան, էջ 431): Նման շփոթ, սակայն, պետք է լիներ նաև արձանագրությունների՝ ուրարտերեն բառերում, որը չի դիտվում (տես, И.И. Мещанинов, 1978): Մի դեպքում միայն կարելի է վստահորեն խոսել հայերենում

կատարված փոխառության մասին, եթե հայերենի և փոխատու լեզվի ձևերի վերը նշված դիրքերում (հիմնականում ձայնավորների միջև) առկա է *б, р ~ հայ. բ, պ* համապատասխանություն: Հայերենը **b, *b, *p > ւ (վ, ու)* օրենքի դադարելուց հետո այդ դիրքերում *բ, պ* հպականներ է ձեռք բերել փոխառություններով:

Հայերեն *ւ (վ) ~ ուր. б, р* համապատասխանություններով տեղանունները կարող են ունենալ տարբեր բացատրություններ: 1. Հայերենը դրանք ուրարտերենից վերցրել է նախքան **b, *b, *p > հայ. ւ (վ, ու)* օրենքի գործառելը, որոնք այնուհետև ենթարկվել են այդ հնչյունափոխությանը: 2. Ուրարտերենի և հայերենին այդ տեղանունները հայտնի են եղել նախքան ուրարտական արշավանքները Հայկական բարձրավանդակ, և ուրարտերեն ձևերում պահպանվել են սկզբնական *б, р* հպականները, իսկ հայերենում այդ բաղաձայնները շփականացել են: Այս երկու դեպքում էլ միջձայնավորային դիրքում հայ. *բ, պ ~ ուր. б, р* համապատասխանությամբ տեղանունները հայերենին կարող էին անցնել հիշյալ օրենքի դադարելուց հետո միայն: Բայց դա պետք է տեղի ունենար ոչ ուշ, քան վաղ իրանական փոխառությունների հայտնվելը հայերենում, որոնցում նման հնչյունափոխություն չի դիտվում: Այս փաստը քիչ հավանական է դարձնում հատկապես առաջին վարկածը:

Եվ, վերջապես, կարելի է ենթադրել, որ ուրարտերենին այդ տեղանունները անցել են հայերենից, որտեղ *ւ (վ)* շփականը, այդ ժամանակ ունենալով երկշրթնային արտասանություն, ուրարտերենում արտացոլվել է որպես շրթնային հպական *б, р*: Այս վարկածի օգտին են խոսում որոշ փաստեր:

Ուրարտերենը, ինչպես երևում է, շրթնային կամ շրթնատամնային շփական բաղաձայն (w, v) չի ունեցել: Նրա սեպագիր նշաններում, որ հիմնականում վերցված են ասուրական համակարգից, ի տարբերություն վերջինիս՝ այդ բաղաձայնը արտացոլված չէ: Կարելի էր մտածել, որ շրթնային շփական բաղաձայնը արտահայտվում է ս պարունակող նշանով: Սակայն շրթնային ս-ն այդ վանկագրերում ի հայտ է գալիս միայն ձայնավորային դիրքերում, այսինքն՝ նա մյուս բաղաձայնների նման այս կամ այն ձայնավորի հետ գուգորդվող նշան չունի (տե՛ս, Դ.Ա.Меликишвили, էջ 36-38): Ուրեմն՝ ձայնավորի մոտ, ինչպես նաև միջձայնավորային դիրքերում հանդիպող ս-ն կամ առանձին ձայնավոր է, կամ էլ երկբարբառի բաղադրիչ տարր: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ուրարտերեն լեզու թափանցած օտար բառերում շրթնային շփական բաղաձայնը պետք է փոխարինվեր համապատասխան հպականով (b, p):

Վերն արդեն նշեցինք, որ բառասկզբում հայերենը շրթնային հպականը չի շփականացրել: Բայց ուր. *Baina* և հայ. Վան (սեռ. **Վանա**) տեղանունների ընդհանրությունն ակնհայտ է: Այս տեղանունը հայերենի համար բնիկ համարել չենք կարող, քանի որ հայերենը բառասկզբում Վ ունի միայն փոխառություններում: Այն անմիջապես ուրարտականից ծագել նույնպես չէր կարող. բառասկզբում հիշյալ օրենքից շեղվող դեպքեր չունենք: Այդ դիրքում հայերենը և ուրարտերենը ունեն հայ. **բ** և ուր. **б** համապատասխանություն (հմմտ. **բարայ** «բլուր»~ *baba*, **բուրգն**~ *burgana*): Ուրեմն՝ պետք է ենթադրել, որ այդ տեղանունը հայերենին է անցել մեկ այլ լեզվից, հավանաբար՝ պարսկերենից (հմմտ. իրան. *avan* «բնակավայր, ավան»): Իսկ ուրարտերեն այն վերցրել են հայերենից և իրենց լեզվում բացակայող բառասկզբի

շրթնային շփական ձայնեղ բաղաձայնը փոխարինել են համապատասխան հպականով:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ հայ-ուրարտական ընդհանրություններում հայ. **ւ** (**վ**, **ու**) ~ ուր. **б**, **р** համապատասխանության դեպքում ուրարտերեն ձևերն են փոխառվել հայերենից, իսկ միջձայնավորային դիրքում հայ. **բ**, **պ** ~ ուր. **б**, **р** ունեցող բառերը հայերենին են անցել ուրարտերենից: Հետևաբար՝ հայերենում ***б**h, ***б**, ***р**> հայ. **ւ** (**վ**, **ու**) հնչյունական օրենքը ուրարտական տիրապետության շրջանում (մ.թ.ա. IX-VII դարեր), հավանաբար, այլևս չէր գործում: Այս դեպքում պետք է ենթադրել, որ այն գործառել է մ.թ.ա. IX-VIII դարերից առաջ:

Ասվածին հակասող փաստ կարող է թվալ այն, որ Er(e)buni (Irpuni) ամրոցը, ասենք, ուրարտական թագավոր Արգիշտի I-ի արձանագրության համաձայն կառուցվել և անվանակոչվել է մ.թ.ա. 782 թվին (H.A.Арутюнян, 1985): Բայց և չի բացառվում, որ այդ ամրոցի մոտակայքում եղել է նաև Երեւան (<h.-ե. *prep-) հայկական անվամբ բնակավայր, որի ազդեցությամբ էլ ուրարտական Irpuni ամրոցի անունը հնչվել է նաև Er(e)buni ձևով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մ.Աղաբեկյան, *Հնդեվրոպական *ք բաղաձայնը հայերենում*, ՊՀԲ, 1981, 4:

Գ.Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987:

A.Meillet, *Esquisse d'une grammaire comparée de l'arménienne classique*, Vienne, 1936.

A.Meillet, *Etudes de linguistique et de philologie arm éniennes*,
Louvain, 1977:

Н.В.Арутюнян, *Топонимика Урарту*, Ереван, 1985:

Т.В.Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, *Индоевропейский язык и индоевропейцы*, Тбилиси, 1984:

Г.Б.Джаукян, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ереван, 1967:

Г.Б.Джаукян, *Сравнительная грамматика армянского языка*,
Ереван, 1982:

Г.А.Меликишвили, *Урартские клинообразные надписи*,
Москва, 1960:

И.И.Мещанинов, *Аннотированный словарь урартского (биайнского) языка*, Ленинград, 1978:

«Հայագիտության և գրագիտության լեզվաբանության հարցեր»,
Բ պրակ, Ե., 2002:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հայերենի հնագույն փոխառությունների խնդրին հայերենագիտության զարգացման տարբեր փուլերում լեզվաբանները տարբեր մատուցումներ են ցուցաբերել՝ կախված այն բանից, թե նրանք հայերենի ծագման ու կազմավորման վերաբերյալ ինչպիսի սկզբունքներ են որդեգրել:

Մի կողմ թողնելով ժամանակի փորձությանը չդիմացած տեսակետները՝ ուշադրության է արժանի այսօր էլ հնչվող այն կանխակալ սկզբունքը, ըստ որի՝ հայերը Բալկաններից Փոքր Ասիա են ներգաղթել մ.թ.ա. երկրորդից առաջին հազարամյակներում: Ոչ քիչ թվով պատմաբաններ, անդրադառնալով այս հարցին, համոզիչ փաստերով ապացուցել են այդ «տեսության» սխալ լինելը:

Լեզվաբանական ուսումնասիրությունները, որոնք հենվում են լեզուներում գործող օրենքների վրա, թույլ են տալիս պատմական փաստերով չհիմնավորված վարկածներից անկախ ավելի ստույգ եզրահանգումներ անել: Այս հարցում չենք կարող չնշել այն կարևոր դերը, որ կատարել են ակադ. Գ. Ջահուկյանի հետազոտությունները հայերենի և տարածաշրջանի հնագույն լեզուների առնչակցությունների վերաբերյալ: Նա կարողացավ տվյալ բնագավառի խնդիրները դնել խիստ գիտական հիմքերի վրա: Գ. Ջահուկյանն էր, որ առաջին անգամ համոզիչ փաստերով ցույց տվեց հայերենի և հարևան հնագույն լեզուների ընդհանրությունների երկկողմյա բնույթը: Հայերենը ոչ միայն փոխառել է, այլ նաև եղել է փոխատու լեզու:

Հայերենի հնագույն հնչյունական օրենքները, որ բացահայտվել են ցեղակից լեզուների պատմահամեմատական ուսումնասիրությամբ, մեծապես նպաստում են մեր լեզվի հնագույն փոխառությունների վերհանմանը: Դա էլ իր հերթին օգնում է ճշգրտելու հայերենի՝ ինչպես հնչյունական փոխանցումների գործառական յուրահատկությունները, այնպես էլ այդ օրենքների հարաբերական և անգամ բացարձակ ժամանակագրությունը: Պետք է նշել, իհարկե, որ այս տիպի հետազոտություններն էլ փոխադարձաբար օժանդակում են սեպագիր լեզուների համապատասխան բառածների արտասանական հատկանիշների բացահայտմանը:

Տարածաշրջանի հնագույն հարևան լեզուներից մեզ հայտնի են, իհարկե, գրավոր աղբյուրներներով վկայվածները, որոնց հետ էլ համեմատում ենք հայերենը՝ փոխադարձ առնչակցությունների բնույթը պարզելու համար: Մակայն այս գործընթացը հանդիպում է թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ խոչընդոտների: Տարածաշրջանի հնագույն գրավոր աղբյուրները հիմնականում վկայված են սեպագրերով, որոնց և՛ վերծանումը, և՛ հնչյունական բնութագրերի որոշումը լուրջ, երբեմն էլ անլուծելի դժվարություններ են հարուցում: Դա անդրադառնում է, իհարկե, համեմատվող լեզվական փաստերի բացահայտման ճշգրտության վրա:

Սուբյեկտիվ պատճառներից ամենից հաճախ բախվում ենք հայերենի և այլ լեզուների գուգադիպումների կամայական այն մեկնաբանություններին, որոնց ժամանակ նախապատմական շրջանում համեմատվող լեզուների հնչյունական օրենքները կամ անտեսվում են, կամ էլ սխալ մեկնաբանվում: Այդ հեղինակները հիմնականում լեզվաբաններ չեն և լեզուների պատմահամեմատական մեթոդի գիտական սկզբունքների կիրառմանը չեն

տիրապետում: Այսպիսի «հետազոտությունները» գիտական վերլուծության, բնականաբար, ենթակա չեն, թեպետ մտքի այդպիսի «հայամետ» վարժանքները գրգռում են հատկապես երիտասարդների երևակայությունը և նրանց մղում անխոհեմ հայտարարությունների ու գործողությունների:

Հայերենի հնագույն փոխառությունների վերաբերյալ լեզվաբանների տեսակետները ի մի բերել և մանրամասն քննել է Գ. Զահուկյանը, այդ պատճառով մեր աշխատանքում հիմնականում հենվում ենք նրա կատարած հետազոտությունների վրա:

Լեզվաբանների բացթողումները տվյալ բնագավառում մեծ մասամբ առաջանում են կուտակված խնդիրների ոչ բավարար լուսաբանված լինելու պատճառով: Դա առաջին հերթին վերաբերում է հայերենի հնագույն հնչյունական օրենքների ժամանակագրությանը: Մեզանում ոչ բոլոր հնչյունական փոփոխությունների հարաբերական ժամանակագրությունն է հստակեցված: Դրանց գործառության իրական ժամանակահատվածները գոնե մոտավոր թվերով վերականգնելու փորձեր քիչ են արված:

Հայերենում բառամիջի *p, *b(h)>ւ/վ-ու հնչյունափոխությունը մ.թ.ա. երկրորդ հազարամյակի երկրորդ կեսում արդեն դադարել էր [տե՛ս Աղաբեկյան, 2002, էջ 97-100], և փոխառություններում այդ հպական բաղաձայնները կարող էին պահպանվել: Հետևաբար, հայ. *սայա* «հետո» արմատը [հմմտ. *յասպադեղ*], օրինակ, ավելի դյուրին է համեմատել նույնիմաստ իւեթ. *appa* «հետո» բառի հետ, քան, ասենք, իրանական ծագման *սայ(ա)*- նախածանցի հետ: Այս ստուգաբանությանը խոչընդոտ չէ նաև այն, որ «իւթական բառի վերջին ձայնավորի պահպանվելը

անբացատրելի է» [Զահուկյան, էջ 317]: Սակայն հայտնի է, որ սեպագիր ուղղագրությամբ (վանկագիր) բառերը բաղաձայնով գրեթե չէին վերջանում, և դժվար է ասել, թե որ բառն է իրականում ձայնավորով վերջացել: Բացի այդ, մ.թ.ա. 9-րդ դարից վկայված ուրարտական –uni,-ni ածանցները հայերենում պահպանել են իրենց վերջին ձայնավորը (հմմտ. *արեգ-արեգունի, Բզնունի* և այլն): Ուրեմն, կարելի է եզրակացնել, որ խեթահայկական շփումների ժամանակ (մ.թ.ա. երկրորդ հազարամյակի՝ հատկապես երկրորդ կեսում) շեշտահաջորդ ձայնավորի անկման օրենքը հայերենում թուլացել էր և հետևողական գործառնություն չուներ:

Հայերենի հնչյունական համակարգում մ.թ.ա. առաջին հազարամյակում արդեն առկա էր կոշտ և փափուկ արտասանությամբ երկու *Հ* (դ և լ), և օտար փոխառությունների *Հ* ձայնորդը, որպես կանոն, կոշտ էր արտասանվում: Բացի այդ, օտար *il* հնչյունակապակցությունը հայերենում փոխարկվում էր *եղ*-ի, քանի որ այդ ժամանակ հայերենին խորթ էր *իղ* գուգորդումը [Աղաբեկյան, 1998, էջ 94]: Այսպիսով, ենթադրելի է, որ միննույն ժամանակային հարթության վրա չեն գտնվում, օրինակ, հայերենի և օտար բառերի հետևյալ համապատասխանությունները. հայ. *խալամ* (*հալամ*) «անասունի չորացած գանգ» - խեթ. *halanta* «զլուխ», *hulēn* «ցրել, վանել» - խեթ. *hullāi-*, *hulī'a-* «կռվել, վիճել, տապալել» (?), բայց՝ հայ. *խաղամ* «շարժվել, գնալ», - խեթ. *halāi-* «շարժվել» (?), *hululhulēn* «մորթել, փողոտել, չարաչար սպանել» - խեթ. *hulhulī'a* «կռվել. կռվում սպանել», *Uruzele* - խեթ. *Muršiliš*, *hili(p)* (*հեղ, հուղ, հիւղ*) «խրճիթ, խուղ» - խեթ. *hila-* «բակ, ցանկապատված տեղ, փարախ», հմմտ. նաև հայաս. *Lahir-hila* քաղաքանունը և այլն [տե՛ս Զահուկյան]: Ավելի հին պետք է

համարել, կարծում ենք, հայերենում փափուկ *լ* ունեցող փոխառությունները, որոնք *Լ*-ի երկճեղքման ժամանակ արդեն գիտակցել են որպես բնիկ բառեր և ենթարկվել ընդհանուր օրենքին:

Մյուս կողմից, բավարար չափով ուսումնասիրված չէ այս կամ այն օրենքի դադարելուց հետո հայերենի հնչյունական համակարգում տիրող իրավիճակը: Այսպես, հայտնի է, որ հ.-ե. բառասկզբի **յ*-ն հայերենում չի պահպանվել՝ փոխարկվելով *գ*-ի: Հետևաբար ինչ-որ ժամանակահատվածում հայերենը բառասկզբում երկշրթնային **յ* ձայնորդ կամ բաղաձայն չի ունեցել: Որոշ փաստերի համադրմամբ կարելի է եզրակացնել, որ դա տեղի է ունեցել մ.թ.ա. երկրորդ հազարամյակում [տե՛ս Աղաբեկյան, 2006, էջ 21]: Այդ շրջանի փոխառություններում, բնականաբար, այն պետք է փոխարինվեր նրան ավելի մոտ մեկ այլ հնչյունով, ասենք՝ *բ*-ով: Ուրեմն հիմք չկա կասկածի տակ դնելու» [Ջահուկյան, էջ 317], օրինակ, *բա(ղ)խեմ* բառի խեթ. **alḫ*-ից «խփել, բախել» ծագած լինելը (հայերեն ձևում *լ* հնչյունի ուշ հավելում համարվելու պատճառաբանությունը համոզիչ չէ):

Հայաստաի լեզվով արձանագրություններ չեն պահպանվել: Խեթական տեքստերում, սակայն, առկա են տեղանուններ, անձնանուններ, դիցանուններ, որոնք Հայաստային են վերագրվում: Այդ հատուկ անունների վերաբերյալ տարբեր տիպի ստուգաբանություններ են առաջարկվել: Ավելի շատ շրջանառվում են դրանց խեթական ծագման վարկածները, որոնց հավաստիությունը, այնուամենայնիվ, այս կամ այն առումով կասկածելի է համարվում:

Լեզուներում որոշ հատուկ անունների փոխառյալ լինելը ընդհանրապես վիճելի չէ: Մենք ուզում ենք ուշադրություն

հրավիրել Հայասայի լեզվում խեթական փոխառություններ համարվող այն հատուկ անուններին, որոնցում առկա հնչյունական մի երևույթ հնագույն շրջանում բնորոշ է եղել նաև հայերենին:

Հայասայի մի քանի անձնանուններում որոշ գիտնականներ նշում են խեթական u^a հնչյունակապակցության ամփոփում՝ $u > u$ անցում, ինչպես՝ խեթ. $Mu^a ti >$ հայաս. $Muti$, խեթ. $Kara^a ni >$ հայաս. $Karanni$, խեթ. $mu^a < \text{ուժ} >$ հայաս. $-mu$ բաղադրիչ, որ առկա է $\bar{a}m-mu-$ դիցանվան մեջ [տե՛ս Ջահուկյան, էջ 325]: Նմանատիպ մի հնչյունական օրենք գործել է նաև հայերենում: «Եթե հայերենում շեշտն ընկել է միջձայնավորային u -ին հաջորդող ձայնավորի վրա, որի հետևանքով պահպանվել է u -ի միջձայնավորային դիրքը, ապա այն սղվել է՝ *նոք < *no^aofo-*, *նեարդ < *sne^aar-ti < *sne^aor-ti*» [Աղաբեկյան, 1998, էջ 59]: Իսկ հայասական $\bar{s}apagur^a nta$ տեղանվան մեջ, ասենք, u -ն պահպանվել է, քանի որ խեթ. $^a nta$ ածանցը կցվել է r ձայնորդահանգ հիմքին, և վերջնաբերային շեշտը u -ն միջձայնավորային չի դարձրել:

Հայերենում հնդեվրոպական հնչյունական համակարգի արտացոլման որոշ յուրահատկություններ դեռ համոզիչ բացատրություն չեն գտել: Այսպես օրինակ՝ հնդեվրոպական $*o$ -ին հայերեն որոշ բառերում, հատկապես բառասկզբում, սպասվող շրթնային ձայնավորի փոխարեն u հնչյուն է համապատասխանում (հմմտ. $*ok^a-$ ~ հայ. *ակն*, $*oid-$ ~ հայ. *այտ*, $*oner-$ ~ հայ. *անուրջ*): Առաջարկվող բացատրություններից ուշագրավ է հնդեվրոպական կոկորդայինների վրա հենվող վարկածը [տե՛ս Greppin]: Սակայն այս դեպքում էլ

հարցականները, որ վերաբերում են հնդեվրոպական կոկորդայինների բնության ու գործառնությանը, շատ են:

Հայերեն բառերում՝ միևնույն դիրքում, երբեմն դիտվում է *o/w* հերթագայություն, որը, ինչպես կարծում են հետազոտողները, հնդեվրոպական նախալեզվից չի գալիս՝ որք (**orbh-*)-*արքանեակ*, *աւղի* (**oʷi-dh-i-*) – *հովիւ*, *դռնդռդ-դանդաղ*: Այս դեպքում նույնպես ընդհանուր օրինաչափություն ի հայտ չի գալիս: Յուրաքանչյուր համապատասխանություն ունի, թերևս, իր ստուգաբանությունը՝ ենթաշերտային մնացուկ, օտար փոխառություն, բարբառային տարբերակ: Բայց մենք չենք կարող հնդեվրոպական նախալեզվին հանգող կամ չհանգող նշված հերթագայությունը համարել հայերենին բնորոշ երևույթ և նմանատիպ անցումներ փնտրել հայերեն ու օտար բառերի միջև: Այսպես, հայերի առասպելական հերոսի *Տորք* անվանումը սովորաբար բխեցվում է խեթ. *Tarḫuna*, լուվ. *Tarḫund* «որոտի աստված» ձևերից: Մինչդեռ հայտնի է, որ հենց խեթերենին է հատուկ եղել *o>a* անցում: Իսկ Գ. Ջահուկյանը գտնում է, որ «հայերենին ձևով ամենից ավելի մոտ է թրակյան *Topxos* անձնանունը, և կարելի է ենթադրել թրակյան միջնորդություն» [Ջահուկյան, էջ 315]: Այս դեպքում հարց է առաջանում, թե ինչո՞ւ հայերենը *χ*-ն փոխարինել է *ք*-ով, երբ ուներ նաև *խ* շփականը: Հայերեն *խախտութ* «կոկորդ» (բրբ.) բառը հանգեցվում է խեթ. *ḫuḫurti-*, լուվ. *ḫuḫarta-* «կոկորդ» ձևերին [տե՛ս նույնը]:

Ջայնավորային համապատասխանությունների անկանոնությունները ավելի հաճախադեպ են հայ-սեմական համեմատությունների ժամանակ: Դա որոշ չափով հասկանալի է, քանի որ սեմական լեզուները, որոնց հետ պատմության ընթացքում շփվել է հայերենը, բավական տարբերակված

հնչյունական համակարգեր են ունեցել: Այսպես՝ հայ. *կաշի* ~ ակկ. *kušum*, հայ. *քաւշ* ~ ասոր. *kešša* [տե՛ս Ջահուկյան], հայ. *ճապում* ~ ակկ. *supr*, հայ. *կուղբ* ~ արամ. *kalbā* [տե՛ս Мкртчян, стр. 76]:

Այսպիսով՝ հայերենի և հնագույն օտար լեզուների առնչակցությունները ուսումնասիրելիս անհրաժեշտություն է առաջանում համեմատվող եզրերի հնչյունական օրենքների ավելի ճշգրտված փաստերի համադրում, նորագույն տվյալների ներառում: Հետազոտությունները միտված են ոչ միայն փոխառությունների կոնկրետ աղբյուրները որոշելուն, այլև հայերենի հնագույն հնչյունական օրենքների գործառական առանձնահատկությունների և ժամանակագրության բացահայտմանը: Պետք է նշել, որ գիտնականների պրպտումների արդյունքները ավելի ու ավելի են հաստատում այն տեսակետը, որ հայերենը լեռնաշխարհի հարևան լեզուների հետ շփումներ է ունեցել հ.-ե. նախալեզվից գրեթե տարանջատվելուց ի վեր, այսինքն՝ մ.թ.ա. երրորդ հազարամյակից սկսած: Ուրեմն, չի բացառվում նաև այդ ժամանակներից սկիզբ առնող օտար փոխառությունների առկայությունը հայերենում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ.Աղաբեկյան, *Հայերենի համեմատական հնչյունաբանության հարցեր*, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 2, Ե., 1998:

Մ.Աղաբեկյան, *Հայերենում bh, *b, *p > ւ(վ, ու) հնչյունափոխությունը և նրա ժամանակագրությունը*, «Հայագիտության և զուգադրական լեզվաբանության հարցեր», Ե., 2002:

Մ.Աղաբեկյան, *Հայ-ուրարտական հնչյունական համապատասխանություններ*, «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2006:

Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987:

Н.Мкртчян, *Семитские языки и армянский*, Ереван, 2005:

John Greppin, *Initial vowel and aspiration in Classical Armenian*, “Studien zur armenischen Geschichte”, XIII, Wien, 1973:

*«Միջազգային հայերենագիտական
նութերորդ գիտաժողովի զեկուցումներ»,
(15-18 օգոստոսի, 2008թ.), Ստեփանակերտ:*

ՄՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՑԱՅԵԼ

Հնդեվրոպական լեզուների «ցատկել, ոստնել, ցայտել» ընդհանուր իմաստներով միավորող բառերի համար ստուգաբանական բառարաններում հաճախ նշվում են տարբեր արմատներ: Յ. Պոկորնին, օրինակ, այդ բառերը հանգեցնում է *skēt-/*skæt-, *(s)ker-, *(s)kek- *(s)kel- և այլ արմատների¹, իսկ Ա. Էռնուն և Ա. Մեյեն, որոնց հետևում են նաև այլ լեզվաբաններ, դրանց համար ընդհանուր են համարում միայն բառասկզբի *sk հնչյունակապակցությունը²:

Այդ բառերի համեմատահամադրական վերլուծությունը, սակայն, թույլ է տալիս ենթադրելու, որ հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանում եղել է *skē- արմատ, որն ունեցել է հերթագայող ձայնավորներով իր տարբերակները: Այսպես՝ *skē-/*skə- հերթագայվող ձևերին կարելի է հանգեցնել բազմաթիվ բառեր՝ հին վերին գերմ. schel «ցատկող, ոստնող», scerōn «լինել կայտառ, թռչկոտող», լիտվ. skėrys, skėrėlis «մորեխ», հուն. ὄσσοριζω «ցատկել, ոստնել», լատին. scatō-, -ere «ցայտել» և այլն: Արմատի *ske-/*sko- տարբերակները նույնպես վկայված են մի շարք բառերով՝ հին իռլանդ. io-cerdaim «նետել, շարտել», միջին վերին գերմ. scherzen «ուրախ թռչկոտել», հին սլավ. skok «ցատկ, ոստյուն», լիտվ. šokti, šoku, šokau «ցատկել, պարել», հուն.

¹ J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, Bern und München, 1965-1968, էջ 950, 933, 929, 923.

² A. Ernout et A. Meillet, *Dictionnaire étymologique de la langue latine*, Paris, 1932, էջ 863:

σχορδινᾱσθαι «(վեր) ձգվել, հորանջելով ձգվել», σκορπίξω «ցրել, սփռել»³:

Հնդեվրոպական նախալեզվում նշված իմաստներով *skē- արմատ առանձնացնելուն խանգարիչ հանգամանք չպետք է դիտվի այն, որ արմատը մաքուր ձևով լեզուներում վկայված չէ: Այն պահպանվել է հիմնականում t, k բաղաձայններով և r, l ձայնորդներով աճած ձևերով, որոնք իմաստով միմյանց չեն հակադրվում, հետևաբար այդ հնչյունները տվյալ դեպքում իմաստագատիչ դեր չեն կատարել: Այստեղից կարելի է եզրակացնել, որ համապատասխան բառերում t, k, r, l հնչյունները եղել են կա՛մ աճականներ, կա՛մ բայահիմք կազմող բաղադրություններ:

Հայերենը պահպանել է նշված աճականներով (կամ բարդություններով) մատենագրությամբ վկայված և բարբառային բազմաթիվ բառեր:

Ա. Մեյեն հնդեվրոպական լեզուների այդ բառերին ծագումնաբանորեն մոտեցնում է հայերեն **ցատկել/ցաթել** բայը⁴, իսկ վերջինիս և **ցատկել** բայի հետ մերձավոր կապ նկատել է դեռ Ս. Տերվիշյանը⁵: Սակայն **ցատկել** բայը առաջին անգամ հնդեվրոպական *skat «ցատկել, ոստնել» արմատին է հանգեցրել Հ. Աճառյանը՝ որպես հայերեն **կ** աճականով աճած ձև⁶:

Գ.Բ. Զառուկյանը հնդեվրոպական *(s)ker-d- «ցատկել, շուրջը ոստոստալ, պտտվել» նախաձևից է բխեցնում մի շարք

³ Այս և մյուս դեպքերում հնդեվրոպական լեզուների օրինակները հիմնականում բերվում են ըստ Պոկոռնու նշված բառարանի:

⁴ A. Ernout et A. Meillet, նշվ. աշխ., էջ 863:

⁵ Հ. Աճառյան, *Հայերեն գալստական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 1053 (այսուհետև՝ ԳԲ):

⁶ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 4, Ե., 1979, էջ 633 (այսուհետև՝ ԱԲ):

բարբառային բառեր՝ **ցոթկել** (*skēr-th-) «ցնկնել», **ցռուկ** (*skēr-) «նոր ծիլ, նորահաս տունկ. տղա երեխա», **ցրտկցնել**, **ցրիսցնել** «դուրս ցայտեցնել», **ցրքել** «թափել, ցրցրել», **ցրքսել** «վրան ցայտել», որոնք համեմատում է հուն. σκαρθμός «ցատկ», ακιτάω «ցատկել», հին իսլանդ. skirja «ջահել կով, երինջ», հին իռլանդ. fo-cerdaím «նետում եմ», cuirthi «նետում է, դնում է» և այլ բառերի հետ, որոնց համար Յ. Պոկորնին նույնպես ընդհանուր է համարում հնդեվրոպական *(s)ker- «ցատկել, շուրջը ոստոստալ. պտտվել» արմատը⁷:

Բարբառային այս բառերը թե՛ ձևով և թե՛ իմաստով կապվում են **ցիր**, **ցրեմ** բառերին, որ Հ. Աճառյանը հանգեցնում է sk'ér- արմատին: Նա գտնում է, որ այդ արմատը պահպանվել է միայն հայերենում և հին հնդկերենում՝ čhuráyati, choráyati «ցանել, ցրել» (ԱԲ, հ. 4, էջ 456):

Ըստ Ա. Մեյեի **ցիր** արմատը **ցելուկ** «ճեղքել» և հնդեվրոպական լեզուների այլ բառերի հետ (հուն. κερῖω «կտրել, խուզել», հին հնդկ. kráti «ցանել, շաղ տալ, թափրտել», kārāyeiti «ցանել», լատին. secō, -āre «կտրել») գալիս է *sek- «կտրել» արմատի *sk- հիմքից, որի *skén- տարբերակից էլ ծագում է հայերեն **ցան** բառը⁸: Բայց Յ. Պոկորնին հնդեվրոպական լեզուների այս և նման այլ բառեր դնում է վերը նշված *(s)ker- «ցատկել» արմատի տակ:

Ինչ խոսք, ձևով նման *skē- և *sek- արմատներն իրենց զարգացման ընթացքում կարող էին իմաստային դաշտերով նույնպես մոտենալ՝ ստեղծելով ձևիմաստային քիչ տարբերակված բառեր: Բայց հայերեն **ցիր** արմատով և հնդեվրոպական լեզուների «ցատկել, ցայտել» իմաստներով բառերի ձևիմաստային կապն

⁷ Գ.Բ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 292, J. Pokorny, նշվ. աշխ., էջ 933:

⁸ Ա. Մեյե, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Ե., 1978, էջ 156:

ավելի համոզիչ է, որ երևում է հենց վերը բերված բարբառային բառերի օրինակից: Ուրեմն, *ghp*-ը գալիս է *skē- արմատի *-r աճականով *skēr- ձևից, իսկ *gwn*-ը նույն արմատի թույլ ձայնավորով և *-n աճականով *skən- նախաձևից:

Հնդեվրոպական *skē-/skə- արմատին պետք է հանգեցնել նաև հայերեն *ցայել* բառը, որը «Հայկազյան բառարանում» չկա, իսկ Հ. Աճառյանի «Արմատական» և «Գավառական» բառարաններում բացատրված է «մի քիչ ջրով լվալ» (ԱԲ, 4, էջ 449): «Արդի հայերենի բացատրական բառարանում» տրված են բառի մի քանի նշանակություններ. «1. Լվացված շորը մաքուր ջրի մեջ ողողել, պարզաջրել, մաքրաջրել, 2. ցողել, շաղել, ցնցղել, 3. ցրել (հեղուկի մասին), շաղ տալ, շաղ տալով սպառել, վերացնել»⁹: Այս նշանակություններով էլ *ցայել* բառը շատ գործածական է հայերեն բարբառներում: Ինչպես տեսնում ենք, հատկապես «ցողել, շաղել, ցրել» իմաստներով, որ հավանաբար մյուսներից ավելի հին են, այն մոտենում է վերը նշված հայերեն բառերին:

Լեզվաբանական գրականության մեջ այս բառի որևէ ստուգաբանության չենք հանդիպել: Հ. Աճառյանը իր «Հայերենի գավառական բառարանում» այն բերում է *ողողել, ցողել* բառերի շարքում (ԳԲ, էջ 851): Դա չի նշանակում, իհարկե, որ նա *ցայել*-ը նույնպես համարում է այդ ընտանիքին պատկանող, հետևաբար՝ հնդեվրոպական *pel-/pol- արմատից ծագող բառ, քանի որ աշխատության բառահոդվածների կազմման հիմնական սկզբունքը ոչ թե բառակազմական-ծագումնաբանական է, այլ իմաստաբանական: Բացի այդ, ո՛չ գրաբարում և ո՛չ էլ աշխարհաբարում (ներառյալ բարբառները) *ոլ/ող* > այ կամ հակա-

⁹ Է.Բ.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Երևան, 1976, էջ 1468:

ռակ տիպի հնչյունափոխություն, որով հնարավոր լիներ այդ բառերի միջև ծագումնաբանական կապ դիտել, չի նկատվում: Եթե անգամ այդպիսի հնչյունափոխություն որևէ խոսվածքում կամ բարբառում գոյություն ունի, ապա տվյալ հարցում այն էական դեր կատարել չի կարող, որովհետև այդպիսի հնչյունափոխությամբ բարբառը կամ խոսվածքը եզրային, մեկուսացված դիրք պետք է գրավի, որից լեզվական փաստի (տվյալ դեպքում բառի) շատ թվով այլ բարբառներին անցնելու հավանականությունը փոքր է: Իսկ *ցայել* բառի տարածման սահմանը բավական մեծ է. այն ընդգրկում է գրեթե ամբողջ արևմտյան բարբառներն ու արևելյան բարբառների մի մասը (տե՛ս ԳԲ, էջ 851):

Ցայ- արմատը կարող էր ծագել հնդեվրոպական այնպիսի մի նախաձևից, որն ունենար *skē- արմատի թույլ ձայնավորով տարբերակ՝ *skə-, համապատասխան բառերի համար կարելի է ենթադրել *-t աճականով նախաձև՝ *skēt-/ *skət-, որ և գտնում ենք Յ. Պոկոռնու ստուգաբանական բառարանում¹⁰: Այս դեպքում հայերեն բառը պետք է ունենար *skət- արմատի ձայնավորով հաջորդված նախաձև:

Բայց եթե ընդունում ենք հնդեվրոպական ընդհանրության շրջանում *skē- արմատի անկախ գոյությունը, ապա հնարավոր է նաև, որ այն որպես բայարմատ (բայահիմք) ստանար *-to, *-tu, *-ti բայածանցները: Հնդեվրոպական բառարմատը լիաձայն ածանցով բաղադրելիս ունենում էր թույլ ձայնավորում՝ *skəto-, *skətu-, *skəti-¹¹: Լեզուներում պահպանված համապատասխան բառերում հնդեվրոպական արմատն ունի թույլ ձայնավորում, ինչպես՝ լատին. scatō, -ere (scatēō, -ēre) «ցայտել», միջին իռլանդ. scadán

¹⁰ J. Pokorny, նշվ. աշխ., էջ 950:

¹¹ Տե՛ս Զ. Бенвенист, *Индоевропейское именное словообразование*, М., 1955, էջ 195-200:

«մեզ», հին սլավ. skastŭ, skataŭ, skasti «ցատկել, ոստնել», հետևաբար դրանց երկրորդ նախաձևերից ծագելը գտնում ենք ավելի հավանական:

Հայերեն *ցայել* բառի համար, որ լեզուների այս խմբի բառերին ձևով և իմաստով մոտ է կանգնած, նույնպես ավելի հավանական է կանխադրել արմատի թույլ ձայնավորով և նշված բայածանցներից որևէ մեկով նախաձև:

Ա. Մեյեն լատիներեն և լիտվերեն լեզուների նշված բառերին անմիջական մերձավոր է համարում հայերեն *ցայտել/ցայթել* բայը, սակայն նրա համար որևէ նախաձև չի առաջարկում¹²: Այդ լեզուների բառարմատներին հայերենում ճշտորեն համապատասխանում է *ցայ-* և ոչ *ցայտ-* արմատը, որը հնդեվրոպական լեզուներում անմիջական մերձավորներ չունի: Պետք է ենթադրել, որ այն առաջացել է հետագայում՝ *ցայ-* արմատին *թ/տ* աճականի հավելումով, որ հայերենին խորթ երևույթ չէ (հմմտ. *ձիգ-ձգտել, քակել-քակտել, քերել-քերթել, ցռուկ-ցռթել*):

Հետաքրքիր է նշել նաև, որ հայերենում կա բայերի մի խումբ, որտեղ բայահիմքը *այ* երկհնչյունից հետո վերջանում է *թ* կամ *տ* բաղաձայններով: Այդ բայերն ընդհանրանում են ոչ տևական, արագ, հանկարծական գործողություն արտահայտելով, օր., *զայթել, կայթել, խայտալ, ճայթել, ցայտել (ժայթքել, սայթաքել)*: Կա՛մ այս բայերը, մինևույն իմաստային խմբի մեջ միավորվելով, կազմվել են մեկը մյուսի նմանությամբ, կա՛մ էլ *թ/տ* աճականը հնում ինչ-որ ժամանակ, հայերենում բային հաղորդել է ոչ

¹² A.Ernout et A.Meillet, նշվ. աշխ., էջ 863:

տնական, հանկարծական գործողության իմաստ, որ այս կամ այն չափով պահպանվել է հիշյալ խմբի բայերում:

Ամեն դեպքում, *ցայտել/ցայթել* բայի կազմության բացատրությունը հայերենի բառակազմական մակարդակում ավելի համոզիչ է, քան հնդեվրոպականում:

Հայերեն *ցատկ* արմատը, իհարկե, անմիջապես *ցայտ-*ից չի բխում, ինչպես ենթադրում է Տերվիշյանը: Եթե հնդեվրոպական լեզուների վերը նշված իմաստային դաշտով միավորվող բառերի համար կանխադրում ենք *skē- ընդհանուր արմատ, ապա *ցատկ* բառը հավանաբար գալիս է հնդեվրոպական ընդհանրության շրջանից *skē- արմատի թույլ ձայնավորով, *-t աճականով և *-ko ածանցով *skətko- նախաձևից:

Մորմո(ն)ջ, մորմորի(ն)ջ, մոր|մուր, մորմ

Մատենագրությամբ ավանդված *մրջին* և *մրջիմն* ձևերն ակնհայտորեն նման են հնդեվրոպական լեզուների նույն իմաստն ունեցող բառերին (հին սլավ. mravi, հին իսլանդ. maurr, կոռն. muryon, հուն. μύρμηξ և այլն):

Այդ բառերը թաքուի հետևանքով, ինչպես ենթադրվում է, դեռ ամենավաղ ժամանակներում ենթարկվելով տարբեր հնչյունափոխությունների, իրարից այնքան են հեռացել, որ այժմ դժվար է դրանց համար ոչ միայն մեկ ընդհանուր նախաձև, այլ նույնիսկ մեկ ընդհանուր արմատ կանխադրելը: Յ. Պոկոնոնու «Հնդեվրոպական լեզուների ստուգաբանական բառարանում», օրինակ, այդ բառերի համար տրվում են ոչ թե մեկ ընդհանուր

արմատ կամ նրա տարբերակները, ինչպես մյուս դեպքերում, այլ նախաձևեր՝ *morǵ-, *ǵormo-, `*mormo-, (*meuro-)¹³:

Հնդեվրոպական լեզուների «մրջուն» իմաստով բառերի վերաբերյալ լեզվաբանների ստուգաբանական դիտողություններից ելնելով, դրանց համար կարելի է ենթադրել երկու հիմնական նախաձև՝ *mormo- և *mormǵ-: Թաբուի ազդեցությամբ երկու *մ*-երից մեկը ենթարկվել է տարնմանական հնչյունափոխության. լեզուների մի մասում բառակզբում *մ*-ն է հնչյունափոխվել *ւ*-ի կամ *բ*-ի, ինչպես՝ հին հնդկ. *vamrá-*, *vamri*, լատին. *formīca*, հուն. *βὀρμαξ*, *βόρμαξ*, հայ. **վրչեմնը**, **բրչեմնը** (բրբռ.), մյուսում՝ բառամիջի, ինչպես՝ հին սլավ. *mravi*, հին իռլանդ. *moirb*: Գերմանական լեզուների համար, թեպետ ենթադրվում է *mouro-/meuro- նախաձև (տե՛ս J. Pokorny, նույն տեղում), սակայն դրանցում առկա է նույնպիսի տարնմանական հնչյունափոխություն՝ *morm(o)->*morǵ(o)>*mour(o)- (հմմտ. հին իռլանդ. *maurr*): Գերմանական ժամանակակից լեզուների համապատասխան բառերի համար կանխադրվող *meuriðn(<*meuri-) նախաձևը նույնպես կարելի է հանգեցնել *mouri-<*mormi- ձևին, քանի որ այդ լեզուներում *ou>eu* անցում հաճախ է դիտվում: Երբեմն էլ երկու *մ*-երը նույնությամբ պահպանվել են՝ հուն. *μὀρμαξ*, դոր. *μὀρμαξ*: Այս ամենի հետևանքով ստացվել են բառային զուգաձևեր:

Որոշ դեպքերում այդ բառերն իրար հակադրվում են նաև արմատի ձայնավորով: Մի քանի լեզուներ ունեն արմատի *ս* ձայնավորով ձևեր, որտեղ *ս*-ն հնդեվրոպական *o*-ին չի հանգում՝

¹³ J. Pokorny, նշվ. աշխ., էջ 749:

հուն. . μὲρμηξ, βὺρμαξ (նաև βόρμαξ, ὄρμακας, լատին. furmīca (նաև formīca), հայ. *մրջիմն* (**մուրջիմն*)¹⁴:

Էոնուն և Մեյեն լատիներենի բառաձևի համար ենթադրում են ոչ թե հետագա or>ur հնչյունափոխություն, այլ ավելի հին ծագում¹⁵: Հայերեն բառը կարող էր գալ արմատի՝ ինչպես ս այնպես էլ երկար օ ձայնավորով նախաձևից: Բայց քանի որ այլ լեզուներում արմատի երկար օ վկայված չէ, հայերեն բառի համար նույնպես կանխադրելի է *ս ձայնավորով նախաձև:

Ուրեմն, պետք է ենթադրել, որ հնդեվրոպական ընդհանրության շրջանում եղել է «մրջույն» իմաստով բառարմատի երկու տարբերակ՝ *mor-/ *mur- որոնք, հնարավոր է, ունեցել են տարածքային բաշխվածություն: Հնդեվրոպական բարբառներն այդ արմատից բառեր են կազմել *-m աճականի (գուցե *-mo ածանցի) միջոցով՝ *morm(o)-/ *murm(o) կամ արմատի կրկնությամբ, ինչպես լատիներենի և հունարենի համար ենթադրում են Էոնուն և Մեյեն¹⁶:

Նախքան հայերեն *մրջիմն* ու *մրջիմն* բառերը հնդեվրոպական այս կամ այն նախաձևին հանգեցնելը, պետք է պարզել նրանց՝ միմյանց նկատմամբ ունեցած կապն ու փոխհարաբերությունը:

Հ. Աճառյանը *մրջիմնը* համարում է հետագայում առաջացած ձև, իսկ *մրջիմն*-ը ստուգաբանում է որպես *մուրջ*, «ուր –ջ–ն մասնիկ է, որի վրա հետո ավելացել է –իմն մասնիկը» (ԱԲ, հատ. 3,

¹⁴ Ռուսերեն муравей ձևը, * моровой-ի փոխարեն, համարվում է мурава «մարգագետնի հյութալի խոտ, ճիւղ» (мур, мурок «մարգագետնի խոտ») բառի ազդեցություն (А.Г. Преображенский, *Этимологический словарь русского языка*, т. 1, М., 1959, էջ 569, М.Фасмер, *Этимологический словарь русского языка*, т. III, М., 1977, էջ 10):

¹⁵ А. Ernout et А. Meillet, նշվ. աշխ., էջ 364:

¹⁶ Նույն տեղում:

էջ 371): Բայց հայտնի է, որ հատկապես **ա** և **ի** ձայնավորներից հետո դիրքում ինչպես նախագրաբարյան, այնպես էլ գրաբարյան հայերենին հատուկ է **մ/ւ** հերթագայություն, ընդ որում **մ**-ն է հնչյունափոխվում **ւ**-ի, և ոչ հակառակը՝ **amor*->**ամուր*>*աուր*, *պաշտաման-պաշտան, գոչման-գոչին*¹⁷: Հետևաբար նախնական է *մրջիմն* ձևը, իսկ *մրջին*-ը նրանից առաջացած տարբերակ է: Տեղին է հիշել նաև, որ **-ին** մասնիկով իրեր, կենդանիներ ցույց տվող բառեր չեն կազմվում:

Պոկոռնին թեպետ *մրջիմն*-ի համար կանխադրում է **morm*—ից եկող **murjimmō*- նախաձև, սակայն նրա ծագումը համարում է չպարզաբանված (տե՛ս նշված բառարանը, էջ 749):

Այլ լեզվաբաններ, ինչպես օրինակ՝ Գ. Ջոլտան, գտնում են, որ *մրջիմն* բառը թաբուի հետևանքով աղավաղված ձև է: Նա ընդունում է Բուգեի առաջարկված նախաձևը՝ **murmiǵ*>*mrmjimm*, որտեղ, սակայն, անբացատրելի է մնում *-imm* բաղադրամասը¹⁸:

Այս բառն ունի բարբառային բազմաթիվ ձևեր, որոնք բառի ստուգաբանական քննության ժամանակ հետազոտողների ուշադրությունից դուրս են մնացել: Մինչդեռ տվյալ գրական բառի ոչ միայն պատմական, այլ նաև նախապատմական անցյալի շատ կնճռոտ հարցեր պարզելուն հաճախ կարևոր նյութ են մատուցում հենց նրա բարբառային ձևերը:

Հ. Աճառյանը «Հայերենի արմատական բառարանում» *մրջին* բառի դիմաց բերում է քսանից ավելի բարբառային ձևեր, որոնք, սակայն, կարելի է հանգեցնել մի քանի հիմնաձևերի. ՄՐՋԻՄՆ՝

¹⁷ Տե՛ս **A. Meillet**, *Esquisse d'une grammaire comparée de L'arménienne classique*, Vienne, 1936, էջ 48: **Գ. Ջահուկյան**, *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը*, Ե., 1957, էջ 172: **Г. Б. Джаукян**, *Очерки дописменного периода армянского языка*, էջ 237: **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, 1957, էջ 44, 62:

¹⁸ **G. Solta**, *Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen*, էջ 52:

մուրջիմ (Հաճն), *մրչիմ* (Երևան, Թբիլիսի), *մռջիմ* (Ագուլիս), *մրճիմ* (Մոկք), *մոճիմ* (Ոգնի), *մռչեմ* (Նոր-Ջուղա), *մոճեմ* (Ալաշկերտ, Մուշ, Սալմաստ, Վան), *մրչեմնը*, *վրչեմնը* (նաև *բրչեմնը*, վ-ն և բ-ն երկու մ-երի տարնամանության արդյունք են, Ղարաբաղ), ՄՐՋԻԻՆ՝ *մրչուն* (Կարին), *մռչուն* (Ռոտոսթո), *մոռչին* (Ասլանբեգ), *մրրջըբբուն* (Հունգարահայք), ՄՈՒԲԶՈՒՄ/ՄՈՐԶՈՄ՝ *մուռչում* (Նոր-Նախիջևան), *մըռչում* (Խարբերդ), *մըռճըմ* (Մարաշ), *մըռճըմ* (Մարաղա), *մըրջջըմ* (Ադանա), *մէչում* (Համշեն, բարբառին հատուկ ու > ը > է, ո > յ հնչյունափոխություններով), *մրջ'օմ* (Սվեդիա), *մոռճօմ*, *մոռջ'օմ* (Զեյթուն), ՄՈՐՄՈՆԶ՝ *մօրմօնջ* (Լոռի, Ղազախ, նաև Ղարաբաղ), ՄՈՐՄՈՐԻՆԶ՝ *մօրմօրինջ* (Շամախ), (տե՛ս ԱԲ, հատ. 3, էջ 371): Քանի որ *մրջիմն*-ը, ինչպես նշվեց, *մրջիմն*-ից ավելի հին է, ապա հայերենի թե՛ գրաբարյան և թե՛ բարբառային բոլոր ձևերը բխում են հետևյալ հիմնաձևերից՝ *մորմո(ն)ջ*, *մուրջում/մորջում*, *մորմորինջ*, *մրջիմն*:

Մորմոնջ բառը կարելի է համադրել –ջ ածականով այնպիսի ձևերին, ինչպես՝ *բողբոջ*, *պաղպաջ*, *մրմունջ*, *տրտունջ*, *խխունջ* և այլն, որտեղ ենթադրվում է՝ կա՛մ ջ-ն ածական է, որից առաջ բաղաձայնն ընկել է, կա՛մ երկրորդ բաղադրիչի վերջին բաղաձայնն է փոխվել ջ-ի: Այս դեպքում *մորմոնջ* ձևը *մոր*-արմատով կրկնավոր բարդություն է (ջ-ից առաջ ն հնչյունը հետագա հավելում է):

Ինչպես վերը նշվեց, հնդեվրոպական լեզուների «մրջյուն» նշանակող բառերի համար կանխադրելի է նաև արմատի կրկնությամբ նախաձևեր: Հայերենը նույնպես դիմել է բառակազմական այդ միջոցին, բայց հնդեվրոպական *mor և *mur արմատներից ստեղծել է իրեն հատուկ **մորմոջ/մուրմուջ*

կրկնավոր բարդությունները, որոնցից էլ ծագել են հայերեն բարբառների համապատասխան ձևերը:

Աչքի է զարնում **մորմոջ/*մուրմուջ* և **մորջում/*մուրջում* ձևերի նմանությունը: Երկրորդում պարզապես մ և ջ հնչյունները ենթարկվել են հայերեն բարբառներում տարածված դրափոխական հնչյունափոխության, ինչպես հնդեվրոպական այլ լեզուներում. տվյալ դեպքում դրան կարող էր նպաստել նաև թաբուի երևույթը:

Ուրեմն *մորմոնջ, մորջում/*մուրջում* հիմնաձևերին հանգող հայերեն բառերի համար պետք է կանխադրել **մորմոջ/*մուրմուջ* ընդհանուր նախաձևեր:

Մորմորինջ բառը նույնպես արմատի կրկնությամբ ձև է: Այստեղ կարելի է առանձնացնել *մորմոր-* կրկնավոր հիմք և *-ինջ* ածանց: Հայերենին հատուկ է *-ինջ* ածանցով միջատներ և կակղամորթներ նշանակող բառեր ստեղծելը, ինչպես՝ *բաղինջ*, «մլակ, փայտոջիլ», *կողինջ, եղինջ* (Ղրբ.) «խխունջ» և այլն: Որպես իմաստային միևնույն թեմատիկ խմբի մեջ մտնող բառ *մորմորինջ* ձևում նույնպես առկա է *-ինջ* ածանցը:

Մրջինն բառը կարելի է ստուգաբանել երկու կերպ. կա՛մ նրա նախաձևը հանգում է հնդեվրոպական ընդհանրության շրջանին, կա՛մ այն **mur-* արմատից հայերենի հողի վրա առաջացած ձև է:

Եթե հնդեվրոպական լեզուների համապատասխան բառերի **morm-/*murm-* հիմքը համարում ենք հնդեվրոպական շրջանի **-m* աճականով նախաձև, ապա հայերեն *մրջինն* բառը կարող էր ծագել հնդեվրոպական **murm-i-jo > *մուրմիջ*: Իսկ *i-*ով հիմք վկայված է նաև հնդեվրոպական այլ լեզուներում՝ հմմտ. կոռն. muryon, հին հնդ. varmī, հին սլավ. mravi, լատին. formīca:

Ինչպես արդեն նշվեց, Բուգեն նույնպես կանխադրում է *murmij նախաձև: Մակայն այնուհետև ստուգաբանությունն ընթանում է ոչ համոզիչ ուղիով: Նա, *մրջիմն* ձևը ստանալու համար, այդ նախաձևին ավելացնում է չստուգաբանված *-իմն* բաղադրամասը: Բացի այդ, եթե բաղադրյալ ձևում անշեշտ **ու**-ի անկումը բնական է թվում հայերենի համար, ապա անբացատրելի է մնում *-mi-* վանկի սղումը՝ *murmij>*murfj-*imn*:

Հնդեվրոպական մի քանի լեզուների օրինակները և հայերեն բարբառային ձևերը մեզ հուշում են, որ այստեղ նույնպես, հնարավոր է՝ տեղի է ունենում *մ* և *ջ* հնչյունների դրափոխություն՝ **մուրմիջ > *մուրջիմ*: Ապա անշեշտ **ու**-ի սղումով և բառավերջին *ն* հնչյունի հավելումով, որ հայերենին հատուկ է, ստեղծվել է *մրջիմն* ձևը:

Հնարավոր է նաև, որ *morm- հիմքին հայերեն *-իջ* ածանցն ավելացել է ավելի ուշ՝ հնդեվրոպական ընդհանրության շրջանից հետո¹⁹:

Կարելի է ենթադրել նաև, որ հայերենը արմատի *mur- տարբերակից նույնպես կազմել է կրկնավոր ձև՝ **մուրմուրինջ*: Վերջինս կարող էր անշեշտ **ու**-երի անկումով դառնալ **մրմրինջ* (հմմտ. *ծուռ-ծոծոել, ջուր-ջրջրիկ, մրմուռ-մոմոալ*), ինչպես նաև կրկնվող վանկերից երկրորդի անկումով, որ հաջորդված է մեկ այլ վանկով, ձայնավորի սղումով՝ **մուրմրի(ն)ջ* (հմմտ. *հուրհրալ, ջոկջկել, քանդքնդել*):

¹⁹ Ի դեպ՝ *-իջ* ածանցը, որ հայերեն որոշ բառերում հնդեվրոպական շրջանին հասնող հնություն ունի՝ *-i-jo- (հմմտ. *երինջ*, հուն. *ἄριος*, լատին. *ariēs*) հետագայում նույնացվել է իրանական և արաբական փոխառությունների միջոցով հայերենին անցած *-իձ, -ինջ* ածանցներին, որի հետևանքով այժմ դժվար է հին՝ նախքան փոխառությունները և նոր կազմությունները միմյանցից տարբերագատել:

Այնուհետև մ և ջ հնչյունների դրափոխությամբ պետք է ունենայինք ****մրջին*** կամ ****մուրջրին*** և ոչ՝ ****մրջին***, ****մուրջրին***, քանի որ հայերենի բառավերջին **–ն** կապակցություն հատուկ չէ: Իսկ եթե նախապես բառը ն հնչյուն չի ունեցել, ուրեմն այն բառավերջում ավելացել է հետագայում, ինչպես շատ այլ դեպքերում: Ե՛վ ****մրջրին***, և՛ ****մուրջրին*** ձևերը իրենց բնական զարգացմամբ կարող էին դառնալ ***մրջին***:

Մրջին բառը թեպետ վաղ ժամանակներից մատենագրությամբ վկայված հին ձև է, բայց չպետք է մոռանալ, որ այն միշտ էլ ժողովրդի առօրյա գործածական բառերից է եղել: Հետևաբար, նախքան գրական լեզու մուտք գործելը, եթե անգամ այդ ժամանակը համարվի V դարը, այսինքն՝ խոսվածքների քիչ տարբերակվածության շրջանը, այն կարող էր արդեն «ոչ ընտիր»՝ ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ երանգ ունենալ, մի բան, որ նկատվում է նաև հնդեվրոպական մյուս լեզուների համապատասխան ձևերում: Այդ պատճառով բառի ստուգաբանության վերջին տարբերակի համար հիմք է ծառայել բարբառային ***մորմորինջ*** ձևը, որի նմանությամբ կանխադրել ենք նաև ****մուրմուրի(ն)ջ*** նախաձև: Այնուհետև ստուգաբանական կռահումները, թվում է, հենվում են ժամանակակից բարբառների բնորոշ բառակազմական միջոցների և հնչյունական օրենքների վրա՝ արմատի կրկնություն, նման վանկերից մեկի կամ երկուսի ձայնավորների սղում, հնչյունների դրափոխություն: Բայց հենց սրանք են, որ ունեն խոր հնություն և հանգում են հնդեվրոպական ընդհանրության շրջանին: Հայերենը, հատկապես նրա ժողովրդական տարբերակը, իր զարգացման բոլոր փուլերում պահպանել է դրանք: Այնպես որ բարբառային ***մորմորինջ*** ձևը հնարավոր է՝ սկիզբ է առնում անցյալի հին շերտերից: Պարզապես

«մրջյուն» նշանակող ձևերի ստուգաբանման ժամանակ անհավանական են թվում մեկ բառի սահմաններում ամփոփվող ամեատարբեր փոփոխությունները:

Ընդհանրապես հնդեվրոպական լեզուներում կան բառեր, որոնք կրել են հնչյունական զանազան, հաճախ դժվար բացատրելի փոփոխություններ: Դրանք հիմնականում շատ գործածական կամ թաքուի ենթարկվող բառեր են: Ունենալով միևնույն դրոշմատաձևները՝ այդ հնչյունափոխությունները միշտ չէ, որ ունենում են ընդհանուր սկիզբ: «Մրջյուն» նշանակող բառերի դեպքում, օրինակ, երկու *տ*-երի տարնմանակման հնչյունափոխությունը հավանաբար հնդեվրոպական ընդհանրության շրջանից է գալիս, որովհետև այն առկա է շատ լեզուներում: Բայց այդ բառը, շարունակելով ենթարկվել տաքուի, իրարից բավական հեռացած բարբառներում կրել է նոր, այս անգամ դրափոխական հնչյունափոխություն, որ ամեն մի բարբառում կատարվել է յուրովի. արիական լեզուներում դրափոխվել են *r* և *m* հնչյունները՝ *varma*, *vamri*, գերմանականում՝ *r* և *u*՝ հին իսլանդ. *maurr*, իսկ հայերենում, ինչպես տեսանք, բառամիջի *մ* և բառավերջի *ջ* հնչյունները:

Այսպիսով, «մրջյուն» նշանակությամբ հայերեն բազմաթիվ բառերի համար պետք է կանխադրել հնդեվրոպական **mor-*/**mur-* արմատին հանգող, բայց հայերենի հողի վրա ստեղծված **մորմոջ*/**մուրմոջ* և **մորմորի(ն)ջ*/**մուրմուրի(ն)ջ* նախաձևեր: *Մրջիմն* ձևի համար հնարավոր են նաև հնդեվրոպական հիմքին՝ հետագայում հայերեն *-ինջ* մասնիկի հավելումով ստեղծված կամ հնդեվրոպական **murmi-jo* նախաձևեր:

Ստուգաբանական այս վարկածների հավանականությունը մեծանում է նրանով, որ հնդեվրոպական **mor-*, **mur-* արմատները

և *morm- հիմքը հայերենում վկայված են նաև որպես առանձին բառեր:

«Հայերեն արմատական բառարանում» *մոր, մուր, մորմ* բառերը դիտվում են ծագումնաբանորեն իրար հետ կապված ձևեր և բացատրվում են. «Մի տեսակ թունավոր միջատ. լատին. tarantulla» (ԱԲ, 3, էջ 347): Դրանց ստուգաբանության վերաբերյալ Հ. Աճառյանը նշում է միայն Գ. Ղափանցյանի կողմից արված վարկածը, որը հավանական չի գտնում, բայց և ինքը որևէ այլ ստուգաբանություն չի առաջարկում:

Գ. Ղափանցյանը, ինչպես պարսկերեն mār- «օձ» բառը, հայերեն ձևերը նույնպես հանգեցնում է հնդեվրոպական *mər, *merə «մեռնել» արմատին (ԱԲ, նույն տեղում): Սակայն հոգուտ այդպիսի ստուգաբանության խոստով, այլ լեզուների տվյալներով հաստատվող փաստարկներ չունենք: Իսկ պարսկերեն mār-ը հնդեվրոպական մյուս լեզուներից անկախ ստեղծված բառ է, և հայերենի համապատասխան բառերի հետ դիտվող նրա ձևիմաստային կապը համոզիչ չէ: *Մոր, մուր, մորմ* բառերը *mer- «մեռնել» արմատից հայերենի հոդի վրա նույնպես չեն ստեղծվել, քանի որ այդ արմատը հայերենում վկայված է *մեռ- (մեռանիմ)* և *մար- (մարդ)* ձևերով:

Դրանք ձևով ճշտորեն համապատասխանում են հնդեվրոպական լեզուների «մրջուն» նշանակող բառերին, բայց իմաստով նրանցից տարբերվում են: Սակայն ստուգաբանվող բառերը *մրջիմն*-ի հետ, մտնելով նույն թեմատիկ խմբի մեջ, կարող էին ծագել միևնույն արմատից: Հետևաբար կարելի է ենթադրել, որ հնդեվրոպական *mor-/*mur- արմատից հայերենում ավանդված *մոր, մուր, մորմ* ձևերը, որ սկզբնապես նշանակել են «մրջուն», սկսել են գործածվել նաև արտաքինապես մրջունին նմանվող

թունավոր միջատի կոնկրետ տեսակ նշանակելու համար: Աստիճանաբար այդ նշանակությունը դարձել է գլխավոր՝ դուրս մղելով մյուսին: Իսկ «մրջյունի» համար այդ ձևերից զուգահեռաբար ստեղծվել են նոր բառեր, որոնց մասին վերև արդեն խոսվեց:

Այսպիսի վարկածը գալիս է պատասխանելու նաև այն հարցին, թե ինչու հայերեն «մրջյուն» նշանակող բառերը ձևով շատ են տարբերվում հնդեվրոպական լեզուների համապատասխան բառերից:

«Պատմա-բանասիրական

հանդես»,

1980, № 3(90):

ՄՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տանու

Հայտնի է, որ *dōm- «տուն» արմատը հնդեվրոպական մի քանի լեզուներում վկայված է նաև -u- հիմքով: Լատիներենում և հին սլավոներենում -u- հիմքը առկա է ինքնուրույն բառաձևերում՝ լատին. domus, -ūs, հին սլավ. domъ «տուն»: Մյուս լեզուների համար ստուգաբանական բառարաններում բերվում են օրինակներ, որտեղ -u- հիմքով ձևը հանդես է գալիս որպես բարդ բառի բաղադրիչ՝ հին հնդկ. dām-nas- «տան ընկեր», լիտվ. namū-darys «տուն կառուցող, շինարար»: Հայերենի համար նույնպես նշվում է մեկ բարդ բառ՝ *տանուտեղ*¹, որ «Հայկազյան բառարանում» բացատրված է. «1 գլուխ ընտանեաց և գերդաստանի, 2 ցեղապետ, ազգապետ, նահապետ»²:

Լեզվաբանները սովորաբար նշում են, որ *dōm- արմատի – u--ով ձևերում պահպանվել է հնդեվրոպական *-u- նախնական հիմքը՝ առանց ստուգաբանական բացատրությունների: Բայց Մ. Բրեալը, ինչպես Ա. Մեյեն է վկայում, աշխատել է գտնել դրա ծագման աղբյուրը: *Տանուտեղ* բառի առիթով Մեյեն գրում է. «*domu- բունը, որ վկայված է լատին. domus, հին. սլավ. domъ, սանսկր. damūnas բառերով, պր. Բրեալի կողմից վերջերս հայտնաբերվել է ծմօճ բառում (որը –ōu--ով բուն է, ինչպես πᾶτρός-ը, տե՛ս Mémoires, է, էջ 448): Հայերենը ևս ունի նրա մի հետքը, *տանուտեղ* բառում սկզբնական **տամոյ-տեղ*-ում *տանու-*ն

¹ Տե՛ս J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, Bern und München., 1965, A. Ernout et A. Meillet, *Dictionnaire étymologique de la langue latine*, Paris, 1932, М. Фасмер, *Этимологический словарь русского языка*, т. I, Москва, 1964:

² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հ. 2, 1837, էջ 843:

*domous սեռականի ներկայացուցիչն է: **Smn**, սեռ. **smn** ձևի ազդեցությամբ -մ- ռնգայինը դարձել է ն»³:

Մենք հնարավորություն չենք ունեցել ծանոթանալու Մ. Բրեալի հիշյալ հոդվածին, բայց ասվածից կարելի է եզրակացնել, որ նա *domu- ձևը համարում է հնդեվրոպական *-om/*-u հերթագայությամբ սեռական հոլովի հիմք:

Ա. Մեյեն վերը նշված ստուգաբանությունը հնարավոր է համարում, որովհետև հնդեվրոպական *ou երկբարբառը հայերենում տալիս է **ոյ**, իսկ վերջինս շեշտից զրկվելով դառնում է **ու**: Թեպետ բացատրված չէ **smn**- ձևում **ա** հնչյունի առկայությունը, բայց հասկացվում է, որ այն նույնպես համարվում է սեռ. **smn** ձևի ազդեցություն, քանի որ *o>ա անցումը հայերենի համար օրինաչափ չէ:

Պարզ չէ, թե ինչու Ա. Մեյեն հայերենի ձևի համար չի կանխադրում հերթագայված հենց *-u- հիմքով նախաձև: Լատիներենի ստուգաբանական բառարանում նույնպես **smn**- ձևը անմիջապես չի բխեցվում *-u- հիմքով հնդեվրոպական նախաձևից. «տանու-տեր-ում կա *domu-ի անուղղակի հետք՝ **mn**, **smn**-ով համակցված (combiné)»⁴:

Հ. Աճառյանը, որոշ չափով հենվելով Մեյեի ստուգաբանության վրա, այնուամենայնիվ գտնում է, որ **smnter** բառում պահպանվել է հնդեվրոպական *domu- նախաձևը, սակայն հայերենում *o>ա հնչյունափոխությունը չի բացատրում⁵:

Հայերեն **smn**- ձևը կարող էր գալ նաև *-ou/*-u- հերթագայվող թեքված հիմքի *-u- տարբերակով նախաձևից

³ Ա. Մեյե, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Ե., 1978, էջ 188:

⁴ A. Ernout et A. Meillet, *Dictionnaire étymologique de la langue latine*, էջ 271:

⁵ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Եր., 1979, էջ 428:

(հմմտ. հին սլավ. domъ և այլն): Հայերենը ժառանգել է հնդեվրոպական *dōm- արմատի երկար ձայնավորով տարբերակը՝ *dōm->**տուն**, որը թեքվելիս պետք է ունենար թույլ ձայնավորում՝ *dēm- (հմմտ. հուն. δῆμος), քանի որ աթեմատիկ հիմքի շեշտը թեք ձևերում արմատից տեղափոխվում էր վերջավորության վրա⁶, որի հետևանքով արմատի անշեշտ ձայնավորը հաճախ թուլանում էր:

Տվյալ դեպքում եղել են *dēmou- և *dēmu- թեքված հիմքեր, որոնք հայերենում բնականորեն կդառնային **տամոյ-* և **տամու-*: Ուրեմն հայերեն **տանու-** բաղադրիչի –ա- ձայնավորը ծագում է հնդեվրոպական նախաձևից: Ինչ վերաբերում է մ>ն հնչյունափոխությանը, ապա այն ոչ թե սեռականի մեկ այլ՝ **տան** ձևի ազդեցություն է, ինչպես ենթադրում է Ա. Մեյեն, այլ, կարծում ենք, արմատի միասնականացման կամ բառի հարացույցի կարգավորման օրենքով բառի ուղիղ և թեք հիմքերի արմատի տարբերակները միմյանց նմանվելու ձգտման արդյունք են⁷, մանավանդ որ ու/ա հերթագայությամբ այդ տարբերակներն իրարից արդեն բավական հեռանում էին:

Տանու- հիմքով բարդ բառեր են պահպանվել նաև հայերեն բարբառներում՝ **տանուցտանու**, **տանստանու** (Եր.), **տանեցտանու** (Թբ.) «առտնին կերպով, ընտանեբար» (**տանեցտանու նշանել են**)⁸: **Տանուցտանու** և **տանստանու** բառերը զուգաձևեր են: Երկրորդում

⁶ Տե՛ս **A. Meïe**, *Введение в сравнительное изучение индоевропейских языков*, էջ 322, **Գ.Ջահուկյան**, *Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը*, Ե., 1959, էջ 151:

⁷ Տե՛ս **В.Георгиев**, *Исследования по сравнительно-историческому языкознанию*, М., 1958, էջ 41:

⁸ **Հ. Աճառյան**, *Հայերեն գավառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 1013. *այնուհետև բարբառային ձևերը բերվելու են ըստ նշված բառարանի՝ առանց համապատասխան հղումների*:

անշեշտ **ու**-ն ընկել է, և ց-ն տ-ի մոտ դարձել է **ս**, քանի որ բարբառներում կիսաշփականները խուլ պայթականների մոտ առնամանությամբ հաճախ դառնում են շփականներ (հմմտ. *խցկել-խսկել, կռճկել-կռշկել, իմաց տալ-իմաս տալ, փուչ-տռուզ- փուշ-տռուզ*):

Երևանի (Արարատյան) և Թբիլիսիի բարբառներում **տուն** բառը **ու** հոլովման չի պատկանում և չունի –ու- հիմքով հոլովային գուգաձևեր: Ուրեմն ինչպե՞ս բացատրել **տանու**- հիմքը:

Բարդության **տանուց**- բաղադրիչին Թբիլիսիի տարբերակում համապատասխանում է **տանեց**- ձևը, որը խոսվածքի արդի համակարգում բացատրելի չէ: Սայաթ-Նովայի ստեղծագործություններում, որտեղ այս կամ այն չափով արտացոլված է Թբիլիսիի խոսվածքի XVIII դարի առաջին կեսի վիճակը, թեպետ չկա **տանեց**- ձևը, սակայն **–եմեն** վերջավորության կոդքին, որ հետագայում բացառական հոլովի համար ընդհանրացել է, հաճախ ենք հանդիպում **տանե** ձևին (**տանե դուս արած**), այսինքն՝ գրաբարաձև բացառականի՝ **ի տանե**⁹: Հնարավոր է, որ եզակի թվի **տանե**-ի համաբանությամբ հոգնակի թվի գրաբարյան **տանց** ձևը դարձել է **տանեց**, որ Սայաթ-Նովայի ստեղծագործություններում վկայված չէ, քանի որ այդ բառի հոգնակի բացառականը հեղինակի կողմից չի գործածվել:

Պետք է ենթադրել, որ **տանուց**- բաղադրիչը նույնպես հոգնակի սեռական-տրական-բացառականի ձև է: **Տանուցտանու** բարդությունն ավելի հավանական է դարձնում **տանու** հիմքի հնդեվրոպական սեռականի *dæmu- տարբերակից ծագելու վար-

⁹ Սայաթ-Նովա, *Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու*, Ե., 1959:

կածր: Ըստ Մեյեի ստուգաբանության՝ այս բառը պետք է ունենար ***տանոցտանոյ** ձև, որից **տանուցտանու** բխեցնելը դժվար է:

Տանուցտանու բարդության բաղադրիչները տրոհելի միավորներ են եղել, որոնց կապի ձևը լեզվի զարգացման ընթացքում երկար ժամանակ գիտակցվել է: Այդ պատճառով Թբիլիսիի բարբառում բարդության առաջին բաղադրիչը փոխվել է, որովհետև **տուն** բառի հոլովական հարացույցի համապատասխան անդամը նույնպես փոխվել է (**տանեց**): Մինչդեռ Արարատյան բարբառում այդ բարդության բաղադրիչների հոլովական հարաբերությունը մթազնվել է, որի հետևանքով բարդությունը նույնությամբ պահպանվել է՝ **տանուցտանու**:

Եթե հայերենում **տանու** հիմքով կազմվել են բարդ բառեր, ուրեմն այդ ձևը բավականին գործածական է եղել: Ընդ որում, **տանուտեք** բարդության մեջ այն, ըստ Մ. Բրեալի և Ա. Մեյեի, հնդեվրոպական սեռականի ժառանգորդն է, որի իմաստը այդ բառում ըմբռնվում է: Հետևաբար հայերենում ունեցել ենք **տուն** բառի սեռական ***տանու** (ըստ Ա. Մեյեի՝ ***տամոյ**) ձև: Այդ դեպքում ինչո՞ւ պետք է լիներ նաև **տան** ձևը, որի ծագումը համարվում է ոչ լրիվ պարզված: Գ.Բ.Ջահուկյանը, օրինակ, **տուն** բառի սեռական-տրական-բացառական հոլովների արմատի ա ձայնավորի առկայությունը, ինչպես և **շուն** բառի դեպքում, համարում է գործիականի ա-ի ընդհանրացման արդյունք, «եթե միայն ենթադրենք հնդեվրոպական m-ով հիմք և արմատական ձայնավորի *o (զրո) հերթագայություն, որով *dm̥bhi > տամբ. այլապես այստեղ պետք է լինի համեմատվող բառերի (իմա՝ **տուն**

և **շուն** – Մ.Ա.) հոլովման անալոգիան կամ, թերևս, իրանական ազդեցություն»¹⁰:

Գուցե ավելի ճիշտ կլինի ենթադրել, որ *dom- նախածնը, ունենալով *-ou-/*-u- հիմքով հոլովում, հայերենում պատկանել է ձայնավորահանգ հոլովման, իսկ թեք հոլովների արմատի **ա** ձայնավորը, ինչպես ասացինք, **օ/*** հերթագայության արդյունք է, այսինքն՝ նախնական է: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախապատմական շրջանում հայերենի շեշտը աստիճանաբար կայունացել է վերջնից վանկի վրա՝ դառնալով հիմնական օրենք¹¹: Հետևաբար **տանու** բառի շեշտը նույնպես կարող էր տեղափոխվել վերջից երկրորդ վանկի վրա՝ **տա՛նու**, մասնավորապես որ այն տվյալ դեպքում ձևաբանական դեր չէր կատարում, քանի որ ուղիղ և թեք հոլովածների միջև տարբերությունն ակնհայտ էր: Հետագայում, ենթարկվելով բառավերջի շեշտագուրկ վանկի ձայնավորի անկման օրենքին, այն դարձել է **տան**: Այս հանգամանքն էլ պատճառ է դարձել **տուն** բառի հոլովական հարացույցի փոփոխության՝ ձայնավորահանգից դարձել է ձայնորդահանգ:

Հայերենում գոյություն ունի նաև **տանու** ինքնուրույն բառը, որ չկա Հ. Աճառյանի «Հայերենի արմատական» և «Գավառական», ինչպես նաև «Հայկազեան» բառարաններում, որի պատճառով, հավանաբար, այն հետազոտողների ուշադրությունից դուրս է մնացել: Բայց **տանու**-ն հայերեն բարբառներում լայն տարածում ունեցող ածականի արժեքով բառ է: Այն իր բազմաթիվ նշանակություններով գործածական է նաև գրական հայերենում.

¹⁰ Գ. Զահուկյան, *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը*, էջ 175:

¹¹ Իհարկե, եղել են նաև շեղումներ, որոնք դեռ բացատրության կարիք ունեն, տե՛ս

Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 153-154:

«1. տան, տանեցի, ընտանիքին պատկանող. 2. տնայանագործական եղանակով պատրաստված. 3. ընտանեկան հարկի տակ ապրող. 4. լավ պահված՝ խնամված, տնասուն. 5. տվյալ ընտանիքին շատ մոտ կանգնած, ընտանիքի հետ սերտ կապերով կապված, մտերիմ. 6. ընտանի. 7. տան, տնային»¹²:

Ածականակերտ **-ու** ածանցը հայերենում գործառվել է, հավանաբար, նախապատմական շրջանից ի վեր, ինչպես. **այր-արու, կիծ-կծու, հատ-հատու, աղ-աղու, վայր-վերու** (վերջինս բարբառային է): Հնարավոր է, որ այժմ տարածված այս տիպի ածականների մեծ մասը կազմվել է հայերենի պատմական շրջանում: Սակայն **-ու** ածականակերտ ածանցը, ամենայն հավանականությամբ, սկիզբ է առնում հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանից: Հնդեվրոպական նախալեզվում *-u ածանցով «կազմվում էին բազմաթիվ ածականներ, որոնց շեշտն ընկնում էր ածանցի վրա. արմատը սովորաբար ունենում էր զրո աստիճանի ձայնադարձ, այսպես՝ սանսկր. gur-ú-ի «ծանր», հուն. βαρ-ύ-ς, գոթ. kaur-ú-s, լատ. grauis (*gwr-w-is-ից), սնսկր. trs-ú-ի «ծարավից պապակված», գոթ. þaúrs-u-s «չոր», հուն. βαθ-ύ-ς «խոր», βένθος-ի «խորություն» կողքին» և այլն¹³:

Տանու ձևը պատմական շրջանում չի կազմվել, որովհետև -ու ածանցն ավելանում է բառարմատի և ոչ թեքված հիմքի վրա (հմմտ. **այր-արու**, սեռ. **առն**): Իսկ **տան-**ը ինքնուրույն բառարմատ չէ, այլ պատմական ամենավաղ ժամանակներից հայերենի ձևաբանական մակարդակի միավոր, այսինքն՝ թեք հոլովաձև: Ուրեմն **տանու** ձևը նախապատմական շրջանից է գալիս: Այդ դեպքում չի ժխտվում, որ այն ունեցել է հնդեվրոպական նախաձև:

¹² Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական առարան*, Ե., 1976, էջ 1410:

¹³ А. Мейе, *Введение в сравнительное изучение индоевропейских языков*, էջ 272:

Ինչպես նշվեց, *-u ածանցով ածականների արմատը սովորաբար ունենում էր ստորին աստիճանի ձայնդարձ, իսկ շեշտն ընկնում էր ածանցի վրա: Հետևաբար *dōm-ից *-u-ով կազմված ածականը պետք է լիներ *dəmu-, որը հայերենում կդառնար ***տամու**: Երկատված արմատի միասնականացման օրենքով **տուն** արմատից շատ չհեռանալու ձգտումով ***տամու** ձևում կարող էր *մ>ն, իսկ վանկարար *u-ն հայերենում պահպանվում է, այլապես կունենայինք ***տանգ** (հմատ. *gōnxi-> **ծունգ**): Ուրեմն հնդեվրոպական *dəmu- ածականը հայերենում նախ տվել է **տամու՛**, ապա՝ **տանո՛**, որտեղ վերջին վանկի շեշտը պահպանվել է:

Գուցե բարդ բառերի **տանու** բաղադրիչը նույնպես ածականական ծագում ունի: Դա ավելի հավանական է **տանուցտանու**-ի համար, որը որպես մակբայ կարող էր ածականից կազմվել:

Լակ/լախ, լանկ/լանգ, լինիլ

Հնդեվրոպական լեզուներում պահպանված *(s)lēg-/*(s)lēg- արմատին հանգող բառերը կարելի է բաժանել երեք իմաստային դաշտերի՝ 1. անհաստատ, երերուն, ճոճվող, 2. թույլ, մեղկ լինել, 3. ցոլի, անառակ, անպատկառ: Այս արմատից ծագող հայերեն բառերի համար նույնպես կարելի է կատարել այսպիսի բաժանում:

Հ. Աճառյանը հնդեվրոպական արմատի *(s)lēg- տարբերակին է հանգեցնում բարբառային **լակ** «թույլ, փչացած ձու» բառը և պատահական է համարում պարսկերեն lay «լակ ձու» բառի ձևաիմաստային համապատասխանությունը, քանի որ փոխառ-

ության դեպքում կունենայինք **լազ** և ոչ՝ **լակ**¹⁴։ Գ. Ջահուկյանը այս արմատի տարբեր աճականներով բաղադրված ձևերից է բխեցնում բարբառային մի շարք բառեր՝ **լակվոթել, կկոտվել, լկստվել** «շփանալ, լրբանալ, երես առնել», **լակաշ** «հին՝ մաշված, պատառոտված կոշիկ, շատախոս» և այլն¹⁵։

Պարզ **լակ** արմատը և -ո աճականով բաղադրված **լակո-** հիմքը գտնում ենք նաև հետևյալ բարդություններում. **Լակ-լակ (խոսել)** «դատարկ, անիմաստ (խոսել)» (Ղրբ.), **կոսահաշ** «դատարկ, անմիտ խոսքեր, վայրահաջություն» (Թբ.)։

Բարբառներում **լակ** արմատին մոտ իմաստներ է արտահայտում նաև **լախ** արմատը՝ լախ «թույլ» (Ղրբ., Շմ.), «խիստ թույլ եփած, կիսահում ձու» (Ղրբ.), «հավը վրան քիչ մը նստելով՝ փչացած (հավկիթ)» (Երևան, Վն.), «անցած, շատ հասունանալե ետք փճացած (ձմերուկ)» (Նբ., Սբ., Վն., Տփ.), «ջարդված, փշրված» (Վն.), **լախլախ** «խախուտ, թույլ» (Վն.), **լախլախ անել** «հիվանդի պես թույլ թույլ պտտիլ» (Ղրբ.), **լախացնել** «թուլացնել» (Շմ.), և այլն։

Լախ արմատի հնչյունափոխված **լխ-** տարբերակով և զանազան աճականներով ձևեր են բարբառային հետևյալ բառերը՝ **լխլխալ** «խախուտ կամ թույլ ըլլալեն շարժիլ» (Ղրբ., Մշ., Պլ.), **լխլխացնել**, «շարժել, ցնցել» (Ղրբ., Շմ.), **լխլխկալ** «ամանի մեջ հեղուկը շարժելով վեր վեր ցատկել, ձիու վրա կամ կառքի մեջ նստողին վեր վեր ցատկելը ցնցումներեն նն» (Եբ., Ղրբ., Պլ., Վն.), «ծանր քելել տատանվելով երկու կողմ» (Տփ.), **լխկոտացնել** «երերցնել, շարժել» (Ախց.), **լխկոտել** «կոտրտել, ջարդ ու փշուր

¹⁴ **Հ.Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 1, Ե., 1940, էջ 120։

¹⁵ Տե՛ս **Գ.Բ.Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 294, 296, 307, 328, 329։ Բառերի այս շարքի մեջ նշվող **լաքաթա** «անամոթ աղջիկ» (Վն.) բառը կարծում ենք փոխառված է պարսկերենից. հմմտ. պարսկ. Lakhate «անառակ, փողոցային կին»։

անել» (Վն.), **լիսկոցնել** «միևնույն խոսքը կրկնել և կրկնել» (Ախց.), **լիսահաջի** «դատարկ, անմիտ խոսքեր, վայրահաջություն» (Ղրբ.) և այլն:

Լախ արմատն անմիջապես հնդեվրոպական *(s)læg- արմատին չի հանգում և **լակ**-ից բխող տարբերակ չէ, որովհետև հայերենի համար կ/խ հերթագայությունը սովորական չէ: Հ. Աճառյանն այս արմատը համարում է փոխառություն վերը նշված պարսկերեն lay-ից¹⁶:

Սակայն պարսկերենն ունի համապատասխան իմաստով մեկ այլ արմատ ևս՝ lach- (հմմտ. lacht «թույլ, ճլորած», lachlach «նիհարվուն, հյուծված»): Հետևաբար հայերեն **լախ**-ը կարող էր գալ և պարսկերեն lach- արմատից:

Պետք է նշել, որ **լախ**-ը հայերեն բարբառներում շատ մեծ տարածում ունի և չափազանց պրոդուկտիվ արմատ է, որի համար քիչ դեր խաղացած չի լինի այդ արմատի բնաձայնական հատկանիշը՝ որևէ իրի կամ հեղուկի շարժվելու, ցնցվելու ժամանակ արձակած ձայնի հնչյունական արտահայտությունը: Նկատելի է նաև, որ այդ արմատով կազմված հայերեն բառերը մեծ մասամբ պարսկերենում ձևաիմաստային ճիշտ համապատասխանություններ չունեն: Ուրեմն, եթե այն իրոք իրանական փոխառություն է, այնուամենայնիվ հայերենում ինքնուրույն զարգացում է ապրել:

Բնաձայնությունն ակնհայտ է նաև **լակ** արմատում, որն, ի դեպ, հնարավոր է, որ այդ արմատին հատուկ է եղել դեռ հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանում, քանի որ հնդեվրոպական լեզուների համապատասխան բառերը ևս ունեն

¹⁶ Հ. Աճառյան, *Հայերեն գավառական բառարան*, էջ 407:

բնաձայնական երանգ (հմմտ. շվեդ. *slōka* «թույլ կախել», հուն. *λαγγάζω* «դանդաղել, տատանվել», լատին. *laxus*, հին իռլ. *lacc* «թույլ» և այլն)¹⁷:

Բարբառներում **լակ** և **լախ** արմատների կապի գիտակցումը, անկախ նրանց ծագումից, անժխտելի է, քանի որ հաճախ դրանցով ստեղծված բառերը նույնանում են (հմմտ. **լկոսահաջ-լիտահաջ, լկլկալ-լիլխալ** և այլն): «Թույլ, անհաստատ, շարժվող» իմաստներով այս արմատները նույնանալով՝ դարձել են հնչյունային տարբերակներ:

Լակ արմատին ձևով և իմաստով մոտենում է նաև բարբառային **լակ/լանգ** հիմքը. **Լանկու-լանկու** «երկու կողմ երերալով և տատանվելով» (Ղրբ.), **լանգ տալ** «դարիվ-դարիվ տալ, վետվետել» (Թբ.), **լնգլնգալ, լնգլնգալու տալ** «օրորվել, ճռճվել, երերալ, տատանվել» (Ղրբ.), **լնկալ** «մեկ ոտքով կաղալ» (Վն.) և այլն: Այս բառերում նույնպես առկա է բնաձայնությունը:

Լանկ/լանգ հիմքին պարսկերենում համապատասխանում են *lang* «կաղ» և վերը նշված *lay* «երերացող, սասանվող, ճռճվող, լիլիկացող», որը «թույլ, փչացած ձու» իմաստով նույնանում է հայերեն **լակ** բառին: Թեպետ *lay*-ն իր իմաստներով հայերեն բառերի հետ մտնում է նույն իմաստային դաշտի մեջ, սակայն ձևով տարբերվում է: Հայերեն բառահիմքը կարող էր գալ *lang* բառից, ապա ստանալ իմաստային զարգացում: Բայց այն կարող էր ծագել նաև հնդեվրոպական արմատի *-ո- միջածանցով *(s)lōng ձևից, քանի որ հնդեվրոպական մյուս լեզուները նույնպես ունեն այդ նախաձևին հանգող բառեր՝ հին հնդկ. *langa* «կաղ», շվեդ. *slinka* «ոչ ամուր ևստել, երերալ, դողալ», հուն. *λαγγάζω* «տատանվել,

¹⁷ J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, էջ 959..

դանդադել», լատին. *langueō*, *-ēro* «թույլ լինել»¹⁸: Այս դեպքում **(s)lǝng-* ձևը հայերենում կտար **լանկ**, որը որոշ բարբառներում **ն**-ի մոտ **կ**-ի ձայնեղացմամբ դարձել է **գ** (հմմտ. **ընկեր** > **(h)ընգեր, ունկն** > **ունգ(ն), օնգնը**) **նկ** > **նգ** անցում նկատվում է նաև հայոց լեզվի զարգացման ավելի վաղ շրջանում:

Ինչպես տեսնում ենք, հնդեվրոպական լեզուների **(s)lǝg-/*(s)lǝg-* արմատին հանգող բառերն իրենց ձևախմբատային համապատասխանություններն ունեն հայերենում: Մակայն հայերեն բառերը մեծ չափով մոտենում են իրանականին: Դրանք հաճախ չեն նույնանում, որ հիմք է տալիս այդ բառերը ուշ շրջանի փոխառություններ չհամարելու, բայց միմյանցից կրած ազդեցությունը, հատկապես բովանդակության պլանում, անժխտելի է (հմմտ. պրսկ. *lāylāyijāt* «դատարկ, անիմաստ խոսակցություն», *lāngidān* «կաղալ»): Հնարավոր է, որ այն սկսվել է հայ-հնդարիական տարածքում (հմմտ. վերը նշված հայերեն և հին հնդկերեն բառերի մերձավորությունը) և շարունակվել է հայ-իրանականում, ուր հայերենի համար ճառագայթող կենտրոն են եղել, հավանաբար, հնդ-իրանական, ապա իրանական լեզուները:

Այս տեսակետից հետաքրքիր նյութ է մատուցում բարբառային **լանգառք** «լարախաղացի հավասարակշռությունը պահպանող ձող» (Երևան) բառը: Այն նման է պարսկերեն *lāngār* «1. խարիսխ. 2. լարախաղացի հավասարակշռությունը պահող ձող. 3. կշիռ» բառին: Հասկանալի է, որ պարսկերեն բառը հայերենից չի փոխառվել, քանի որ այն բազմիմաստ է և ունի բաղադրված ձևեր (հմմտ. *lāngārban* «խարսխի վրա աշխատող ծովային»): Բայց **լանգառք** բառն էլ բացատրելի է հայերենի բառակազմական

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

մակարդակում: Այն կարելի է ստուգաբանել որպես **լանգ** և **սոք** բառերից կազմված բարդություն: **Սոք** բաղադրիչը զուտ հայկական կազմություն ունի և նշանակում է «վերցնելը, առնելը»: Հետևաբար լանգառք նշանակում է «լանգը՝ տատանումը առնելը, վերցնելը», այսինքն՝ «տատանումը, երերալը կանխող (ձող)» (իմաստի համար հմմտ. **սոաջն առնել** «ինչ-որ բանի ընթացքը կասեցնել՝ կանխել», **վախն առնել** «վախը վերացնել», **ցավն առնել** «ցավը վերցնել՝ կանխել» բարբառային արտահայտությունները): Ուրեմն հնարավոր է, որ հայերեն բառը կրել է պարսկերենի ազդեցությունը, բայց այն հայերենի հողի վրա կազմված ձև է:

Հայերեն **լանգառք**-ը պարսկերեն lāngār բառի պատճենումը չէ: Այստեղ պարսկերեն lāng-ը օգտագործված է իր երկրորդ իմաստով՝ «կանգնելը, համելը», որ երևում է նաև lāngār բառի մյուս նշանակություններից: Եթե հայերեն բառն իրոք կազմվել է պարսկերենի ազդեցությամբ, ապա այն, այսպես կոչված, հայացվել է՝ lāng-ը գիտակցվել է որպես **լանգ** (տատանում, երերում), որը տվյալ դեպքում կարող էր զուգորդվել **սոք** (վերցնել, վերացնել) բառի հետ: Հնարավոր է նաև, որ հայերեն բառը կազմվել է պարսկերենից անկախ: Այդ դեպքում նրանց նմանությունը պատահական է:

Վերը նշված երրորդ իմաստային խմբի մեջ մտնող բառեր են մատենագրությամբ ավանդված **լկնիլ** «լրբանալ, լպրշիլ, համարձակիլ, լրբաբար հանդգնիլ», **լկնութիւն** «լրբություն», որոնք ձևաիմաստային մերձավորություն են ցուցաբերում Գ. Ջահուկյանի կողմից *(s)ləg- արմատին հանգեցվող բարբառային համապատասխան բառերին:

Հ. Աճառյանը ճիշտ է, երբ մերժում է **լկնիլ** բառը հունարենից (λαγνέω «զեղխիլ, լրբանալ») անմիջական փոխառություն

համարելու փորձերը: Նա մերժում է նաև Վալդեի կողմից հայերեն բառը հին հնդկերեն *lañjikā* «անառակ» բառի հետ որևէ կապի դիտումը, քանի որ «իբրև բնիկ կապասեինք *լծնիլ*, իբրև փոխառեալ՝ *լազնիլ*»¹⁹:

Պարզ է, որ Հ. Աճառյանը հին հնդկերեն բառի հնդեվրոպական լինելու դեպքում նրա համար ենթադրում է հետնալեզվային քմային բաղաձայնով նախաձև: Բայց արիական լեզուներում ոչ միշտ է կիսաշփական բաղաձայնը ծագում հնդեվրոպական հետնալեզվային քմային բաղաձայնից, քանի որ հետնալեզվային բաղաձայնների քմայնացում (առաջին շարքի ձայնավորներից առաջ) այդ լեզուներում տեղի է ունեցել նաև ավելի ուշ՝ հնդեվրոպական լեզվաընդհանրության շրջանից հետո: Այնպես որ հայերեն և հին հնդկերեն բառերի նմանությունը կարող էր սկիզբ առնել հնդեվրոպական շրջանից:

Անկախ դրանից հայերեն *լկնիլ* և հնդեվրոպական մյուս լեզուների համապատասխան բառերի ձևիմաստային նմանությունը մեզ կարող է հիմք տալ այդ բառը ևս հանգեցնելու հնդեվրոպական **(s)lēg-/*(s)lǝg-* արմատին, օրինակ՝ հուն. *λάγνος* «վաճառ, ցանկասեր», շվեդ. *slåk* «թեթևամիտ կին»: Նրա համար պետք է կանխադրել արմատի երկար ձայնավորով տարբերակ՝ **(s)lēg-* > **լիկ*, որի շեշտագուրկ *ի* հնչյունի սղումով կազմվել է *լկնիլ* բայը:

Հնարավոր է, որ վերը նշված բարբառային *լկստվել* բառում նույնպես առկա է *լիկ*- արմատը:

Ստուգաբանվող բառերի արմատը գտնում ենք նաև ոչ հնդեվրոպական՝ թուրքական (հմմտ. թուրք. *lenk* «կաղ») և

¹⁹ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, էջ 289:

սեմական (հմմտ. արար. lanqlaqa «թափահարել, ճոճել, ցնցել») լեզուներում, որոնցով կազմված բառերի և նրանց համապատասխանող իրանական կամ հնդեվրոպական այլ լեզուների բառերի նմանությունը ոչ միշտ կարելի է բացատրել ուշ շրջանի միմյանցից կատարած փոխառություններով: Այդ արմատի այսքան լայն տարածումը, հնարավոր է, պայմանավորված է նրա բնաձայնական բնույթով: Բայց այդ տիպի արմատները նույնպես լեզուներում կարող են ունենալ մեկ ընդհանուր սկիզբ: Ուրեմն կարելի է ենթադրել, որ *(s)lēg-/*(s)lǝg- արմատը գալիս է, այսպես կոչված, նոստրատիկ լեզվաընդհանրության շրջանից²⁰:

*«Բանբեր Երևանի համալսարանի»
(հասարակական գիտություններ),
1983, N 3:*

²⁰ **В.М. Иллич-Свитыч**, *Опыт сравнения ностратических языков* (Москва, 1971-1976)
գրքում այդպիսի արմատ չի առանձնացվում:

**ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԱՂՈՒՍՆՔ»
ՏԵՂԱՆՎԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Աղուանք անվան ծագման վերաբերյալ իշխում է այն տեսակետը, ըստ որի հայերեն բառը հունահռոմեական Albania տերմինի փոխառյալ ձևն է: Սակայն այսպիսի վարկածը մանրամասն ստուգաբանական վերլուծության վրա չի հենվում:

Ինչպես հայտնի է, նախապատմական շրջանի հայերենում միջձայնավորային (V-V), բաղաձայնից հետո ձայնավորից առաջ (C-V), ձայնավորից հետո բաղաձայնից առաջ (V-C) տեղի է ունեցել *p*, *b>ɫ* (վ, ու) հնչյունափոխություն: Բայց երբ այդ բաղաձայններին նախորդել են *ւ*, *ն*, *ք*, *ղ* ձայնորդներ, օրենքը չի գործել, այսինքն՝ *p*, *b>ɫ* (վ, ու) անցում տեղի չի ունեցել, այսպես՝ *սիրտ-սրտիւ*, *գործ-գործուլ*, բայց *հայր-հարբ*, *գառն-գառամբ* (այստեղ *հ.*-է. գործիականի *-bhis վերջավորությունը դիրքից կախված տվել է *ւ/լ* կամ *ք*), *ողբ* (<*olbh-o-), *եղբայր* (<*bhratēr, նախապես *r>ղ)¹: Հնչյունական այս օրենքը գործառել է մ.թ.ա. VI դարից առաջ, քանի որ մ.թ.ա. VI դարից սկսվող իրանական փոխառություններում, օրինակ, *ք*-ի կամ *բ*-ի նման անցնում հայերենում չի դիտվում. այսպես՝ *սպարապետ*<հին պրսկ. spādapati, *սպարանք*< հին պրսկ. apadāna, *սպաշաւ*<ավես. apašav, *հյպտակ*< ավես. hupāta²:

¹ Տե՛ս **Ա.Մեյե**, *Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ*, Ժնև, 1988, էջ 21: **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. VI, Ե., 1971, էջ 510, 537: **Г.Б.Джаукян**, *Сравнительная грамматика армянского языка*, Е., 1982, с. 72:

² **Հ.Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 1940, էջ 240-292:

Հետևաբար հունահռոմեական Albania անվան b-ն հայերենում *ml*, որը բաղաձայնից հետո, ձայնավորից առաջ *ι* հնչույթի տարբերակն է, դառնալ չէր կարող:

Կարելի էր ենթադրել նաև, որ հայերեն տերմինը հունարենից փոխառվել է այն ժամանակ, երբ վերջինում *β*-ն ձեռք էր բերել շփական *v* (կամ *w*) արտասանություն, այսինքն՝ բյուզանդական շրջանում: Սակայն ընդունված տեսակետի համաձայն *Αλβανία* տեղանունը մ.թ.ա. IV դարում հույներին արդեն հայտնի է եղել³: Իսկ Մովսես Խորենացին նշում է, որ ըստ ավանդության *Աղուանք* տեղանունը, որը տրվել է Հայաստանի հյուսիս արևելյան կողմի նահանգին, ստեղծվել է Հայկի ժառանգորդներից մեկի՝ Սիսակի *Աղու* մականվան հիման վրա, որ նա ստացել էր իր բարի ու մեղմ բնավորության շնորհիվ, այսինքն՝ վաղնջական ժամանակներում⁴:

Եթե անգամ հայերը իրենց հարևան երկրի՝ Կովկասյան Ալբանիայի⁵ (մի կողմ թողնենք հայկական Աղուանքի հարցը) անունը փոխառեին հունարենից, ապա ավելի հավանական է, որ այն կվերցնեին հին դարերում և ոչ բյուզանդական շրջանում, երբ այդ երկիրը և Արևելյան Հայաստանը գտնվում էին պարսկական տիրապետության տակ, հետևաբար նաև պարսկերենի ազդեցության ոլորտում: Ի դեպ, Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» մեջ գտանք հունարենից փոխառած ընդամենը երկու բառ՝ *γαίωπα*, *υσιωίν<σαβανον*, որոնցում, այն էլ միջձայնավորային

³ См. К.В.Тревер, *Очерки по истории и культуре Кавказской Албании*, М.-Л., 1959, с. 54; А.Л.Акопян, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987, с. 9:

⁴ Մովսես Խորենացի, *Պատմություն Հայոց*, Ե., 1968, էջ 113:

⁵ Հայագիտության մեջ Կովկասյան Ալբանիա վարչական միավորն ընկալվում է անտիկ հունա հռոմեական պատմիչների նշած սահմաններով:

դիրքում, β-ն հավանաբար շփական արտասանություն է ունեցել բյուզանդական հունարենում (գրքային փոխառությունները, որոնք որպես օտարաբանություններ հայոց լեզվում տեղ չեն գտել, նկատի չենք ունենում)⁶:

Բացի այդ, *Աղուանք* անունը փոխառյալ համարելու դեպքում ինչպե՞ս բացատրել այն վայրերի այդ նույն ձևով կոչվելը, որոնք ոչ միայն Կովկասյան Ալբանիայի, այլև Արցախի և Ուտիքի հետ ոչ մի կապ չունեն: Այսպես, *Աղուանք*՝ 1. գյուղ Արևմտյան Հայաստանի Մուշի շրջանում, 2. եկեղեցի Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառում, *Աղուանիս*՝ գյուղ Արևմտյան Հայաստանի Ակնի շրջանում, *Աղուանից բերդ*՝ բերդ Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Բզնունիք գավառում, որի մասին, ի դեպ, հիշում է Թովմա Մեծփեցին 871 թ. դեպքերի առնչությամբ և այլն⁷: Վերջին երկուսը *Աղուանք*-ի հոլովված ձևերն են (հոգն. հայց. և սեռ.-տր.): Անհավանական է, որ այս տեղանունների հիմքում նույնպես ընկած լինի հունահռոմեական Albania ձևը:

Աղուանք բառը հստակորեն բաժանվում է հետևյալ բաղադրիչների՝ *աղու*- հիմքի և *-ան*, *-ք* ածանցների (հմմտ. *տեղանք*, *կողմանք*):

Ուշադրություն դարձնելով հայկական հին տեղանունների վրա՝ դժվար չէ նկատել, որ բազմաթիվ են *աղու*- հիմքով կազմված ձևերը: Այսպես, *Աղու*՝ 1. գյուղ Սյունիք աշխարհի Ճահուկ գավառում, 2. գյուղ Տուրուբերան աշխարհի Աղիովիտ գավառում, 3. լեռնագագաթ ծաղկանց լեռներում, 4. լեռնանցք ծաղկանց

⁶ **Հ.Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, էջ 347:

⁷ Տե՛ս **Թ.Խ.Հակոբյան**, **Ստ. Մ.Մելիք-Բախշյան**, **Հ.Խ.Բարսեղյան**, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. I, Երևան, 1986, **Ս. Էփրիկյան**, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան*, հ. 1, Վենետիկ, 1903-1905, էջ 109:

լեռների հարավ արևմտյան հատվածում, Արճեշ-Մանազկերտ խճուղու վրա, *Աղուէ՝* 1. գավառ Ուտիք աշխարհում, 2. շրջան Գուգարք աշխարհի Տաշիրք գավառում, 3. գետ Արաքսի ավազանում, *Աղուշեն՝* գյուղ Էրզրումի նահանգի Թորթումի գավառում, *Աղուսարք՝* լեռնախումբ Գեղամա լեռների կենտրոնական մասում, *Աղուէն՝* բնակավայր (արքայական ամառանոց) Ուտիք աշխարհում, *Աղուոյ Վանք* կամ *Աղվանք՝* գյուղ Սյունիք աշխարհի Արևիք գավառում, *Աղուոյ ջրիկ* կամ *Աղոջրիկ՝* գյուղ Սյունիք աշխարհի Հաբանդ գավառում և այլն⁸:

Գրաբարում *աղու* նշանակել է «համեղ, քաղցր, անուշ» (փոխաբերաբար նաև՝ «կեղծավոր, նենգ»)՝: Այս բառը բաղկացած է *աղ* (<հնդեվր. *sald-) արմատից և հին շրջանում գործառություն ունեցող *ու* ածանցից (հմմտ. *կիծ-կծու, հատ-հատու*)¹⁰: Հնդեվրոպական արմատից բաղադրված ձևերը այսպիսի իմաստներ են արտահայտում հատկապես բալթիկ-սլավոնական լեզուներում՝ լիտվ. saldūs, լատվ. salos, հին սլավ. sladoкъ «քաղցր, անուշ»¹¹: Այստեղից էլ այդ բառի նաև «գեղեցիկ, լավ, սիրուն, փափուկ, մեղմ» և այլն նշանակությունները՝ *աղուշ-մաղուշ* «սիրունիկ», *աղուոր* «լավ, գեղեցիկ», *աղէկ* (<*աղու-եակ) «լավ»,

⁸ Sté u Թ.Խ.Հակոբյան և այլք, նշվ. աշխ., Ս. Էփրիկյան, նշվ. աշխ., էջ 113, 298: Ղ.Ալիշան, *Միսական*, Վենետիկ, 1893, էջ 27, 255: Մովսես Կադանկատուացի, *Պատմություն Աղուանից աշխարհի*, Թիֆլիս, 1913, էջ 97, 98, 348:

⁹ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Երևան, 1979:

¹⁰ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1971: Բարբառներում առկա են նաև այս բառի «կծու, դառը» իմաստները, որ առաջացել են, հավանաբար, չափից ավելի աղի համի տեղի վրա լինելու հետևանքով: Այսինքն՝ հայերենում տեղի է ունեցել *աղու* բառի նշանակությունների հակադիր բևեռացում:

¹¹ J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch, Bern und München*, 1965:

աղուամագ «բարակ և նուրբ մագ», *աղեբար* «անուշությամբ, հանդարտ կերպով»¹²:

Հետևաբար, կարելի է եզարակացնել, որ և՛ Աղուանք, և՛ վերը նշած տեղանունների հիմքում ընկած է *աղ* արմատից ծագող *աղու* ածականը, որը փափուկ բնություն, մեղմ կլիմա, բարեբեր հողեր ունեցող շրջանների համար գործածվելով որպես մակդիր՝ դարձել է տեղանուն կամ տեղանվան բաղադրիչ մաս¹³: Այս դեպքում բացատրելի է դառնում Հայաստանում տարբեր վայրերը *աղու* հիմքով կազմված ձևերով կոչելը:

Ինչպես հայտնի է, հենց այդպիսի բնություն են ունեցել Հայաստանի Ուտիք և Արցախ նահանգները: Ինչ վերաբերում է Կովկասյան Ալբանիային, ապա ուշագրավ է այն փաստը, որ հատկապես իր հարթավայրային և նախալեռնային շրջաններով այդ երկիրը նույնպես աչքի է ընկել վերը նշված բնակլիմայական հատկանիշներով, որը բազմիցս նշում են նաև օտար հեղինակները: Այն Անդրկովկասի մյուս երկրներից տարբերվել է ոռոգման սխստեմի շնորհիվ իր հարթավայրի բերրի հողերից ստացվող առատ բերքով¹⁴:

Ուստի հնարավոր է, որ հնագույն ժամանակներում հայերը Աղուանք են կոչել ոչ միայն Կուր գետի աջափնյա, այլ նաև

¹² **Զ.Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1: Կարծում ենք ամբողջ Հայաստանով տարածված *Աղվերան* տեղանունը նույնպես ունի *աղու*- հիմք՝ **Աղու-արան>Աղուերան*՝ վերին բարձրացման *ու* ձայնավորի մոտ *ա>ե* հնչյունափոխությամբ: Դրա վկայությունն է այն, որ այդ անվամբ բնակավայրերը հիմնականում ունեն լեռնային, անտառներով ու մարգագետիններով շրջապատված, բնականաբար, գեղատեսիլ դիրք, որը հարմար է ամառանոցի համար, այսինքն՝ ամառը, զոռնե, այդտեղ կլիման մեղմ է լինում (Տե՛ս **Թ.Խ.Հակոբյան** և այլք, նշվ. աշխ.): Հայերի մեջ տարածված *Աղվան* անձնանվան հիմքում նույնպես ընկած է *աղու* բառը:

¹³ Տե՛ս նաև **В.Н.Хачатрян**, *Албания и Арцах с VI века до н.э. до XIII века (в печати)*.

¹⁴ Տե՛ս **К.В.Тревер**, *Указ. соч.*, с. 67-73:

ձախափնյա ավագանը, որը ծածկված էր բազմաթիվ վտակներով և ոռոգման ցանցով ոռոգվող բարեբեր հողերով, մարգագետիններով ու անտառներով և ուներ մեղմ կլիմա: Մովսես Խորենացու մոտ Կուրի հովիտը կոչվում է Աղուանից դաշտ¹⁵: Այդ հովիտը իր ձախափնյա և աջափնյա մասերով մտել է տարբեր վարչական միավորների մեջ՝ Կովկասյան Ալբանիայի և Հայաստանի: Պետք է ենթադրել, որ աստիճանաբար այդ տեղանունը փոխվել է վարչականի՝ Հայաստանի հյուսիս արևելյան նահանգները, ապա նաև Կուրից ձախ գտնվող, ընդհանուր անվանում չունեցող կովկասյան ցեղերի երկիրը կոչելու համար: Բնականաբար, մեզանում այդ անունն ավելի հաճախ գործածվել է հայկական համապատասխան նահանգները (Հայոց արևելից կողմանք) մեկ բառով նշանակելու համար: Մովսես Կադանկատվացու (Դասխուրանցու) «Աղուանից պատմությունը», օրինակ, մեծ մասամբ վերաբերում է Կուրի աջափնյա հայկական նահանգներին¹⁶: Երբ ձախափնյա Աղուանքը սկսել է հանդես գալ որպես առանձին պետություն, նրա կազմի մեջ մտել են այնպիսի ցեղային միավորների տերիտորիաները, որոնք մինչ այդ Աղուանք աշխարհագրական վայրի մեջ չեն եղել: Ուշագրավ է, որ այդ երկրի բնակիչներն իրենց աղուաններ (ալբաններ) ընդհանուր անունով չեն կոչել: Այդպես նրանց անվանել են ուրիշները: Եվ երբ III-IV դարերում, ասենք, Կովկասյան Ալբանիայից դուրս է եկել նրա արևելյան մասը, վերջինիս բնակիչները պատմագրական աղբյուրներում այլևս որպես աղուաններ (ալբաններ) կամ աղուանների հետ կապ ունեցող ցեղեր չեն հիշվում¹⁷:

¹⁵ Մովսես Խորենացի, էջ 137:

¹⁶ А.А.Акопян, Указ. соч., էջ 259:

¹⁷ Նույն տեղում, էջ 106:

Կովկասյան Ալբանիային հայերենում Ադուանք համապատասխանությունը կարելի է բացատրել նաև մեկ այլ վարկածային տարբերակով:

Անտիկ պատմիչների մոտ հանդիպում ենք Կովկասյան Ալբանիայում ապրող *Lup-on-es*, *Lup-en-ii* ցեղանունը, որին հայերենում համապատասխանում է *լիֆնիք* ձևը (Ագաթանգեղոսի հունական տեքստում՝ Λιφίνιοι): Ս. Երեմյանը գտնում է, որ այդ ցեղանունից է ծագում հայերեն *Ադուան* ձևը, որը համարժեք է հունահռոմեական *Alban* ձևին՝ *Aluan/Alban=Laban/Leḡni-q*, *Liḡinoi*, *Lupenii*, հետևաբար՝ *Aluan/Alban→Aran*, *Լօփ-in/Laban→Ran*¹⁸: Այս հետաքրքիր դիտողությունը, սակայն, մանրամասն ստուգաբանական վերլուծությամբ չի ներկայացվում: Այնքան էլ պարզ չէ, թե որն է որից ծագել և զարգացման ինչ ընթացք է ապրել:

Իսկապես, հայերենը *Lupon(es)*, *Lupen(ii)* ցեղանուններից *on/en* մասը *-ան* ածանցով փոխարինելով՝ կարող էր կազմել *ադու-ան* ձև: Նախագրաբարյան շրջանում օտար լեզուներից փոխառյալ ձևերում *l-*-ին հայերենում համապատասխանում էր կոշտ *l* (ղ)¹⁹, որը բառասկզբում ստանում էր նախահար *ա* (կամ *ե*) ձայնավոր (գրաբարում հնչյունական այս օրենքը արդեն խախտված էր): Միջձայնավորային *p-*-ն, վերածվելով *ւ-*-ի, կարող էր ձուլվել նախորդ *ու-*-ին՝ *lupon->*aḡupan>ադուան*: Այս վերջին հնչյունական օրենքի *p>լ/վ(ու)* գործառնական ժամանակագրությունը նկատի ունենալով՝ հիշյալ եղանակով *ադուան* ձևի ծագումը հնարավոր է՝ մ.թ.ա. VI դարից առաջ: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ

¹⁸ С.Т.Еремян, Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараза-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу.— Записки Института Востоковедения Академии наук СССР, 1939, № 7, էջ 148-149:

¹⁹ Տե՛ս Մ.Աղաբեկյան, Հայերենի համեմատական հնչյունաբանության հարցեր. — Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, հ. 1, Ե., 1990, էջ 76-99:

Կովկասյան Ալբանիայի այս ձևով առաջացած հայերեն *Աղուանք* անվանումը, որ նշանակել է նաև համապատասխան անունով ցեղ (կամ այդ հավաքական անունով ցեղեր) ունեցող երկիր, նույնացել է Կուրից հարավ գտնվող Հայաստանի հյուսիս արևելյան նահանգների հայկական (*sald>աղ-ու) ծագումով *Աղուանք* սկզբում՝ աշխարհագրական, ապա վարչական անվան հետ:

Այս դեպքում չի բացառվում, որ հունահռոմեական Albania տեղանունը այդ հնագույն շրջանում, նախքան p>ւ անցումը կառաջանար հայերեն *Alupan(k') ձևից, քանի որ, ի տարբերություն այդ լեզուների, հայերենին էր հատուկ փոխառություններում բառասկզբի օտար l-ից առաջ ա-ի հավելումը: Ի դեպ, հին հունարենը այն կարող էր փոխառել նաև հայերենում p>ւ (ու, վ) հնչյունական անցումից, այսինքն՝ մ.թ.ա. VII-VI դդ. հետո ևս, հենց *Աղուանք* ձևից: Բանն այն է, որ հին հունարենը, չունենալով շրթնատամնային v կամ երկշրթնային w հնչյունները՝ հայերեն – ուա-ն պետք է փոխարիներ -ονα- կամ -βα- կապակցություններով: Տվյալ դեպքում հույները կարող էին նախընտրել վերջինը, քանի որ առաջինը նրանց լեզվին բնորոշ չէր: Ապա 'Αλβαν- հիմքին ավելացրել են երկիր ցույց տվող -ια վերջածանցը, ինչպես սովորաբար վարվում էին՝ օտար տեղանունները հունացնելով: Իհարկե, *Alupan(k')>Albania ('Αλβανία) անցման համար որոշակի դեր կարող էր կատարել լատիներների (նաև հույների) համար այդ բառի հնչման ծանոթ, հարազատ լինելը, քանի որ Alb(-an)- հիմքով տեղանուններ առկա էին հենց լատիներների երկրում (Alba Longa «հնագույն քաղաք Լատիումում», Albānus «նշված քաղաքի բնակիչ», Mons Albanus «լեռ Լատիումում», Albāna, ae «դեպի

Կապուա տանող ճանապարհի անվանումը» և այլն)²⁰: Այո, ավելի հավանական է, որ հունահռոմեական ճանապարհորդները, նվաճողները, պատմիչները հեռավոր այլ մայրցամաքում գտնվող երկրի անունը փոխառեին նրա անմիջական դարավոր հարևանից, քան վերջիններս՝ այդ օտարներից:

Lupon/en-> *աղուան* անցման հավանականությանը խանգարող հանգամանք կարող է թվալ այն, որ մեր թվարկության V դարից սկսվող հայ պատմագրության մեջ Կուրի ձախափնյա երկրի վերը նշված ցեղանունը հիշատակվում է *լիֆնիք* ձևով: Հավանաբար հայերն այն փոխառել են երկրորդ անգամ, երբ բառակցքի օտար 1-ն արդեն կարող էին արտասանել *լ* (ոչ *ղ*) (հմմտ. օրինակ, իրան. rang> գրաբ. *երանգ*, ուշ բրբ. *ռանգ*): Դա, պետք է ենթադրել, տեղի է ունեցել նախաշեշտ դիրքում *ու* և *ի* ձայնավորների սղման օրենքի գործառնման ժամանակ, այսինքն՝ գրաբարից ամենաշատը մի քանի հարյուրամյակ առաջ²¹: Իսկ հույներն ու հռոմեացիները Alban- հիմքը օգտագործելով այդ երկրի բնիկների համար որպես հավաքական անուն, ինչպես հայերն էին վարվում, Lupon/en(es) անվանումը պահպանել են տվյալ կոնկրետ ցեղը կոչելու համար:

Պարսկաարաբական մատենագրության մեջ *Աղուանք* (Albania) անվանը համապատասխանում է *Արան/Առան* ձևը, որին Յու. Յուսիֆովը վերագրում է կովկասյան ծագում: Ելնելով այն բանից, որ ադրբեջանական ժողովրդախոսակցական լեզվում առկա է մյուս թյուրքական լեզուներում բացակայող *aran*

²⁰ St' u *И.Х.Дворецкий, Латинско-русский словарь*, М., 1976, էջ 53:

²¹ Հայերենի գրեթե բոլոր հնագույն փոխառությունները ենթարկվում են այս օրենքին, իսկ գրաբարում էլ այն լայն ընդգրկում ունի, բացառությունները շատ քիչ են: Հետևաբար այդ օրենքը առաջացել է գրաբարի գործառնման շրջանից ոչ շատ հին ժամանակներում:

«հարթավայր, տաք տեղ» նշանակող բառը, նա եզրակացնում է, որ սկզբնապես Աղուանքի հարթավայրերը բնիկների լեզվով կոչվել են *aran*, որն ընդհանրաձայնալով՝ աստիճանաբար սկսել է նշանակել նաև ամբողջ երկիրը: Նա այդ վարկածը աշխատում է հիմնավորել կովկասյան լեզուների տվյալներով: Այսպես՝ լակերենն ունի *ar* «հարթավայր» նշանակությամբ բառ, որը, ինչպես երևում է, մյուս կովկասյան լեզուներում բացակայում է: Ինչ վերաբերում է *-an* բաղադրիչին, ապա դարգիներենում հանդիպում ենք այդպիսի ածականակերտ ածանցի, որն ավելանալով տեղանուններին՝ ցույց է տալիս հայրենիք կամ բնակավայր: Իսկ խինալուգերենում կա «տաք» նշանակությամբ *aran* բառ²²:

Եթե անգամ ընդունենք *Aran* տեղանվան նշանակության և բաղադրիչների տարբեր լեզուների տվյալներից վերցված ստուգաբանական մեկնաբանությունը, որ տալիս է Յուսիֆովը, ապա ինչպե՞ս բացատրել այն փաստը, որ այդ երկիրը (կամ համապատասխան հարթավայրը) կովկասյան տեղաբնիկները իրենց իսկ բառով՝ *Արան* ձևով չեն կոչում (նրանց կողմից այն *Aran* կոչելու վերաբերյալ հիշատակում չկա նաև անտիկ և այլ աղբյուրներում):

Ի դեպ, հայերեն բարբառներում նույնպես առկա է «տաք հարթավայր» նշանակությամբ *արան* ձև: Բայց մենք ևս հակված ենք կարծելու, որ այն ամենայն հավանականությամբ տվյալ վայրի՝ որպես տաք, բարեբեր հարթավայր գիտակցվելու հետևանքով առաջացած *Արան* տեղանվան հասարակացման արդյունք է (հմմտ. մեզանում *Միբիր* տեղանվան որպես ցուրտ

²² Ю.Б. Юсифов, *О наименованиях "Албания" и "Аран"*. –Известия АН АзССР (серия обществ. Наук), 1961, № 10, с. 25-27:

վայր նշանակությամբ գործածվելը)²³, որը կարող էր տեղի ունենալ հատկապես նախքան այդ աշխարհագրական անվան վարչական առումով օգտագործվելը:

Արան/Առան ձևը ամենայն հավանականությամբ *Աղուանք*-ի պարսկերեն համարժեքն է: Ինչպես Յակուտ ալ-Համավին է նշում, այն հայկական տվյալ նահանգի պարսկերեն անվանումն է²⁴: Ուշագրավ է, որ ըստ Մովսես Խորենացու՝ պարթևացի, այսինքն՝ իրանական ծագում ունեցող հայոց Վաղարշակ թագավորը հայկական Աղուանքի կուսակալ է նշանակում *Միսակ-Աղուի* տոհմին պատկանող *Առանին*²⁵: Այստեղ ակնհայտ է հայերեն *Աղուանք* (ըստ Խորենացու՝ Միսակի Աղու մականունից ծագող) և իրանական (պարսկերեն) *Առան* անվանումների համապատասխանությունը: Եվ այդ ժամանակներից սկսած Հայոց Արևելից կողմանց կամ Առան աշխարհի վրա իշխող հարստությունը, պարսկերենի ազդեցությամբ, կոչվել է Առանշահիկ²⁶: Բացի այդ, աչք է զարնում հայերեն *Աղուան(ք)* և պարսկերեն *Aran* բառերի ձևային նմանությունը: Արդ, ո՞ր լեզուն է մյուսից ազդվել:

Ինչպես հայտնի է, հնդիրանական լեզուներում հնագույն շրջանում տեղի է ունեցել l>r հնչյունափոխություն, որը գործառնել է բավական հետևողականանորեն և երկար ժամանակ: Հնդեվրոպական նյութը երկու խմբի լեզուներում էլ բացառություններ չունի: Հին իրանական լեզվի (նախալեզվի) համար l հնչյուն չի

²³ Տե՛ս Բ.Ա.Ուլուբաբյան, *Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության*, Ե., 1981, էջ 52:

²⁴ Տե՛ս *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ.Նալբանդյան*, Ե., 1965, էջ 12:

²⁵ Մովսես Խորենացի, էջ 113:

²⁶ Բ.Ա.Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 129:

վերականգնվում²⁷: Մ.թ.ա. VI-IV դդ. հին պարսկական արձանագրություններում, որտեղ օգտագործված են սեպագրեր, շատ քիչ դեպքերում, այն էլ փոխառություններում, կարելի է հանդիպել 1 նշանին²⁸: «Ավեստայի» մ.թ.ա. VII-VI դդ. ստեղծված տեքստերը միջին դարերում գրի առնելու համար հատուկ հորինված այբուբենում 1 նշանը բացակայում է²⁹: Հին իրանական լեզուներին բնորոշ չէ նաև սա երկրարբառը (կա հակառակը՝ *au, ao*)³⁰: Հետևաբար հայերեն *Աղուանք* տեղանունը իրանական լեզուներում (հին պարսկերենում) փոխառվելու դեպքում պետք է հնչեր *Ar(v)an* ձևով: Հայերենից փոխառած *Aran* տեղանունով, որը, իհարկե, հիմնականում հայկական Արցախ և Ուտիք նահանգներն է նշանակել, պարսիկները մարզպանության ժամանակ կոչեցին ամբողջ մարզպանությունը³¹, քանի որ Կուրի ձախափնյակն էլ հայերին (նաև պարսիկներին) նույն անունով էր հայտնի:

Արաբները, պետք է ենթադրել, այդ տեղանունը հետագայում փոխառել են պարսկերենից: Արաբ մատենագրության մեջ հանդիպում է նաև *Alran* ձևը, որի *al-*-ը, ինչպես Յու. Յուսիֆովն է նշում, ոչ թե առանձին հոդ է, այլ տվյալ բառի անբաժանելի բաղադրիչը³²: Սակայն նրա առաջարկած ստուգաբանությունը համոզիչ չէ, որի մասին կխոսենք ստորև:

Որոշ գիտնականներ հունահռոմեական *Albania* տեղանվան հիմքում դնում են ավարացիների *halbi* ցեղանունը: Վ. Գեորգիևը,

²⁷ *Опыт историко-типологического исследования иранских языков*, Т. I, М., 1975, с. 49.

²⁸ Նույն տեղում, էջ 51:

²⁹ *Основы иранского языкознания. Древнеиранские языки*. М., 1979, с. 144; **С.Н.Соколов**, *Авестийский язык*, М., 1961, с. 24.

³⁰ *Основы иранского языкознания*. с. 146, 243.

³¹ **А.А.Акопян**, *Указ. соч.*, с. 5, տե՛ս նաև *Нагорный Карабах*, Е., 1988, с. 10-11:

³² **Ю.Б. Юсифов**, *Указ. соч.*, с. 29.

օրինակ, գրում է. «...լատինական Albani (և Albania) անվանումը... իրենից ներկայացնում է ավարացիների ռոմանացված անդրաձին halbi անունը, որ պահպանվել է նրանց հարևան կարանտանների մոտ»³³: Իսկ Յ. Յուսիֆովը մյուսների ասածին ավելացնում է, այսպես ասած, մեկ այլ փաստ ևս: Ըստ նրա «այն, որ «Ալբան» անվան մեջ առկա է hal ցեղանունը, հաստատում է Հեթում Պատմիչի օգտագործած *հալոյէն* ձևը, որը արաբների կողմից գրավված Հայաստանի Հալոյէն գավառի անունն է»: «Եվ քանի որ Հեթումը, նշելով Անդրկովկասի մյուս ժողովուրդներին, ոչ մի բառով չի հիշում ալբանների մասին, որոնք հայերի և վրացիների հետ միասին իրենց գիրն ունեին, ապա, ինչպես ճիշտ ենթադրում է Ա. Գ. Շանիձեն, halojen-ում պետք է տեսնել ալբանների մարզի (область) անունը: Հետևաբար՝ ժողովրդական խոսքում ալբանների մարզը կոչվել է halojen»: Նա գտնում է, որ halbi, *(h)alban, halojen ձևերի հիմքում ընկած է hal ցեղանունը: Այսպիսով, մնում է այդ բառերի hal-ին հետևող մասերի ստուգաբանության հարցը, որոնք Յ. Յուսիֆովը դարձյալ հանգեցնում է կովկասյան լեզուներին: Անդիա-դիդոյական լեզուներում առկա են -j, -bi, -ba հոգնակերտ ածանցներ: Դարգիներենն ունի ածականակերտ-an ածանց, իսկ ակուշիներենը՝ -en, -n: Ինչ վերաբերում է -o-ին (halojen), ապա Յ. Յուսիֆովն այն հողակապ է համարում: Այդպիսով վերը նշված ձևերը, ըստ նրա, պետք է ըմբռնել որպես hal ցեղին պատկանող, այսինքն՝ hal-երի երկիր: Հեղինակը գտնում է, որ այս նույն hal ցեղանունն է ընկած նաև արաբական alran և հայերեն *Աղռան* ձևերի հիմքում: Ընդ որում, վերջինը փոխառություն է համարում

³³ **В.Георгиев**, *Исследования по сравнительно-историческому языкознанию*, М., 1958, с. 178.

հունահռոմեական Albania-ից, իսկ ինչ վերաբերում է alran-ի կոլկասյան լեզուներում չհանդիպող ra բաղադրիչին, ապա այն, ըստ հեղինակի, ba-ի (alban) համաբանությամբ կարելի է համարել հոգնակերտ ածանց³⁴:

Եթե, իրոք, արաբական հիշյալ բառի հիմքում ընկած է այսպես կոչված՝ hal ցեղանունը, ապա անբացատրելի է հ-ի կորուստը այն դեպքում, երբ արաբերենն այդ հնչյունն ուներ, իսկ ra-ի նշված ձևով բացատրությունը, ինչպես տեսնում ենք, փաստերի վրա չի հենվում: Կարծում ենք, որ այն պարսկերեն Aran և հայերեն Aħan(k) ձևերի արտասանական միախառնման արդյունք է: Հայերենում Albania>Աղուանք անցման մասին վերն արդեն ասվեց: Ավելացնենք, որ Աղուանք ձևը halban-ից ծագել նույնպես չէր կարող՝ դարձյալ տվյալ դեպքում b>ու անցման անհնարինության, բառակցքում հ-ի անկման պատճառով:

Հայ պատմիչ Հեթումը, իրոք, իր «Թաթարաց պատմության» մեջ երկու անգամ նշում է Հալոյէն ձևը: «Ազգք բնակեալք յաշխարհին Հայոց զանազան անուամբք կոչին ըստ գաւառաց և ըստ տեղեաց, յորս կանն և են հեծեալ և հետևակ քաջ պատերազմողք զինուք, ձիովք և զգետտուք նմանողք են սովորութեան և ձևոց թաթարաց, որ են ընդ նոցա տերութեամբ յերկար ժամանակէ հետէ: Ունին նշանագիրս արամեանս, և այլս ևս՝ որ ասին Հալոյցէն (Հայոց կամ Աղուանից)»³⁵: «Այնուհետև առին (արաբները – Մ.Ա.) և գալլ քաղաքս և գաւանս, և կալան զմեծն

³⁴ Ю.Б. Юсифов, Указ. соч., с. 26-29.

³⁵ Հեթում, Պատմիչ թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 14: Վերջին նախադասության լատիներեն բնօրինակն է. Leiteras habent diversas: quedam dicuntur littere armenice, alie vero Aloen (var. Haloen). Հետևաբար հայերեն տեքստում Հալոյցէն-ի փոխարեն պետք է լինի Հալոյէն, իսկ փակագծերում՝ (Հայոց և Աղուանից): St u Recueil des historiens des croisades. Documents arméniens. T. II, Paris, 1906, էջ 268:

Ասիա ողջոյն, բացի թագաւորութենէն Ափիսագաց՝ որի Վիրս և բացի գաւառէ անտի թագաւորութեան Հայոց, որ ռամկօրէն կոչի Հալօյէն»³⁶:

Ինչպէս կարելի է նկատել, երկու մեջբերումները տարբեր ժամանակների են վերաբերում: Առաջինում հեղինակն իր ժամանակի՝ XIII դարի վերջի և XIV դարի սկզբի մասին է խոսում, իսկ երկրորդում՝ VII դարի արաբական արշավանքների: Առաջին դեպքում է միայն, որ լատիներեն բնօրինակից թարգմանող Ավգերյանը Հալօյէն-ից հետո փակագծի մեջ բացատրում է՝ Հայոց կամ Աղուանից (ավելի ճիշտ՝ Հայոց և Աղուանից): Հավանաբար Ավգերյանը ելել է այն բանից, որ հայերից և վրացիներից բացի Անդրկովկասում գիր (Մաշտոցի ստեղծած) ունեին նաև զարգարացիները, այսինքն՝ Կովկասյան Ալբանիայի բնակիչները, որոնք կարող էին տարածված լինել նաև Հայաստանի հյուսիսային շրջաններում: Ն. Ակինյանը նույնպէս գտնում է, որ «aloe առանց տարակուսի աղուաներենն է, զոր նաև Բ. 4. (Հեթումը-Մ.Ա.) կհիշե իբրև մասն հայոց»³⁷:

Իսկ երկրորդ դեպքում թարգմանիչը փակագծում Աղուանք չի ավելացնում, քանի որ Հեթումը հստակ նշում է, որ Հալօյէնը հայկական գավառ է: Ավգերյանը Աղուանքը համարժեք է համարում նաև այլ տերմինների. «Թագաւորութիւն Վրաց յարևելից կուսէ սկսանի ի մեծ լեռնէ անտի՝ որ կոչի Ալպոնիս (Աղուանից). անդ բազում ազգք բնակեն զանազանք. եւ վասն այսորիկ նահանգն այն կոչի Ալանք (կամ Աղուանք)»³⁸:

³⁶ Հեթում, էջ 24:

³⁷ Ներսէս Ակինյան, *Ս. Մաշտոց վարդապետ*, Վիեննա, 1949, էջ 324:

³⁸ Հեթում, էջ 15:

Նա այստեղ նույնպես առաջնորդվել է իր պատմական գիտելիքներով, քանի որ Հեթումի նշած տվյալները վերաբերում են պատմական Կովկասյան Ալբանիային, որն այդ ժամանակ (XIII-XIV դդ.) որպես ինքնուրույն պետություն գոյություն չուներ: Հեթումն ինքն Աղուանք տերմին չի օգտագործում, որովհետև այդ ժամանակ ամենայն հավանականությամբ այն արդեն գործածական չէր:

Հարց է առաջանում, այդ ո՞ր գավառի մասին է խոսքը, և ինչպե՞ս է հնչել նրա գրական (գրաբար) անունը, որ տեղի բարբառով դարձել է *Հալոյէն*:

Պատմիչները Հայաստանի հյուսիսային նահանգներում հիշում են Աղուէ գավառ, որ Ս. Երեմյանը տեղադրում է Արցախում³⁹ կամ Ուտիքում⁴⁰: Հայկական Աղուանքում Մովսես Կադանկատվացին նշում է Աղուէն թագավորական ամառանոցի մասին⁴¹: Նույն աշխարհում պատմագրության մեջ հայտնի է նաև Ալուէն ամառանոցը⁴², որը, պետք է ենթադրել, նույն բնակավայրի անվան արտասանական տարբերակն է (հմմտ. *աղի-անալի, ջիղ-ջիլ*):

Սյունիք, Արցախ, Ուտիք աշխարհների հայերեն բարբառային տարբերակները, ինչպես այդ տերիտորիաների այժմյան բարբառային միավորների ուսումնասիրությունն է ցույց տալիս, ունեցել են մեկ բարբառային հիմք, որի ժամանակակից ներկայացուցիչը Ղարաբաղի բարբառն է՝ իր բազմաթիվ խոսվածքներով: Ինչպես մեր մեկ այլ աշխատանքում ենք

³⁹ Տե՛ս **Ս.Տ. Երեմյան**, *Մեծ Հայքի թագավորությունը IV դարում, քարտեզ*, Ե., 1979:

⁴⁰ Տե՛ս **Ս.Տ. Երեմյան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, քարտեզ*, Ե., 1961:

⁴¹ **Մովսես Կադանկատուացի**, էջ 97, 98:

⁴² Տե՛ս **Թ.Խ.Հակոբյան** և այլք, նշվ. բառարան:

կարողացել ցույց տալ, այս բարբառի հնչյունահնչությային համակարգի հիմքերը դրվել են գրաբարից, այսինքն՝ V դարից շատ ավելի առաջ, ինչը վկայում են այդ համակարգի հնաբանությունները: Ղարաբաղի բարբառում, որը պահպանել է հայերենի վաղնջական ժամանակների վերջընթերային շեշտը, վաղուց ձևավորված հնչյունական մի օրենքի համաձայն շեշտի տակ, բացառությամբ գրաբարի ձայնեղ հպական և կիսաշփական բաղաձայններին համապատասխանող հնչյուններից հետո դիրքի, տեղի է ունեցել շեշտյալ ու>օ հնչյունափոխություն (հմմտ. *տուն>տոն*, հ.-ե. **gurg'>կուրծ>կօ՛րծիլ* «կրծել»): Այդ օրենքը գործառել է երկար ժամանակ, համեմայն դեպք XIII-XV դդ. փոխառություններում այն դեռ կենդանի էր (հմմտ. *թուրք-թօրք*)⁴³:

Հենց այս, այսինքն՝ Արցախի (կամ հայկական Աղուանքի) բարբառով էլ *Աղուէն* (*Աղուէն*) անունը պետք է հնչեր (*Հալօ՛յէն* ձևով: Հատկապես այս տարածքի բարբառներին հատուկ է բառասկզբում *հ*-ի հավելումը, որը նույնպես հին երևույթ է (հմմտ. *անիծ-հանիծ*, *ընկեր-հինգէր*): Իսկ *յ*-ն, ինչպես հայտնի է, հայերենի բոլոր տարբերակներում ձայնավորների միջև, հատկապես *ռ*, *ա*-ից հետո, հորանջը փակող պարտադիր հնչվող ձայնակապ է: Ուրեմն, Հեթումի հիշատակած *Հալօյէնը*, պետք է ենթադրել, *Աղուէ* գավառի արցախյան բարբառային ձևն է:

Հեթումը հալօյէն գիր ասելով՝ ամենայն հավանականությամբ նկատի ուներ աղուանից գիրը: Հավանաբար այդ ժամանակ *Աղուանք* տերմինը տեղացիների մոտ նույնացել էր հայկական Աղուանքի մեջ մտնող *Աղուէ* (*Ալուէ*) գավառի անվան հետ: Չի

⁴³ Տե՛ս Մ.Աղաբեկյան, *Մյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն*. –Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր, պրակ 3:

բացառվում նաև, որ *Աղուէն-ը* (*Ալուէն-ը*) ծագած լինի *Աղուան* ձևից՝ վերին բարձրացման *ու*-ի մոտ *ա>է* հնչյունափոխությամբ: Բնականաբար Արցախի բարբառում, որի հնչյունական համակարգի յուրահատկությունները հանգեցրել են ձայնավորների ներդաշնակության օրենքի առաջացմանը, ավելի գործածական կարող էր լինել *Աղուանքի* հենց այդ ձևը, որը ի վերջո դարձել է *Հալօյէն*: Ի դեպ, հնարավոր է նաև, որ *Աղուան(ք)*-ին գուգահեռ ժողովրդախոսակցական լեզվում կազմվելին նաև *-էն* ածանցով *Աղուէն/Ալուէն* ձևեր: Մի խոսքով, Հեթումի ժամանակ Արցախի բարբառով *Հալօյէն* կարող էին հնչվել ն՝ *Ալուէն/Աղուէն* բնակավայրի, ն՝ *Աղուէ/Ալուէ* (**Ալուան*) վարչական միավորի (կամ միավորների) անունները: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես երկու տարբեր հասկացությունները ստացել են արտասանական միևնույն ձև:

Ամփոփելով վերը շարադրածը՝ կարելի է անել որոշ եզրահանգումներ:

ա) Հայերեն *Աղուանք* տեղանունը հունահռոմեական Albania-ից ծագել չէր կարող, քանի որ այդպիսի ստուգաբանությունը հակասում է *ե*, *ք>* հայ. *ւ(վ)ու* հնչյունական օրենքի գործառնական կանոններին: Հայերեն անվան հիմքում ընկած է *աղու* (հ.-ե. **sald-*) բառը:

բ) Կուր գետի ավազանը իր փարթամ բուսականության, մեղմ կլիմայի, բարեբեր հողերի համար, հավանաբար, հայերը շատ վաղ ժամանակներից կոչում էին *Աղուանք*, իսկ հովիտը՝ *Աղուանից դաշտ*: Աստիճանաբար այդ տեղանունը ձեռք է բերել վարչական իմաստ՝ հիմնականում Կուրի աջափնյա ավազանի հայկական նահանգները նշանակելու համար:

զ) *Կովկասյան Ալբանիան* հայերեն *Աղուանք* է կոչվել կամ Կուրի հովտի՝ տվյալ դեպքում ձախափնյա, անվամբ, կամ էլ *Lupon(es)* ցեղանվամբ, որը հայերենում տվել է նախ **Ašupan*, ապա *Աղուան(ք)* ձևերը: Այս վերջին դեպքում հնարավոր է, որ հունահռոմեական *Albania*-ն փոխառվել է հայերեն **Ašupan*, նախաձևից: Չի բացառվում նաև, որ հուն. *Ἀλβανία*-ն փոխառված լինի հայ. *Աղուան(ք)* ձևից:

դ) Ամենայն հավանականությամբ հայերեն *Աղուան(ք)*-ից փոխառություն է նաև պարսկերեն *Aran* ձևը, որը այնուհետև անցել է արաբներին, իսկ արաբական *Alran*-ը, պետք է ենթադրել, հայերեն և պարսկերեն անվանումների արտասանական միախառնման արդյունք է:

ե) Հեթում Պատմիչի օգտագործած *Հալոյէն*-ը բացատրելի է Ղարաբաղի բարբառային նյութով՝ որպես *Ալուէն/Աղուէն* և *Աղուան(ք)* տեղանունների արցախյան տարբերակ:

զ) Վերը նշած գործոնները հանգեցրել են երկու տարբեր վարչական միավորների անվան նույնացմանը, որը պատմագրության մեջ, Մովսես Կաղանկատվացուց սկսած, շփոթի և թյուրիմացությունների տեղիք է տվել: Դրան նպաստել է, իհարկե, նաև պարսկական տիրապետության ժամանակ այդ երկուսը մեկ մարզպանության մեջ միավորելը, այսինքն՝ *Առան/Աղուանք* անվամբ մեկ միասնական վարչական միավորի ստեղծելը:

«Պատմաբանասիրական հանդես»,
1990, № 1:

ԱՂՈՒՄՔ, ԱԼՔԱՆԻԱ, ԱՌԱՆ

Սովետական պատմաբանները, չկամենալով, թե չկարողալով խորանալ փաստերի մեջ՝ ի սկզբանե անտի երկու տարբեր Աղուանքները՝ կովկասյան (Ալքանիա) և հայկական, հայտարարեցին մեկ միասնական վարչաքաղաքական միավոր և անգամ Հայկական Աղուանքի գուտ հայկական մշակույթը համարեցին կովկասյան ալքանների ստեղծագործություն: Այս շիլա շփոթի ստեղծման գործում, իհարկե, իրենց «կարևոր ներդրումն» ունեն մեր «դարավոր հարևանները» կովկասյան թաթարները: Նրանք իրենց «հնամյա» պատմությունը կերտելիս ճիգ ու ջանք չեն խնայում ոչ միայն թուրք քոչվորներին կովկասյան ալքաններ դարձնելու, այլ նաև Հայկական Աղուանքը՝ Ուտիքն ու Արցախը, «մայր հայրենիքի» անբաժանելի մասը համարելու:

Հայ պատմաբանները, սակայն, մեկ անգամ չէ, որ մեզ հասած տվյալների համակողմանի ուսումնասիրությամբ ցույց են տվել, այսպես կոչված, ալքանագիտության սխալ դրվածքն ու ընթացքը: Այդուհանդերձ, կարծում ենք՝ այդ բնագավառում սպիտակ կետեր, հետևաբար նաև անելիքներ դեռ շատ կան: Ահա, այդպիսի մի սպիտակ կետ լրացնելու փորձ են նաև *Աղուանք*, *Ալքանիա*, *Առան* տեղանունների ստորև արվող ստուգաբանությունները:

Աղուանք տեղանվան ծագման վերաբերյալ իշխում է այն տեսակետը, ըստ որի հայերեն բառը հունաստեղծական *Ալքանիա* անվան փոխառյալ ձևն է: Ստացվում է, որ հայերն իրենց հյուսիսարևելյան մասի և Քուռից հյուսիս ապրող կովկասյան հարևանների երկրի անունները վերցրել են օտարներից:

Ինչպես բնության, այնպես էլ լեզվի մեջ գործում են անհատների կամքին չենթարկվող օրենքներ, որոնց հետ հաշվի չնստել չենք կարող: Այդպիսի հնագույն մի հնչյունական օրենքի համաձայն նախապատմական շրջանի հայերենում բառի մեջ որոշ դիրքերում *պ, ք* բաղաձայնները դարձել են *վ* (*լ, ու*), ինչպես *ավագ, ավել* և այլ բառերի *վ*-ին, օրինակ, հնդեվրոպական նախալեզվում համապատասխանում է *ք*: Օրենքը գործել է մ.թ.ա. VI դարից առաջ, այդ դարում և հետո գրի առնված հին իրանական արձանագրություններում վկայված և հայերեն թափանցած բառերում արդեն այդպիսի հնչյունափոխություն այլևս տեղի չի ունենում, օրինակ՝ *սպարապետ, սպարանք* և այլն:

Սակայն *ւ, ն, ք, ռ, դ* ձայնեղ հնչյուններից հետո *ք*-ն, *պ*-ն չեն հնչյունափոխվել, ինչպես օրինակ՝ հնդեվրոպական ծագման *ողք, եղբայր, ամս* և այլ բառերում: Հետաքրքիր է նշել, որ երբ հնդեվրոպական գործիական հոլովի *-քիս* վերջավորությանը (հայերենում *-իս* մասն ընկել է) նախորդել է որևէ ձայնավոր, *բկ-ն դարձել է վ(լ)*, ինչպես՝ *սիրտ-սրտիւ, գործ-գործով*, իսկ երբ նախորդել է վերը նշված ձայնորդներից որևէ մեկը՝ *ք*-ն չի հնչյունափոխվել, ինչպես՝ *հայր-հարք, գառն-գառամք*: Հայերենի այդ հնագույն շրջանում չենք գտնում թեկուզ փոխառյալ մի բառ, որտեղ *ւ, ն, ք, ռ, դ*-ից հետո տեղի ունեցած լինի վերը նշված հնչյունափոխությունը:

Հետևաբար՝ հունահռոմեական *Ալքանիա* անվան *ք*-ն հայերենում *ու* (*վ, լ*) դառնալ չէր կարող, քանի որ այն նախորդված է *լ* ձայնորդով (հնագույն հայերենում բաղաձայնի մոտ *լ*-ն կոշտացել, ապա *դ*-ի է վերածվել): Սրանից էլ բխում է այն հետևությունը, որ *Ալքանիան* հայերենում երբեք *Աղուանք* չէր դառնա:

Բացի այդ, *Աղուանք* անունը փոխառյալ համարելու դեպքում ինչպե՞ս բացատրել այն փաստը, որ այդ տեղանունով են կոչվում պատմական Հայաստանի այնպիսի վայրեր, որոնք ոչ միայն Կովկասյան Ալբանիայի, որի հարավային սահմանները հասնում են Կուր գետը, այլև Հայկական Աղուանքի՝ Արցախի և Ուտիքի հետ ոչ մի կապ չունեն: Այսպես. *Աղուանք*՝ 1. գյուղ Արևմտյան Հայաստանի Մուշի շրջանում, 2. Եկեղեցի Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառում, Աղուանիս՝ գյուղ Արևմտյան Հայաստանի Ակնի շրջանում, *Աղուանից բերդ*՝ բերդ Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Բզնունիք գավառում և այլն: Վերջին երկուսը *Աղուանքի* հոլովված ձևերն են (հոգն. հայց. և սեռ.-տր.):

Աղուանք բառը լեզվաբանորեն տարալուծելիս հստակորեն բաժանվում է *աղու*- հիմքի և *-ան*, *-ք* ածանցների (հմմտ. *տեղանք*, *կողմանք*):

Ուշադրություն դարձնելով հայկական հին տեղանունների վրա՝ դժվար չէ նկատել, որ բազմաթիվ են *աղու*- հիմքով կազմված ձևերը: *Աղու*՝ 1. գյուղ Սյունիք աշխարհի Ճահուկ գավառում, 2. գյուղ Տուրուբերան աշխարհի Աղիովիտ գավառում, 3. լեռնանցք ծաղկանց լեռների հարավ արևմտյան հատվածում, *Աղուէ*՝ 1. գավառ Ուտիք աշխարհում, 2. շրջան Գուգարք աշխարհի Տաշիրք գավառում, 3. գետ Արաքսի ավազանում, *Աղուսարք*՝ լեռնախումբ Գեղամա լեռների կենտրոնական մասում, *Աղուէն*՝ բնակավայր (արքայական ամառանոց) Ուտիք աշխարհում, *Աղուոյ Վանք* կամ *Աղվանք*՝ գյուղ Սյունիք աշխարհի Արևիք գավառում, *Աղուոյ Ջրիկ* կամ *Աղոջրիկ*՝ գյուղ Սյունիք աշխարհի Հաբանդ գավառում: Նույն հիմքն ունի նաև ամբողջ պատմական Հայաստանով մեկ տարածված *Աղվերան* (*Աղուարան*) տեղանունը:

Գրաբարում *աղու* նշանակում է «համեղ, քաղցր, անուշ» և բաղկացած է հնդեվրոպական ծագումով *աղ* արմատից և *-ու* ածանցից (հմմտ. *կիծ-կծու, հատ-հատու*): Որոշ բարբառներում, իմփիալոց, այս բառը ունի նաև «դառը» իմաստ, որ առաջացել է, հավանաբար, չափից ավելի աղի համի տեղի լինելու հետևանքով: Բառի նշանակությունների այսպիսի հակադիր բևեռացումը լեզուներում հաճախ է հանդիպում: Հնդեվրոպական լեզուներում «աղ» նշանակող արմատից կազմված բառերն այդպիսի իմաստներ են արտահայտում հատկապես բալթյան-սլավոնական լեզուներում (հմմտ. ռուս. соль-сладкий): Հայերեն բառը դեռ հնագույն ժամանակներում ձեռք է բերել նաև «գեղեցիկ, լավ, սիրուն, փափուկ, մեղմ» և այլ նշանակություններ, ինչպես՝ *աղուշ-մաղուշ* «սիրունիկ», *աղուոր* «լավ, գեղեցիկ», *աղէկ* (*աղու-եակ*) «լավ», *աղուամազ* «բարակ և նուրբ մազ», *աղեբար* «անուշությամբ, հանդարտ կերպով»:

Ուստի, կարելի է եզրակացնել, և՛ *Աղուանք*, և՛ վերը նշված տեղանունների հիմքում ընկած է *աղ* արմատից ծագող *աղու* ածականը, որը, փափուկ, գեղեցիկ բնություն, մեղմ կլիմա, բարեբեր հողեր ունեցող շրջանների համար գործածվելով որպես մակդիր, դարձել է տեղանուն կամ տեղանվան բաղադրիչ մաս: Այս դեպքում բացատրելի է դառնում Հայաստանի տարբեր վայրերը *աղու* հիմքով կազմված ձևերով կոչելը:

Ինչպես հայտնի է, հենց այդպիսի բնություն են ունեցել Հայաստանի Ուտիք և Արցախ նահանգները: Ի դեպ, մեր պատմահայր Մովսես Խորենացին նշում է, որ ըստ ավանդության *Աղուանք* տեղանունը, որը տրվել է Հայաստանի հյուսիս արևելյան կողմի նահանգներին, ստեղծվել է Հայկի ժառանգորդներից մեկի՝ Միսակի *Աղու մակափան հիման վրա, որ նա ստացել է իր բարի ու*

մեղմ բնավորության շնորհիվ: Ուրեմն՝ դեռ վաղնջական ժամանակներում այդ տեղանվան հիմքում գիտակցվել է *աղու* ածականը: Անձնանվան մեջ այդ բառի օգտագործման օրինակ է նաև հայերենի մեջ հնուց ի վեր տարածված *Աղուան* (*Աղվան*) անունը (ականջը կանչի հարևան «աղվանների»):

Ինչ վերաբերում է Կովկասյան Ալբանիային, ապա ուշագրավ է այն փաստը, որ հատկապես իր հարթավայրային և նախալեռնային շրջաններով այդ երկիրը նույնպես աչքի է ընկել վերը նշված բնակլիմայական հատկանիշներով, ինչը իրենց աշխատանքներում բազմիցս նշում են նաև օտար պատմիչներն ու ճանապարհորդները: Հետևաբար՝ հնարավոր է, որ հնագույն ժամանակներում հայերը Աղուանք են կոչել Կուր գետի ավազանի ոչ միայն աջափնյա, այլ նաև ձախափնյա մասը, որը ծածկված էր բազմաթիվ վտակներով ու ոռոգվող բարեբեր հողերով, մարգագետիններով, անտառներով և ուներ մեղմ կլիմա, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ Կուրի հովիտը կոչվում է Աղուանից դաշտ: Այդ հովիտն իր ձախափնյա և աջափնյա մասերով մտել է տարբեր վարչաքաղաքական միավորների՝ Կովկասյան Ալբանիայի և Հայաստանի մեջ: Հասկանալի է, որ աստիճանաբար այդ աշխարհագրական անունը փոխվել է վարչաքաղաքականի՝ Հայաստանի հյուսիս արևելյան նահանգները, ապա նաև Կուրից ձախ գտնվող, ընդհանուր անվանում չունեցող կովկասյան ցեղերի երկիրը մեկ բառով կոչվելու համար: Բնականաբար, մեզանում այդ անունն ավելի հաճախ գործածվել է հայկական համապատասխան նահանգները (Հայոց արևելից կողմանք) մեկ բառով անվանելու համար Մովսես Կաղանկատվացու (Դասխուրանցու) «Աղուանից պատմությունը», օրինակ, մեծ մասամբ վերաբերում է Կուրի աջափնյա հայկական նահանգներին:

Իսկ ինչպե՞ս է ծագել *Ալբանիա* տեղանունը:

Անտիկ պատմիչների մոտ հանդիպում ենք Կովկասյան Ալբանիայի ցեղերից մեկի *լուպոն(ես)*, *լուպեն(ի)* անդրաձին ցեղանվանը, որը, բնականաբար, ծանոթ է եղել նաև հայերին: Այդ անվան *-ոն*, *-են* մասը *-ան*-ով փոխարինելով՝ հայերենի հնչյունական օրենքների համաձայն մեր լեզվում նախ կստացվեր *Ալուպան*, ապա, *պ*-ն *ու* դառնալով՝ *աղու-ան* բառաձև: Հայերենում *պ*-ի նման տիպի հնչյունափոխության գործառման մոտավոր ժամանակը հաշվի առնելով՝ օտար բառի այսպիսի փոփոխություն մեզանում հնարավոր է մ.թ.ա. VI դարից առաջ: Հետևաբար, կարելի է ենթադրել, Կովկասյան Ալբանիայի այս ձևով առաջացած հայերեն Աղուանք անվանումը, որ նշակել է նաև համապատասխան անունով **ցեղ** կամ **ցեղեր** ունեցող երկիրը, նույնացել է Կուրից հարավ գտնվող Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգների հայկական *աղու* բառից ծագող սկզբում աշխարհագրական, ապա վարչական *Աղուանք* անվան հետ:

Այս դեպքում չի բացառվում, որ հունահռոմեական *Ալբանիա* տեղանունը այդ հնագույն շրջանում առաջանալի հայերեն սկզբնական *Ալուպան(ք)* ձևից, քանի որ, ի տարբերություն այդ լեզուների, հայերենին էր հատուկ փոխառություններում օտար բառի սկզբի *լ*-ից (հետագայում՝ *ղ*) առաջ *ա*-ի հավելման երևույթը: Ապա հույները *ալբան* հիմքին ավելացրել են *-իա* ածանցը, ինչպես սովորաբար վարվում էին օտար տեղանունները հունացնելիս:

Իսկապես, ավելի հավանական է, որ հույն, հռոմեացի ճանապարհորդները, նվաճողները, պատմիչները հեռավոր, այլ մայր ցամաքում գտնվող երկրի անունը փոխառեին նրա

անմիջական դարավոր հարևանից, քան վերջիններս այդ օտարներից:

Ալբանիայի այսպիսի ստուգաբանությանը խանգարող հանգամանք կարող է թվալ այն, որ մեր թվարկության V դարից սկսվող հայ պատմագրության մեջ Կուրի ձախափնյա երկրի *լուպոնես* ցեղանունը հիշատակում է *լինիք* ձևով: Սակայն հայերը, ամենայն հավանականությամբ, այդ ցեղանունը փոխառել են երկրորդ անգամ: Այդ ժամանակ նրանք օտար բառի սկզբի *լ*-ն արդեն կարողանում էին արտասանել առանց նրան ձայնավոր ավելացնելու (հմմտ., օրինակ, իրանական վաղ *երանգ* և նույն բառի ուշ բարբառային *ռանգ* փոխառությունները հայերենում), իսկ ձայնավորների միջև *ա*-ն այլևս չէին հնչյունափոխում: Դա կարող էր տեղի ունենալ V դարի գրաբարից մի քանի հարյուրամյակ առաջ: Հույներն ու հռոմեացիները, հետևելով հայերին, *ալբան* բառաձևը (հայ. *աղուան*) օգտագործել են այդ երկրի բնիկների համար որպես հավաքական անուն, իսկ *լուպոնես* (*լուպենի*) անվանումը (հայ. *լինիք*) պահպանել են տվյալ կոնկրետ ցեղը կոչելու համար:

Որոշ գիտնականներ գտնում են, որ Ալբանիա տեղանվան հիմքում ընկած է այժմյան կովկասյան ժողովուրդներից մեկի՝ կարատանների կողմից իրենց հարևան ավարացիներին տրվող *հալքի* անունը: Սա էլ նրանց ենթադրել է տալիս, որ հնագույն ժամանակներում Ալբանիայում ապրել է *հալ* անունով ցեղ: Ադրբեջանցի գիտնական Յու. Յուսիֆովը մյուսների ասածին ավելացնում է, այսպես կոչված, մեկ այլ փաստ ևս: Ըստ նրա՝ «այն, որ «Ալբան» անվան մեջ առկա է հալ ցեղանունը, հաստատում է Հեթում պատմիչի օգտագործած *հալոյէն* բառաձևը, որն արաբների կողմից գրավված Հայաստանի Հալոյէն գավառի տեղի

բարբառային անվանումն է»։ Յու. Յուսիֆովն էլ իր հերթին հենվում է վրացի գիտնական Ս. Շանիձեի կարծիքի վրա և եզրակացնում, որ Հեթումի հիշատակած *Հալոյէնը* ալբանների մարզի անունն է։ Հեղինակը գիտի, իհարկե, որ պատմիչի ժամանակ՝ XIII-XIV դարերում, Կովկասյան Ալբանիայի մասին խոսք լինել չի կարող։ Այնուամենայնիվ, Հեթումի հստակ ձևով նշած Հայոց թագավորության Հալոյէն գավառը «ալբանական մարզ» է անվանվում։

Հարց է առաջանում, XIII-XIV դդ. հայ պատմիչ Հեթումն իր «Թաթարաց պատմության» մեջ հայոց ո՞ր գավառի մասին է խոսում, և ինչպե՞ս է հնչել նրա գրական (գրաբարի) անունը, որ տեղի բարբառով դարձել է *Հալոյէն*։

Հայաստանի հյուսիսային նահանգներում հայ պատմիչները հիշում են *Աղուէ* անունով գավառ, որ գիտնականները տեղադրում են Արցախում կամ Ուտիքում։ Մովսես Կաղանկատվացին (Դասխուրանցի) Հայկական Աղուանքում նշում է *Աղուէն* թագավորական ամառանոցի մասին։ Նույն աշխարհում հայ պատմագրության մեջ հայտնի է նաև *Աղուէն* ամառանոցը, որը, անտարակույս, նույն անվան արտասանական տարբերակն է (հմմտ. *աղի-անալի, ջիղ-ջիլ*)։

Սյունիք, Արցախ, Ուտիք աշխարհների հայերեն խոսակցական լեզուն, ինչպես ուսումնասիրությունն է ցույց տալիս, ունեցել է մեկ բարբառային հիմք, որի ժամանակակից ներկայացուցիչը Ղարաբաղի բարբառն է՝ իր բազմաթիվ խոսվածքներով։ Ինչպես մեր մեկ այլ աշխատանքում ենք ցույց տվել, այս բարբառի հնչյունահնչությային համակարգի հիմքերը դրվել են գրաբարից, այսինքն՝ V դարից շատ ավելի առաջ, որը վկայում են այդ համակարգի հնագույն տարրերը Ղարաբաղի

բարբառում, որը պահպանել է հայերենի վաղնջական ժամանակների բառի (նախավերջին վանկի վրա ընկնող) շեշտը, վաղուց ձևավորված մի հնչյունական օրենքի համաձայն բառի մեջ որոշ դիրքերում շեշտյալ *ու*-ն դառնում է *օ* (հմմտ. *ցուրտ-ցօրտ, տիրություն-տըրօթուն*): Այդ օրենքը գործառել է երկար ժամանակ, համենայն դեպս VIII-XV դարերի փոխառություններում այն դեռ կենդանի էր (հմմտ. *թուրք-թօրք*):

Հենց այս, այսինքն՝ Արցախի (կամ հայկական Աղուանքի) բարբառով էլ *Ալուէն (Աղուէն)* անունը պետք է հնչեր (*Հալօյեն* ձևով: Հատկապես այս տարածքի բարբառներին հատուկ է բառասկզբում *հ*-ի հավելումը, որը նույնպես հին երևույթ է (հմմտ. *ամոթ-համոթ, անիծ-հանիծ*): Իսկ *յ*-ն, ինչպես հայտնի է, հայերենի բոլոր տարբերակներում ձայնավորների միջև, հատկապես *ռ*-ից, *ա*-ից հետո, պարտադիր հնչվող ձայնակապ է: Ուրեմն, Հեթումի հիշատակած *Հալօյենը*, պետք է եզրակացնել, *Աղուէ (Ալուէն, Աղուէն)* գավառի արցախյան բարբառային ձևն է:

Պարսկաարաբական մատենագրության մեջ Աղուանք անվանը համապատասխանում է *Արան-Առան* բառաձևը, որին Յու. Յուսիֆովը կովկասյան ծագում է վերագրում: Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել այն փաստը, որ անգամ Կովկասյան Ալբանիայի բնիկները այդ երկիրը (կամ համապատասխան հարթավայրը), այսպես ասած, իրենց իսկ բառով՝ Արան ձևով չեն կոչում: Նրանց կողմից այդպես կոչվելու վերաբերյալ վկայության հիշատակում չկա նաև անտիկ և այլ աղբյուրներում:

Արան-Առան տեղանունը հայերեն Աղուանքի պարսկերեն համարժեքն է: Ինչպես արաբ պատմիչ Յակուտ-ալ-Համավին է նշում, այն հայկական տվյալ նահանգի պարսկերեն անվանումն է: Ուշագրավ է այն, որ Մովսես Խորենացու հաղորդման համաձայն

պարթևացի, այսինքն՝ իրանական ծագում ունեցող հայոց Վաղարշակ թագավորը Հայկական Աղուանքի կուսակալ է նշանակում Սիսակ-Աղուի տոհմին պատկանող Առանին: Ակնհայտ է հայերեն *Աղուանք* և իրանական (պարսկերեն) *Առան* անվանումների ոչ միայն համապատասխանությունը, այլ նաև ձևային նմանությունը:

Արդ, ո՞ր լեզուն է մյուսից ազդվել:

Հայտնի է, որ հնդիրանական լեզուները իրենց զարգացման հնագույն շրջանում չ հնչյունը փոխում են *ը*-ի, և երկար ժամանակ այդ լեզուները չ չեն ունեցել: Հին իրանական լեզվի (նախալեզվի) համար այդպիսի հնչյուն չի վերականգնվում: «Ավեստայի»՝ մ.թ.ա. VII-VI դարերում իրանական լեզուներից մեկով ստեղծված կրոնական տեքստերը, որ անխաթար ձևով բանավոր հասել են մինչև միջին դարերը, գրի առնելու համար հատուկ հորինված այբուբենում չ հնչյունի նշանը բացակայում է: Մ.թ.ա. VI-IV դարերում գրված հին պարսկերեն արձանագրություններում, որտեղ օգտագործված են սեպագրեր, շատ քիչ դեպքերում, այն էլ փոխառություններում, կարելի է հանդիպել չ-ի գրային նշանին: Հետևաբար, այդ հնագույն ժամանակներում (մ.թ.ա. VI դարից առաջ) հայերեն *Աղուանք* տեղանունը իրանական լեզուներում (հին պարսկերենում, ասենք) փոխառվելու դեպքում պետք է հնչեր *Ար(ու)ան* ձևով (հայերենում *ու*-ի շատ թույլ և կարճ արտասանության հետևանքով իրանական լեզուներում այն կարող էր ընկնել):

Հետագայում հայերենից փոխառյալ *Արան* անունով, որը, իհարկե, հիմնականում հայկական Արցախ և Ուտիք նահանգներն է նշանակել, պարսիկները իրենց տիրապետության ժամանակ կոչեցին տվյալ մարզպանությունը (ներառելով հայկական և

կովկասյան Աղուանքները), քանի որ Կուրի ձախափնյակն էլ հայերին, հետևաբար՝ նաև պարսիկներին նույն անունով էր հայտնի:

Վերը շարադրվածից ակնհայտ է դառնում, որ հայկական հյուսիս արևելյան նահանգների ընդհանուր *Աղուանք* անունը բնիկ հայերեն բառ է: Իսկ կովկասյան Աղուանքը կարող էր ծագել և՛ հայերեն *աղու* բառից, և՛ կովկասյան *լուպոն-* (*լուպեն-*) ցեղանունից: Նկատի ունենալով այն, որ հույն և հռոմեացի պատմիչների մոտ այդ երկիրը կոչվում է Ալբանիա, թերևս ավելի հավանական է ծագման բացատրության երկրորդ տարբերակը: Այդ դեպքում հունահռոմեական անվանումը փոխառություն է հայերենից՝ հնագույն *Ալուպան(ք)* բառաձևից: Հայերեն *Աղուանք*-ից *Արան* ձևով փոխառել են պարսիկները, իսկ վերջիններից էլ՝ արաբները: Այսպիսով, մեզ հասած *Ալբանիա*, *Առան* անունների հիմքում ընկած է հայերեն բառաձև:

«ՀԱՅՈՒԹՅՈՒՆ»,

1996, № 7:

ՀԱՅ-ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Ուրարտական արձանագրությունների լեզվի և ժամանակակից այս կամ այն լեզվական միավորի միջև տարբեր ազգերի ներկայացուցիչների կողմից մերձավոր ցեղակցության որոնումները չեն դադարում: Քիչ չեն նաև նրանց հակադրվողները, որոնք կտրականապես մերժում են նմանատիպ մերձավորությունների առկայությունը: Հայաստանում այս վեճը, որ հին արմատներ ունի, գիտականորեն ապացուցված, համոզիչ լուծում դեռ չի ստացել, կարծում ենք՝ համապատասխան մասնագետների (լեզվաբան, հնագետ, պատմաբան, սեպագրագետ և այլն) ուժերի համախմբման բացակայության, տվյալների սակավության, տեսակետների անհամատեղելիության պատճառներով: Այստեղ *ուրարտերեն* եզրույթը օգտագործում ենք լոկ որպես Վանի թագավորության մ.թ.ա. 1-ին հազարամյակի սեպագիր արձանագրությունների լեզվի պայմանական անվանում:

Լեզուների առնչակցությունները (ցեղակցական, փոխազդեցական և այլն), ինչպես հայտնի է, ուսումնասիրվում և բացահայտվում են պատմահամեմատական մեթոդներով, որոնք առաջին հերթին հենվում են համեմատվող լեզուների պատմական հնչյունական օրենքների վրա: Տվյալ դեպքում, բնականաբար, նկատի են առնվում բացառապես հայերենի նախագրային շրջանի հնչյունական օրենքները, քանի որ ուրարտերենի սուղ տվյալները պատմական քննության հնարավորություն գրեթե չեն ընձեռում: Մեր քննարկումից դուրս են, իհարկե, ընդհանրապես հայերենի՝ ժամանակագրորեն անհամատեղելի փոփոխությունների օրինաչափություններն անտեսված, այսպես կոչված, «ստուգաբանությունները»:

Լեզվում յուրաքանչյուր հնչյունական օրենք գործում է որոշակի օրինաչափություններով և որոշակի ժամանակահատվածում: Սակայն դրանց գործառնան ոչ ճիշտ ընկալման հետևանքով, որ հատուկ է հատկապես ոչ լեզվաբան հետազոտողներին, հաճախ կատարվում են սխալ ստուգաբանություններ, հակասական եզրակացություններ: Նրանք անփույթ մոտեցում են ցուցաբերում ինչպես այդ օրենքների հարաբերական ժամանագրությանը, այսինքն՝ ժամանակի առումով դրանց հաջորդականությանը, այնպես էլ դրսևորման պայմաններին: Արդյունքում՝ այդպիսի ուսումնասիրությունների հեղինակները, միաժամանակյա գործառնություն վերագրելով իրարամերժ հնչյունական անցումների և անտեսելով դրանց կանոնական յուրահատկությունները, մեզ են ներկայացնում անհամոզիչ եզրահանգումներ:

Այսպես. եթե ընդունենք, որ Հայկական լեռնաշխարհում Վանի թագավորության շրջանում (մ.թ.ա. 9-6-րդ դարեր), ասենք, նախագրային հայերենին հատուկ բառասկզբի *p>h, Ø (զրո) հնչյունափոխությունը դեռ չէր կատարվել, ինչպես որոշ հեղինակներ են կարծում, ապա ի՞նչ բացատրություն կարող են ունենալ իրենց իսկ նշած հայ-ուրարտական հետևյալ համապատասխանությունները՝ ուր. *paḥi/a-ne* – հայ. *պախրէ*, *h* [ուր. ^(GUD)*paḥa/ini(e)* «խոշոր եղջերավոր անասուն», հմմտ. հայ. *պախրէ*]¹, ուր. *par-[par(u)- «քշել (անասուն), տանել (գերիններ)»]* – հայ. *հեն-աց-ուց-ան-եմ*-, **per*:- Իսկ ուր. *pīle* [*pīli(e)* «ջրանցք», խուռ. *Pala*] բառի դիմաց, հայերենում միաժամանակ առաջարկվում է անգամ և՛

¹ Միջակ փակագծերում և մեր կողմից տրվող ուրարտական տվյալները բերվում են՝ ըստ **Н. В. Арутюнян**, *Корпус урартских клинообразных надписей*, (Е., 2002), աշխատության:

պեղ-եմ, և՛ **հեղ**-եմ (*bel/ *pel) արմատային ձևերով ցեղակցական կապ: Մյուս կողմից էլ, հնդեվրոպականից հայերենին անցած բառասկզբի *p-ն, որ ուրարտերեն արձանագրություններում, ըստ այսպիսի ստուգաբանություններ կատարողների, դեռ առկա է, հայերենում կորել է՝ ուր. pare-, par- «առ, մինչև» [pari(e) «մինչ»] – հայ. *ան* (*հեռի*) (*pors, *per) և այլն²: Այսինքն՝ եթե, իսկապես, ուր. **p** – հայ. **հ** կամ **թ** ընդհանրությամբ բառերը արդյունք են միայն հայերենում կատարված հետագա հնչյունափոխության, ապա հարց է առաջանում՝ ինչո՞ւ միևնույն դիրքում (բառասկիզբ՝ ձայնավորից առաջ = pV) մեր լեզուն հիշյալ մյուս բառերում էլ (*պահրէ*, *պեղեմ* և այլն) այդ հնչյունափոխությունը չի կատարել: Չէ՞ որ հայերենի հնդեվրոպական արմատները՝ հնագույններից ամենից լավ պատմականորեն ուսումնասիրվածները, այս հարցում բացառություն չունեն, այսինքն՝ հ.-ե. *p – հայ. **պ** համապատասխանություն չկա³: Հիշենք, որ լեզվում հնչյունական օրենքները գործում են մեր կամքից անկախ՝ կուրորեն և ընդգրկում են տվյալ ժամանակահատվածում լեզվի և՛ բնիկ, և՛ փոխառյալ բառերը: Շեղումները՝ բացառությունները, ունեն իրենց բացատրությունները: Միևնույն լեզվում երկակի դրսևորումները, ինչպես օրինակ՝ վերը նշված տվյալները (*պահրէ*, *պեղ-եմ*, բայց՝ *հեղ-եմ*, *հեռի*, *ան*), հիմնականում տարբեր ժամանակահատվածների ծնունդ են: Այսինքն, ինչպես հնդեվրոպաբաններն են գտնում, **պ**-ով սկսվող բառերը հին հայերեն են թափանցել ավելի ուշ՝ այդ

² Տե՛ս **Ս. Այվազյան**, *Ուրարտերեն - հայերեն. բառապաշար և պատմահամեմատական քերականություն*, Ե., 2008, էջ 36:

³ Տե՛ս **Ա. Մեյե**, *Հասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ*, Ժնև, 1988, էջ 23:

դիրքում ***p>h**, **Ø** օրենքի գործառությունը դադադարելուց հետո միայն:

Կարելի էր ենթադրել, որ միևնույն արմատին հանգող այսպիսի տարբերակները հնագույն հայերենում առաջացել են այս կամ այն բարբառի հնչյունափոխական օրենքների համաձայն և միայն հետագայում են մտել գրական լեզու՝ գրաբար: Սակայն հիշյալ դեպքում փաստերը դա չեն հաստատում, քանի որ և՛ վաղնջահայերենում (մոտ մ.թ.ա. III- II հազարամյակներ), և՛ հնագույն հայերենում (մոտ մ.թ.ա. II- I հազարամյակներ), որը, հավանաբար, արդեն ուներ որոշ բարբառային տրոհվածություն, ***p** -- հայ. **պ** համապատասխանություն չի վերականգնվում⁴:

Ավելի բարդ ու խճճված իրավիճակներ են առաջանում, երբ տվյալ հնչյունական օրենքի գործառման յուրահատկությունները հետազոտողի համար ամբողջովին բացահայտված չեն լինում: Այս դեպքում վրիպում են անգամ լեզվաբան մասնագետները, ինչպես օրինակ՝ հայերենի նախագրային շրջանի (հնդեվրոպական) երկշրթնային շփական ***y>հայ. ք**, երկշրթնային հպական ***bհ**, ***b**, ***p>հայ. ք/մ/վ** օրենքների վրա հենվող ստուգաբանությունների ժամանակ է դա ի հայտ գալիս:

Հնդեվրոպական ծագումով հայերեն որոշ բառերում ***y > ք** անցում տեղի չի ունեցել: Այս երևույթի բացատրությանն ուղղված մեկնաբանությունները, կարծում ենք, համոզիչ չեն: Մեր կատարած հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ նախագրային շրջանի հայերենում ***y** շրթնային բաղաձայնը **ք**-ի չի վերածվել միայն մի դեպքում. երբ այն բառամիջում նախորդել է շրթնային ձայնավորի (**օ**, **մ**), ինչպես՝

⁴ Տե՛ս **Գ. Զահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն*, էջ 25, 227, 253:

*g^uoɣ-os > *կով*, -ոյ, -ու, բայց *g^uoɣ-io > *կոզի* «կարագ», *reɣ-os > *արեւ*, -ու, բայց *reɣ-i > *արեգ*, -ի⁵: Այս հնչյունափոխությունը, բնականաբար, նախորդել է *b^h, *b, *p > *ւ/ու/վ* օրենքին, քանի որ վերջինս, ամենայն հավանականությամբ, առաջացել է հենց *ɣ > q անցման հետևանքով՝ հայերենի բաղաձայնական համակարգում *ւ/ու/վ*-ի, այսպես ասած, կորցրած դիրքերը (այն պահպանվել էր միայն *o-ից, *u-ից առաջ) վերականգնելու պահանջով (ըստ «համակարգում դատարկ վանդակների» տեսության): Մրավկայությունն է և այն, որ հայերենի նախագրային շրջանի փոխառություններում *b-ից, *p-ից ծագող հայ. *ւ/վ*-ն այլևս *q* չի դառնում (հմմտ. ակկադ. kabsu - հայ. *քաւշ* «արու այծ», ակկադ. ḫalappu(m) «հագնել» հայ. *հալաւ* «հագուստ» և այլն)⁶: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ հայ-ուրարտական շփումների ժամանակ, այսինքն՝ առնվազն մ.թ.ա. 2-րդ հազարամյակից ի վեր, հայերենում այլևս *ɣ > q անցում տեղի չի ունեցել: Ուրեմն, եթե անգամ ենթադրենք, որ, օրինակ, *Գեղա(ր)քունի* բառի առաջին վանկը ինչ-որ ժամանակ ուր. ɣelikuni//ɣelikuni տեղանվանը նմանվող արտասանություն է ունեցել, ապա հայերենում առկա փոփոխությունը (*ɣ > q) կարող էր կատարվել մ.թ.ա. 1-ին հազարամյակից առաջ: Մինչդեռ ուրարտները կամ հարևան այլ ժողովուրդներ այդ բառածնը շարունակել են պահպանել իրենց արտասանությամբ, որ փոխառությունների դեպքում հաճախ հանդիպող երևույթ է: Բացի այդ, առնվազն մ.թ.ա. 1-ին հազարամյակից ի վեր

⁵ Տե՛ս Մ. Աղաբեկյան, *Հայերենի համեմատական հնչյունաբանության հարցեր* // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Ե., 1998, էջ 70:

⁶ Մ. Աղաբեկյան, *Հայերենում *b^h, *b, *p > լ(վ, ու) հնչյունափոխությունը և նրա ժամանակագրությունը* // «Հայագիտության և գուգադրական լեզվաբանության հարցեր», պր. Բ, Ե., 2002, էջ 95-100:

հայոց լեզու թափանցած օտար բառերում * $\mu > q$ անցում այլևս չի դիտվում (հմմտ. *Վահագն*, Վահե, *Երուանդ*, *Վաղարշակ*)⁷: Բնականաբար, հարց է առաջանում. ինչպե՞ս կարող էր միևնույն ժամանակահատվածում հայերենը բառի նույն դիրքում (բառասկիզբ՝ ձայնավորից առաջ) կատարել $և' \mu > q$, $և' \mu > \varphi$ հնչյունափոխություններ (հմմտ. *yelikuni* // *yelikuni* > *Գեղա(ր)քունի*, *Biaina* > *Վան*, *-այ*):

Վերն ասացինք, որ նախագրային շրջանի հայերենում տեղի է ունեցել **bh*/**b*, **p* > *ւ/վ/ռ* հնչյունափոխություն: Բայց, ինչպես երևում է, ոչ բոլորին է հայտնի, որ այդ օրենքը չի գործել բառասկզբում (**bh*/**b* > հայ. *բ*, իսկ **p* > հայ. *հ/յ*, *թ*), **r*, **l*, **m* ձայնորդներից հետո և **sp*/**zb* կապակցություններում: Ուրեմն՝ բառասկզբում *վ* և նշված մյուս դիրքերում *բ/պ* ունեցող բառերը հայերենում հիշյալ օրենքների դադարելուց հետո կատարված օտար փոխառություններ են: Դժվար է ասել, թե երբ է սկսվել դրանց մուտքը հայոց լեզու, սակայն մի բան պարզ է՝ Հայկական բարձրավանդակում ուրարտական տիրապետության ժամանակ ձայնեղ երկշրթնային $և'$ հպական (*b*), $և'$ շփական (*v/w*) հնչյունները, որ ուրարտերենում միևնույն սեպագիր նշանով են (*b*) վկայված, հայերենում արդեն տարբերակված են եղել: Դա երևում է հատկապես տեղանունների հայ-ուրարտական համապատասխանություններում՝ ուր. *Zabaha* ~ հայ. *Ջալախ-ք*, *Abuni* ~ *Հանունիք*, *-ebani* ~ *-եւան* (*Բջեւան*) և այլն, ինչպես նաև՝ ուր. *Abiliani* ~ հայ. *Աբեղեանք*, *Qabiluni* ~ *Գաբեղանք*, այլն՝ *baba* «լեռ, բլուր» ~ *բաբայ* «բլուր», *burgana(ni)* – *բուրգն* և այլն⁸: Հասկանալի է, որ այս տեղանուններից բառամիջում *ւ*-ով հայերեն ձևերը ավելի

⁷ Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հհ. 1-5, Ե., 1942-1962:

⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 95-100:

հին են, քան այդ նույն դիրքում *p* ունեցողները, որոնք այդ օրենքին չեն ենթարկվել: Ուրեմն՝ հայերենին բնորոշ բառամիջի *bh/*b,*p > *ɫ/ɸ/nɫ* հնչյունափոխությունը առնվազն մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներից այլևս տեղի չէր ունենում: Ինչ վերաբերում է բառասկզբին՝ վերն արդեն նշեցինք, որ այդ դիրքում նախագրային հայերենում առհասարակ *bh/*b,*p > *ɫ/ɸ/nɫ* հնչյունափոխություն չի կատարվել: Հետևաբար՝ ոչ թե հետագայում, այլ հենց մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբում ուր. ^{KUR}Baiaina երկրի անունը հայերեն հնչել է *Վան*, -այ, (կամ *ւան*), իսկ թե ուրարտական արտասանությամբ է պայմանավորված բառասկզբի b գրությունը, թե սեպագրությամբ՝ յուրահատկությամբ, դժվար է ասել: Մինչդեռ անգամ լեզվաբանների աշխատանքներում նշվում է, որ ^{KUR}Baiaina երկրի անունը արտացոլված է հայ. *Վան* տեղանվան մեջ, այնինչ իրականում հակառակն է կատարվել: Ավելին, ելնելով ուրարտերեն գրությունից (bia-), կարելի է ենթադրել, որ այն ունեցել է տեղի՝ Վասպուրականի հայերեն բարբառին բնորոշ արտասանություն՝ *Վանն*, -ա (այս մասին ստորև):

Նշված օրենքների գործառնման յուրահատկություններն ու հարաբերական ժամանակագրությունը վերականգնելով՝ վերանում են դրանց առնչվող հայ-ուրարտական ստուգաբանություններում առկա հակասությունները, այսինքն՝ ուր. *u*, *b*, *p* - հայ. *ɫ/ɸ/nɫ*, *p*, *u*, *ɸ* համապատասխանությունների դեպքում, օրինակ, հարց չի առաջանում՝ իսկ ինչու՞ հայերենում ուրարտական այդ հնչյունները չեն դառնում *q*, կամ բառի միևնույն դիրքում ուր. *u*-ին հայ. *ɸ*, իսկ *q*-ին *q* է համապատասխանում և այլն:

Մենք անդրադարձանք միայն մի երկու դեպքի, երբ հայերենի նախագրային շրջանի հնչյունական օրենքների ոչ ճիշտ ընկալման հետևանքով կատարվում են սխալ ստուգաբանություններ և համապատասխան եզրահանգումներ: Երբեմն այդպիսի սխալը, նույնիսկ հանրության ըմբռնմամբ, այնպիսի կարծրատիպ է դառնում, որ ցանկության դեպքում անգամ դժվար կլինի, կարծում ենք, դրա ուղղումը: Ինչպես ասենք՝ արդյո՞ք կկարողանանք այսուհետ ազգովի երգել *«Էրեբունի դարձած իս Երևան...»*: Սա, իհարկե, որպես օրինակ ենք նշում, քանի որ հնարավոր է՝ ընդհանրապես համեմատվող բառերը ծագումնաբանորեն միմյանց հետ կապ չունենան:

Ուրարտերենի և հայերենի տարածքային տարբերակների՝ բարբառների առնչակցությունների հարցին հաճախ ցուցաբերվել է կանխակալ մոտեցում՝ բացառելով մեզանից 2-3 հազարամյակ առաջ հայերենի՝ այս կամ այն չափով բարբառային տրոհվածությունը Հայկական բարձրավանդակում: Հնարավոր է համարվել միայն հայերենում ուրարտական ենթաշերտային խիստ տեղայնացած, հիմնականում Վանի ավազանում, որոշ դրսևորում (հմմտ. ուր. *h*-ի ազդեցությամբ հայ. բրբռ. *h > /u/ /uag, /uop/, /uɪvʰan/* և այլն): Ի դեպ, այս մտայնությունը հետևանք է հայերի՝ որպես հնդեվրոպական ժողովրդի, Փոքր Ասիա՝ լոկ մ.թ.ա. 2-րդից 1-ին հազարամյակներում ներգաղթելու մասին վարկածի: Սակայն չենք կարող չնկատել ուրարտերեն տեքստերում նաև հայերենի բարբառային յուրահատկությունների հետքեր:

Ուրարտերեն Biaina, Giarniani, Ziuquni տեղանուններում *ia*, *iu* հնչյունակապակցությունները դիտվում են՝ որպես *a*, *u* ձայնավորների քմայնության գրավոր արտահայտում՝ *ä*, *ü*:

Գ. Զահուկյանը գրում է, որ Giarniani-ին հավանաբար ծագում է ուր. garini «բերդ, ամրոց (օ)» բառից, ապա փակագծում ավելացնում. «(հետաքրքրական է նշել, որ ia կապակցությամբ տրվում է քմայնացած ձայնավորը՝ որպես տեղական խոսվածքի հատկանիշ)»⁹: Հեղինակի ենթադրությամբ, հավանաբար, դա ուրարտերեն մի խոսվածք է եղել: Քմայնացման այդպիսի դրսևորում է առկա, ինչպես երևում է, նաև Diauhi, Andiabe, Abianda տեղանուններում: Դժվար չէ նկատել, որ բոլոր այդ բառերում հետին շարքի ձայնավորի քմայնություն է դիտվում ձայնեղ բաղաձայնից հետո դիրքում: Այս հնչյունական յուրահատկությունը ուրարտերենին բնորոշ չէ, քանի որ հասարակ անուններում, այսինքն՝ բառապաշարում, այն ի հայտ չի գալիս: Մինչդեռ հատկապես Վասպուրականի և Սյունիք-Արցախի հայ բարբառային միավորներում ձայնեղ բաղաձայններից հետո ձայնավորների քմայնացումը (Աճառյանի օրենք), ինչպես հայտնի է, պատմական հնագույն հնչյունական օրենքներից է, որ մոտավորապես միջին դարերից ի վեր դադարել է գործել: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ հիշյալ տեղանուններում արտացոլված է տեղաբնակների լեզվի՝ հայերենի մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերին գործող խոսվածքային հատկանիշ¹⁰:

Վաղուց է նկատվել, որ ուրարտերենի il հնչյունակապակցությամբ հայերենում համապատասխանում է -եղ- (հմմտ. Abiliani ~ *Աբեղեանք*, Qabiluhi ~ *Գաբեղանք*, pili – *պեղ-եմ*), որի բացատրությունը, կարծում ենք, տալիս է նախագրային

⁹ Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Զահուկյան, Գ. Խ. Մարգարյան, *Ուրարտու-Հայաստան*, Ե., 1988, էջ 147:

¹⁰ Տե՛ս Մ. Աղաբեկյան, *Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն*// «Հայերենի բարբառագիտական ատլաս», պր. 3, Ե., 1910, էջ 159:

հայերենում (մ.թ.ա. II- I հազարամյակներ) ձևավորված մի հնչյունական օրինաչափություն: Հնագույն հայերենը օտար փոխառությունների L-ն դարձնում էր կոշտ՝ հետին արտաբերման *η*, որին, ներքին կանոնների համաձայն, *h* ձայնավոր նախորդել չէր կարող, և տեղի էր ունենում օտար *il > հայ. եղ* հչյունափոխություն (հմմտ. իւեթ. Mursilis - Մուշեղ): Հին հայերենի՝ գրաբարի գրառման ժամանակ՝ 5-րդ դարում, հնչյունական այս օրենքը չէր գործում¹¹: Այն ավելի երկար պահպանվել է մեր որոշ բարբառներում: Բավականին հստակ գործառական դրսևորում ունի, օրինակ, Սյունիք-Արցախ տարածքի խոսվածքներում¹²:

Ուրարտերենի և հայերեն բարբառների այսպիսի առնչակցությունների փաստեր էլի կարելի է բերել: Սակայն այս ուղղությամբ անելիքներ դեռ շատ կան:

Քիչ չեն նաև հայ-ուրարտական ձևաբանական ընդհանրություններին վերաբերող դիտարկումները, որոնց վրա հենվելով՝ որոշ հետազոտողներ հաճախ հանգում են հայերենի և ուրարտերենի անմիջական ցեղակցության կամ, ավելի ճիշտ, ուրարտերենը հայերեն համարելու գաղափարին: Վերջին տարիներին այդպիսի մոտեցման առանցքը դարձավ Գ. Ջահուկյանի հոդվածը՝ նվիրված Խալդի աստծուն մեծարող ու նրա հովանավորությամբ գործող ուրարտական տիրակալների արձանագրությունների՝ գրեթե միակերպ, կաղապարային շարադրանքով բառակապակցությունների քննությանը և ստուգաբանությանը (յոթ բառ): Հեղինակը եզրակացնում է. «...հիշյալ բանաձևերի բառապաշարն ու քերական-

¹¹ Մ. Աղաբեկյան, *Հայերենի համեմատական հնչյունաբանության հարցեր*// «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Ե., 1998, էջ 102:

¹² Տե՛ս Մ. Աղաբեկյան, *Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն*, էջ 147:

նական կառուցվածքը հնարավոր է մեկնել հայերենով, այսինքն՝ այդ բանաձևերը համարել հայոց լեզվի առաջին գրավոր տեքստերը»¹³:

Ինչ խոսք, անվանի գիտնականի առաջարկած այդ, այսպես կոչված, բանաձևերի պատմահամեմատական վերլուծությունը համոզիչ փաստարկների վրա է հենվում: Սակայն Գ. Ջահուկյանը ուրարտերենը հայերեն չի հոչակում, այնինչ դա այսօր անում են, համենայն դեպս, ոչ լեզվաբանները: Նախ հիշենք, որ խոսքն առայժմ վերաբերում է արձանագրությունների կադապարային բանաձևերին: Իսկ հայերենի և ուրարտերենի նույնացման հարցում առավել կարևոր է, կարծում ենք, այդ լեզուների տիպաբանական յուրահատկությունների զուգադրումը:

Գ. Ջահուկյանը գրում է. «Մեր կողմից տրված մեկնաբանության խոցելի կողմն այն է, որ առայժմ բաց է մնում այդ բանաձևերի և «ուրարտական» կոչված տեքստերի բուն առնչությունը»¹⁴: Գ. Ջահուկյանը, փաստորեն, ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ այդ բանաձևերը, եթե, իսկապես, հայերեն են, տիպաբանորեն բուն ուրարտական տեքստերի հետ չեն նույնանում: Իսկ վերջինների լեզուն, ինչպես հայտնի է, ունի *էրգատիվ* կառուցվածք, այսինքն՝ անցողական բայերի սուբյեկտը՝ ենթական, ոչ թե ուղղական, այլ էրգատիվ հոլովով է դրվում: Մինչդեռ հայերենը պահպանել է հնդեվրոպական լեզվաընտանիքին բնորոշ *ուղղական - հայցական (նոմինատիվ – ակուզատիվ)* կադապարը: Մտքերի լեզվական արտահայտման այս երկու ձևերը

¹³ Գ. Ջահուկյան, *Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին* // «Պատմա-բանասիրական հանդես», 2000, էջ 124:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 128:

խորքային կառույցում նույնանում են՝ հանգելով ակտիվ կառույցի, և մեկից մյուսին անցնելը լոկ ձևային փոփոխություն է արտահայտության պլանում: Այնուամենայնիվ. «Հնդեվրոպական լեզուն առանձին բարբառների տրոհման ժամանակ, որոնք հետագայում ձևավորվեցին՝ որպես ինքնուրույն լեզուներ, վերականգնվում է որպես տիպաբանորեն հայցական (ուղղական) կառուցվածքի միասնական լեզու»¹⁵: Ի դեպ, **հնդեվրոպական ընտանիքի ոչ մի անդամ, նույնիսկ երգատիվ լեզուներով շրջապատված հայերենը, տիպաբանորեն չի փոխվել**: Այս փաստը հայերենի և ուրարտերենի՝ հատկապես ձևաբանական առնչակցությունների քննության ժամանակ անտեսել չենք կարող:

Ուրեմն, եթե ընդունենք, որ հիշյալ ուրարտական ներածական բանաձևերը հայերեն են, ապա ինչպիսի՞ քացատրություն դրանք կարող են ունենալ: Հնարավոր է՝ այդ գրությունները Վանի թագավորության տիրակալների հզորության և մեծագույն Աստծու՝ Խալդիի հովանավորությունը վայելելու վերաբերյալ հիշեցումներ են՝ ուղղված տեղի հիմնական բնակչությանը՝ հայերին: Կարելի է ենթադրել նաև, որ այդ բանաձևերը ամեն կարևոր միտք արտահայտելուց առաջ հեղինակի կողմից Աստծուն փառաբանելու պարտադիր նախաբան են: Այս սովորույթը, ի դեպ, այսօր էլ հավատացյալների խոսքում կիրառվում է:

Այսպիսով՝ հենվելով հայ-ուրարտական առնչակցությունների վերաբերող գիտական ուսումնասիրությունների վրա, կարելի է եզրակացնել, որ հայերենը՝ որպես Հայկական բարձրավանդակի տեղաբնիկների հնդեվրոպական լեզու, մ.թ.ա.

¹⁵ Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, *Индоевропейский язык и индоевропейцы*, Тбилиси, 1984, с. 319:

2-րդ հազարամյակի վերջերից մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերը սերտ շփումներ է ունեցել երգատիվ կառուցվածքով ոչ հնդեվրոպական ծագման ուրարտերենի հետ: Դրա հետևանքով այդ երկու լեզուներում առաջացել են փոխներթափանցումներ: Հնդեվրոպական նախահայրենիքի տեղակայմամբ զբաղվող հետազոտողները ավելի ու ավելի են հակվում Փոքր Ասիայի և Մերձավոր Արևելքի տարածքներում այն տեսնելուն: Ուստի հայերենի և ուրարտերենի ընդհանրությունների մի մասը, հնարավոր է, ունեն հնագույն ծագում, իսկ որոշ համապատասխանություններ էլ գոյացել են մ.թ.ա. 1-ին հազարամյակից առաջ:

Նշենք նաև, որ հայերենի և տարածաշրջանի՝ ոչ հնդեվրոպական մեռած լեզուների (խուտերեն, ասուրերեն, շումերերեն և այլն) զուգադիպումները ոչ միշտ կարող են լինել տվյալ ժողովուրդների անմիջական շփումների արդյունք: Մի մասը, գուցե միջնորդավորված, այսինքն՝ այլ լեզուների միջոցով կատարված փոխանցումներ են: Չի բացառվում, իհարկե, որ այդպիսի որոշ համապատասխանություններ հանգում են նոստրատիկ լեզվաընդհանրությանը:

«Պատմաբանասիրական հանդես»,

2013, № 1:



Տպագրված է «ԱՍՈԴԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ 60x84 1/16, թուղթ՝ օֆսեթ, Տպաքանակ՝ 150
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

